Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

L&N
1572

1999

ՈՒՍՈՒՄՆ
ՊԱՐՏՈՒՅՑ

Պ. ՇԱՆԵՆԱՆՑ



Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ
= 1870 =

ՈՒՍՈՒՄՆ
ՊԱՐՏՈՒՑ

Պ. ԹԱՆԵԼԵԱՆՑ

ՀԱՏՈՐ Բ.

1014



Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ
1870

Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

4 1572-60

28. 1578

ՉԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՍ զայս ընտիր, հեղինակութիւն բարոյախօս Վարժապետի Պետրոսի Սամուէլեան Շանչեանց, մատոյց մեզ 'ի տեսութիւն Տ. Մելքիսեդեկ վարդապետ, միաբան Առաքելական սրբոյ Ուխտին Երուսաղէմի։ Սիրաբար եւ հաճութեամբ սրտի ընթերցաք, յորում իմաստք պատուիրանաց Ս. Գրոց ուղիղ եւ անստերիւր բացատրութեամբ համառօտեալ են. ուր հմտավարժ Մատենագիրն, առանց աւելորդ ճառաբանութեան, որպէս զգօն ուսուցիչ՝ զիւր դաս իբրեւ ախորժահամ ճաշակ մատակարարել սիրէ աչակերտող մանկանց եւ համօրէն բարոյասիրաց։

Եթէ պատուիրանք Տեառն լոյս են, եթէ աստուածպաշտութիւն քան զամենայն ինչ զօրաւոր է, ուրեմն, այս վաստակ չահաբեր է որդւոց Եկեղեցւոյ։ Առ որ յորդորեմ զձեզ, ով ուսումնածարաւ դպրոցական մանկունք, ընկալարուք զսա իբրեւ ոսկի մանեակ 'ի պարանոցս ձեր, որ կարող է դաստիարակել կրթել զսիրտս ձեր 'ի վսեմ բարոյականութիւն մարդկային Պարտուց, առ որ ուղղեալ է զիւրն նպատակ առաքինասէր Մատենագիրն։

Ի 10 Ապրիլի 1870 ամի
Ի Պատրիարքարանի Հայոց։

Մ. Վ. ԽՐԻՄԵԱՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԼԱԿԱՅ
ԵՒ
ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՕԼՍՈՅ

*Զեզ կը նուիրեմ այս երկասիրութիւնը, Հա-
յաստանի Զաւակները, և կ՚աղօթեմ առ Աստ-
ուած, որ ոգեւորէ զՁեզ՝ առաքինութեամբ
և օգնէ Ձեզ երջանկութեան հասնելու։*

Պ. ՇԱՆՇԵԱՆՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յառաջաբան 1
Տանուաբանեալ պատգամաց եւ օրինաց վրայ առհասարակ . . . 5
Յառաջաբան պատգամաց. — Առաջին երկու պատուիրանք . . 9
Բարեպաշտ զգացմանց վրայ 17
Երրորդ պատուիրան 27
Չորրորդ պատուիրան 34
Ընդհանուր պարտաւորութիւնք առ մարդիկ 41
Յատուկ պարտաւորութիւնք առհասարակ. — Հինգերորդ պատուիրան 58
Ընդհանուր պարտաւորութիւնք 65
Վեցերորդ պատուիրան 72
Եօթներորդ պատուիրան 80
Ութերորդ պատուիրան 85
Ինիներորդ պատուիրան 92
Տասներորդ պատուիրան 104
Համառօտութիւն օրինաց 108
Պարտաւորութիւնք մարդոյ առ անձն 110
Աշխատութիւն 125
Զգաստութիւն պատուոյ մէջ 132
Զգաստութիւն նեղութեան մէջ 141

Խնդրեցէ՛ք նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւնն նորա և այդ ամենայն յաւելցի ձեզ։

Մատ. Զ. 33։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երկու բան կայ, որ կը լցուցանեն հոգին միշտ նոր զարմացմամբ և յարգանքով, այն է՝ ապեղալուդ երկինքը մեզմէ բարձր եւ իրիմորանէի նայողը մեր սրտերու մէջ։

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԿԱՆՏ։

Պօղոս առաքեալը մարդոյ զանազան պարտաւորութեանց վրայ խօսելով՝ դլխաւորապէս երեք կը բաժնէ — Պարտաւորութիւնք քաղաքականք, որոց առարկայն է Աստուած, պարտաւորութիւնք ազգականք, որ կը վերաբերի առ ընկերն եւ պարտաւորութիւնք գիտական, որ կը վերաբերի մեր անձին։

Մեր պարտաւորութիւնները, իրենց սկզբունքին նայելով, բոլորը կը պարունակին մէկ պարտաւորութեան մէջ, որ է հնազանդիլ Աստուծոյ։ Վասն զի, Աստուած է ինքն բուն ճշմարտոյն բարութիւն։ Նա է օրէնսդիր բարոյական եւ միանգամայն նիւթական աշխարհի։ Նա է սկիզբն, յորմէ ծագումն ունին բարոյական եւ նիւթական աշխարհի օրէնքները։ Մեր խիղճը, որ ծնուած է մեր հոգւոյ հետ եւ աղբիւր է մեր ամեն պարտաւորութեանց, կ՚իմացնէ մեզ որ կայ բարոյական աշխարհ. իսկ նիւթական սիեզերքը իր դաչնաւոր կարդով կը յայտնէ մեզ, որ հանդերձ բնութիւն կը կառավարի Աստուծոյ իմաստութեամբ, որոյ կամքը կատարելն է կոչումն բոլոր արարածոց, վասն զի Աստուած է սկիզբն եւ վախճան բոլորեցուցոյ (1)։

Աշխարհիս մէջ մարդոյ բուն եւ ճշմարիտ կոչումն է կատարել բարոյական օրէնքը, որպէս զի կարենայ բարոյական կատարելա-

(1) Տե՛ս Ա. Հատոր — Հանրաօգտակարական տրիպանէական առակաց. — Երես 5—8։

գործութեամբ եւ առաքինութեան ճանապարհաւ հասնիլ երջանկութեան, լինիլ այնպէս, ինչպէս ստեղծուած է Արարչէն, այսինքն լինիլ ըստ պատկերի եւ ըստ նմանութեան Աստուծոյ։ Վասն զի մարդոյ վսեմ պարտաւորութիւնն ու ճշմարիտ երջանկութիւնն է Աստուծոյ նմանիլ եւ ոչ ուրիշ բանի, լինիլ բարի, մարդասէր, խաղաղասէր, հեզ, խոնարհ եւ համբերող. որովհետեւ Աստուած ամենաբարի է եւ Սէր գլխովին, որ եւ կը հրաւիրէ զմեզ յառաջել այս առաքինութեանց մէջ, որպէս զի կարենանք լինիլ կատարեալ, որպէս եւ նա ինքն՝ երկնաւոր Հայրն մեր կատարեալ է։

Մարդոյ երջանկութիւնը Աստուծոյ մէջ է։ Մարդը կարող չէ հասնիլ երջանկութեան այս կենաց փորձանաց աշխարհին մէջ։ Մարդոյ կեանքը պատերազմ է եւ աշխարհս՝ դաշտ պատերազմի եւ միայն բռունք կարող են յափշտակել Աստուծոյ արքայութիւնը, ինչպէս ասաց մեր Փրկիչը։ Այս փորձանքով ալէկոծուած կենաց մէջ գիտէ ճշմարիտ մարդն, որ ինքն կոչուած է արիութեամբ եւ առաքինութեամբ պատերազմիլ ամենակերպ ձախորդութեանց եւ դժբաղդութեանց դէմ։ Այս պատերազմին մէջ է, որ կը բացուի եւ կը կրթուի մարդոյ բարոյական բնութիւնը եւ ազատութիւնը։ Այս պատերազմով է որ մարդ կը մեծանայ եւ կը գործակցի իւր Արարչին իւր հոգւոյ նորոգութեամբ։ Թէեւ ծանր եւ մեծ զոհողութեամբ կը գտնէ եւ ձեռք կը բերէ մարդ իւր առաքինութեան յաղթանակը այս աշխարհիս մէջ, սակայն դիտէ նա որ յաղթանակի թանկագին գնով միայն կը հասնի երջանկութեան, որովհետեւ որչափ որ անհնարին է կատարեալ երջանկութիւն գտնել այս փորձանաց աշխարհին մէջ, սակայն առաքինութեամբ, յուսով եւ հաւատով իրաւունք կը ստանայ մարդ երջանիկ լինելու՝ հանդերձելոյն մէջ։ Եւ այսպէս ճշմարիտ մարդը յաւիտենական արդարութեան վրայ հիմնուելով կը բարձրացնէ իւր հոգւոյ աչքը այս կեանքէն դէպի հանդերձեալ կեանքն՝ կ'ակնկալէ ուրիշ աշխարհի, որոյ լոյսը խաղաղ է եւ անանց, ուր փորձանքները վերջացած են եւ միայն երանութիւնը կը թագաւորէ։ Այս յուսով է որ մարդ չ'արհամարհեր այս աշխարհը եւ այն բարութիւնը, զոր կարող է գործել ինչպէս իւր համար, նոյնպէս եւ իւր ընկերին համար։ Նա չը պահանջեր այս կեանքէն այն, ինչ որ կարող չ'է նա տալ։ Նա առաջին եւ գլխաւոր պարտաւորութիւն կը համարի գործ դնել իւր ներկայ կենաց նպատակը, որ է առաքինութիւն գործել։ Նա երջանկութիւն կ'որոնէ ներկայ կենաց այն հոգեւոր բարութեանց մէջ, զորս պատահարք եւ դժբաղդութիւնք կարող չ'են նորա ձեռքէն խլել եւ յափշտակել, կամիմք ասել, նա

երջանկութիւն կ'որոնէ իւր բարի խղճի եւ հոգւոյ անդորրութեան եւ ուրախութեան մէջ։ Ճշմարիտ մարդը, երբ բախտաւոր չ'է աշխարհիս մէջ, ամենեւին չը գանգատիր իւր վիճակէն, իւր ընկերէն եւ հասարակութեան կարգադրութենէն. վասն զի չ'է վառուած աշխարհային վայելչութեան տենչանքով։ Նա չը յուսահատիր երբէք պատահած ձախորդութիւններէն, զորս յօժարութեամբ կը կրէ։ Նա կեանքը չ'արհամարհեր, թէ եւ կեանքը անբաւական է նորա եռանդուն սրտի զգացմունքը գոհացնելու եւ համապատասխան չ'է մարդոյ հոգեկան եռանդին։ Նա կարող է թողուլ կեանքը առանց ափսոսալու եւ դիմել 'ի մահ՝ առանց թուլութեան, դիմել 'ի մահ յուսով եւ խաղաղ սրտով, երբ իւր պարտաւորութիւնը կը պահանջէ, որ նա չը խնայէ իւր կեանքը։ Նա կը կատարէ իւր պարտքը այնքան մեծ ջերմեռանդութեամբ, որչափ որ մեծ եւ ծանր են կատարելու հանգամանքները։ Այս հանգամանքներն են, որ աւելի միջոց կը տան որ առաւել բացուի մարդոյ ազատութիւնը եւ բարոյական առաքինութիւնը։ Մարդ երբ այս բարոյական կատարելութեանը կը դիմէ, ինչ վիճակի մէջ որ լինի, երբէք չը նախանձիր այլոց բախտաւորութեան, ճոխութեան եւ արտօնաւորութեան կամ մեծութեան վրայ, որոցմէ ինքը զրկուած է։ Նա երբէք չը մտածեր այլոց ամբարտաւան հոգւոյն հաւասարելու եւ կամ միջոցներ որոնելու, որով կարենայ գերազանցիլ ուրիշներէն։ Նա ճշմարիտ հաւասարութիւնը միայն առաքինութեան մէջ կը տեսնէ եւ Աստուծոյ առջեւ հաւասար լինելուն մէջ։ Նա փառաց կը փափաքի, բայց իւր փառասիրութեան միակ նպատակն է բարձրանալ բարոյականութեամբ, զօրաւոր լինիլ ճշմարտութեամբ, սրտի բարութեամբ, հաւատով, սրբութեամբ եւ առաքինութեամբ։ Նա իշխանութեան կը փափաքի, բայց իւր որոնած իշխանութիւնն է իշխանութիւն բարոյական օրինաց, իշխանութիւն իւր անձին եւ իւր կրից վրայ։ Այս բարոյական իշխանութիւնն է, զոր չը փոխեր նա երբէք աշխարհիս բոլոր իշխանութեանց հետ։ Բայց պէտք է ասել, որ նա իւր բաղձանքը եւ աշխատանքը չը սահմանափակեր միայն այս վսեմ անձնասիրութեան մէջ, այլ աւելի զօրաւոր կերպով կ'աշխատի իւր ընկերի, իւր ազգակցի եւ բոլոր հասարակութեան յառաջադիմութեան համար։ Եւ իւր աշխատանացը բուն նպատակ կը բռնէ աւելի հասարակաց հոգեւոր եւ բարոյական շահը քան թէ նիւթականը։ Նա ուրախութեամբ կը նուիրէ իւր անձը հասարակաց լուսաւորութեան համար, որպէս զի տարածէ նոցա մէջ ճշմարիտ լուսաւորութիւն, հաստատէ նոցա սրտերու մէջ առաքինութեան կանոններ եւ բարոյական օրէնքներ։ Նա պատրաստ է

մինչեւ անգամ իւր կեանքը զոհել այս դլխաւոր եւ ամենաանձ օրէնքը թագաւորեցնելու համար, որ է Սէր առ Աստուած եւ առ մարդ, եւ արդէն վարձատրուած կը համարի իւր անձը, եթէ կարենայ բարոյապէս ազնուացնել իւր շրջակայ մարդիկը, եթէ կարենայ փոխանակ ագահ, նախանձոտ եւ թշնամանող մարդկանց՝ սեռնել խոհեմ, զգաստ, արդար, մարդասէր եւ աստուածասէր մարդիկ։ Սակայն պէտք է նա՝ որ աշխարհս որչափ որ կատարելագործուի, զարձեալ կարող չէ կատարեալ բարեկարգութեան աշխարհ լինիլ եւ կամ արդարութեան անպայման թագաւորութիւն. վասն զի մեր Փրկչի թագաւորութիւնը այս աշխարհէն չէ։ Ուստի եւ մարդոյ միակ կոչումն է կատարել աշխարհիս մէջ բարոյական օրէնքը, կատարել ինչ որ կը պահանջէ մեզմէն մեր երջանկութիւնը, ինչ որ համաձայն է Աստուծոյ նախախնամութեան։ Ձչմարիտ մարդոյ կեանքը մի պատերազմ է։ Նա կը պատերազմի արդարութեան համար՝ անարդարութեան դէմ, սիրոյ համար՝ ատելութեան դէմ, ճշմարտութեան համար՝ մոլորութեան եւ սուտութեան դէմ։ Նա կը պատերազմի այսօր, վաղը եւ յաւիտեան։ Մարդոյ սիրտը ստեղծուած է Աստուծոյ համար, կ'ասէ Օգոստինոս, եւ այս է պատճառն, որ նա անհանդիստ է միշտ, եւ չը հանդարտիր երբէք, մինչեւ որ չը հանդստանայ Աստուծոյ մէջ։



ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏԳԱՄԱՅ

ԵՒ

ՕՐԻՆԱՅ ՎՐԱՅ

ԱՌ ՀԱՍԱՐԱԿ

«Աստուծոյ երկիր եւ զպատուիրանս նորա պահեա, զի այս է մարդն ամենայնի։ Ժող. ԺԲ. 13։

ԲԱՐՈՅԱԿԱՆ օրէնքն է կանոն գործողութեան, որոյ հետ պարտաւոր ենք համաձայնեցնել մեր կամքը եւ գործքը, որպէս զի չը զրկուինք յաւիտենական երջանկութենէ։ Կամի Աստուած, որ մենք այս բարոյական օրէնքը կատարենք՝ չարժուած լինելով հնազանդութենէ և՛ի սիրոյ առ Նա։ Եւ որովհետեւ բարոյական օրէնքը անհրաժեշտ և ընդհանուր պարտաւորութիւն է ամեն մարդոյ համար, ուստի պէտք է որ յետագայ չորս նշանները կամ պայմանները ունենայ։

Ա. Պէտք է որ Օրէնսդիրն մեզմէ բարձր լինի, որպէս զի իրաւունք ունենայ հրամայելու և օրէնք տալու։

Բ. Պէտք է որ օրէնքը արուած լինի պարզ կերպով, որպէս զի կատարողները կարենան իմանալ թէ ինչ կը պահանջէ օրէնքը։

Գ. Պէտք է որ պատուիրէ մեզ այն բանը, ինչ որ արդար է և համաձայն մեր բնութեան։

Դ. Պէտք է որ օրէնքը ունենայ վարձ և պատիժ, որպէս զի ազդէ մեր վրայ և նաւաճէ մեր կամքը։

Ա. Այս նշանները լիովին կը դանուին Աստուծոյ օրինաց մէջ։

Աստուած իւր կամքը յայտնած է իւր խօսքով և մեր խղճմտանքով։ Ա. Այս խղճմտանքի օրինաց վրայ է, որ կը խօսի Պօղոս առաքեալն. "Ա. Յ. յորժամ հեթանոսք, որք զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն դործեն։ Նոքա, որք զօրէնս ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք, որք ցուցանեն զդործս օրինացն գրեալ՝ ի սիրտս իւրեանց՝ վկայութեամբ մտաց իւրեանց՝ և յանդիմանել զիմեանս՝ ի խորհրդոյ իւրեանց, կամ թէ պատասխանի իսկ տալ յաւուրն, յորում դատիցի Աստուած զդաղտնիս մարդկան ըստ աւետարանի իմոյ՝ ի Ձեռն Ցիսուսի Քրիստոսի "։ Հռով. Բ. 14—15։

Ա. Այս օրէնքը, որ Բնական կանուանի, այնպիսի մէջոց է, որ կարող է մեզ հեռացնել չարութենէ և տանել առ Աստուած։ Սակայն լինքն ըստ լինքեան այս օրէնքը անզօր է, ինչպէս կը տեսնենք, որ չատ մարդիկ կը պատրեն իրենց խիղճը և կամ կը քնացնեն, ուստի Աստուած իւր խօսքով տուած է մեզ ուրիշ օրէնք, Հին և Նոր Կտակարանի կամ Աստուածաշնչի մէջ, որ կը պարունակէ ամեն բան, ինչ որ կարեւոր է մեր փրկութեան համար։ Աստուածաշնչի մէջ կը պարունակին ամեն աստուածային օրէնքները, որոց մէջ կարող ենք դտնել ամեն մեզ պատուիրուած պարտաւորութիւնները։

Երբայեցւոց այն օրէնքները, որոնք կը վերաբերէին իրենց քաղաքական վիճակին և պատմական ժամանակաւոր հանդամանքներուն, դադարեցան։ Բայց այն օրէնքը, որ բնական կապակցութեան վրայ հիմնուած է, որ կը կապէ մարդը Աստուծոյ հետ և միւս մարդկանց հետ, այն բարոյական օրէնքը ընդհանուր է և մշանջենաւոր, զոր պարտաւոր ենք կատարել մեր երկրաւոր և երկնաւոր կենաց երջանկութեան համար։ Տանաբանեալ Պատուիրանքը այս բարոյական օրինաց մասն է։ Ա. Այս բարոյական օրէնքն է, որ պէտք է լինի կանոն մեր բարի գործոց և այս օրինաց վրայ է որ կը խօսի Քրիստոս. "Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ լնուլ "։ Մտթ. Ե. 17։

Տանաբանեալ պատգամները մեկնելու համար պարտաւոր ենք հետեւիլ այն կանոններուն, զորս Փրկիչը յուցած է մեզ՝ Մատթէոսի աւետարանի հինգերորդ գլխոյն մէջ, ուր կը լրացնէ անկատար օրէնքները և կը հերքէ այն թիւր մեկնութիւնները, որով երբայեցւոց ուսեալները կամ օրինականները կը մեկնէին, Աստուծոյ օրէնքը։ Ա. Այս բարոյական օրէնքները ճշմարտապէս մեկնելու կամ բացատրելու համար՝ պարտաւոր ենք խնամել.

Ա. Որ Աստուծոյ օրէնքը հոգեւոր է, այսինքն կը պահանջէ ոչ միայն արտաքին դործքեր, այլ և մեր միտքը, մեր սիրտը, մեր զգայմունքը և մեր կամքը, ինչպէս որ եօթներորդ պատուիրանը բացատրելու ժամանակ պարզապէս կը հասկացնէ մեզ Քրիստոս ասելով. "Լուարուք ասացէն, զի ասացաւ առաջնոցն՝ Մի չնար. բայց ես ասեմ ձեզ, թէ ամենայն որ հայի՝ ի կին մարդ՝ առ՝ ի ցանկանալոյ նմա, անդէն չնացաւ՝ ի սրտի իւրում "։ Մտթ. Ե. 27—28։ Նոյն իսկ տասներորդ պատուիրանը՝ ցանկանալը կամ ցանկութիւնը արդիլելով՝ պարզապէս կը յայտնէ, որ աստուածային օրէնքը հոգեւոր է։

Բ. Աստուած որ և է դէմաւոր յանցանք արդիլելով՝ կարդելու նմանապէս նոյն յանցանաց հետ յարաբերութիւն ունեցող ամեն մեղքեր։ Օրինակի համար, չնութիւնը արդիլելով՝ կարդելու ամենափոքր միտումներ, ցանկութիւններ և վարմունքներ, որոնք՝ ի չնութիւն կառաջնորդեն։ Սուտ վկայութիւնը արդիլելով՝ կարդելու ամեն՝ ի զուր և անմիտ երդումն։ Մտթ. 33—37։

Գ. Երբ Աստուած յանցանքը կարդելու, նորա դէմ կը պատուիրէ նոյնպէս և առաքինութիւն։ Օրինակի համար, չնութիւնը արդիլելով՝ կը պատուիրէ ողջախոհութիւն, վրէժխնդրութիւնը արդիլելով՝ կը պատուիրէ անձնազոհութիւն, որով խաղաղութիւնը կը պահուի և կը հաստատուի։ Մտթ. Ե. 38—41։ Աստուած առելութիւնը արդիլելով՝ կը պատուիրէ սէր առ թշնամին։ Մտթ. Ե. 43—47։ Աբրահամին աստուածային պաշտօն տալն արդիլելով՝ կը պատուիրէ միայն պաշտօն մատուցանել միայն Աստուծոյ։

Դ. Որ և է մեղք արդիլելով՝ կ'արդելու Աստուած ամեն բան, ինչ որ կարող է դէպ՝ ի արդիլուած մեղքը տանել։ Այսպէս ահա պատուիրանը արդիլելով՝ կ'արդելու ընդ նմին

ատելութիւնը, նախանձը, բարկութիւնը, վրէժխնդրութիւնը, ցանկութիւնը, անարգ և նախատական խօսքերը, վէճը և վատ վարմունքը։ Մատ. Ե. 21—22։ Սոյնպէս պատուիրելով որ և է պարտաւորութիւն՝ կը պատուիրէ ամեն բան, ինչ որ կը դիւրացնէ նոյն պարտաւորութեան կատարումն։

Ուրեմն հետեւելով սոյն կանոններուն, կարող ենք տասնաբանեայ պատգամները համաձայնեցնել Աստուծոյ ամեն պատուիրանաց հետ և հասկանալ միանգամ որ տասնաբանեայ պատուիրանքը մեր պարտաւորութեանց համառօտութիւնն է։

Տասնաբանեայ պատուիրանաց գլխաւոր հիմն այս է, որ կայ մի Աստուած գերագոյն, յաւիտենական, արարիչ, աղբիւր կենաց, ազատիչ, բարերար, Աստուած ամենակարող և նախանձաւոր, Աստուած վարձահատոյց, ուրեմն և Աստուած՝ գերագոյն բարութիւն մարդոյ։ Այս գլխաւոր վարդապետութեան վրայ հիմնուած է բովանդակ Բարոյականութիւնը՝ որոյ պատուանդանն է սէր առ Աստուած հնազանդութեամբ հանդերձ, որ է սկիզբն մեր բոլոր պարտաւորութեանց։ Աստուած ողորմած է այն մարդոց վրայ, որոնք կը սիրեն զԱստուած և կը պահեն ու կը կատարեն նորա պատուիրանքները։ Այս գլխաւոր պարտաւորութեան մէջ կը պարունակին ամեն պարտաւորութիւններ առ Աստուած, որոնք գրուած են պատգամաց առաջին տախտակին վրայ և կը պարունակին նոյնպէս պարտաւորութիւններ առ ընկերն, որոնք գրուած են պատգամաց երկրորդ տախտակին վրայ։ Մեր առ Աստուած ունեցած հնազանդութիւնը և սէրը կը բանայ մեր սիրտը ամեն բանի համար, ինչ որ կը պահանջէ մեզմէ հասարակութիւնը կամ մարդկութիւնը և կը բանայ նոցա պահանջածէն աւելի։

Տասնաբանեայ պատուիրանքը կ'արգելու նաեւ չար ցանկութիւնը, որ հիմն է ամենայն չար գործոց։ Կը պարունակէ իւր մէջ պարտաւորութիւններ առ անձն, որ է մերժողութիւն կամ իշխանութիւն անձին նկատմամբ։ Այնպէս որ աստուածային օրինաց մէջ ամեն պարտաւորութիւնները շղթայի պէս կապուած են իրարու հետ, որով և կարող ենք իմանալ հետեւեալ ճշմարտութիւնները։

Ա. Տասնաբանեայ պատուիրանքն է օրէնք ընդհանուր

արդարութեան, որ կը հրամայէ հատուցանել ամենուն, ինչ որ պարտաւոր ենք։

Բ. Նա է գեղեցիկ համառօտութիւն բնական իրաւանց, որ հիմնուած է մարդոց առ Աստուած և առ ընկերս ունեցած անփոփոխ յարաբերութեանց վրայ։

Գ. Նա է ուխտ աստուածային, որոյ հետ կապուած են մարմնաւոր կամ ժամանակաւոր և հոգեւոր կամ յաւիտենական օրհնութիւնք։ "Եւ պատմեաց ձեզ զուխտն իւր, զոր պատուիրեաց ձեզ առնել զտասն պատգամսն և գրեաց զնոսա 'ի վերայ երկուց քարեղէն տախտակաց"։ Օրին. Դ. 13։

Դ. Նա է ճշմարիտ հիմն — գլխաւոր օրէնք — համայն մարդկային միաբանութեան կամ ընկերականութեան, որով կը կազմին և կը հաստատուին ազգք և ազինք։ Նա կը հաստատէ իրաւունքներ և պարտաւորութիւններ ընկերականութեան ամեն մէկ անդամի համար։ Նա կը ծանուցանէ և կը հաւաստէ, որ Աստուած է գլուխ ամեն մարդկային միաբանութեան. ուստի և կը պատուիրէ ճանաչել զնա որպէս ամենակարող և հանապազորդեան պաշտպան օրինաց։

Ե. Տասնաբանեայ պատուիրանքն է հիմն կանոնաւոր աստուածպաշտութեան։ Նովաւ կարեմք արժանաւոր պաշտօն մատուցանել Աստուծոյ և պահել ոգի ընդհանուր արդարութեան. վասն զի նա է որ կը յիշեցնէ մեզ մեր պարտաւորութիւնները և կը զարթուցանէ մեր միտքը՝ չը մոռանալ մեր կոչումը և մեծ նպատակը։

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՊԱՏԳԱՄԱՑ

ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ

Տասնաբանեայ պատուիրանաց յառաջաբանը այսպէս կը սկսի. "Ես եմ Տէր Աստուած քո, որ հանի զքեզ յերկրէն յԵգիպտացւոց 'ի տանէ ծառայութեան"։

Աստուած այս խօսքերով կը հրաւիրէ իւր ժողովուրդը հնազանդիլ իւր ամենաբարի կամքին և այս մասին կ'առաջադրէ երեք պատճառ. Ա. Որ իրմէ կախումն ունին, ուստի և կ'ասէ. Ես եմ Տէր. Բ. Որ ինքը իրաւունք ունի հրաւիրելու, ուստի և կ'ասէ. Ես եմ Տէր Աստուած քո. Գ. Որ շնորհակալութեան զգացմունք կամի զարթուցանել ժողովրդի սրտին մէջ, ուստի և կ'ասէ. Որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց 'ի տանէ ծառայութեան։

Այս երեք պատճառները մեծ նշանակութիւն ունին նոյնպէս և Քրիստոնէից համար։ Աստուած, ինչպէս որ Եբրայեցւոց Տէրն էր, նոյնպէս և մեր Տէրն է, մեր Արարիչն և մեր Նախապատճառն։ Նա է միակ աղբիւր կենդանութեան և երջանկութեան։ Նա է նմանապէս մեր Աստուածը, մեր Բարերարը, որ սիրած է զմեզ Եբրայեցիներէն աւելի։ Վասն զի այն ուխտը, զոր մեզ հետ կապեց, աւելի գերագոյն է քան Եբրայեցւոց հետ կապած ուխտը։ "Բայց արդ առատագոյն եւս պաշտաման եհաս Յիսուս, որչափ լաւագոյն եւս ուխտի է միջնորդ, որ առաւել աւետիսն օրինադրեցաւ։ Եւ վասն այնորիկ նորոյ ուխտի է միջնորդ, զի յորժամ մահ լինիցի 'ի փրկութիւն վասն առաջին ուխտին յանցանաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն 'ի ժառանգութիւն յաւիտենից"։ Եբր. Ը. 6. Թ. 15։ Աստուած ազատեց մեզ ոչ թէ Եգիպտոսի ծառայութենէն, այլ աւելի անգութ և ամօթալի ծառայութենէ, այսինքն՝ Մեղքէ և յաւիտենական Մահուանէ։

Ահա՛ պարտաւոր ենք այս ամենը մեր միտքը բերել, որպէս զի շարժուինք Աստուծոյ օրէնքը լսելու և կատարելու։

Տասնաբանեայ պատգամները երկու կը բաժանին։ Առաջնոյն մէջ կը պարունակին չորս պատուիրանք, որոնք մեր առ Աստուած ունեցած պարտաւորութեանց կը վերաբերին։ Իսկ երկրորդին մէջ կը պարունակին վեց պատուիրանք, որոնք մեր առ մարդիկ ունեցած պարտաւորութեանց կը վերաբերին։

Առաջին պատուիրանն է. "Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն"։ Այս պատուիրանով կ'արգելու Աստուած ընդհանուր կռապաշտութիւնը, այսինքն Աստուծոյ սեպհական պաշտօնը այլ իրաց տալը։ Այն պաշտօնը, զոր հեթանոսները կը մա-

տուցանէին սուտ աստուածներուն, կը կոչուէր կռապաշտութիւն։ Որովհետեւ նոքա իրենց աստուածները կը պատկերացնէին ըստ մեծի մասին կուռքի ձեւով և իսկապէս կը հաւատային, որ կարող են նոքա միջնորդ լինիլ իրենց գործքերուն։ Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք արգելական պատուիրանով՝ մենք ոչ թէ պիտի կարծենք թէ ուրիշ աստուածներ կան, այլ պարտաւոր ենք իմանալ որ այս խօսքը կը վերաբերի Եբրայեցւոց դրացի ազգաց կարծիքներուն, որոնք ամենքը պաշտօն կը մատուցանէին սուտ աստուածներու։

Երբ կը հաւատանք և կ'ընդունինք այս ամենամեծ ճշմարտութիւնը, որ կայ միայն մէկ Աստուած, ստեղծող և նախախնամող աշխարհի, որ միայն ունի իրաւունք պաշտուելու և յարգուելու, այնուհետեւ ուրիշ ստեղծուածներ պաշտել՝ կը նշանակէ ամենամեծ յանցանք գործել, կը նշանակէ Աստուածութիւնը անարգել, նորա մեծութիւնը արարածոց հաւասարեցնել և արարչական պատիւ չը տալ։ Հեթանոսները մի յայտնի օրինակ են մեզ համար թէ մինչեւ որ աստիճան կարող են մարդիկ ապականուիլ և անպիտանանալ, ճշմարիտ Աստուածը թողլով և կուռքերուն պաշտօն մատուցանելով։ Այս պատճառաւ է, որ Պօղոս առաքեալը կը պատուիրէ մի միայն Աստուծոյն պաշտօն մատուցանել. "Մի՛ ոք զձեզ խաբեսցէ, որ կամիցի խոնարհութեամբ և կրօնիւք հրեշտակաց"։ Կողոս. Բ. 18։ "Տեառն Աստուծոյ քում երկիրպագցես և զնա միայն պաշտեսցես"։ Մատ. Դ. 11։ "Եւ եղեւ 'ի մտանելն Պետրոսի, ընդ առաջ եղեւ նմա Կուռնելիոս, անկեալ առ ոտսն երկիրպագանէր, և Պետրոս կանգնեաց զնա և ասէ՝ յոտն կա՛ց և ես ինքն մարդ եմ"։ Գործ. Ժ. 26։

Առաջին պատուիրանը կ'արգելու կախարդութիւնը, չար հոգիներուն հաւատ ընծայելն և ամեն նախապաշարմունքներ, որով ոմանք կը կարծեն թէ արարածոց մէջ եւս կը գտնուի այնպիսի կարողութիւն և գուշակութիւն, զոր մի միայն Աստուած ունի։ "Մի՛ գտանիցի 'ի քեզ, որ ածիցէ զուստր իւր կամ զդուստր իւր զբոցով և դիւթիցէ զդիւթութիւն և հմայիցէ և հաւահարց լինիցի և կախարդիցէ կախարդանօք և վհուկ և նշանակետ լինիցի առ զմեռեալս հարցանելոյ"։ Երկ-

բորդ Օրին. ԺԸ. 10—11։ Վերջապէս կ'արգելու նա արդի հեթանոսութիւնը, որ թէպէտ հնոյն նման կոպիտ և վայրագ չ'է, բայց դարձեալ դատապարտութեան արժանի է. վասն զի մեր սիրտը, որ միայն Աստուծոյն կը պատկանի, արարածին կը տանք. արարածը Արարչէն աւելի կը սիրենք և մեր յոյսն ու հաւատը փոխանակ Արարչին՝ արարածի վրայ կը դնենք։ Այս եւս տեսակ մի կռապաշտութիւն է, որ նոյնպէս դատապարտուած է Աստուծոյ առջեւ։ "Սպանէք այսուհետեւ զանդամս ձեր երկրաւորս. 'ի բաց ընկեցէք զպոռնկութիւն, զպղծութիւն, զբիծ, զցանկութիւն չարեաց և զագահութիւն, որ է կռապաշտութիւն"։ Կող. Գ. 5։ "Որոց Աստուած որովայնն է և փառք՝ ամօթն իւրեանց, որք զերկրաւորս և եթ խորհին"։ Փիլիպ. Գլ. Գ. 19։

Աստուած կը հրամայէ նմանապէս. "Մի՛ լիցին քեզ աստուածք օտարք առաջի աչաց իմոց"։ Երկրորդ Օրին. Գլ. Ե. 7։

Այս խօսքերը — առաջի աչաց — աւելի կ'ընդարձակեն պատուիրանաց միտքը և կը յայտնեն որ ո՛չ թէ միայն ճշմարիտ Աստուածը թողուլն է կռապաշտութիւն, այլ և կայ այլ իմն կռապաշտութիւն, երբ մարդիկ սուտ աստուածները ճշմարիտ Աստուծոյ հետ կ'ընկերացնեն, երբ բերանով զԱստուած խոստովանիլ կը ձեւանան և սրտով օտարոտի աստուածներ կը պաշտեն։ Այս խօսքերը ցոյց կը տան նմանապէս, որ Աստուած ականատես վկայ է իւր ժողովրդեան ամեն վարմունքին և զինքն անարգուած կը համարի, երբ ժողովրդի անհաւատարմութիւնը կը տեսնէ, և հետեւապէս սաստիկ կը պատժէ։

Աստուած հրամայելով որ ժողովուրդը օտար աստուածներ չունենայ, ընդ նմին կը պատուիրէ ճանաչել, որ ինքն է մի միայն ճշմարիտ Աստուած. կը պատուիրէ պաշտել զինքն, այսինքն խոնարհեցնել իւր առջեւ ինչպէս մեր սիրտն ու միտքը, նոյնպէս և մեր մարմինը. կը պատուիրէ փառաւորել զինքն որպէս Տէր, որպէս Որ էն, յորմէ կատարեալ կախումն ունինք մենք, որ է միակ աղբիւր ամենայնի, ինչ որ ունինք և ինչու վրայ որ կարող ենք մեր յոյսը դնել. նա է մեր բովանդակ բարութիւնը, մեր կեանքը և երջանկութիւնը։ Միով բանիւ, Աստուած կը պատուիրէ մեզ ունենալ այն ամեն զգացողութիւն-

ները, որովք պարտիմք փառաւորել իւր գերագոյն կատարելութիւնները և յայտնել մեր ճշմարիտ աստուածպաշտութիւնը թէ՛ բանիւ և թէ՛ գործով։

Երկրորդ պատուիրանով կը հրամայէ Աստուած չառնել կամ չը շինել և ոչ մի նկարագիր կամ արձան Աստուածութեան և չը՝ համարել զայն իբրեւ իսկապէս Աստուած։ Այս երկրորդ պատուիրանը սերտ կապակցութիւն ունի առաջնոյն հետ. վասն զի երկուքն ևս կ'արգելուն կռապաշտութիւնը։ Սակայն առաջինը կ'արգելու ընդ հանրապէս, իսկ երկրորդը մասնաւորապէս, այսինքն, երկրորդն կ'արգելու կուռք չը շինելն սիրած առարկաներէն։ Երկրորդ պատուիրանը գլխաւորապէս Եբրայեցւոց դիւրաշարժ բնաւորութիւնը կը յանդիմանէ, որոնք արագ արագ կռապաշտութեան կը մատնուէին, որ խիստ տարածուած էր Եգիպտոսի և Քանանացւոց երկիրներուն մէջ։

Երկրորդ պատուիրանը մի առ մի յիշելով կռապաշտութեան տեսակները՝ պարզապէս կը յայտնէ մեզ որ երկնքի և երկրի վրայ չէր մնացած արարած մի, որ պաշտուած չը լինէր զանազան ձեւերով կամ նկարագիրներով։ Սակայն՝ Աստուած լինելով Հոգի պարզ և անսահման և չունենալով որ և իցէ ձեւ կամ կերպաւորական նմանութիւն, կը պատուիրէ որ իւր անունը դրօշեալներու վրայ չը դնեն և իբրեւ Աստուած ընդունելով չը նուազեցնեն այն խորին յարգանքը, զոր մարդիկ պարտին տալ աստուածութեան։ Այս պատճառաւ է, որ կ'աղաղակէ Եսայի. "Արդ՝ ո՛ւմ նմանեցուցից զՏէր, և որո՛ւմ նմանութեան նմանեցուցից զնա"։ Եսայի Գլ. Խ. 18։ Ուրեմն կռապաշտութեան կը ծառայէ մարդ, երբ իւր մէջ արարածական պատկերներ կը ստեղծանէ և իւր սիրտն ու միտքը նոցա տալով՝ կը կապուի նոցա հետ իւր հոգւոյ բոլոր զօրութեամբ և կը մատուցանէ այն պաշտօնը, զոր միայն ճշմարիտ Աստուծոյն պարտական է մատուցանել։ Կարճ ասենք, որևիցէ արարած առաւել սիրել քան զԱստուած՝ կը նշանակէ կռապաշտութիւն գործել։

Երկրորդ պատուիրանը կը հրամայէ մեզ ծառայել Աստուծոյ այնպէս, ինչպէս որ կը պատուիրէ Աստուածաշունչ Ս. Գիրքը։ Ս. Գիրքը կը պատուիրէ մեզ ծառայել Աստուծոյ համաձայն նորա բնութեան. կը պատուիրէ պաշտել զԱստուած

հոգւով և ճշմարտութեամբ. կը պատուիրէ մեզ, որ մեր պաշտօնը և յարդանքը իսկապէս մեր սրտին բխած լինին, մեր ճշմարիտ ճանաչողութենէն, զոր պարտինք ունենալ նորա գերադասութեան վրայ: Կը պատուիրէ մեզ Ս. Գիրքը, որ այս ճանաչողութեան հանձայն ունենանք և կեանք և գործք աչխարհիս վրայ: Որչափ որ Աստուած անչօշափելի է մեզ համար և մեր զգացողութեան չ'ենթարկիր, այնու ամենայնիւ մենք գիտենք, որ նա կը տեսնէ մեր հոգւոյ և սրտի խորքը, կը տեսնէ և կը ջննէ մեր հոգեկան ամեն չարժումները: Ուստի և հաւատայ ենք, որ եթէ ուղղենք առ Աստուած մեր միտքը, մեր ցանկութիւնները, մեր յարդանքը, մեր յոյսը և բաղձանքները, նա կը տեսնէ անշուշտ ամեն բան և ըստ այնմ կը վարձատրէ զմեզ: Մենք կը պաշտենք և կը պատուենք զԱստուած հոգւով, երբ նորա վրայ կը մտածենք և երբ այս մտածմունքը կը զարթուցանէ մեր մէջ զգացմունք յարգութեան, սիրոյ, ընդհակառակութեան, հաւատարմութեան և խոնարհութեան. երբ այս զգացողութիւնները ներքին հոգեւոր պաշտօն կը դառնան մեզ համար, և ոչ թէ լոկ արտաքին վարիսականութեամբ կը պատուենք զԱստուած:

Երկրորդ պատուիրանը կը յայտնէ մեզ, որ մեզ հետ խօսողն մեր Տէրն է և Աստուածը, Աստուած ամենակարող և նախանձոտ, այսինքն նա միայն ունի իշխանութիւն պատուիրել մեզ՝ թէ ինչպէս պարտինք ծառայել նորան: Նա միայն է ամենակարող և մեղաւորը կարող չէ փախչիլ նորա արդարութենէն: Նա միայն է ամենարդար և աստիճ բարիութեամբ կը պատժէ այն ճարպիկը, որոնք նորա մեծութեան սեպհական պաշտօնը այլոց կը տան և անարժանութեամբ կը ծառայեն:

Սուրբ Գրոց մէջ գործ դրուած Նախնյոտ բառը պարտինք հասկանալ այնպէս, ինչպէս վայել է Աստուածութեան: Ս. Գիրքը Աստուծոյ միութիւնը իր երկերկրացին հետ շատ անդամ ամուսնութեան կը նմանցնէ, ուստի և Նախնյոտ խօսքը այս ամուսնութեան նկատմամբ պարտինք ընդունիլ: "Եւ խօսեցայց ընդ քեզ ինձ յաւիտեան և խօսեցայց ընդ քեզ ինձ արդարութեամբ և իրաւամբ, և ողորմութեամբք և դթութեամբք,

և խօսեցայց ընդ քեզ ինձ հաւատովք և ծանիցես զՏէր „: Ովսէ. Բ. 19—21. "Հնազանդ լերուք միմեանց երկիւղիւ Քրիստոսի. կանայք իւրեանց արանց հնազանդ լինիցին իբրեւ Տեառն, զի այր է գլուխ կնոջ, որպէս և Քրիստոս գլուխ է Եկեղեցւոյ և ինքն է փրկիչ մարմնոյ „: Եփես. Գ. ե. 22—23:

Իսկ այս սպառնալիքը — Հպատացանեմ ընդդէմ հարց՝ որդոց իւրեանց, յերից և ի չորս ազգս ատելեաց իմոց — կը նշանակէ որ, եթէ իսրայէլացիք կռապաշտ դառնան, պիտի պատժուին մեծամեծ աղէտներով և թշուառութեամբ, որոյ դառնութիւնը պիտի զգան ոչ միայն ինքեանք, այլ և իւրեանց որդիքը և նոցա թոռները: Եւ արդարեւ՝ այս սպառնալիքը իսկապէս կատարուեցաւ Իսրայէլացւոց վրայ Բաբիլոնեան եօթանասնամեայ գերութեան չրջանին մէջ: Աստուած կամէր այս սպառնալիքով զգուշացնել Իսրայէլացիները և հայրական դուխ զարթուցանել նոցա սրտի մէջ դէպ ի իւրեանց սերունդը, որպէս զի գոնէ իրենց ապագայ սերունդը խնայելով՝ հեռանան չարութենէ, հեռանան մոլորութենէ և կռապաշտութենէ: Կամէր Աստուած զգուշացնել, որպէս զի արհամարհանք և չը մտանուին անհաւատարմութեան: Որովհետեւ, ինչպէս որ ժամանակի պարագաները իրարու հետ կապ ունին, նոյնպէս է և սերնդոց միութիւնը: Իսրայէլացւոց պատահած ապաքաղաքութիւնը պիտի չարունակուէր և իրենց սերունդները հարուածներ. ուստի Աստուած կը զգուշացնէր, որպէս զի դէթ սերունդները ազատ մնան կռապաշտութենէ և պատժոյ չ'ենթարկուին:

Այս պատիժը արդարութեան հակառակ չէ. վասն զի պատիժը ընդհանուր էր և ժամանակաւոր, որոյ հետեւանքը կը զգային ոչ միայն որդիքը, այլեւ թոռները: Ապագային հետ կային և արդարներ այս պատժոյն ենթարկուած, սակայն նոցա կրած նեղութիւնները իբրեւ փորձութեան միջոցներ էին, որով Աստուած օրինակ կը տար այլոց՝ նոցա հաւատքը, բարեպաշտութիւնը, համբերատար ժուժկալութիւնը և ճշմարիտ աստուածպաշտութիւնը: Աստուած կը զօրացնէր և կ'օգնէր նոցա վազ թէ անագան հաղթելու նեղութեանց և զօրանալ ամեն գժուարին հանգամանաց մէջ:

Թէպէտեւ կը՛սպառնայ Աստուած, բայց միանդամայն և ցոյց կը տայ իւր ողորմածութիւնը, ինչպէս յայտնի է յետագայ խօսքերէն. "Եւ առնեմ ողորմութիւն 'ի հազար ազգս սիրելեաց իմոց և որոց պահիցեն զկամս իմ„ ։ Բ. Օրին. Ե. 10 ։

Այս խոստումն կը նշանակէ, որ եթէ Իսրայէլացիք լինէին հաւատարիմ Աստուծոյ ծառայութեան մէջ և ունենային ջերմեռանդն և հաստատուն կամք նորա՞ պատուիրանքները պահելու, Աստուած պիտի օրհնէր, պահէր և պաշտպանէր նոցա սերունդը երկար ժամանակ, ինչպէս և կ'ասէ Դաւիթ մարգարէն ։ "Այսպէս Աստուած կը խոստանայ վարձատրել բարի մարդը և երկար դարերով պահել ու պաշտպանել նորա սերունդը„ ։ Այս ժամանակաւոր օրհնութեան և պատժոյ խոստումները իսկապէս միայն Եբրայեցւոց ազգին կը վերաբերէր, որոնք, ժամանակի պարագաներէն և ոգիէն ըսախպուած, բազմաթիւ սերունդը և աշխարհի վրայ ունեցած երկար կեանքը ամենացանկալի օրհնութիւն կը համարէին ։ Սակայն Քրիստոնեայք եւս պարտական են հասկանալ թէ ո՞րչափ մեծ նշանակութիւն ունի Աստուծոյ պատշաճաւոր ծառայութիւնը և ի՞նչքան հաճոյական է այն եռանդը և փափաքը, որով մենք կը բաղձանք Աստուծոյ սիրոյն արժանանալ ։

Աստուծոյ խոստումները համեմատելով սպառնալեաց հետ, պարզապէս կը տեսնենք՝ թէ ո՞րչափ շատ է Աստուծոյ ողորմածութիւնը ։ Աստուած իւր օրէնքը չը պահողները կըսպառնայ արդարութեամբ պատժել և այս պատիժը սահմանաւոր է. իսկ իւր պատուիրանքները պահողները կը խոստանայ սիրով և ողորմածութեամբ վարձատրել, և այս ողորմածութեանն ու սիրոյն սահման չէ նշանակած. "Եւ առնեմ զողորմութիւն 'ի հազար ազգս սիրելեաց իմոց և որոց պահիցեն զհրամանս նորա„ ։

ԲԱՐԵՊԱՇՏ ԶԳԱՑՄԱՆՑ ՎՐԱՅ

Հոգիով և ճշմարտութեամբ զԱստուած պաշտելու համար՝ պարտաւոր ենք մենք լցուած լինիլ զարմացմամբ, յարգանօք, երկիւղիւ, սիրով, հաւատարմութեամբ և հնազանդութեամբ ։ Պարտաւոր ենք Աստուծոյ միակ կամքը մեզ ուղեցոյց ունենալ և նորա անհուն մեծութեամբ սքանչանալ. վասն զի Աստուած կը բովանդակէ իւր մէջ ամեն կատարելութիւն և նորա կարողութիւնը այնչափ մեծ և բարձր է, որ մեր երեւակայութենէն և մտքէն անդամ'ի վեր է ։ Այս զգացմունքներով լցուած էր Դաւիթ մարգարէի հոգին, երբ հիացմամբ կը նկարագրէր Աստուծոյ մեծամեծ գործքերը աղաղակելով. "Տէ՛ր, տէ՛ր մեր, զի սքանչելի է անուն քո 'ի վերայ ամենայն երկրի ։ Համբարձաւ մեծ վայելչութիւն քո 'ի վերոյ քան զերկինս„ ։ Ը. 1—2 ։ Այս զգացմամբ լցուած են նոյն իսկ հրեշտակները. "Զոր ցանկային տեսանել գոնեայ ընդ աղօտ հրեշտակք„ ։ Ա. Պետ. Ա. 12 ։ Երբ փրկութեան խորհուրդը կը պատկերացնենք մեզ և այս զարմացան զգացումը կը համեմատենք Աստուծոյ անսահման էութեան հետ՝ մի խորին յարգանք և անպատում երկիւղածութիւն կը ծնի մեր սրտի մէջ ։ Այնպէս է մեր ոչնչութիւնը Աստուծոյ առջեւ, որ բոլոր մեր յարգն ու պատիւը անզօր են յայտնել ամեն բան, ինչ որ մենք պարտական ենք Աստուծոյ ։ Ուստի ջերմաջերմ երախտագիտութեամբ և գոհութեամբ պարտաւոր ենք ատել ամեն բան, ինչ որ ընդդէմ է նորա պատուոյն և նորա տէրութեանը, ինչ որ հակառակ է նորա կատարելութեանցը և Նախախնամութեանը, ինչ որ անարգանք է նորա աստուածային խօսքին, նորա պաշտօնին, նորա տաճարին և պաշտօնեաներուն, ինչ որ նախատինք է նորա արդարութեանը և դատաստանին ։ Վասն զի ամենէն ահռելի յանցանքն է ոտնակոխ առնել Աստուծոյ պատիւը և անունը, և այս է ահա՛ որ կանուանի Հայհոյութիւն և Պղծութիւն, և այս հայհոյութիւնը Եբրայեցւոց մէջ կը պատժուէր մահուամբ ։ Հետեւապէս, այնպէս սուրբ և անարատ պարտինք

լինիլ, որ մեր ամեն մէկ խօսքէն, մեր բովանդակ կեանքէն հասկացուի յայտնապէս, որ մենք 'ի բոլոր սրտէ կը պատուենք զԱստուած: "Եւ արդ՝ ասէ տէր, զփառաւորիչս իմ փառաւորեցից, և որ արհամարհէն զիս՝ անարգեսցի „: Սամ. Բ. 30: Աստուծոյ էութիւնը, Աստուծոյ գաղափարը պէտք է որ ծընանի մեր մէջ երկիւղ և ջերմեռանդն սէր, որով կարենանք հաճելի լինիլ նորան և ուրախութեամբ կատարել մեր ամեն պարտաւորութիւնները. հնազանդելով նորա կամացը և արժանի լինելով նորա շնորհացը: "Երկիւղ տեառն ատեաց զանիրաւութիւն „: Առակ. Ը. 13:

Մենք պարտաւոր ենք երկիւղ ունենալ Աստուծմէ, որովհետեւ Աստուած անսահման իրաւունք ունի մեր վրայ: Նա է մեր Արարիչն, Նախախնամողն, Բարերարն և Փրկիչն: Նա տուաւ մեզ օրէնքներ մեր կեանքը ուղղելու համար: Նա վկայ է մեր ամեն խօսքերուն և գործքերուն, մեր ամեն մտքերուն և զգացմունքներուն: Նա է մեր դատաւորն և նորա վճռէն կախուած է մեր երջանկութիւնը կամ ապերջանկութիւնը, ինչպէս կասէ Երեմիա մարգարէն. "Ո՛ ոչ երկիցէ 'ի քէն, թագաւոր ազգաց, զի քեզ իսկ վայել է „: "Որդի փառաւոր առնէ զհայր, և ծառայ երկնչի 'ի տեառնէ իւրմէ: Իսկ արդ՝ եթէ հայր եմ, ո՞ւր են փառք իմ, և եթէ տէր եմ, ո՞ւր է պատիւն իմ, ասէ տէր ամենակալ „: "Եւ վախճան բանիցս, զամենայն ինչ լո՛ւր, յԱստուծոյ երկի՛ր և զպատուիրանս նորա պահեա՛. վասն զի այս է ամենայն մարդն „: Եւ եթէ հայր կոչիցէք զայն, որ առանց ակնկալութեան դատի, ըստ իւրաքանչիւր գործոց, ապա երկիւղիւ զծերոցն պանդխտութեան ժամանակս գնասջիք „: Երեմ. Ժ. 7: Մաղաքիա. Ա. 6: Էկղես. ԺԲ. 13: Ա. Պետ. Ա. 17:

Այս երկիւղը պէտք է որ յաղթող հանդիսացնէ զմեզ ամեն փորձութեան և ամեն երկիւղի վրայ: Վասն զի, նա, որ Աստուծոյ երկիւղն ունի, բարձր է կրից զօրութենէն, բարձր է աշխարհային վայելչասիրութենէն, բարձր է ամեն մարդկային երկիւղներէ. վասն զի երկիւղած մարդէն հեռի է ամենայն երկիւղ և յաղթող է ամենայնի: Նա բարի կը գործէ ո՛չ թէ մարդկանց հաճոյանալու համար, այլ որպէս ծառայ Աստուծոյ: Նա բնաւ երբէք չը համարձակիր ժամանակաւոր նեղութեանց համար անպատուել Աստուծոյ անունը: Նա հալածանաց և մահուան մէջ անդամ կ'աղաղակէ. "Ես ուրիշ երկիւղ չ'ունիմ բաց Աստուծմէ „: Սորա համար է, որ Փրկիչը կը յորդորէ զմեզ ասելով. "Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց, մի՛ զարհուրիցիք յայնցանէ, որ սպանանեն զմարմին և յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել, այլ երկնչիցիք յայնմանէ, որ յետ սպանանելոյ՝ ունի իշխանութիւն արկանել 'ի գեհեն „: "Ես եմ նոյն որ մխիթարեցի զքեզ. ծանի՛ր զինչ ոք էիր և երկեար 'ի մահկանացու մարդոյ և յորդւոյ մարդոյ, որ իբրեւ զխոտ ցամաքեցաւ „: Ղուկ. ԺԲ. 4: Եսայի. ԾԱ. 12: Այս տեղէն պարզապէս կերեւի այն խօսքի ճշմարտութիւնը, որ կասէ. "Աստուծոյ իմաստութիւնը պէտք է որ Աստուծոյ երկիւղէն սկսուի . . .: "Սկիզբն զգօնութեան երկիւղ տեառն, իմաստութիւն՝ բարի ամենեցուն, որք առնեն զնա, օրհնութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից „: Սաղ. ՃԺ. 8:

Աստուծոյ երկիւղը կապուած է նորա պատուոյ և սիրոյ հետ. վասն զի Աստուծոյ երկիւղը անքակտելի միութիւն ունի այս յարգանաց և սիրոյն հետ, զոր մենք պարտինք ունենալ առ Աստուած: Վասն զի Աստուծոյ երկիւղն է երկիւղ որդւոյ և ո՛չ երկիւղ ծառայի, և այս երկիւղի համար է որ կ'ասէ Փօղոս առաքեալն. "Զի ոչ առիք զհոգի ծառայութեան միւսանգամ երկիւղ, այլ առիք զհոգի որդեգրութեան, որով աղաղակեմք աբբայ հայր „:

Լաւ սննդուած որդւոց համար քաղցր և իմաստուն հօր երկիւղը ամենեւին ծանր պարտաւորութիւն չ'է, այլ մխիթարութիւն: Նոցա երկիւղը ոչ այլ ինչ է եթէ ոչ ջանալ հաճոյ լինել իրենց գթոտ հօր սիրոյն և զդուշանալ նորա ողորմութենէն չը զրկուելու:

Այս երկիւղը, սպառնալիքը և պատիժը վախնալու երկիւղ չ'է, այլ հայրական սիրոյ քաղցրութենէն զրկուելու երկիւղ: Երբ այս գեղեցիկ երկիւղը տպաւորուած է մեր սրտի մէջ, միշտ արթուն ենք մենք և հետեւապէս յուսահատական դժբաղդութիւններէ ազատ:

Մենք պարտաւոր ենք սիրել զԱստուած, որովհետեւ

Աստուած թէ՛ սիրուելու ամեն կատարելութիւններն ունի և թէ՛ կը ծածկէ զմեզ իւր սիրով և բարութեամբ, ինչպէս բընութեան, նոյնպէս և միաբանութեան մէջ։ Պարտաւոր ենք սիրել, վասն զի նախ նա սիրեց մեզ։ "Ոչ զի մեք սիրեցաք զԱստուած, այլ զի նա սիրեաց զմեզ։ Զի եթէ մինչ թշնամի էաք՝ հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ որդւոյ նորա, որչափ ևս 'ի հաշտելս մերում ապրեսցուք կենօք նորա։ Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետ, զի ամենայն որ հաւատայ 'ի նա, մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենականս„ Յով. Ա. Բղ. Դ. 10։ Հռով. Ե. 10։ Յով. Գ. 16։ Աստուած տուաւ մեզ իւր հոգին, որպէս զի նորոգէ մեր մէջ իւր պատկերը. "Բայց գիտեմք, եթէ որոց սիրենն զԱստուած յամենայնի գործակից լինի 'ի բարիս„։ Հռով. Ը. 28։ Մենք պարտաւոր ենք սիրով և շնորհակալութեամբ լցուած լինիլ, որովհետեւ Աստուած կը սիրէ զմեզ առանց ակնկալութեան, և մանաւանդ որ մենք կարող չենք երջանիկ լինել առանց զԱստուած սիրելու։ Նա միայն է, որ կարող է լցուցանել մեր անսահման ցանկութիւնները և կարօտութիւնները, գոհացնել մեր սիրտը և բժշկել մեր բոլոր ցաւերը։ Այս սիրով լցուած էր Դաւիթ մարգարէն, երբ կ'աղաղակէր։ "Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս, կամ 'ի քէն զի՞նչ ևս խնդրեցից յերկրի, նուազեցաւ սիրտ իմ և մարմին իմ, Աստուա՛ծ սրտի իմոյ և բաժին իմ, Աստուած յաւիտեան„։ Սաղ. ՀԲ. 25—26։

Պարտաւոր ենք սիրել զԱստուած, որովհետև Աստուած ինքն այս սէրը պարտաւորութիւն դրած է մեր վրայ. "Ցո՛ւր յիս, որդեակ, զսիրտ, սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ և յամենայն մտաց քոց„։ Առակ ԻԳ. 26։ Մատ. ԻԲ. 37։

Աստուած, պատուիրելով որ զինքը սիրենք բոլոր սրտով և բոլոր մտքով, կ'ուսուցանէ միանգամայն, որ աստուածային սիրով պէտք է որ լցուած լինի մեր սիրտը, նոյն սէրը պէտք է որ տիրէ մեր սրտի վրայ, ուղղէ մեր բոլոր ընդունակութիւններն ու մեր մտաց բոլոր զօրութիւնը, և միանգամայն հեռացնէ մեր սրտէն ամեն յանցաւոր կապակցու-

թիւն. "Մի՛ սիրէք զաշխարհ և մի՛ որ ինչ յաշխարհի է, եթէ ոք սիրէ զաշխարհ, ոչ է 'ի նմա սէր հօր„։ Յով. Ա. Թղ. Բ. 15։

Մեր ամենէն անմեղ կապակցութիւններն անգամ պէտք է որ Աստուծոյ սիրոյն ենթարկուած լինին։ Պարտական ենք զԱստուած ամեն բանէ առաւել սիրել, և մեր սիրածներն ևս այնպէս պէտք է սիրենք, ինչպէս Աստուած կը հրամայէ։ Պէտք չ'է որոնենք նոցա մէջ՝ ոչ հանդստութիւն և ոչ երջանկութիւն. վասն զի կատարեալ երջանկութիւնը միայն Աստուծոյ մէջ է։ "Որ սիրէ զհայր կամ զմայր իւր առաւել քան զիս, ոչ է ինձ արժանի„։ Մատ. Ժ. 37։ Մեր առ Աստուած ունեցած սիրոյ նշանները սոքա են. — Ա. Բաւականութիւն սրտի, զոր մենք կը գտնենք Աստուծոյ վրայ մտածելով, աղօթելով, նորա խօսքը կարդալով, և ամեն աստուածահաճոյ գործքեր գործելով։ Այսպիսի բաւականութիւն կը գտնէ ամեն զաւակ իւր ծնողներէն, երբ կը սիրէ թէ՛ առ նոսա ունեցած պարտքերը կատարելով և թէ թղթակցելով, եթէ հեռաւոր օտարութեան մէջ են։ "Ինձ մերձենալ առ Աստուած բարի է և դնել առ Տէր զյոյս իմ„։ Սաղ. ԾԲ. 28։ "Ուրախ եղէ ես, որք ասէին ցիս 'ի տուն Տեառն երթիցուք մեք„։ Սաղ. ՃԻԱ. 1։ — Բ. Սէր առ ընկերն, որ կը պահանջէ մեզմէն նայիլ մեր եղբարց վրայ իբրեւ Աստուծոյ որդւոց վրայ։ Այս մասին է, որ կ'ասէ Քրիոտոս. "Որովհետեւ արարիք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանցս, ինձ արարիք„։ Մատ. ԻԵ. 40։ "Եթէ ոք ասիցէ թէ սիրեմ զԱստուած և զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր, զոր տեսանէ, զԱստուած՝ զոր ոչն ետես, զիա՛րդ կարիցէ սիրել„։ Յով. Ա. Թղ. Դ. 20։ — Գ. Շարունակ աշխատիլ և ամեն ժամանակ, ամեն պատահմանց մէջ ուրախութեամբ կատարել Աստուծոյ կամքը, որպէս զի կարողանանք ասել մեր Փրկչի հետ միասին. "Իմ կերակուր այն է, զի արարից զկամս այնորիկ, որ առաքեացն զիս, և կատարեցից զգործս նորա։ Իսկ որ պահիցէ զբան նորա, արդարեւ՝ 'ի նմա կատարեալ է սէրն Աստուծոյ։ Այս է սէրն Աստուծոյ եթէ զպատուիրանս նորա պահեսցուք և պատուիրանք նորա չեն ինչ ծանունք„։ Յով. Առեւ. Դ. 34։ Յով. Ա. Թղ. Գ. 5. Ե. 3։ — Դ. Ունենալ ճշմարիտ եռանդ Աստուծոյ փա-

ռաց համար, այսինքն վառուած լինիլ սուրբ ցանկութեամբ և ջանալ, որպէս զի բոլոր մարդիկ ճանաչեն, սիրեն, պատուեն և փառաւորեն զԱստուած։ Այս ցանկութեամբ պարտաւոր ենք վառուիլ և շարժուիլ Աստուծոյ արքայութիւնը յառաջ տանելու թէ՛ մեր խօսքով և թէ՛ մեր գործքով և անձնազոհութեամբ։ Հոգւով եռացէք, Տեառն ծառայեցէք„։ Հռով. ԺԲ. 11։ Բայց մեր այս եռանդը պէտք է որ միշտ լուսաւորուած և կապուած լինի մարդասիրութեան և խոհեմութեան հոգւոյն հետ։ Այս մասին կը զգուշացնէ Յակոբոս առաքեալն ասելով. “Ապա եթէ նախանձ և դառնութիւն և հակառակութիւն ունիցիք ’ի սիրտս ձեր, մի՛ պարծիք սուտ առնել զճշմարտութիւն. իսկ վերին իմաստութիւնն նախ զի սուրբ է, ապա խաղաղարար, հեզ, դիւրահաւան, լի ողորմութեամբ և պտղովք բարեաց, անխիղճ, առանց կեղծաւորութեան„։ Յակ. Գ. 14—17։

Յիսուս սիրոյ պատուիրանը կ’անուանէ Առաջին և ամենամեծ պատուիրան, նախ այն պատճառաւ, որ այս պատուիրանի առարկայն է աստուածային առաջին և ամենամեծ Լութիւնը, և երկրորդ որ այս պատուիրանը ընդհանուր է և ամենապաղաբեր, որ կը պարունակէ իւր մէջ միւս բոլոր պատուիրանքները, ինչպէս գեղեցիկ կ’ասէ Ս. Օգոստինոս. “Սիրեա՛ զԱստուած և արա՛ զոր ինչ կամիս„. վասն զի երբ որ ճշմարտապէս զԱստուած կը սիրենք, այլ եւս ուրիշ մխիթարութիւն և բաւականութիւն չ’ենք որոներ, բայց միայն աշխատիլ հաճոյ լինիլ Աստուծոյ։ Ինչպէս Աստուծոյ երկիւղը նոյնպէս և սիրոյ պատուիրանը սուրբ կը պահէ զմեզ և աւելի կը քաղցրացնէ և կ’ազնուացնէ մեր կեանքը։ Սէրը դիւրին և սիրելի կը գործէ մեր համար հնազանդութիւնը և կը քաջալերէ զմեզ ուրախութեամբ զոհել ամեն բան այն վերին Լակի փառաց համար, զոր կը սիրենք։ Այս սէրը քաղցր է և սրտագրաւ, ինչպէս կասէ Ս. Գիրքը. “Զի լուծն իմ քաղցր է և բեռն իմ փոքրոգի։ Եւ պատուիրանք նորա չեն ինչ ծանունք„։ Մատ. ԺԱ. 30։ Յով. Ա. Թղ. Ե. 3։ Մեր փրկիչը յայտնապէս կասէ, որուն հետ կարող ենք ասել և մենք “Իմ կերակուր այն է, զի արարից զկամս այնորիկ, որ առաքեացն զիս և կատարեցից զգործս նորա„։ Յով. Դ. 34։

Այս սէրը մեր մէջ վառելու համար պարտաւոր ենք նախ՝ շարունակ աստուածապաշտ գործքերով պարապիլ, որով աւելի և աւելի կը հաճոյանանք Աստուծոյ։ Երբ կաշխատինք մենք Աստուծոյ կամաց համաձայն գործել՝ յայտնապէս կըզգանք, որ ամենեւին դժուարութիւն չը կայ Աստուծոյ ծառայութեան մէջ և մեր փափաքը աւելի կը մօտեցնէ մեզ Աստուծոյ և կը միացնէ նորա հետ, որ աղբիւրն է մեր երջանկութեան։ Երկրորդ՝ պարտաւոր ենք լաւ մտածել աստուածային անհուն ողորմածութեան վրայ, զոր ցոյց տուաւ մարմնառութեամբ և զենմամբ իւր Միածին Որդւոյն, յաճախ կարդալ Աստուածաշունչ Ս. Գիրքը, որոյ մէջ Աստուծոյ ողորմութիւնը կը քարոզուի, ոգեւորել և զօրացնել մեր հաւատը, որով կարողանանք Փրկչի անձնազոհութեան մեծութիւնը հասկանալ և կատարելապէս զգալ, որ նորա միջնորդութեամբ հաշտուած ենք Աստուծոյ հետ, լիովին զգալ այս մեծ խորհուրդը և կրկնել Պօղոս առաքելոյն հետ. “Որդին Աստուծոյ սիրելի է ինձ, վասն զի ինձ համար զոհուած է„ որով և կը կատարուի մեր վրայ Ղուկաս Աւետարանչի խօսքը. “Զի որում շատ թողուցու՝ շատ սիրէ և որում սակաւ՝ սակաւ„։ Է. 47։ Այս զգացումներն ունենալով՝ մենք այլ եւս երկիւղ չենք ունենալ նորա արդարութենէն, այլ միայն կը վայելենք նորա բարութիւնը։ Երրորդ՝ պարտաւոր ենք աղօթել անդադար, վասն զի մեր սիրան Աստուծոյ ձեռքն է։ Նա միայն կարող է թեքել մեր սիրտը ինչպէս իրեն հաճոյ է։ Նա միայն կարող է ուսուցանել և ազդել զինքը սիրելու ճշմարիտ ճանապարհը և նա միայն կարող է սփռել մեր վրայ իւր անհուն շնորհքը։ “Եւ հաստատեալ զօրութեամբ ’ի ձեռն հոգւոյ իւրոյ ’ի ներքին մարդն՝ ճանաչել զառաւելութիւն գիտութեան սիրոյն Քրիստոսի, զի լցջիք ամենայն լրութեամբն Աստուծոյ։ Բնակիլ հաւատով Քրիստոսի ’ի սիրտս ձեր, սիրով արմատացեալք և հաստատեալք, զի կարողք լինիջիք հասանիլ ընդ ամենայն սուրբս։ Զի՞նչ է լայնութիւն և երկայնութիւն և խորութիւն„։ Եփես. Գ. 16—17։

Հնազանդիլ Աստուծոյ կամացը՝ կը նշանակէ զգալ խորին խոնարհութիւն և քաջ իմանալ՝ թէ ի՞նչ է Աստուած և ի՞նչ

ենք մենք. կը նշանակէ յանձնել զմեզ Աստուծոյ և թողուլ որ նա ուղղէ մեր միտքը, մեր յոյսը, մեր գործքերը և զգացողութիւնները իւր օրէնքով և մեր բոլոր վիճակը՝ իւր կամքով.

Խոնարհութիւնը երեք բան կը պարունակէ իւր մէջ. — Յօժարութիւն և Հաւատ այն ճշմարտութեանց համար, զոր Աստուած յայտնած է մեզ, Հնազանդութիւն օրինաց, զորս Աստուած պատուիրած է մեզ, և Յանձնուիլ Տիրոջը՝ կատարեալ վստահութեամբ և հաւատարմութեամբ. որովհետեւ այս պարտաւորութիւնները անբաժանելի են քրիստոնէի համար. Թէ ի՞նչպէս պարտաւոր ենք մեր անձը Աստուծոյ յանձնել, սորա կատարեալ օրինակն տուաւ մեզ ինքն Քրիստոս իւր չարչարանաց սոսկալի ժամուն մէջ. "Հա՛յր, անցո՛ զբաժակս զայս յինէն, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու". Մատ. ԻԶ. 39. Մենք ինքնին կը շարժուէի՞նք արդեօք այս խօսքերը ասելու, եթէ ճշմարտապէս համոզուած չը լինէինք, որ Աստուած ոչ միայն մեր Տէրն է, այլեւ է անսահման իմաստուն, անսահման բարի և աւելի լաւ կը ճանաչէ մեր օգուտը և մեր անձը, քան թէ մենք ինքնին. "Լուռ եղէ և ոչ բացի ըզ բերան իմ, զի դու արարեր". "Տէր որ ինչ բարի է առաջի իւր ինքն արասցէ". Սաղ. ԼԸ. 10. Սամ. Գ. 18.

Մարդ պարտաւոր է կատարեալ հաւատ ունենալ առ Աստուած, վասն զի նա է ամենակարող, ամենիմաստ, ամենաբարի և կը տայ մեզ հանապազօր իւր սիրոյ և բարութեան ապացոյցը և այնքան սիրեց զմեզ, մինչեւ տուաւ մեզ իւր Միածին Որդին որպէս առհաւատչեայ իւր անհուն բարութեանց, զոր խոստացած է մեզ հանդերձեալ կենաց մէջ. Նա, որ իւր Որդին չը խնայեց, միթէ ամեն բան չը պիտի՞ շընորհէ նորա հետ. Նա մեզ կը խոստանայ ամեն բարիք սրտաշարժ կերպիւ և կը հրաւիրէ մեր հոգը 'ի նա ընկենուլ, ըստ բանի Պօղոս առաքելոյն. "Զամենայն հոգս ձեր ընկեցէ՛ք 'ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր". Ա. Պետ. Է. 7. Աստուած կ'օրհնէ այն մարդը, որ հաստատուն հաւատ ունի նորա վրայ. "Եւ օրհնեալ լիցի մարդն, որ յուսացաւ 'ի տէր, և եղիցի տէր յոյս նորա և եղիցի իբրեւ զծառ զուարճացեալ 'ի գնացս ջուրց և ընդ գնացս ջուրցն ձգտեցուսցէ զարմատս իւր և մի՛ երկիցէ,

յորժամ հասանիցէ տօթ և եղիցի ստեղն նորա անտառացեալ և շուրջ զնովաւ յամի երաշտութեան մի՛ երկիցէ և մի՛ կասեսցի 'ի տալոյ պտուղ". Երեմ. ԺԷ. 7—8. Սուրբ Գիրքը պարզապէս կը յայտնէ մեզ, որ ամենամեծ յանցանք է և ապերախտութիւն այսպիսի հաւատ ընծայել արարածներուն. Վասն զի այսպիսի հաւատը միայն Աստուծոյն կը վայելէ և ունի իւր աստիճանները, որք են հետեւեալները.

Ա. Աստուծմէ միայն սպասել ամեն յաջողութիւն այն միջոցներու համար, զորս 'ի գործ կը դնենք կա՛մ վտանգէ ազատուելու համար, կա՛մ մեր կարօտութիւնը լցուցանելու համար և կա՛մ մեր ամեն պարտաւորութիւնքը կատարելու համար, վասն զի Աստուծմէ միայն կախուած է մեր ամեն յաջողութիւնը. "Ես տնկեցի, Ապողոս ջուր ետ, այլ Աստուած աճեցոյց, այսուհետեւ ո՛չ այլ ինչ ոք է որ տնկեացն և ո՛չ այն որ զջուրն ետ, այլ որ աճեցոյցն՝ Աստուած է". "Եթէ ո՛չ տէր շինէ զտուն, 'ի նանիր վաստակին շինողք նորա. Եթէ ո՛չ տէր պահէ զքաղաք, 'ի նանիր տքնին պահապանք նորա". Ա. Կորնթ. Գ. 6—7. Սաղ. ՃԻԶ. 1—2.

Բ. Չը վհատիլ և չը կորուսանել երբէք մեր հոգւոյ զօրութիւնը և չը թուլանալ բնաւ հաւատքէ, երբ պակսած են մարդկանց օգնութիւնները. Վտանգի և կամ փորձանաց մէջ հաստատ յուսալ, որ Աստուած իսպառ չը թողուր զմեզ, այլ ունի հազարաւոր միջոցներ մեզ օգնելու, ինչպէս և կասէ Քրիստոս. "Վասն այդորիկ ասեմ ձեզ, մի՛ հոգայք վասն հոգւոց ձերոց, զի՞նչ ուտիցէք և մի՛ վասն մարմնոց ձերոց՝ թէ զի՞նչ ագանիցէք. զի հոգի առաւել է քան զկերակուր և մարմին քան զհանդերձ. Հայեցարո՛ւք 'ի թռչունս երկնից, զի ո՛չ վարեն և ո՛չ հնձեն և ո՛չ ժողովեն 'ի շտեմարանս և հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա". Մատ. Զ. 25—26. "Թէ պատրաստիցի 'ի վերայ իմ պատերազմ, ո՛չ երկիցէ սիրտ իմ, թէ յարիցէ 'ի վերայ իմ ճակատամարտ, սակայն և յայսմիկ 'ի քեզ, տէր, յուսացայ. Հայր իմ և մայր իմ թողին զիս և տէր ընկալաւ զիս". Սաղ. ԻԶ. 3—10.

Գ. Քրիստոնէի հաւատարմութեան ամենաբարձր աստիճանն է սպասել տեառն, հաստատ յուսալ նորա խոստմանց վը-

բայ և ամենեւին չ'երկբայիլ, երբ նա իւր օգնութիւնը կը յետաձգէ և կը կարծուի թէ թողած է զմեզ։ Պէտք է սպասել համբերութեամբ և ակն ունել այն ժամին, զոր նշանակած է նա մեր ազատութեան համար։ "Համբե՛ր տեառն և քաջալերեա՛ց, զօրասցի սիրտ քո և համբե՛ր տեառն. բայց թէ անագանեսցէ, համբե՛ր նմա, զի որ գալոցն է՝ եկեսցէ և ոչ անագանեսցի"։ Սաղ. ԻԶ. 14։ Ամբակ. Բ. 3։ Որպէս զի այս մեր առ Աստուած ունեցած հաւատը օրինաւոր և բնական լինի, պարտական ենք աշխատիլ մեր կեանքով և գործքով հաճոյանալ Աստուծոյ։ Պարտական ենք բարի ճանապարհաւ գործ դնել մեր խոհեմութիւնը և մեր բոլոր ձիրքը. "Յուսա՛ 'ի տէր, և արա՛ զքաղցրութիւն, բնակեա՛ յերկրի և հովուեսցես 'ի մեծութեան նորա"։ Սաղ. ԼԶ. 3։

Մենք պարտինք տալ Աստուծոյ — Ա. Կատարեալ և աներկբայ հաւատ, խոստովանելով որ նա է մեր Տէրը, մեր Բարերարը և մեր Փրկիչը. "Քանզի գնոց գնեցայք, փառաւոր արարէք զԱստուած 'ի մարմինս ձեր և 'ի հոգիս, որ է յԱստուծոյ"։ Ա. Կորն. Զ. 20։ — Բ. Հաստատուն վստահութիւն, որ Աստուած ինչ որ հրամայած է մեզ, արդար է, բանական և կ'առաջնորդէ մեզ յերջանկութիւն. "Աղաչեմ զձեզ եղբարք, գթութեամբն Աստուծոյ, պատրաստել ըզմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ զխօսուն պաշտօնդ ձեր"։ Հռով. ԺԲ. 1—2։ — Գ. Կատարեալ հնազանդութիւն, վասն զի նա է նշան ճշմարիտ հաւատոյ և սիրոյ առ Աստուած։ "Եւ ասէ Սամուէլ, եթէ հաճոյ իցէ Տեառն ողջակէզ և զոհ ընտիր իբրեւ զլսել ձայնի Տեառն, ահա լաւ է ունկնդրութիւն քան զզոհ և հնազանդութիւն՝ քան զճարպ խոյոց"։ Սամ. ԺԵ. 22։ Պարտաւոր ենք մենք հնազանդիլ Աստուծոյ ջերմեռանդն սրտով, մեր կենաց ամեն պարագաներուն մէջ, հնազանդիլ ուրախական երկիւղածութեամբ, օրինակ ունենալով մեզ հրեշտակներն երկնքի մէջ։ "Եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի"։ Մատ. Զ. 10։ Պարտինք հնազանդիլ, օրինակ ունենալով մանաւանդ մեր Փրկիչը, որ իրեն հետեւելու համար՝ տուաւ մեզ հնազանդութեան կանոն. "Զի օրինակ մի ետու ես ձեզ, զի որպէս

ես ձեզ արարի, և դուք առնիջիք"։ Յով. ԺԳ. 15։ Վերջապէս մեր հնազանդութեան հետ՝ պարտինք ունենալ փափաք և հոգացողութիւն աւելի կատարելագործուելու և Աստուծոյն նմանելու։ "Եղբարք, ես ո՛չ համարիմ զանձն իմ թէ հասեալ իցեմ, բայց մի ինչ է, զի զառ 'ի յետոյսն մոռացեալ եմ և 'ի յառաջադէմսն նկրտիմ, ուշ եդեալ ընթանամ 'ի կէտ կոչման իմոյ 'ի Յիսուս Քրիստոս"։ Փիլ. Գ. 13—14։ "Եղերո՛ւք կատարեալ, որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է"։ Մատ. Ե. 48։

ԵՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

«Մի՛ առնուցուս զանուն Տեառն Աստուծոյ քո 'ի վերայ սնոտեաց. զի ոչ սրբեսցէ Տէր զայն, որ առնուցու զանուն նորա 'ի վերայ սնոտեաց»։

Երրորդ պատուիրանը կ'արգելու գործ դնել Աստուծոյ անունը առհասարակ ամեն բանի մէջ, ինչ որ ընդդէմ է այն խորին յարգանացը, որով պէտք է որ լցուած լինի մեր սիրտը։ Նա կ'արգելու երդման ժամանակ գործ դնել Աստուծոյ անունը ստութեան համար, վասն զի երդնուլ՝ կը նշանակէ վկայ կոչել զԱստուած մեր խոստացած բանին համար։ Ուստի՝ չը յայտնելով ճշմարտութիւնը կամ ուրանալով մեր խոստումը՝ մենք կ'ենթարկենք զմեզ Աստուծոյ արդար պատժոյն։

Երդուիլը, իբրեւ կրօնական գործ, թոյլատրուած է Ս. Գրոց մէջ։ Վասն զի, երդմամբ մենք կը պատուենք զԱստուած և նորա բոլոր կատարելութիւնները։ Երդմամբ կը խոստովանինք, որ նա կը ճանաչէ մեր սիրտը, կը ճանաչէ ամեն բան և կը սիրէ ճշմարտութիւնը, և որովհետեւ ինքն ամենագէտ է և արդար, անշուշտ կը պատժէ զմեզ, եթէ սուտ երդ-

նունք ։ “ Ցանձն իմ երդնուր, թէ որ ինչ եղանէ ՚ի բերանոյ իմմէ՝ արդարութիւն է և բանք իմ ոչ երթցին ։ Ի սեառնէ յԱստուծոյ քումմէ երկիցես և զնա պաշտեսցես և ՚ի նա յաբեսցիս և յանուն նորա երդնուցուս„ ։ Եսայ. խե. 23 ։ Բ. Օրին. ժ. 20 ։

Որովհետև երդումը մեծ նշանակութիւն ունի, ուստի ամենամեծ զգուշութիւն հարկաւոր է երդնուլ. օրինակի համար, երբ դատաւորը կը պահանջէ այնպիսի վճիռ վերջացնել, որունք հաստատ ապացոյցի կարօտ են և որունք ուրիշ եղանակաւ հնար չէ որ վերջանան, այլ միայն մեր երդմամբ և խոստմամբ կարող է ճշմարտութիւնը զօրութիւն ընծայել ։ Հին օրինաց մէջ երդումը թոյլատրուած էր ճշմարտութիւնը զօրացնելու և վէճերը արդարութեամբ լուծելու նպատակաւ, ինչպէս կը վկայէ և Պօղոս առաքեալն. “ Ապա քէն մարդիկ, որ ինչ ՚ի վեր է քան զինքեանս՝ յայն երդնուն և ամենայն հակառակութեան նոցա վճիռ ՚ի հաստատութիւն՝ երդումն է „ ։ Եբր. Զ. 16 ։

Երբ մարդ երդման կը կոչուի՝ պարտաւոր է ունենալ ամեն կարեւոր զգուշութիւն, որպէս զի Աստուծոյ անունը արհամարհանք չտրուին յայտնօք, արդարութեամբ և ճշմարտութեամբ ։ Ուստի պարտական է լաւ մտածել երդման վսեմութեան վրայ և դիւրութեամբ չերդնուլ, առանց ամեն հանգամանաց վրայ օրինաւորապէս խորհելու ։ Նա պարտական է միտ բերել և պատկերացնել իւր առջեւ ամեն բան, որուն համար կոչուած է պատասխանելու ։ Պարտական է միայն վկայել ինչ որ հաստատ գիտէ և երբէք պէտք չէ որ փոփոխէ գործոյն գրութիւնը և հանգամանքը ։ Պէտք չէ որ ծածկէ, կամ արհամարհաբար ձեւացնէ, կամ երկդիմի խօսքեր գործ դնէ, կամ իւր արհամարհած խօսքերուն՝ իւր մտքի մէջ այլ մեկնութիւն տայ և կամ իւր խիղճն ու վկայութիւնը իրարու անհամաձայն լինին, ինչպէս որ ձիզվիմիները, անամօթաբար կը թոյլատրեն երդումներուն այն օրինակ խորամանկութիւնները բանեցնել ։ Ընդհակառակն՝ պէտք է գործ դնել ամեն բառեր այն նշանակութեամբ, ինչ նշանակութեամբ կը հասկնայ երդմնեցուցիչը ։ Պէտք է միայն այնպիսի խոստումն տալ, որոյ կատարումն անհնարին չէ, այլ որ օրինաւոր է և կարող ենք պահել

և կատարել ։ Ցորա համար է ահա, որ սուտ երդումն, անարդար երդումն և ՚ի զուր երդումն մեծ յանցանք համարուած է ։

Մեծ յանցանք կը համարուի նմանապէս, երբ մարդ իւր փոխանակ Աստուծոյ անուան՝ արարածի անուամբ կ՚երդնուն ։ Սոյնպիսի երդումը կատարեալ անբարշտութիւն է. վասն զի միայն Աստուած է որ գիտէ մեր սրտի ամեն դաղանիքը. նա է, որ կը տիրէ ամենուն, ուստի և աստիկ կը յանդիմանէ կը ռապաշտ երուսաղէմացիները ասելով. “ Որդիք քո թողին զիս, և երդնուն ՚ի չաստուածսն „ ։ Եր. Ե. 7 ։ Յիսուս Քրիստոս կը յանդիմանէ և կը դատապարտէ արարածի անուամբ երդնուլն, նաեւ այն ժամանակ երբ այս երդումը միջաբար կամ անուղղակի կերպով Աստուծոյ կը վերաբերի. “ Ասէ ես ասեմ ձեզ, ամենեւին մի երդնուլ, մի յերկինս, զի աթոռ է Աստուծոյ, մի յերկիր, զի պատուանդան է ոտից նորա, մի յԵրուսաղէմ, զի քաղաք է մեծի արքային և մի ՚ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թխալ. այլ եղիցի ձեր բան. այո՛ այո՛, և ո՛չն ոչ. զի աւելին քան զայն ՚ի չարէն է „ ։ Մատ. Ե. 34—36 ։

Սուտ երդումի՝ կը նշանակէ սուտը ճշմարտի տեղ դնել և չանալ հաստատել, կամ խորամանկութեամբ ծածկել, կամ երդմամբ խոստանալ այնպիսի բան, որ կատարելու դիտաւորութիւն չը կայ և կամ վերջապէս հաստատ չը պահել երդումը ։ Այս վերջին նշանակութեամբ սուտ երդումը կ՚անուանի Ե՛ր՛ջ՛ա՛ն՛ա՛ն՛ք՛ն՛ ։ Այս յանցանքը կը պարունակէ իւր մէջ սարսափելի անիրաւութիւններ. վասն զի Աստուած վկայ կոչել սուտութեան՝ կը նշանակէ ահաւոր յանդգնութեամբ անպատուել նորա անունը և չարժէք ՚ի վրէժխնդրութիւն մեր դէմ ։ Որչափ ատելի է Աստուծոյ առջեւ այն մարդը, որ ճանաչելով սուտութիւնը՝ գործ կը յանդգնի երբեւ ճշմարտութիւն ծախել ։ Վերջապէս զարհուրելի յանցանք և միանգամայն դատապարտելի եղեռնագործութիւն է թէ դատաւորի առջեւ և թէ ամեն մարդկանց առջեւ՝ ժխտել մեր երդումը և ամենատրը միաբանութեան կապը խզել ։ Այս յանցանքը ամեն ժամանակ, ամեն ազգաց և ամեն երկիրներու մէջ միշտ զարհուրելի եղած է ։ Այս յանցանքն է, զոր գլխաւորապէս կ՚ար-

գելու Աստուած երրորդ պատուիրանով և կը սպառնայ, որ ամենեւին անարժան է և դատապարտութեան ենթակայ այն մարդը, որ 'ի զուր բերան կ'առնու Աստուծոյ սուրբ անունը։ Աստուած կը սպառնայ սաստիկ պատժել այս յանցանքը գործողները, ինչպէս և կը յայտնէ մարգարէի բերանով. "Եւ հանից զդա, ասէ տէր ամենակալ, և մոցէ 'ի տուն գողոց և 'ի տուն, որք երդնուցուն սուտ յանուն իմ և բնակեսցի 'ի մէջ տան նորա և վախճանեսցէ զնա և զփայտ նորա և զքարինս նորա"։ Զաք. Ե. 4։

Երդումը կը համարուի Անմիտ, երբ կատարելապէս տեղեակ չենք երդման առարկայի ստութեանը կամ ճշմարտութեանը. չը գիտենք, արդեօք ճշմարիտ և արդա՞ր է, թէ անիրաւ և սուտ, և կա՛մ կարո՞ղ ենք արդեօք անվնաս կատարել։ Այսպէս էր Հերովդէսի երդումն, զոր տուաւ Հերովդիատայ աղջկանը։ Անմիտ երդումը կը տանի զմեզ դէպի երդմնազանցութիւն կամ դէպի ուրիշ յանցաւորութիւն և կը բովանդակէ իւր մէջ անարգանք և նախատինք առ Աստուած։ Այս պատճառաւ դիւրութեամբ երդուող մարդն անգամ յանցաւոր կանուանի Ս. Գրոց մէջ։

Երբ մարդ անմտաբար երդում տուած է և յետոյ կը զգայ որ ուղղակի վնաս է իւր անձին, դարձեալ երդման յարգը կը պահանջէ որ կատարէ իւր երդումը, մանաւանդ երբ այն անձը կամ իշխանութիւնը, որուն երդուած է, չեն ուզեր երդուողը ազատել կանոնաւոր իշխանութեամբ, ինչպէս է իշխանութիւն հօր առ որդին։ "Զերկիւղածս տեառն փառաւոր առնէ, որ երդնու ընդ ընկերի իւրում և ո՛չ ստէ"։ Սաղ. ԺԴ. 4։

Երդումը Անիրաւ կամ Անարդար կը համարուի, երբ կը խոստանայ մարդ այնպիսի բան, որ հակառակ է աստուածային օրինաց, ինչպէս խոստացան Իսրայէլացիք, որոց վրայ կը խօսուի այսպէս. "Եւ իբրեւ այդ եղեւ, արարեալ ժողով Հրէից՝ նզովեցին զանձինս ոչ ուտել և ոչ ըմպել մինչեւ սպանցեն ըզ Պօղոս"։ Գործ. ԻԳ. 12։ Կատարել այսպիսի երդումն՝ կը նշանակէ մեծ յանցանք գործել, որովհետեւ երբէք թոյլատրուած չէ այնպիսի գործ գործել, զոր Աստուած կը դատապարտէ։ Ուստի հարկ է շուտով զղջալ և մերժել սոյն օրինակ երդումը

և միւսանգամ սաստիկ ուշադրութիւն դարձնել, որպէս զի այսպիսի յանցանաց մէջ չը գլորինք։

Երդումը կը համարուի Զուր, երբոր սնոտի բաներու համար և կամ սովորական խօսակցութեանց մէջ վայրապար կը յիշուի կամ կը կրկնուի Աստուծոյ անունը, ինչպէս սովորութիւն ունին անմտադիր երդուողները։ Այսպիսի վայրապար երդումն եւս կը տանի դէպի երդմնազանցութիւն և Քրիստոս այսպիսեաց գործքը կը դատապարտէ իբրեւ սատանայի գործ և կը պատուիրէ այս կամ ոչ ասելով միայն բաւականանալ, առաւել քան զայն համարելով 'ի սատանայէ. "Այլ եղիցի ձեր բան, այոն՝ այո և ոչն՝ ոչ, զի աւելին քան զայն 'ի չարէն է"։ Մատ. Ե. 37։ Յիսուս Քրիստոս այս պատուէրը տալով՝ կը յանդիմանէ Հրէից կարդացողները, որոնք կ'ուսուցանէին իբր թէ երրորդ պատուիրանը միայն երդմնազանցներուն կը վերաբերի, մինչդեռ ընդհակառակն կը վերաբերէր ամեն երդումի, որով Աստուծոյ անունը 'ի զուր կը յիշուէր։

Աստուծոյ անունը երդմամբ յիշելով մեր խօսակցութեանց մէջ, փոխանակ այլոց հաւատը գրաւելու՝ աւելի կասկածանաց կ'ենթարկենք մեր խօսքերը, որովհետեւ ամեն առողջ դատողութեան տէր մարդ անպատճառ կը մակաբերէ, որ Աստուծոյ հրամանը անպատուողը, Աստուծոյ անունը վայրապար և աներկիւղ յիշողը, անտարակոյս աւելի դիւրութեամբ և անխնայ կը խաբէ իւր եղբայրը, սուտ խօսելով և պատրուակելով։ Տարապարտ երդումը մեծ անպատուութիւն է երդուողի համար, վասն զի ինքնին կը յայտնէ, որ պատուաւոր մարդը կարող չ'է հաւատալ իւր խօսքին։ Իսկ նա, որ երկիւղած է, միշտ կը բաւականանայ այս խօսքերով՝ այոն, այո, և ոչն՝ ոչ, և կը զգայ որ իրմէն աւելի բան չ'են պահանջեր, այլ կը հաւատան և կ'ընդունին նորա ամեն ասածները։

Աստուծոյ անունը, որ պէտք է իւրաքանչիւր քրիստոնէի համար լինի յայտարար շնորհակալութեան՝ երջանկութեան ժամանակ, յոյս՝ վտանգի մէջ, խոնարհութիւն՝ ապաբաղդութեան ժամանակ, սէր և հաւատ՝ կենաց ամեն հանգամանքներու մէջ, այս պաշտելի անունը, որ պէտք է լինի աղաղակ օգնութեան առ ամենակարողն Աստուած և վերջին հառա-

չանք՝ մեր հոգեվարութեան րոպէում թողնած չրթունքի վրայ, երբ Աստուած զմեզ առնքն կը կոչէ. այս սուրբ անունը երբ կ՚արտասանենք մենք առանց զգացողութեան, առանց յարգանաց և առանց մտածութեան, ո՞րչափ արդեօք կ՚անարգենք և ո՞րչափ կը մեղանչենք Աստուծոյ դէմ։ Ո՞րչափ կ՚անարգենք այս սուրբ անունը, երբ սովորաբար կ՚արտասանենք մեր ամեն տղայական անոսի խօսակցութեանց մէջ։ Բան մի հաստատելու կամ մերժելու համար, փոխանակ մեր փրկչի հրամանին հետեւելու և այո կամ ո՛չ ասելով բաւականանալու, շատ անգամ թեթեւամտաբար կը կրկնենք — Աստուած վկայ որ այսպէս է, Աստուած վկայ, որ այսպէս չէ, եւայլն, մինչդեռ մեր սրբած մարդոյ անունը տալը անպատուութիւն կը համարէինք։ Պարտինք ուղիղ խոստովանիլ, որ սոյնպիսի վատ սովորութիւնը մեծ անարգանք է Աստուծոյ համար և երրորդ պատուիրանի մէջ յիշուած պատժոյն ենթարկուած են ո՛չ միայն պատուիրազանցները, այլ ամենքը, որոնք Աստուծոյ անունը կը յիշեն ՚ի զուր և առանց յարգանաց։

Այս վատ սովորութենէն, այսինքն Աստուծոյ անունը վայրապար յիշելէն հեռանալու և ուղղուելու համար, հարկ է. — Ա. Աչքառիլ հեռանալ ամեն առիթներէ, որոնք կը մղեն զմեզ դէպի այս մեղքը, ինչպէս են՝ կռիւ, աղաղակ, վատ ընկերակցութիւն, չար սովորութիւն և այլն, և ընդհակառակն՝ ընկերանալ առաքինի և խնամուն մարդկանց հետ, որոնք անդադար կը յանդիմանեն և կը զգուշացնեն, երբ այսպիսի մեղաց մէջ կրնկնինք և չենք զգար մեր անկումը։ — Բ. լաւ մտածել, որ սոյնպիսի մեղաց մէջ ընկնելով՝ օգուտ չը վաստկելէն զատ՝ մեր հոգին եւս կը կորսուանենք։ — Գ. Միշտ մտաց մէջ ունենալ Աստուծոյ մեծութիւնը և արժանաւոր յարգանքը, զոր պարտինք տալ մեր բոլանդակ կենաց մէջ, որովհետեւ մեր թեթեւամիտ արարմունքը առաւել սովորութեան հետեւանք է, քան թէ դատողութեան։

Այս ամեն պարագանները իմանալով՝ պարտաւոր ենք ուրիշն մանկութենէ վարժիլ դէղեցիկ սովորութեան, այսինքն ՚ի զուր և վայրապար չը յիշել երբէք Աստուծոյ անունը, նորա նախանձաւորութիւնը, նորա պաշտօնը, առանց մտածելու և

առանց զգալու։ Երբ մանկութենէ այսպիսի բարի սովորութիւն կ՚ունենանք, անշուշտ ապագային մէջ Աստուծոյ անունի յիշելն միայն կը վառէ և կը զարթուցանէ մեր երեւակայութիւնը վսեմ գաղափարով և պատուոյ ու սիրոյ զգացմամբ։ Բարեպաշտ սովորութեամբ անուած և մեծամեծ ձրից տէր մարդիկ, գեղեցիկ կատարելութեան հասնելով, երբէք չեն յիշեր Աստուծոյ անունը առանց երկիւղածութեան և յարգութեան։ Նեւտն երեւելի աստեղագէտին համար կը պատմուի թէ՝ առանց խորին մտածութեան, առանց ոտքի վրայ կանգնելու և գլխարկը հանելու՝ երբէք չէր արտասաներ Աստուծոյ պաշտելի և սուրբ անունը։

Ուխտերն եւս տեսակ մի երդումն է, որով մարդիկ կը խոստանան Աստուծոյ՝ որ և իցէ գործ կատարել, որուն համար ոչ թէ պարտաւորուած են, այլ կամ իրենց բարեպաշտութիւնը և ջնորհակալութիւնը ցոյց տալու համար, կամ պատուութիւն մի կատարելու համար, կամ որ և իցէ մեղքէ հեռանալու համար և կամ սխալած գործքերուն մէջ Աստուծոյ օրհնութիւնը ստանալու համար, կ՚ուխտեն ինքնին այս ինչ կամ այն ինչ բանը։ Այսպիսի ուխտադրութեան օրինակը կը տեսնենք Յինդոյ գրքին մէջ, երբ Յակոբ կը խոստանայ ասելով. "Եւ ուխտեաց Յակոբ ուխտ և ասէ. եթէ եղիցի Տէր Աստուած ընդ իս և պարեցուսցէ ՚ի ճանապարհի յայսմիկ, զոր ես երթամ և տացէ ինձ հաց ուտելոյ և հանդերձ զգենուլոյ և դարձուսցէ զիս ողջութեամբ ՚ի տուն հօր իմոյ և եղիցի ինձ Տէր Աստուած, և վէմս զոր կանգնեցի արձան, եղիցի ինձ տուն Աստուծոյ և յամենայնի զոր տացես ինձ, տաց քեզ տասանորդս „։ Ծննդոց ԻՀ. 20—22։

Մեր ուխտադրութեան մէջ եւս պարտաւոր ենք պահել նոյն կանոնները, որոնք կը վերաբերին երդմանն, և կատարել ճշդիւ մեր ուխտը, երբոր օրինաւոր է. "Եթէ ուխտիցես Տեառն Աստուծոյ քում, մի յամեսցիս հատուցանել զայն, զի պահանջելով պահանջէ Տէր Աստուած քո ՚ի քէն և լինիցի քեզ ՚ի մեղս. ապա թէ չկամիցիս ուխտել՝ չլինիցի քեզ ՚ի մեղս „։ Բ. Օրէն. ԻԳ. 21։

ՁՈՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

«Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա. զվեց օր գործեսցես եւ արասցես զամենայն գործս քո. յաւուրն եօթներորդի շաբաթ Տեառն Աստուծոյ քում՝ մի՛ գործեսցես 'ինմա զամենայն գործս քո»։

ՁՈՐՐՈՐԴ պատուիրանը կը հրամայէ մեզ սուրբ պահել շաբաթ օրը և յատկապէս տալ Աստուծոյ այն պաշտօնը, զոր պարտաւոր ենք տալ։ Մենք ճշմարտապէս զԱստուած կը պաշտենք այն ժամանակ, երբ կը բարձրացնենք առ նա մեր հոգին և զգացմունքը և կը պաշտենք 'ի բոլոր սրտէ, խոստովանելով, որ նա է մեր Տէրն ու Արարիչը և մենք ոչինչ ենք նորա առջեւ, փառաւորելով նորա կատարելութիւնները և շնորհակալ լինելով նորա ամեն ողորմութեանց համար, զղջալով մեր մեղքերը և լալով մեր անարժանութիւնը, հայցելով նորա գթութիւնը Քրիստոսի անուամբ և յանձնելով զմեզ նորա ծառայութեանը, խնդրելով նորա օգնութիւնն ու օրհնութիւնը, որուն կարօտ ենք և ուսանելով նորա կամքը, կարդալով նորա խօսքը և մտածելով նորա օրինաց վրայ, զօրացընելով մեզ նորա շնորհքովը և կատարելով նորա պատուիրանքը։

Այս պաշտօնը կարող ենք մենք մատուցանել Աստուծոյ մեր սրտով, որ կ'անուանի Պաշտել հոգւով, զոր կը պահանջէ մեզմէն մեր Տէրը։ "Հոգի է Աստուած, կ'ասէ Քրիստոս, և երկիրպագուաց նորա պարտ է հոգւով և ճշմարտութեամբ երկիրպագանել"։ Յով. Դ. 24։ Կարող ենք այս ներքին հոգեւոր պաշտօնի հետ միացնել և արտաքինը, որուն մասնակից է մարմինը, յայտնելով մեր հոգւոյ ներքին շարժումը և զգա-

ցումը արտաքին նշաններով, այսինքն չոքելով, որ է նշան խոնարհութեան, ծնրադրելով կամ գետնամած տարածուելով, որ է նշան մեր ոչնչութեան Աստուծոյ առջեւ, արտասուելով, կարդալով, սաղմոսելով, բարձրաձայն աղօթելով եւայլն։

Բայց եթէ այս արտաքին պաշտօնը կապուած չ'է մեր ներքին հոգեկան պաշտօնի հետ, այն ժամանակ մեր աստուածպաշտութիւնը ճշմարիտ աստուածպաշտութիւն չ'է, այլ կեղծաւորութիւն և փարիսականութիւն, որոյ համար մեր Փրկիչը կը յանդիմանէ և կը դատապարտէ Հրէից ժողովուրդը ասելով՝ "Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս և սիրտ իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն"։ Մատ. ԺԵ. 8։ Շատ կարեւոր է մարդոյ համար ներքին հոգեւոր պաշտօնի հետ ունենալ և արտաքին պաշտօն։ Ահա՛ պատճառները. — Ա. Մեր սիրտը կը պահանջէ արտայայտել իւր զգացմունքը և արտաքին պաշտօնն է բնական և կարեւոր, որով կը յայտնուի մեր զեղուն հոգւոյ զգացումը, վասն զի բերանը սրտէն կը խօսի. "Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան"։ Ղուկ. Զ. 45։ — Բ. Արտաքին աստուածպաշտութիւնը կ'օգնէ մեր բարեպաշտութեանը, կը կերակրէ մեր հոգին և կը զօրացնէ մեր սիրտը նորոգ զօրութեամբ։ — Գ. Աստուած ինքն կը պահանջէ ներքին պաշտօնի հետ և արտաքին պաշտօն։ Եթէ հոգւով պաշտել կը հրամայէ, կը պատուիրէ նմանապէս և բերանով խոստովանիլ. "Եթէ խոստովանեսցիս բերանով քով Տէր զՅիսուս և հաւատասցես 'ի սրտի քում թէ Աստուած յարոյց զնա 'ի մեռելոց, կեցցես, զի սրտիւ հաւատամք յարդարութիւն և բերանով խոստովանիմք 'ի փրկութիւն"։ Հռով. Ժ. 9։ Աստուած ինքն կը փափաքի որ մենք զինքն փառաւորենք ինչպէս հոգւով, նոյնպէս և մարմնով. "Քանզի գնոց (գնովք) գնեցայք, փառաւոր արարէք զԱստուած 'ի մարմինս ձեր և հոգիս"։ Ա. Կորնթ. Զ. 26։

Մարդն պարտական է և կարող է պաշտել զԱստուած առանձինն, բանալով իւր հոգին Աստուծոյ առջեւ, յայտնելով իւր զգացողութիւնը և կարօտութիւնը, աղօթելով և կարդալով նորա խօսքը։ Այս աղօթքը կ'անուանի Առանձնական Աղօթք։

Մարդ կարող է պաշտել զԱստուած՝ իւր ընտանեաց հետ,

որ շատ կարեւոր է գերդաստանի մէջ բարեպաշտութեան զգացմունքը վառ պահպանելու և Աստուծոյ օրհնութիւնը իւրեանց վրայ իջուցանելու համար։ Այսպիսի աղօթքով միաբանութիւն կը հաստատուի հօր և որդւոյ մէջ, ամրոջ և ծառայի մէջ, ամկնոջ և աղախնոյ մէջ, առն և կնոջ մէջ, և այսպէս կը պահպանուի խաղաղութիւն, հաւատարմութիւն և սէր բոլոր գերդաստանի մէջ։ Բայց յայտնի պարտաւոր են մարդիկ միաբանական պաշտօն մատուցանել Աստուծոյ եկեղեցեաց մէջ հասարակաց բարօրութեան և խաղաղութեան համար և այս աղօթքն է, որ կ'անուանի Հրապարակական Աղօթք։

Հրէից լեզուաւ Շաբաթ բառը կը նշանակէ հանգիստ։ Նոքա պարտաւոր էին յիշել այս օրը, այսինքն որոշել միւս օրերէն և Աստուած ինքն պատուիրած էր սուրբ պահել այս օրը, այսինքն հրաժարիլ ուրիշ գործքերէ և բոլորովին իրենց անձը Աստուծոյ ծառայութեանը նուիրել։ Այս մի միջոց էր, որ նոքա հանապազ յիշեն աշխարհի ստեղծագործութիւնը, յիշեն աշխարհի Արարիչը և հեռանան չաստուածներէ և կռապաշտութենէ։ Այս աւուր մէջ աւարտած է ստեղծագործութիւն երկնի և երկրի, ծովու և ցամաքի և այլն, վասն որոյ և սոյն օրը ընտրուած է սուրբ պահելու համար։

Շաբաթ օրը Հրէից համար առանձին նշանակութիւն ունէր, ուստի և նոքա նոյն օրը խափան կը դադարէին ամէն ընդհանուր և մանաւանդ գործքերէ և մինչեւ այն աստիճան աստիկ էր այս կանոնապահութիւնը, որ արգիլուած էր մինչեւ անգամ կերակուր պատրաստել, կրակ վառել, և եթէ մէկը փայտ ժողովէր անտառէն, կը քարկոծուէր։ Այս պատուիրանը կատարեալ բարոյական է և Քրիստոնէից համար անգամ պարտաւորութիւն է, Հրէից նման, մի օր յատկապէս Աստուծոյ ծառայութեանը նուիրել և դադարիլ բոլոր ծառայական գործքերէ։ "Եւ եղեւ՝ ի մտանելն նորա՝ ի տուն ուրումն յիշխանաց փարիսեցւոց՝ ի շաբաթու ուտել հաց և նոքա սպասէին նմա և ահա այր ումն էր անդ ջրգողեալ առաջի նորա, պատասխանի ետ Յիսուս և ասէ ցօրինաւորս և ցփարիսեցիս՝ թէ արժան է՝ ի շաբաթու բժշկել, և նոքա լուռ եղեն, և բռնեալ հարեալ զնմանէ բժշկեաց զնա և արձակեաց և ասէ ցնոսա.

այր ուրուք՝ ի ձէնջ եղիցի կամ էշ անկանիցի՝ ի ջրհոր և ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու „։ Ղ.ԺԴ. 1—6։

Վերջապէս հարկ է որ նշանակուած լինի մի օր, յորում հաւատացեալները՝ ի միասին հրապարակաւ մատուցանեն Աստուծոյ արժանաւոր պաշտօն։ Եւ շաբաթ օրուան յատուկ պաշտօնը քանի մի նշանակութիւն ունի։ — Ա. Աստուած ինքն որոշած է այս օրը, որ մարդ մտաբերէ իւր կրօնական պարտաւորութիւններն ու զգացումները և հեռանայ աշխարհային ամէն գործքերէ, որով շրջապատուած է։ — Բ. Այս պատուիրանն ունի օգուտ և բարութիւն ոչ միայն հոգւոյ համար, այլեւ մարմնոյ համար, որ կարօտ է հանգստութեան և որոյ ոյժը չուտով կարող է թուլանալ, եթէ բոլոր օրերը անընդհատ աշխատանքի նուիրէ։ — Գ. Այս պատուիրանը լի է մարդասիրութեամբ օրական մշակներու, ծառաներու և ամէն աշխատաւոր մարդկանց նկատմամբ, որոնք ծանր աշխատութեան տակ են և յատկապէս կարօտ են հանգստութեան։ Եթէ այս հանգստեան օրը նշանակուած չը լինէր, գուցէ շատերը ագահութեան տենչանքով զրկէին իրենց անձը ամէն անդորրութենէ։ Հապա այս գեղեցիկ նշանակութիւնը ի՞նչպէս կարող ենք մտածել, որ նշանակուած օրը ամէն մարդիկ կարող են միաձայն մտածելով և բնական հաւատարմութեամբ Աստուծոյ առջեւը ներկայանալ։

Քրիստոնէից հանգստութեան օրը, փոխանակ շաբաթու, կիւրակին է, վասն զի այն օրը յարութիւն առաւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս։ Քրիստոսի յարութիւնը խիստ վսեմ նշանակութիւն ունի, ուստի և Քրիստոնեայք այս վսեմ և աստուածային գործը շարունակ միտքը պահելու համար՝ որոշած են կիւրակին՝ օր հանգստեան։ Եկեղեցին սկսաւ սուրբ պահել այս օրը Առաքելոց ժամանակէն սկսած, ինչպէս և կը կարդանք առաքելական Գործոց մէջ, որ աշակերտները կը հաւաքուէին Միաշաբաթի օրը՝ Աստուծոյ խօսքը լսելու և Պօղոս առաքեալն կը պատուիրէ նոյն օրը՝ Քրիստոնէից գումարուած ժամանակ գանձանակ ժողովել. "Ըստ իւրաքանչիւր միաշաբաթուն իւրաքանչիւր ոք՝ ի ձէնջ անձին իւրում գանձեսցէ, որ ինչ և յաջողեսցի „։ Ա. Կորնթ. ԺԶ. 2։ Իսկ երբորդ

դարուն մէջ, Կոստանդիանոս կայսեր օրով, շաբաթ աւուր տեղ, կանոնական կերպիւ հաստատուեցաւ Կիւրակի օրը։

Քրիստոնեայք պարտաւոր են սուրբ պահել այս օրը։ — Ա. Դադարելով բոլոր մարմնաւոր գործքերէ, հեռանալով նիւթական աշխատանքէ, որոնք անհրաժեշտ չ'են մարդուն և որոնք կ'արգելուն նոյն օրը Աստուծոյ ծառայելու։ — Բ. Սոյն օրը միշտ եկեղեցի երթալ։ — Գ. Սոյն օրը գերդաստանի մէջ սովորականէն աւելի ուրախութեամբ և ջերմեռանդութեամբ առանձնական պաշտօն մատուցանել Աստուծոյ ամենակերպ բարեպաշտութեամբ։ — Դ. Հեռանալ ամեն մըտայոյզ զուարճութիւններէ, որոնք բոլորովին անպատշաճ են այս տէրունական աւուր մէջ։

Քրիստոնեայք պարտաւոր են Կիւրակի օրը եկեղեցի գընալ, հնազանդելով Աստուծոյ կամացը և յարգելով ըստ արժանւոյն, ինչպէս կը հրամայէ չորրորդ պատուիրանը։ Այս մասին մեր Փրկիչը իւր անձը օրինակ կը տայ մեզ Աւետարանի մէջ։ Առաքեալք, փոխանակ Հրէից սինագոգային կամ ժողովարանին, միասին կը ժողովուէին առանձինն, որուն համար և կը խօսի Պօղոս առաքեալն. "Եւ մի՛ թողուցուք զժողովս միմեանց, որպէս և սովոր են ոմանք"։ Եբր. Ժ. 25։ Ի՞նչ բան կարող է լինիլ առաւել քան զայս քաղցր և արդար, երբ մենք բարձրաձայն և միաբարբառ կը յայտնենք մեր աստուածպաշտութիւնը, մեր հաւատոյ շնորհակալութիւնը, մեր սիրոյ զգացումը և մեր յուսոյ հաստատութիւնը, զոր պարտինք Արարչին երկնի և երկրի։ Ի՞նչ բան կարող է առաւել քան զայս սրտաշարժ լինիլ, երբ մենք միաբան մեր եղբարց հետ կը խնդրենք մեր երկնաւոր Հօր օրհնութիւնը, պաշտպանութիւնը և խնամքը, յորմէ կախեալ է երջանկութիւն և ապահովութիւն ազգաց. Ի՞նչ բան կարող է հաւասարիլ այս երախտագիտական զգացմանը, երբ շնորհակալ կը լինինք նորա անհուն ողորմութենէն և հրապարակաւ կը խոստովանինք մեր սուրբ կրօնը։

Այսպիսի հրապարակական աստուածպաշտութիւնը կը ներգործէ մեր եղբարց վրայ, որոց բարի օրինակ կը լինինք Աստուծոյ արքայութիւնը յառաջացնելու. վասն զի հրապա-

րակական աստուածպաշտութիւնը գեղեցիկ միջոց է Աստուծոյ վարդապետութիւնը տարածելու համար, որոցմէ զուրկ պիտի մնային շատ մարդիկ, եթէ քրիստոնէական եկեղեցւոյ միաբանութիւնը և հաւատոյ ու սիրոյ խաղաղութիւնը չը տիրէր։

Միաբանական աստուածպաշտութիւնը կ'ազդէ ամեն անհատի վրայ՝ հաւատոյ մէջ յառաջադիմելու և կրօնական ճանաչողութիւնը լուսաւորելու, կը զօրացնէ բարեպաշտութեան և մարդասիրութեան զգացմունքը, կը մօտեցնէ եղբայր՝ եղբօր, կ'առաջնորդէ զղջալու գործած մեղքերը, կը մխիթարէ յուսով, կը քաջալերէ հաւատով, և այսպէս կը բազմապատկի ամենի եռանդը, երբ միահամուռ կը լսեն Աստուծոյ խօսքը, որով միացած է զօրութիւնը՝ քաղցրութեան հետ, և երկնաւոր օրհնութիւնը՝ երկրաւոր փառաբանութեան հետ։ Ուստի և իւրաքանչիւր ճշմարիտ քրիստոնեայ կարող է ասել Դաւիթ մարգարէին հետ. "Ուրախ եղէ ես, ոյք ասէին ցիս 'ի տուն տեառն երթիցուք մեք"։ Սաղ. ՃԻԱ. 1։ Այսպէս կը մտածեն ամեն աստուածապաշտ մարդիկ, որոնք կըզգան միաբանական աղօթքի քաղցրութիւնը։

Եթէ կը փափաքինք մեծ օգուտ քաղել մեր եկեղեցի երթալէն, պարտաւոր ենք երթալէն առաջ մտածել Աստուծոյ էութեան վրայ, մեր 'ի նմանէ ունեցած լիովին կախման վրայ, նորա ողորմութեան վրայ, որուն կարօտ ենք, և առհասարակ ամեն բանի վրայ, ինչ որ Աստուած մեզմէն կը պահանջէ։ Այսպիսի պատրաստութիւնը կ'օդնէ մեզ ջերմ զգացողութեամբ Աստուծոյն մատուցանելու վայելուչ պաշտօն։ Նմանապէս եկեղեցւոյն մէջ պարտաւոր ենք լինիլ խորին յարգանօք, ուշադրութեամբ, հեզութեամբ և ջերմեռանդն ցանկութեամբ ընդունելով Աստուծոյ խօսքը մեր սրտին մէջ և անընդմիջապէս 'ի գործ դնելով. "Որով 'ի բաց թօթափեալ զամենայն աղտեղութիւն և զյաւելուածս չարեաց, հեզութեամբ ընդունիջիք զբանն ընդաբոյս, որ կարողն է կեցուցանել զոգիս ձեր, զի լինիջիք առնողք բանին և մի՛ լսողք միայն համարեսջիք զանձինս, զի եթէ ոք միայն լսող իցէ բանին և ո՛չ առնող, նման է նա մարդոյ, որ պշուցեալ հայի ընդ երեսս իւր, որ ծնանիցի 'ի հայելւոջ, զի հայեցեալ ետես զինքն և զանց ա-

բար, և անդէն մոռացաւ թէ որպիսի ոք էր „ ։ Յակ. Ա. 21—25 ։ Իսկ եկեղեցիէն ելնելով պարտաւոր ենք մտածել մեր լսած կենսատու խօսքերուն վրայ, մեր փրկչի անմահ պատարագին վրայ. պարտաւոր ենք առ մեզ ուղղել Աստուծոյ խօսքը կամ քարոզը, որ ընդհանրապէս կը խօսուի. պարտաւոր ենք քընել և համեմատել մեր գործքերը քարոզուած առաքինութեանց կամ մոլութեանց հետ ։ Պարտաւոր ենք աղօթել, որ տայ մեզ Աստուած կարողութիւն և զօրութիւն ընդունելու և գործ դնելու նորա խօսքը, որ կարող է փրկել մեր հոգին ։ Մտադրութիւն չը դարձնել այս պարտաւորութեանց վրայ, կը նշանակէ զրկուիլ ճշմարիտ աստուածպաշտութենէ և օգուտ չը քաղել Աստուծոյ խօսքերէն մեր հոգւոյ փրկութեան համար, կը նշանակէ հեռանալ աստուածպաշտութեան նպատակէն և երջանիկ ազդեցութենէն ։

Քրիստոնեայք, բացի կիւրակէից, ունին յատուկ տօներ, բայց այս տօները այնպէս պիտի լինին, որ արգելք չը դառնան ժողովրդի գործունէութեանը ։ Ընդհանուր քրիստոնէից տօները, որոնք տէրունական կը կոչուին, մեր փրկչին վերաբերելուն համար, գլխաւորապէս հետեւեալներն են՝ — Ծնունդ և Յայտնութիւն Քրիստոսի, Մկրտութիւն, Զարշարանք, Յարութիւն, և այլն ։ Այս տօները նշանակուած են այն նպատակաւ, որ մենք յիշենք և մտաբերենք այն տնօրինական անցքերը, որոնք մեր քրիստոնէական հաւատոյ և յուսոյ հիմունքն են ։ Բաց յայսմանէ, իւրաքանչիւր ազգային կամ մասնաւոր եկեղեցիներ ունին առանձին յատուկ տօներ սրբոց, որոնք մեր միտքը կը բերեն առաքինի մարդկանց յիշատակը, որոնք 'ի սէր հաւատոյ՝ կենօք և մահուամբ պահած, տարածած և պաշտպանած են քրիստոնէութիւնը իւրաքանչիւր ազգի մէջ, որ և եկեղեցին նոցա տօնախմբութիւնը կատարելով՝ կը յիշեցնէ նոցա փառաւոր արարքը՝ յօրինակ հաւատացելոց ։ Իսկ ինչ որ կը վերաբերի աստուածպաշտութեան միւս մասերուն, պարտաւոր ենք իմանալ որ բոլորն եւս մտադրութեան արժանի են, ինչպէս են՝ աղօթք, Աստուծոյ խօսքը կարդալ, եկեղեցական խորհուրդներ, շարականներ, մաղթանք, քարոզ և այլն ։ Նա, որ քարոզին նշանակութիւն կը տայ միայն եկեղեցւոյ մէջ,

շատ կը սխալի. վասն զի քարոզը միայն մեր միտքը և երեւակայութիւնը գոհացնելու համար չ'է, այլ ջերմեռանդն ցանկութեամբ կատարելու և Աստուծոյն մօտենալու ։ Ով որ մարդոյ խօսքը կը նախապատուէ Աստուծոյ խօսքէն, նա հրապարակական աստուածպաշտութիւնը՝ լոկ զուարճութեան տեսարան կը կարծէ ։ Ինչպէս Աստուծոյ խօսքը, նոյնպէս և քարոզը պէտք է որ ունենան եկեղեցւոյ մէջ իրենց պատշաճաւոր տեղը և նշանակութիւնը ։ Պէտք է պաշտել զԱստուած հեզութեամբ սրտի, խոնարհութեամբ և ժողովրդին հասկանալի լեզուով քարոզել, առանց որոյ, ինչպէս կ'ասէ Պօղոս առաքեալն, մեր խօսքը վայրապար կը լինի. "Նոյնպէս և դուք եթէ լեզուօք նշանակիցէք զբանն, զիա՞րդ ճանաչիցին խօսքն, զի լինիջիք այնուհետեւ իբրեւ ընդ օդս խօսեցեալք ։ Եւ ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ և ըստ կարգին լինիցի „ ։ Կորնթ. ԺԴ. 9—10 ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ

ԱՌ ՄԱՐԴԻԿ

Մեր պարտաւորութիւնները կամ պարտքերը կը բաժանին երկու — Ընդհանուր, զոր պարտինք կատարել առ ամենայն մարդիկ, և Յատուկ, որ կը վերաբերի յատկապէս մի քանի մարդոց հետ ունեցած կապակցութեանց ։ Ընդհանուր պարտաւորութիւնները երկու են — Արդարութիւն և Սէր ։ Արդարութիւն բառը, Ս. Գրոց մէջ, քանի մի տեղ կը նշանակէ Ուղղութիւն և Բարեհոգութիւն ։ Այս քրիստոնէական առաքինութեանց զարդը կը դտնուի փրկուածներու մօտ, որոնք ամենայն ջերմեռանդութեամբ կ'աշխատին սուրբ պահել իրենց անձը և այսպիսի մարդիկն են, զորս Ս. Գիրքը Արդար կ'անուանէ ։ Իսկ երբեմն Արդարութիւն բառը կը նշանակէ Բարի սովորութիւն, որով

մեր առ մարդիկ ունեցած ամեն պարտաւորութիւնները կը կատարենք, որ և կ'անուանի Արդարութեամբ կեալ։ "Որ խրատէ զմեզ զի ուրասցուք զամբարշտութիւն և զաշխարհական ցանկութիւն՝ զգաստութեամբ և արդարութեամբ և աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի"։ Տիտ. Բ. 12։ Բայց այստեղ Արդարութիւն բառով պարտինք հասկանալ այն առաքինութիւնը, որով պարտաւոր ենք ամենուն հատուցանել՝ ինչ որ պարտ ենք և չը զրկել զոք ո՛չ կեանքէ, ո՛չ գոյքէ և ո՛չ պատիւէ։

Մարդը պարտաւոր է արդար լինիլ, վասն զի Աստուծոյ օրէնքը ամենաճիշդ կերպով կը պահանջէ այս պարտաւորութիւնը, ինչպէս և տասնաբանեայ պատգամաց երկրորդ տախտակը ընդհանրապէս հիմնուած է արդարութեան վրայ, որով պարտինք հատուցանել մեր ընկերին ամեն օգուտ և երբէք չը վնասել։ Պօղոս առաքեալն յայտնապէս կը պատուիրէ. "Արդ՝ հատուցէ՛ք իւրաքանչիւր զպարտս"։ Հռով. ԺԳ. 7։ Նա կը յայտնէ նմանապէս, որ անիրաւները կարող չ'են ժառանգել երկնից արքայութիւնը։ "Եթէ ո՛չ գիտէք, զի անիրաւք զարքայութիւնն Աստուծոյ ո՛չ ժառանգեն"։ Ա. Կորնթ. Զ. 9։ Եւ այս պատճառաւ զԱստուած կը ներկայացնէ վրէժխնդիր անիրաւներուն. "Մի՛ զանց առնել և զրկել յիրիդ յայդմիկ զեղբայր իւր, քանզի վրէժխնդիր է տէր 'ի վերայ ամենայնի այդորիկ, որպէս յառաջագոյն ասացաք և եդաք վկայութիւն"։ Ա. Թես. Դ. 6։

Մարդկային միաբանութիւնը կամ ընկերականութիւնը կարող չ'է յարատեւիլ, եթէ չը կատարէ աստուածային պատուիրանքները և եթէ միաբանութեան անդամները վնաս հասցընեն միմեանց և չը հատուցանեն իրենցմէ պահանջուած պարտքը։ Արդարութիւնն է հիմն կարգի և կապ միաբանութեան։ Նա է միաբանութեան առաջին առաքինութիւնը, առանց որոյ միւս առաքինութիւնները լոկ ստուերներ են. օրինակի համար՝ առանց արդարութեան՝ բարերարութիւնը միայն կեղծաւորութիւն կը լինի, եթէ յառաջացած է զրկողութենէ, չը տալով այլոց իրենց պատկանաւոր վարձը։ Արդարութիւնը պէտք է որ կապուած լինի ուղղութեան հետ,

այսինքն մարդիկներէն չը պահանջել միշտ այն բանը, ինչ որ քաղաքական օրէնքները և արդարութիւնը իրաւունք կը տան պահանջելու։ Շատ դիպուածներ կան, որ մենք պէտք չէ գործ դնենք մեր իրաւունքը, վասն զի գիտենք մենք որ մարդկային օրէնքները անկատար են և չունին նախատեսութիւն ամեն պատահմանց համար։ Նոքա միայն կըզգուշացնեն մեծամեծ անիրաւութիւններէ, և շատ անգամ զրկողութիւն կարող է յառաջ գալ, եթէ մենք խստութեամբ գործ դնենք մեր ընկերին նկատմամբ՝ մեզ տրուած իրաւունքները։ Այս հիման վրայ ասուած է Լատինացւոց այս ճշմարիտ առածը. Սումում իուս, սումմա ինիուրիա, այսինքն՝ Խիստ իրաւունքը՝ խիստ անիրաւութիւն է։ Աւետարանը բացարձակապէս կը զարթուցանէ մեր մէջ այս ուղղութեան հոգին, կը շարժէ մեր սիրտը այնպիսի զգացումներով, որ դադարեցնենք մեր իրաւունքները, ինչպէս Ս. Գրոց մէջ օրինակ տրուած է Աբրահամի և Ղովտի իրարմէ բաժանումն։ Ահա՛ այս ուղղութեան հոգին է, որ շատ անգամ չը թոյլատրեր մեզ պահանջել մարդիկներէն՝ ինչ որ մարդկային օրէնքները կը թոյլատրեն պահանջելու. "Ասէ Աբրահամ ցՂովտ, մի՛ լիցի կռիւ ընդ իս և ընդ քեզ, և ընդ հովիւս իմ և ընդ հովիւս քո, զի արք եղբարք եմք մեք, ո՞չ աւադիկ երկիրդ ամենայն առաջի քո է, մեկնեաց յինէն, թէ դու յահեակ, ես յաջ, եթէ դու յաջ, ես յահեակ"։ "Եւ արդ ամենեւին իսկ վատթարութիւն է ձեզ, զի դատաստան իսկ գոն 'ի միջի ձերում, ընդէ՞ր ո՛չ դուք զրկէք և ոչ դուք առաւել նեղիք"։ Ծննդոց. ԺԳ. 8—9։ Ա. Կորնթ. Զ. 7։

Քրիստոս տուաւ իւր աշակերտներուն այս արդարութեան և ուղղութեան կանոնը, որ կը վերաբերի մեր ամեն պարտաւորութեանց առ մարդիկ։ Այս արդարութեան կանոնը պարզ է և միանգամայն դիւրաւ գործադրելի. "Զամենայն զոր միանգամ կամիջիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէ՛ք և դուք նոցա, զի այն իսկ են օրէնք և մարգարէք"։ Մատ. Է. 12։ Այսինքն կամեցէ՛ք մարդկանց ո՛չ թէ այն՝ ինչ որ ձեր կիրքը կամենալ կը տայ, այլ այն՝ ինչ որ արդար է և ուղիղ. արարէ՛ք այն՝ ինչ որ կը ցանկայիք, որ այլք ձեզ առնէին"։ Հեթանոսաց մէջ եւս կը նշմարուէր այս կանոնը,

բայց կրճատեալ և արգելական ձեւով. վասն զի հեթանոսք կ'ասէին. "Մի՛ ցանկաք և մի՛ առնէք այլոց, ինչ որ չէք ցանկար, որ այլք ձեզ առնեն"։

Արդարութենէն յետոյ՝ երկրորդ ընդհանուր պարտաւորութիւնն է Սէրը։ Սէր բառը Ս. Գրոց մէջ շատ անգամ կը նշանակէ սէր առ Աստուած և առ ընկերն, ինչպէս կ'ասէ Պօղոս առաքեալն. "Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց և զսէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ, որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս, որ զօղանջեն"։ Ա. Կորնթ. ԺԳ. 1։ Վասն զի՝ այս երկու զգացողութիւնները անբաժան կերպով իրարու հետ կապուած են. իսկ տասնաբանեայ պատգամաց մէջ կը նշանակէ միայն սէր առ ընկերն, որ է ջերմեռանդութեամբ կամենալ երջանկութիւն ընկերին և առնել բարի։

Այս սիրոյ կանոնն է, զոր կը տայ մեզ մեր մարդասէր Փրկիչն "Եւ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո"։ Մատ. ԺԹ. 19։ Սէր ընկերին պէտք է որ լինի այնքան ջերմեռանդն և գործնական, որքան կը փափաքինք, որ մեր ընկերները ունենան առ մեզ։ Պէտք է որ փափաքինք և կատարենք նոցա համար ամեն բան, ինչ որ կը ցանկանք ուղիղ դատողութեամբ որ կատարեն նոքա մեզ համար։ Ընկեր ասելով՝ պարտինք հասկանալ ամեն մարդ, առանց խտրութեան, չը նայելով՝ ո՛չ հարստութեան, ո՛չ աստիճանին, ո՛չ կրօնքին, ո՛չ տաղանդին, և ո՛չ երկրին, ուր նոքա կը բնակին. վասն զի՝ նոքա ամենքը ունին մի և նոյն ծագումը, մի և նոյն բնութիւնը, մի և նոյն ընդունակութիւնը և մի և նոյն կոչումն։ Հեթանոսք, նաեւ նոյն իսկ Եբրայեցիք, կատարելապէս չէին ճանաչեր ընկեր բառի նշանակութիւնը, ուստի և ընկեր կը համարէին միայն իրենց ազգականքը, ծնողքը, դրացիքը և իրենց քաղաքացիները։ Քրիստոս աւետարանական գեղեցիկ առակի մէջ կ'ուսուցանէ մեզ ընկերսիրութեան կանոնը։ Սամարացին կ'օգնէ Եբրայեցւոյն և նորա կարօտութիւնը կը լցուցանէ, թէպէտեւ նա ուրիշ ազգէ էր, թշնամի Եբրայեցիներուն և միանգամայն կրօնքով կ'որոշուէր նոցա կրօնքէն։ Այս առակը կը վերջացնէ Քրիստոս պատուիրելով այսպէս. "Գնա՛, արա՛ զայն"։ Ղուկ. Ժ. 29—37։

Այս սէրն է ճշմարիտ կապ միաբանութեան, ինչպէս կ'ա-

սէ և Պօղոս առաքեալն. "Եւ 'ի վերայ այսր ամենայնի զսէրն, որ է զօդ կատարման"։ Կոր. Գ. 14։ Սէրը կը ծնանի հեղութիւն, կը բժշկէ և կը թեթեւցնէ անտանելի նեղութիւնները։ Սէրը կ'օգնէ և կը բանայ մեր ընդունակութիւնը կատարել մեր պարտաւորութիւնները յօգուտ հասարակութեան, ինչպէս կ'ասէ. "Նա է կատարումն օրինաց"։ Հռով. ԺԳ. 9—10։

Մեր հաւատը կ'ուսուցանէ մեզ, որ սէրն է մեր ամենասուրբ պարտաւորութիւնը, մեր միտքը բերելով, որ Աստուած ամեն մարդիկ մէկ արիւնէ ստեղծած է. "Արար 'ի միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան, բնակեալս 'ի վերայ ամենայն երեսաց երկրի"։ Գործ. ԺԷ. 17—26։ Այս սիրոյ պատուիրանին համար է որ կ'ասէ՝ զԱստուած սիրողը կը սիրէ նոյնպէս եւ իւր եղբայրը։ "Եւ զայս պատուէր ունիմ առ 'ի նմանէ, զի որ սիրէ զԱստուած, սիրէ նա և զեղբայր իւր"։ Ա. Յով. Դ. 21։ Մեր հաւատը կը պահանջէ մեզմէն ընկերսիրութիւն, որպէս ապացոյց շնորհակալութեան այն ողորմութեանց համար՝ զոր Աստուած ցուցած է մեզ. "Զդեցարո՛ւք այսուհետեւ իբրեւ ընտրեալք Աստուծոյ՝ սուրբ և սիրեցեալք՝ զգութ, զողորմութիւն, զհեզութիւն, զերկայնմտութիւն և այլն"։ Կոր. Գ. 12–15։

Սուրբ Գիրքը կը յայտնէ մեզ, որ սէրն է. — Ա. Այն կապը, որ պէտք է Քրիստոսի բոլոր անդամները ունենան միմեանց հետ. "Այլ դուք մարմին Քրիստոսի էք և անդամք անդամոց նորա"։ Ա. Կորնթ. ԺԲ. 25։ "Ես 'ի նոսա և դու յիս, զի եղիցին կատարեալք 'ի մի"։ Յով. ԺԷ. 25։ — Բ. Նա է նը պատակ Աւետարանի. "Քանզի գլուխ պատուիրանին սէր է 'ի սուրբ սրտէ, 'ի մտաց բարեաց և յանկեղծաւոր հաւատոց"։ Ա. Տիմ. Ա. 5։ — Գ. Նա է յայտնի նշան Քրիստոնէի։ "Յայտմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս"։ Յով. ԺԳ. 35։ — Դ. Նա է նշան, որով կարող ենք ճանաչել զմեզ, որ փրկութեան ճանապարհի վրայ ենք. "Մեք գիտեմք, զի փոխեցաք 'ի մահուանէ 'ի կեանս, քանզի սիրեմք զեղբարս. իսկ որ ոչն սիրէ, անդէն 'ի մահուն մնայ"։ Ա. Յով. Գ. 14։ Վերջապէս հաւատը որպէս մարդասիրութեան օրինակ կը տայ մեզ զՔրիստոս, որ յանհուն սիրոյ շարժեալ անդադար կը շրջէր, որ ամեն տեսակ օգնութիւն մատուցա-

նէ մարդկութեան.՝ “ Զքիտաս, որ ՚ի նազարէթէ, զոր էօծ Աստուած Հոգւով սրբով և զօրութեամբ, որ շրջեցաւ բարի առնել և բժշկել զամենայն ըմբռնեալս ՚ի սատանայէ, զի Աստուած էր ընդ նմա „։ “ Բանդի դիտէք զչնորհսն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի վասն ձեր աղքատացաւն, որ մեծատունն էր, զի դուք նորա աղքատութեամբն մեծասչիք „։ “ Ումենայն որ ՚ի նմա է հաստատեալ՝ ոչ մեղանչէ և ամենայն՝ որ մեղանչէ՝ ոչ տեաս զնա և ոչ ծանեաւ զնա „։ “ Եւ դնացէք սիրով, որպէս Աստուած սիրեաց զմեզ և մատնեաց զանձն իւր վասն մեր պատարագ և զհնութիւն Աստուծոյ ՚ի հոտ անուշիկ „։ “ Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս, որպէս սիրեցի ես զձեզ և դուք սիրեսջիք զմիմեանս „։ Գործ. ժ. 38։ Բ. Կորնթ. Ը. 9։ Ա. Յովհ. Գ. 16։ Յովհ. ժԳ. 34։ Եփես. Ե. 2։

Այս տեղէն կը տեսնենք ահա որ միայն իւր անձը և իւր անձի օգուտը մտածել մարդը հեռի է սիրոյ պատուիրանէն և կ՚անուանի ինքնասէր։ Հեռի է նա նոյնպէս արքայութենէ, հեռի է կեանքէ և քրիստոնէական յոյսերէ, ինչպէս հեռի են եղբայրասէրացը և չարագործը։

Թէպէտև սիրոյ սերմն բնականապէս կար մարդոյ սրտի մէջ և չին կտակարանի մէջ հաստատուած էր՝ որպէս պատուիրան, բայց Յիսուս Քրիստոս առաւել լուսաւորեց սիրոյ պատուիրանը և անուանեց Նոր։ — Ա. Որովհետև հասատակ առաւել զօրեղ պատճառներու վրայ։ — Բ. Որովհետև իւր կեանքով ցոյց առաւ նոր օրինակ և նոր կատարելութիւն։ — Գ. Որովհետև արձարձեց մեր սրտի մէջ բնական սիրոյ զգացումները, որոնք մոլար կիրքերով թմրած էին։ — Դ. Որովհետև՝ նա հեռացուց այն մոլորութիւնները, որոնք ժամանակի ընթացքին սիրոյ պատուիրանը, ինչպէս կը տեսնենք այս ամենը բացատրուած Մատթէոսի Աւետարանի մէջ։ “ Լսեսարուք ապաքէն, զի ասացաւ՝ սիրեսցես զընկեր քո և ատես զթշնամի քո։ Այլ ես ասեմ ձեզ՝ սիրեցէք զթշնամիս ձեր եւայլն „։ Մատ. Ե. 43—48։

Սէր առ ընկերն իւր կատարեալ սկզբունքով պէտք է որ լինի։ — Ա. Զրի, առանց անխտրութեան, առանց շահասիրութեան։ Պարտաւոր ենք սիրել և ծառայել մեր ընկերին

չարժուած լինելով սոսկ սիրով։ “ Եթէ սիրէք զոսա զսիրէսիս ձեր զի՞նչ շնորհ է ձեր։ զի և մեղաւորք սիրեն զսիրելիս իւրեանց, և եթէ բարի առնէք բարերարաց ձերոց, որ շնորհ է ձեր, զի և մեղաւորք զնոյն գործեն։ Եւ եթէ այնպիսի, յորոց ակն ունիցիք առնուլ, որ շնորհ է ձեր, զի և մեղաւորք մեղաւորաց փոխ առնուն զի անդրէն առցեն զոլ կշիռս, բայց սիրեցէք զթշնամիս ձեր և այլն „։ “ Սէր առանց կեղծաւորութեան „։ Ղուկ. Զ. 32—35։ Հռոմ. ժԲ. 9։ — Բ. Սիրոյ առարկան պէտք է որ ամենուին իւր մէջ ամեն մարդիկ, ինչ ասոիճանի որ լինին, նա և մեր թշնամիքը։ Լսենք՝ թէ ինչպէս կը յանդիմանէ Յիսուս և կը նախատէ ներքայեցւոց վարդապետները, որոնք Միւթոցես զընկեր ո՝ պատուիրանի հոգւոյն հակառակ՝ չամաչցան ասելցնել Աթոցես զինքնոյն ո՝ հակապատուիրանը։ Փոշոս առաքեալն կը պատուիրէ բարի առնել ամենուն. “ Այսուհետև մինչդեռ ժամանակս ՚ի ձեռս է՝ գործեսցուք զբարիս առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ „։ Գաղ. Զ. 10։

Գ. Սէրը պէտք է որ լինի կարգաւ։ Մենք պարտաւոր ենք նոցա սիրոյ աւելի հոգ և խնամք ունենալ, որոնց հետ միացած ենք արիւնով, բնութեամբ և ուրիշ պայմանով։ Այս հիմամբ մենք կապուած ենք մեր ծնողաց հետ, մեր բարերամաց և ազգականաց հետ, մեր ազգակիցներու և դրացիներու հետ, որոնք ունին մեզ հետ մի հաւատ. ուստի եթէ ոմքա պէտք չափ կարօտ են օգնութեան, նախ քրիստոնեայ պարտինք սկսել։ “ Գործեսցուք զբարիս առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիս հաւատոյ „։ Գաղ. Զ. 10։ Բայի մերձաւոր կապակցութենէն՝ պարտինք ունենալ սէր ընդհանուր օգտի համար. ուստի մեր ազգայնոց հետ կազմած միաբանութիւնը աւելի նախապատիւ պիտի համարինք քան թէ այն վտքրիկ միաբանութիւնը, որով կապուած ենք միայն քանի մի անձանց հետ։ Մենք պարտաւոր ենք, հարկը պահանջած ժամանակ, մատնաւորը զոհել ընդհանուրին, վտքրը՝ մեծին եւայլն։ Այսինքն մենք պարտաւոր ենք Աղգի օգուտը նախապատիւ համարիլ մեր դերդատանի և բարեկամաց օգտէն, և ընդհանուր մարդկութեան շահը՝ Աղգի շահէն։ Վասն զի՝

ընդհանուրին վնասելով՝ չենք կարող ճշմարտապէս ծառայել մեր ընկերին։ Այս նշանակութեամբ խիստ գեղեցիկ ասած է երեւելի սուրբ մարդիկներէն մէկը, որուն կարող ենք ձայնակցիլ։ "Ես կը սիրեմ իմ գերդաստանը առաւել քան իմ անձը, իմ հայրենիքը՝ առաւել քան իմ գերդաստանը, բայց առաւել կը սիրեմ մարդկութիւնը քան իմ հայրենիքը։

Դ. Սէրը պէտք է որ լինի գործունեայ, մեծահոգի և հաստատ. "Որդեակք իմ, մի՛ բանիւք և լեզուօք սիրեսցուք, այլ արդեամբք և ճշմարտութեամբ"։ Ա. Յովհ. Գ. 18։ "Այլ ըզ բարիս գործել մի՛ հեղգասցուք"։ Գաղ. Զ. 9։

Ե. Սէրը պէտք է որ իւր սկզբմամբ աստուածային լինի, որովհետեւ մարդկանց սէրը բոլորովին հիմնուած է նոցա համակրութեան վրայ և իրենց օգտի վրայ. իսկ քրիստոնէական ընկերսիրութիւնը պէտք է որ իւր ծագումն աստուածսիրութենէն ունենայ, այսինքն մեր շնորհակալութենէն՝ Աստուծոյ ցուցած ողորմութեանց համար։ Պէտք է որ ըմբռնենք այն մեծ գաղափարը, որ Աստուած ընտրած է մեր նման մարդիկը՝ զինքը ներկայացնելու աշխարհիս վրայ և ընդունելու մեզմէն այն սիրոյ վկայութիւնը, զոր պարտինք ցուցանել, սիրելով մեր եղբայրը. "Սիրելիք, եթէ Աստուած այնպէս սիրեաց զմեզ, ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել"։ Ա. Յովհ. Գ. 11։

Այսպիսի պայմաններով ընկերսիրութիւնը կը դառնայ սուրբ զգացողութիւն և սուրբ կապ, որ ամենեւին չը լուծուիր կամ քակուիր։ Սէրը ո՛չ թէ մեզ կը հեռացնէ մեր ներքին հոգեւոր կապակցութենէն, զոր կ'անուանենք բարեկամութիւն, այլ ընդհակառակն՝ աւելի կը բանայ մեր սիրտը բարեկամութեան համար, կազդէ մեր վրայ բարութեամբ առ բարեկամութիւն, կը ծնանի մեր մէջ հեզութիւն, ուրախութիւն և ցնծութիւն։ Քրիստոս ինքն սիրեց զՂազարոս և զՅովհաննէս յատուկ սիրով։ Նա լացաւ Ղազարոսի վրայ և Հրէայք ասացին. "Տեսէ՛ք, ո՞րչափ սիրէր զնա"։ Յովհ. ԺԱ. 35—36։ Յովհաննէս աւետարանիչը կանուանի սիրելի աշակերտ Յիսուսի. "Դարձաւ Պետրոս և տեսանէ զաշակերտն, զոր սիրէր Յիսուս, զի երթայր զկնի նորա"։ Յովհ. ԺԱ. 20։ Նաթան մարգարէն կը սիրէր զԴաւիթ իւր հոգւոյ պէս. "Եւ եղեւ իբրեւ վախճան-

եաց զխօսիլն ընդ Սաւուղայ և ոգի Յովնաթանու կապեցաւ ընդ ոգւոյ Դաւթի և սիրեաց զնա Յովնաթան ըստ անձին իւրում"։ Սամ. ԺԸ. 4։

Բարեկամութիւնը մեծ ազդեցութիւն ունի մեր վարուց և երջանկութեան վրայ, ուստի և մենք պէտք չ'է որ փընտռենք մեր բարեկամաց մէջ բնական համակրութիւն և պատրաստական ծառայութիւն, այլ աւելի պարտինք փնտռել լուսաւորեալ միտք, առողջ դատողութիւն, ճշմարիտ հաւատ և ունակութիւն առաքինութեան. "Եւ մի՛ լինիք լծակիցք անհաւատից, քանզի զի՞նչ հաղորդութիւն է արդարութեան ընդ անիրաւութեան և կամ զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի և կամ զի՞նչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ Բելիարայ և կամ զի՞նչ միաբանութիւն հաւատացելոյն ընդ անհաւատի և կամ զի՞նչ նմանութիւն է տաճարի Աստուծոյ ընդ մեհենեաց. ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք"։ Ա. Կորնթ. Զ. 14—16։ "Աչք իմ 'ի հաւատացեալս երկրի, զի նստցին նոքա ընդ իս"։ Սաղ. Ճ. 6։

Թշնամեաց հետ պարտաւոր չենք ընտանեբար վարուիլ և ըստ ամենայնի հաւատ ընծայել, քանի որ նոքա կ'ատեն մեզ և կը խորհին մեզ վնասել, այլ պարտաւոր ենք ճանաչել որպէս մերձաւոր, առնել նոցա բարութիւն, հեզութեամբ պատասխանել, ներողութեամբ խօսիլ նոցա վրայ, պատրաստ լինիլ ծառայելու՝ երբ հարկ է, աղօթել նոցա համար, ընդունիլ սիրով՝ երբ կը դիմեն մեզ, ջանալ զարթուցանել նոցա մէջ խաղաղութեան զգացողութիւններ։ Սորա համար է որ կը պատուիրէ մեզ մեր Փրկիչն ասելով. "Սիրեցէ՛ք զթշնամիս ձեր, օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր, բարի արարէ՛ք ատելեաց ձերոց"։ Մատ. Ե. 44—45։

Պարտաւոր ենք մենք բարի առնել մեր ընկերներուն, թէ՛ հոգեւորապէս և թէ՛ մարմնաւորապէս, աշխատելով նոցա ներկայ և յաւիտենական երջանկութեան համար, որչափ մեզմէն կախեալ է։ Պարտաւոր ենք օգնել, երբ կարօտութեան կամ նեղութեան մէջ են, երբ հիւանդութեան կամ երկիւղի մէջ են, պարտաւոր ենք օգնել, որչափ կարող ենք։

Մարդ օգնելով իւր ընկերին կը կատարէ Աստուծոյ կամքը,

որ յայտնած է. — Ա. Խզճմտանքով, որով կը կարեկցինք, երբ կը տեսնենք աղքատութեան մէջ։ — Բ. Տեսնելով մարդկային անհաւասար վիճակը, որ է հետեւանք ընդհանուր մարդկային ընկերականութեան, և շարժուած լինելով բոլոր զգացմամբ տառապելոց նեղութիւնը թեթեւացնել, վասն զի Աստուծոյ կամքն այս է, որ մէկի հարստութեամբ լցուի միւսի չքաւորութիւնը։ "Զի ոչ թէ այլոց հանգիստ կամիցիմ և ձեզ նեղութիւն, այլ հաւասարութեամբ այժմու ժամանակիս, ձեր առաւելութիւնդ 'ի նոցա պակասութեան, զի և նոցա առաւելութիւն եղիցի 'ի ձերում պակասութեան, զի եղիցի հաւասարութիւն՝ որպէս և գրեալ է թէ՝ որ զբազումն էառ՝ ոչ առաւելաւ և որ զսակաւն էառ՝ ոչ նուազեցաւ"։ Բ. Կորնթ. Ը. 13—16։ Այսպէս կարող է աղքատը մօտենալ հարստին, մէկի բարերարութիւնը և միւսի շնորհակալութիւնը կը կապուին քաղցր կապով, կը կազմուի գեղեցիկ միութիւն և ամենքը միասին կը պաշտեն և կ'օրհնեն Նախախնամութիւնը։ — Գ. Ս. Գիրքը անդադար կը պատուիրէ առնել ողորմութիւն. "Եւ եթէ լինիցի 'ի միջի քում կարօտեալ յեղբարց քոց 'ի քաղաքացեաց քոց 'ի միում երկրին զոր տացէ քեզ Տէր Աստուած քո, մի՛ դարձուցանիցես զսիրտ քո և մի՛ կծկիցես զձեռն քո յեղբօրէ կարօտելոյ"։ Բ. Օրին. ԺԵ. 7։ "Ոչ զայնպիսի պահս ընտրեցի ասէ Տէր, այլ լոյծ զկնճիռն անիրաւութեան, քակեա՛ զխարդախութիւն վաճառաց քոց, արձակեա՛ զնեղեալս թողութեամբ և զամենայն մուրհակս անիրաւութեան պատառեա՛, բրդեա՛ քաղցելոց զհաց քո և զաղքատս անյարկս տար 'ի տուն քո. եթէ տեսանիցես զմերկն՝ զգեցուցանիցես և յընտանեաց զաւակի քո զունկն մի՛ անկանիցես"։ Եսայի. ԾԸ. 6—7։ "Զբարերարութիւն և զհաղորդութիւն մի՛ մոռանայք, զի ընդ այնպիսի պատարագս հաճի Աստուած"։ Եբր. Ժ. 16։ Քրիստոս կ'ուսուցանէ մեզ Աւետարանի մէջ, որ պիտի յիշէ այն բարութիւնը, զոր մարդ կ'առնէ աղքատին. "Պատասխանի տայցէ թագաւորն և ասասցէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ, որովհետև արարիք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք"։ Մատ. ԻԵ. 40։

Ողորմութիւնն է ամենէն աւելի օգտակար և բարի գործք,

որով կարող ենք գործ դնել մեր կայքը։ Ի՞նչ զգացողութիւն կարէ հաւասարիլ այն զգացողութեանը, զոր կը ծնանի մէջ ողորմութիւնը. մինչդեռ աշխարհային ցանկութեան և փարթամութեան համար գործ դրած կայքը և ստացուածքը կը տան մեզ միայն ունայն հաճոյք և շատ անգամ կը թողուն մեր մտաց մէջ դառն յիշատակ։ Բարերարութիւնն է գեղեցիկ ճանապարհ, որով կարող ենք միսիթարել նեղեալները, դժբաղդները և կարօտեալները, որով և կարող են նոքա օրհնել Նախախնամութիւնը։ Նա է միջոց՝ նոցա սիրտը գրաւելու, տարաբաղդ եղբայրները մեզ համար աղօթքի հրաւիրելու և այսպիսի ժամանակաւոր գործքերով Աստուծոյ օրհնութիւնը ըստանալու։ "Տո՛ւք և տացի ձեզ՝ չափ բարւոք, թաթաղուն, շարժուն, զեղուն տացին 'ի գոգս ձեր, նովին չափով, որով չափով չափէք, չափեսցի ձեզ"։ "Այլ կարող է Աստուած զամենայն շնորհս առաւելուլ 'ի ձեզ, զի յամենայնի յամենայն ժամ զամենայն բաւականութիւն ընկալեալ՝ առաւելուք յամենայն գործս բարութեան, որպէս և գրեալ է՝ սփռեաց և ետ աղքատաց, արդարութիւն նորա մնայ յաւիտեան. Այլ այն որ ցանէ զսերմն սերմանացանաց և զհաց 'ի կերակուր պարգեւիցէ և բազմացուսցէ զսերմանիս ձեր"։ Ղուկ. Զ. 38։ Բ. Կորնթ. Թ. 8—12։

Վերջապէս կը պատահի որ մենք մեր հարստութիւնը կը կորուսանենք կամ կը թողունք մեր մահէն յետոյ, բայց երբ ողորմութեան համար գործ դնենք՝ կը տանինք մեզ հետ յաւիտենական աշխարհը. "Փոխ տայ Աստուծոյ՝ որ ողորմի տնանկին և ըստ տրոց նորա հատուսցէ նմա"։ Առակ. ԺԹ. 17։ "Անձին իւրում գործէ զբարիս ողորմածն, կորուսանէ զմարմին իւր այր անողորմ"։ Առակ. ԺԱ. 17։ "Գանձել անձանց զհիմն բարի 'ի հանդերձեալսն, զի բուռն հարկանիցեն զճշմարիտ կենաց"։ Ա. Տիմ. Զ. 19։

Իւրաքանչիւր մարդ իւր կարողութեան չափով պարտաւոր է ողորմութիւն առնել, մանաւանդ հարուստները։ Մարդ չը կայ, որ պարտաւորուած չը լինի կատարել այսպիսի աստուածահաճոյ պարտաւորութիւն, որ օգտակար է միանգամայն և իւր անձին։ Պօղոս առաքեալն կը պատուիրէ ոչ միայն ծան-

րութիւն չը դառնալ այլոց, այլեւ աշխատիլ այլոց օգնելու չափ կարողութիւն ունենալ. “Վաստակեսցէ գործել ձեռօք իւրովք զբարիս, զի բաւական իցէ տալ ում պիտոյ իցէ„: Եփես. Դ. 28: Այս հանգամանաց մէջ եղած ողորմութիւնը ամեն բանէ թանկագին է, ինչպէս էր այրի կնոջ լման, զոր Փրկիչը հարուստներու տուրքէն աւելի մեծ համարեց: Այս օրինակը մի գեղեցիկ քաջալերութիւն է այն մարդկանց համար, որոնք այսպիսի վիճակի մէջ կը գտնուին: Արդարեւ՝ կան աղքատներ, որոնք տալու բան չ՚ունին, բայց կարող են օգնել իրենց ընկերին՝ յայտնելով այլոց նորա կարօտութիւնը և միջնորդելով նորա համար: Զքաւորները կարող են միմեանց օգնել աշխատութեան մէջ, պահպանել և խնամել հիւանդութեան ժամանակ և կատարել այնպիսի ծառայութիւններ, որոնք շատ անգամ աւելի մեծ են քան թէ առատ ողորմութիւնները:

Մարդ պարտական է խոհեմութեամբ առնել ողորմութիւն, ճանաչելով կարօտ անձինքը, որոց կամի ողորմիլ, ընտրելով միջոցը՝ որով պարտ է ողորմիլ, չը հպարտանալ երբէք, այլ հեզութեամբ և ողորմութեամբ առնել ողորմութիւն. “Իւրաքանչիւր որպէս և յօժարիցի ոք սրտիւ մի՛ առ հարկի և տրտմութեան, քանզի զտուրս առատս, զուարթս սիրէ Աստուած„: “Զի եթէ յօժարութիւն առաջի կայ, ըստ գոյին ընդունելի է և ո՛չ թէ ըստ չը գոյին„: “Մի՛ ասիցես թէ ե՛րթ և եկեսջիր և վաղիւն տաց, զի կարող ևս իցես բարի առնել, քանզի ոչ գիտես զինչ վաղիւն ծնանիցի քեզ„: Առակ. Գ. 28: Բ. Կորնթ. Թ. 7. Ը. 12: Ողորմութիւնը պարտաւոր ենք առնել նմանապէս Աստուծոյ սիրոյ համար. “Եւ որ արբուսցէ միում ՚ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ցուրտ ջուր միայն յանուն աշակերտի, ամեն ասեմ ձեզ. ոչ կորուսցէ զվարձս իւր„: “Զոր ինչ առնիցէք, սրտի մտօք գործեսջիք, իբրեւ Տեառն և ոչ իբրեւ մարդկան„: Մատ. Ժ. 42: Կող. Գ. 23:

Ողորմութեան ժամանակ պարտաւոր ենք մարդկանց դատողութեանը չը նայիլ, այլ աշխատիլ միշտ առատ տալ և սակաւ տալէն զգուշանալ՝ քան թէ շատ տալէն, միտ բերելով Պօղոս առաքելոյն խօսքը. “Քանզի որ սերմանէ ճշտելով՝ ճշտելով և հնձեսցէ և որ սերմանէ առատութեամբ, առա-

տութեամբ և հնձեսցէ„: Բ. Կորնթ. Ի. 6: Պարտաւոր ենք նմանապէս զգուշանալ, որ ՚ի ցոյցս մարդկան և հանդիսապէս չը լինի մեր ողորմութիւնը, այլ ՚ի փառս Աստուծոյ: “Եւ յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ գիտասցէ ձախ քո, զինչ գործէ աջ քո, որպէս զի եղիցի ողորմութիւն քո ՚ի ծածուկ և հայրն քո որ տեսանէ ՚ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս„: Մատ. Զ. 3—4:

Ողորմութիւն ընդունող մարդիկը իրենց կողմէն պարտական են յայտնել իրենց շնորհակալութիւնը ստացած բարերարութեան համար, հարկը պահանջած ժամանակ խօսիլ այլոց առջեւ ընդունած ողորմութեան վրայ, պատահած տեղը կամ կարող եղած ժամանակը ցուցանել բարի ծառայութիւն, աղօթել միշտ բարերարի գերդաստանի համար: Այսպիսի բարերարութիւն ցոյց տուաւ Դաւիթ Նաթանի որդւոյն Յովնաթանին. “Եւ ասէ ցնա Դաւիթ. մի՛ երկնչիր, զի առնելով արարից ընդ քեզ ողորմութիւն վասն Յովնաթանու հօր քո և դարձուցից քեզ զամենայն անդս Սաւուղայ հօր քո և դու ուտիցես հաց հանապազ ՚ի սեղանի քում„: Բ. Սամ. Թ. 7: Դաւիթ առաջարկեց իւր Սողոմոն որդուն բարի առնել Բերսաբէի որդւոցը, որովհետեւ նոցա հայրը հաւատարմութիւն և մեծահոգութիւն ցուցած էր. “Տէր աղքատացուցանէ և Տէր մեծացուցանէ, խոնարհեցուցանէ և բարձրացուցանէ„: Ա. Թագ. Բ. 7

Մենք պարտինք աշխատիլ մեր ընկերներու սրբութեան և փրկութեան համար և այս կարող ենք առնել. — Ա. Ուսուցանելով նոցա պարտաւորութիւններ և պէտք եղած ժամանակ հաւատոյ ճշմարտութիւններ, խրատելով որ Ս. Գիրք կարդան և մեր անձը օրինակ տալով. “Եւ զգուշացարուք միմեանց յորդորմամբ սիրոյ և գործոց բարեաց: Վասն որոյ մխիթարեցէ՛ք զմիմեանս և շինեցէ՛ք զիրեարս որպէս և առնէքդ իսկ„: Եբր. Ժ. 24: Թես. Ե. 11: — Բ. Խրատելով՝ երբ կը մեղանչեն, և քաղցրութեամբ սրտի յանդիմանելով, որ և կ՚անուանի այս Եղբայրական խրատ. “Աղաչեմ զձեզ, եղբա՛րք, խրատեցէ՛ք զստահակս, մխիթարեցէ՛ք զկարճամիտս, պատսպարան լերո՛ւք տկարաց, երկայնամիտ լերո՛ւք առ ամենեսեան„:

Ա. Թես. Ե. 14։ “Եղբա՛ր.ք իմ, եթէ ոք ’ի ձէնջ մոլորեալ իցէ ’ի ճշմարտութեան ճանապարհէ անտի և դարձուսցէ զնա, գիտասցէ, զի որ դարձուցանէ զմեղաւորն ’ի մոլորութեան ճանապարհէ անտի, փրկեսցէ զոգի իւր ’ի մահուանէ և ծածկեսցէ զբազմութիւն մեղաց „։ Յակ. Ե. 19—20։ “Մի՛ ատեսցես զեղբայր քո ’ի մտի քում, յանդիմանութեամբ յանդիմանեսցես զընկեր քո և մի՛ ընդունիցիս վասն նորա զմեղս „։ Ղեւտ. ԺԹ. 17։

Այս պարտաւորութիւնը հարկ է որ կատարենք համարձակութեամբ և ազատութեամբ, բայց միանգամայն և խոհեմութեամբ և հեզութեամբ, որպէս զի շատ չը վրդովենք այս մարդկանց անձնասիրութիւնը, զորս կամինք խրատել։ Այս եղանակաւ մեր խրատը աւելի կ’ընդունուի, սակայն երբեմն հարկ է ձեռք առնուլ նմանապէս զօրութիւն և սաստկութիւն թմրած խիղճը զարթուցանելու համար։ Խրատելու ժամանակ գլխաւոր պայմանն է սէրը և հոգին փրկելու փափաքը, ուստի և միշտ պէտք է Աստուծոյ օգնութիւնը և յոյսը խնդրել, ընդ նմին մեծ ուշադրութիւն դարձնել մեր պակասութեանց վրոյ և ուղղել մեր վարքը և ընթացքը. “Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո, թո՛ղ հանից զշիւղդ յականէ քումմէ և ահաւասիկ ’ի քում ականդ գերան կայ „։ Մատ. Է. 4—5։ “Եղբա՛ր.ք, եթէ յանկարծ ըմբռնիցի ոք ’ի ձէնջ յինչ և իցէ յանցանս, դուք որք հոգեւորքդ էք, հաստատեցէ՛ք զայնպիսին հոգւով հեզութեան, զգոյշ լինիջիք անձանց, զի մի՛ և դուք փորձիցիք, զգործ իւր կշռեսցէ իւրաքանչիւր ոք և ապա անձին իւրում միայն պարծանս տացէ և մի՛ առ ընկերաւն։ Գաղ. Զ. 1—5։ “Բայց մի՛ իբրեւ զթշնամի համարիցիք, այլ խրատեսջիք իբրեւ զեղբայր „։ Թես. Գ. 15։ — Գ. Պարտինք օգնել մեր ընկերի հոգեւոր բարութեանը, թեթեւացնելով և մխիթարելով նեղութեան և տառապանաց մէջ, որպէս զի չը յուսահատի և տրտունջ չը բառնայ Նախախնամութեան դէմ, այլ ընդհակառակն՝ օգնենք, որ օրհնէ Աստուծոյ կամքը. “Աղաչեմ զձեզ, եղբա՛ր.ք, պատսպարան լերուք տկարաց եւայլն „։ “Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն „։ Մատ. Ե. 7։ — Դ. Պարտինք ամեն բանի մէջ բարի օրինակ տալ մեր ընկերին. Սա է ամենէն հաստատ և ապահով ճանապարհը, որով կարող ենք օգնել մեր ընկերին դիւրութեամբ. “Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զհայր ձեր, որ յերկինս է „։ Մատ. Ե. 16։ Այս տեղէն ահա կարող ենք իմանալ՝ թէ ո՞րչափ սաստիկ կը մեղանչենք մենք, երբ չար օրինակաւ պատճառ կը դառնանք այլոց կորստեան, կա՛մ բանիւ կա՛մ գործով, որով այլք կը մոլորին, կամ կը հեռանան պարտաւորութենէ։ Այսպիսի պարագայից մէջ ինչպէս որ մեր ընկերի կորստեան պատճառն ենք, նոյնպէս և պատասխանատու ենք նորա հոգւոյ համար Աստուծոյ առջեւ և նորա ամեն գործած չարութեանց համար. “Վա՛յ, կ’ասէ Քրիստոս, այն մարդուն որ կը մոլորեցնէ „։ “Ասաց և առ աշակերտսն իւր, ոչ է մարթ չդալ գայթակղութեան, բայց վա՛յ այնմիկ է, ոյր ձեռն գայցէ. լաւ էր եթէ վէմ երկանաքար կախէր զպարանոցէ նորա և անկանիւր ’ի ծով, քան թէ գայթակղեցուցանէ զմի ’ի փոքրկանցս յայսցանէ „։ Ղուկ. ԺԸ. 1—2։

Սէրը մեզմէ կը պահանջէ նոյնպէս, որ խաղաղութեամբ կենանք, վասն զի խառնակութեան և անհամաձայնութեան մէջ շուտ կարող են մեղքեր ծնանիլ ընդդէմ սիրոյ։ Այս խաղաղութեան համար է, որ կը պատուիրէ Ս. Գիրքը. “Եթէ հնար ինչ իցէ ձեզ ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն ունիջիք „։ Հռով. ԺԲ. 18։ Փրկիչը կ’առաջարկէ մեզ խաղաղութեան հզօր պատճառներ և կը պատուիրէ ամեն միջոց գործ դնել խաղաղութեան մէջ հաստատուն մնալու համար։ — Ա. Պարտինք հեռանալ անիրաւ, դոռող և անպատիւ պահանջողութենէ և վատ խօսակցութենէ, որոնք կարող են մեր ընկերները վիրաւորել. իսկ սորա հակառակ պահել մեր ընկերի հետ ամենայն կանոն ուղղութեան, արդարութեան և սիրոյ, ուրախութեամբ օգնելով ամեն պատահմանց մէջ. “Եղբայրութեամբ առ միմեանս գթածք, ’ի պատիւ զմիմեամբք ելանել, ’ի փոյթ մի՛ վեհերոտք, հոգւով եռացէ՛ք, Տեառն ծառայեցէ՛ք „։ Հռով. ԺԲ. 10—11։ — Բ. Երբ կը թշնամանէ մեզ մեր ընկերն և կ’անպատուէ, պէտք չ’է որ փոխարինենք, այլ պարտինք համբերել նորա պակասութեանցը և ներել, “Զգեցարուք այսուհետեւ իբրեւ ընտրեալք Աստուծոյ, սուրբք և

սիրեցեալք, զգութ, զողորմութիւն, զքաղցրութիւն, զխոնարհութիւն, զհեզութիւն, զերկայնմտութիւն, ներել միմեանց, շնորհել իրերաց»։ Կող. Գ. 12—15։ Երբ մեզ կը վնասէ և վնասը շատ մեծ է, խաղաղութեան ամեն ճանապարհները փորձելէն զկնի՝ եթէ չը կարողանանք մեր իրաւունքը ստանալ, արդարութիւնը կը պահանջէ բողոքել դատաստանատան և մի և նոյն ժամանակ մեր իրաւանց համար չափաւորութենէ չըհեռանալ։ Աւետարանի պատուիրածին համեմատ այնպէս պէտք է վարուիլ, որ պատճառ չը տանք մեր թշնամւոյն վրայ գանգատելու և կամ հաշտութեան ճանապարհը դըժուարացնելու։ Եթէ հնար է, աւելի լաւ է վնասը և անարդանքը տանել և ամեն գանգատէ զգուշանալ, Աբրահամու հաշտութեան հոգին օրինակ ունենալով մեզ, ինչպէս յայտնուած է Ծննդոց ԺԳ. գլխոյն մէջ։ «Եւ արդ ամենեւին իսկ վատթարութիւն է 'ի ձեզ, զի դատաստան իսկ գոն 'ի միջի ձերում, ընդէ՞ր ո՛չ դուք զրկիք և ո՛չ դուք առաւել նեղիք։ «Սէր երկայնամիտ է, քաղցրանայ. սէր ո՛չ նախանձի, ո՛չ ամբարհաւաճի, ո՛չ հպարտանայ»։ Ա. Կորնթ. Զ. 7. ԺԳ. 4։

Այս մասին մեր օգուտը համաձայն է մեր պարտաւորութեանը. վասն զի գանգատը կը դառնայ մեր համար աղբիւր նեղութեան, ատելութեան, շփոթութեան, հակառակութեան և վախճանն ու հետեւանքը կը տանի շատ անգամ դէպի մեծամեծ վնասներ։ Այն զոհը, որ մենք կը կրենք խաղաղութեան և սիրոյ համար՝ առ հասարակ մեզ օգտակար է. վասն զի՝ կը լցուցանէ մեր սիրտը ուրախական զգացումներով, կ'անդորրացնէ և կը խաղաղէ մեր կեանքը և կը խոստանայ մեզ ամենակարող և խաղաղասէր Աստուծոյ բարութիւնը։

Երբ կը պատուիրէ Քրիստոս չը հակառակիլ թշնամուն, պարտինք իմանալ որ խաղաղութիւն պահպանելու համար է։ Երբ կը պատուիրէ խաղաղութեամբ և հեզութեամբ համբերել, այս չը նշանակեր թէ խպառ անձնատուր պիտի լինինք մեր թշնամուն, այլ հաշտութեան եղանակ որոնել. վասն զի Աւետարանը երբէք չարգելուր մեր անձի արդար և կարեւոր պահպանութիւնը։ Պօղոս առաքելոյն հետ անիրաւութեամբ կը վարուին և նա իւր անձը պահպանելու համար կը յիշէ իւր

Հռովմայ քաղաքացի լինելն։ Նոյն ինքն Քրիստոս պատուիրեց իւր աշակերտներուն, երբ կը նեղեն և կը չարչարեն զձեզ, փախէք միւս քաղաքն։ Մատ. Ժ. 23։ Յիսուս ինքն դատաւորի առջեւ խօսեցաւ. «Եւ Յիսուս ասէ ցնա, եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա՛ վասն չարին, իսկ եթէ բարի, ընդէ՞ր հարկանես զիս»։ Յով. ԺԸ. 23։

Երբ խաղաղութիւնը վրդովուած է, պարտաւոր ենք ջանալ վերահաստատելու՝ հաշտութեամբ և ներողութեամբ։ Այս պարտաւորութեան համար Յիսուս կ'ասէ թէ՝ Աստուած չընդունիր ձեր պաշտօնը եթէ անհաշտ էք ձեր ընկերներու հետ։ Աստուածպաշտութեան ամենէն ապահով ճանապարհն է երբէք թշնամութեան և բարկութեան տեղի չը տալ Աստուծոյ սիրոյ համար։ «Եթէ մատուցանիցես զպատարագն քո 'ի վերայ սեղանոյ և անդ յիշեսցես, եթէ եղբայր քո ունի ինչ խէթ զքէն, թո՛ղ զպատարագն քո 'ի վերայ սեղանոյն և ե՛րթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո»։ Մատ. Ե. 23—24։ Եթէ մենք անարդած ենք մեր ընկերն, պարտաւոր ենք աճապարել խոստովանիլ և զղջալ. իսկ եթէ այլք անարդանք հասուցած են մեզ, բաւական չէ միայն ընդունիլ և մեծահոգութեամբ վարուիլ մեզ դիմած ժամանակ, այլ պարտաւոր ենք կանխապէս մեր կողմէն խաղաղութիւն առաջարկել, որով աւելի կը դիւրացնենք հաշտութիւնը։

Խաղաղութեան սէրը պէտք է որ շարժէ զմեզ ամեն տեղ խաղաղութիւն վերահաստատելու, ուր որ վրդովուած է և այս պարտաւորութիւնը կատարելու համար պարտական ենք՝ — Ա. Մեր կեանքով ճարել այս բարեհոգութիւնը և իմաստուն անունը, որ մեր ասած խօսքը ամենուն առջեւ պատուով ընդունուի։ — Բ. Ամեն մեր միջամտած գործքերուն մէջ լինիլ առանց կրից և նախապաշարման։ — Գ. Հաշտեցնել տարբեր բնաւորութիւնները և այս մասին գործ դնել ամեն միջոց, որոնք հակառակ չեն խոհեմութեան և սիրոյ։ Եթէ այս ջանքերը ունին իրենց ծանրութիւնը, ունին նմանապէս և իրենց քաղցրութիւնն ու վարձը։

Այսպիսի մեծ բարութիւններ առնելով և առաջուց ամեն

մեղքէ հեռանալով՝ մարդ կը կատարէ Աստուծոյ գործ և կը լինի նորան նմանող որդի, որուն համար կ'ասէ Քրիստոս. "Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին"։ Մատ. Ե. 9։

ՅԱՏՈՒԿ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ

ԱՌ ՀԱՍԱՐԱԿ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

«Պատուեա՛ զհայր քո եւ զմայր, զի բարի եւ երկայնակեաց լիցիս 'ի վերայ երկրի»։

Հինգերորդ պատուիրանը կը հրամայէ կատարել այն պարտաւորութիւնները, զորս ունին որդիք առ իւրեանց հայրն և մայրն։ Այս խօսքերու մէջ — Պատուեա՛ զհայր քո և զմայր, զի բարի և երկայնակեաց լիցիս 'ի վերայ երկրի — կը պարունակին ամեն պարտաւորութիւններ առ հայր, առ մայր և առ ամեն մարդիկ, որոնք ծնողաց տեղ կը բռնեն։ Այս պարտաւորութիւնները կարելի է բաժանել չորս — Յարգանք, Սէր, Հնազանդութիւն և Օգնութիւն։

Յարգանքն է ճանաչել ծնողական իշխանութիւնը, մտադրութիւն դարձնել նոցա վրայ, լինիլ երախտագէտ, յայտնել նոցա բարի զգացումներ, վարուիլ նոցա հետ քաղցրութեամբ, հեզութեամբ և խոհեմութեամբ, ընդունիլ նոցա խրատները և խորհուրդները, խօսիլ նոցա հետ պարկեշտ և պատուաւոր խօսքերով, միշտ բարի լինիլ վարքով և երբէք ծնողաց վստահութիւնը և սէրը առ չարն չը գործադրել, բնաւ չը յայտնել ծնողներէն տեսածները և լսածները, պահպանել միշտ ծնո-

ղական պատիւը գերդաստանի մէջ, զոր կարող են նոքա թուլութեան, ծերութեան և ընդունակութեան նուազելուն պատճառաւ կորուսանել այլ տեղ։ Այս յարգանքը գերդաստանի մէջ միշտ անփոփոխ և լրիւ պէտք է որ մնայ։ Որդիք պարտաւոր են յարգել իրենց ծնողքը, որոնք, Աստուծմէն յետոյ, իրենց առաջին տէրն կը կոչուին. վասն զի ծնողացն եւս տրուած է համարեա՛ թէ մասն իշխանութեան Աստուծոյ, և որդւոց համար ամենամեծ և սուրբ կը համարուին իրենց հայրն ու մայրն։ Հին ազգերը բարեպաշտութիւն ասելով կը հասկանային Աստուծոյ երկիւղը և որդիական յարգանքը առ ծնողս, վասն զի երկոքեան եւս նոյն ծագումն ունին։ Նա որ կը պատուէ երկնաւոր հայրն, միթէ չը՞ սարսափիր անարգել այն անձինքը, որոնք զԱստուած կը ներկայացնեն աշխարհիս վրայ։ Մովսէսի օրէնքը մահուամբ կը պատժէր այն որդիքը, որոնք կ'անիծէին կամ կը հարկանէին իրենց ծնողքը, կամ կապստամբէին նոցա դէմ. "Եթէ ուրուք որդի իցէ խեռ և անզգամ և ոչ լսիցէ ձայնի հօրն և մօրն իւրոյ և խրատեսցեն զնա և ո՛չ անսայցէ նոցա, կալցէ զնա հայր և մայր նորա և տարցեն զնա առ ծերակոյտ քաղաքին իւրեանց և 'ի դուռն տեղւոյ իւրեանց և ասասցեն ցարս քաղաքին իւրեանց՝ որդին մեր այս խեռ է և անզգամ և ո՛չ լսէ ձայնի մերում, հանգանակող է և արբշիռ և քարկոծեսցեն զնա արք քաղաքին նորա և մեռցի և բարձջիք զչարն 'ի միջոյ ձերմէ. Օրին. ԻԱ. 18—21։ Նոյի որդիքներէն Քամը Աստուծոյ անիծից տակն ընկաւ, որովհետեւ իւր հօր վրայ ծիծաղեցաւ։ Ծնողաց պակասութիւնը իրաւունք չը տար որդւոց նոցա պատիւը անարգելու։ Որդիք պարտական են համբերել ծնողական պակասութեանցը, ներել նոցա և ծածկել նոցա թերութիւնները որքան կարելի է։ Եւ եթէ ստիպուած լինին խօսել նոյն պակասութեանց վրայ՝ պարտական են խօսիլ քաղցրութեամբ և պատուով, միշտ աղօթելով նոցա համար և վայելուչ խոնարհութեան մէջ մնալով։

Ինչ վիճակի և կացութեան մէջ որ գտնուին որդիքը երբէք պէտք չ'է, որ մոռանան իրենց ծնողաց մեծութիւնը, որ բնութեան և կրօնի օրինաց վրայ հաստատուած է։ Որդւոց հարստութիւնը և պատիւը կարող չեն ոչնչացնել ծնողաց

մեծութիւնը։ Յովսէփ գեղեցիկ իշխանութեան հասնելով Եգիպտոսի մէջ՝ բնաւ չը մոռացաւ իւր ծնողաց պատիւը, յարգեց իւր հայր Յակոբը, որ հասարակ հովիւ էր և նորա առաջը ելաւ. “Եւ ասէ Իսրայէլ, Յովսէփ, ահա երեսաց քոց ո՛չ կարօտ եղէ և եցոյց ինձ եւս Աստուած զզաւակ իմ„։ Ծննդոց. ԽԸ։

Որդիական սէրն առ ծնողս է ցանկալ սրտով նոցա երջանկութեանը, աղօթել առ Աստուած, որ սփռէ նոցա վրայ ողորմութիւն և գթութիւն, գրաւել առ ինքն նոցա սէրը և հաւատարմութիւնը և յամենայն զօրութենէ աշխատիլ նոցա բարելաւութեան համար, հեռանալ ամեն բանէ ինչ որ կարող է տխրութիւն պատճառել, չը ձեռնարկել այնպիսի գործի, որով կարող են ծնողք վշտանալ։ Այսպիսի որդիական սիրոյ օրինակ կը տեսնենք մենք, երբ Յակոբի որդի Յուդան կը խնդրէ Յովսէփէն, որ Բենիամինը արձակէ, որպէս զի նեղութիւն չը պատճառէ իւր հօրը. “Եւ արդ կացից ես ծառայ քո փոխանակ մանկանդ, ստրուկ տեառն իմոյ, և պատանեակդ ելցէ ընդ եղբարս իւր, քանզի զիմրդ ելանիցեմ առ հայր իմ, եթէ պատանեակդ չիցէ ընդ մեզ. զի մի՛ տեսից զչարիսն, որք գտանիցեն զհայր իմ„։ Ծննդոց ԽԴ. 33—35։

Ծնողքը սիրելը այնպիսի մեծ պարտաւորութիւն է, որ որչափ յարգեն և պատուեն որդիք, դարձեալ չ՚են կարող լիովին վճարել երախտագիտութեան տրիտուրը։ Նոքա չեն կարող այն գորովանքը և այն սիրոյ զեղմունքն ունենալ, զոր ունին ծնողք առ որդիս։ Երբ մտաբերենք միանգամ մեր ծնողաց կրած հոգսերը, նեղութիւնները, ամեն կերպ համբերութիւնները, խնամքները և ծանր աշխատանքները մեզ մեծացընելու համար, կը տեսնենք որ անհուն կերպով պարտաւորուած ենք մեր ծնողքը սիրել և պատուել։ Որդիական սէրը այնքան բնական է և ճշմարիտ, որ անառակ որդիքը, ծնողքը չը պատուող որդիքը համարուած են միշտ իբրեւ հրէշներ։ Այն որդին որ կը մոռանայ իւր հայրն ու մայրն, իւր Աստուծմէ կարգուած առաջին բարերարները, նա կարող չ՚է երբէք Աստուծոյ բարութիւնը վայելել, որ միայն ծնողասէր որդւոց խոստացած է։ Ծնողաց խստութիւնը և վատ սովորութիւնը ամենեւին իրաւունք չեն տար որդւոց՝ չը սիրել իրենց ծնող-

քը. — Ա. Վասն զի՝ որդիական սիրոյ պարտաւորութիւնը հիմնուած չէ ծնողաց քաղցրութեան վրայ, այլ գլխաւորապէս նոցա բարերարութեան վրայ, զոր երբէք հնար չէ ոչնչացնել։ — Բ. Եթէ ծնողքը խստութիւն ունին, այս խստութենէն կարելի չ՚է դուշակել, որ նոքա չեն սիրեր իրենց որդիքը։ Այս պակասութիւնը կարող է յառաջ գալ նեղ վիճակէ կամ թուլութենէ, որուն պարտաւոր են որդիք համբերել։ — Գ. Շատ անգամ այս խստութիւնը կը ծագի որդւոց վատ բնաւորութենէն կամ թերութիւններէն, որոց ուղղութեան համար ծնողք կը պարտաւորին խիստ և սաստիկ միջոցներ ձեռք առնուլ։ — Դ. Եթէ հայրն բնականապէս խիստ է, միթէ որդւոց պարտքը չէ՞ սիրով մեղմել նոցա խստութիւնը և գրաւել նոցա սիրտը քաղցրութեամբ և հաճոյական վարմունքով։

Որդիական հնազանդութիւնն առ ծնողս է վարուիլ նոցա կամաց համաձայն, ամեն գործ նոցա խորհրդով և հրամանաւ կատարել և նոցա արգիլած բաներէն հեռանալ։ Կը նշանակէ նմանապէս առանց ծնողաց համաձայնութեան ձեռնամուխ չը լինիլ այնպիսի գործերու, որոնք ուղղակի գերդաստանի բարելաւութեանը կը վերաբերին, ինչպէս են՝ ամուսնութիւն, և այլն։ Որդիական հնազանդութիւնը նոյն սահմանն ունի, ինչ որ ունի հայրական իշխանութիւնը, այսինքն երկուսն եւս արդարութեան վրայ պէտք է որ հիմնուած լինին, համաձայն աստուածային կամաց. “Որդիք հնազանդ լերուք ծնողաց ձերոց, զի այն է արժան„։ Եփես. Զ. 1։ Երբ երեխայն կատարելութեան հասակին հասնի և պարտաւորի իւր խղճի համոզմամբ չը հնազանդիլ ծնողաց, պարտաւոր է հեղութեամբ և քաղցրութեամբ առաջարկել անհնազանդութեան առիթ տուող պատճառները, բայց միշտ յարգելով և երբէք չը խոտորելով ուրիշ իրողութեանց մէջ ունեցած հնազանդութենէն։ Թէպէտեւ որդիական յարգանքը ամեն հասակի մէջ մի և նոյն պէտք է որ լինի, բայց հնազանդութիւնը ՚ի հարկէ մանկութեան հասակի մէջ աւելի է, քան թէ կատարելութեան։ Կատարելութեան հասակի հնազանդութիւնը բանականութեան ծնունդ լինելով աւելի քաղցր է, քան թէ երկիւղը։ Այս հասակին մէջ աշխարհային կամ քաղաքական օրէնքը կ՚ազատէ

որդիքը ծնողական իշխանութենէ, սակայն նոքա պարտաւոր են դարձեալ մի կերպով կախումն պահպանել, շարժուած լինելով աւելի զօրեղ զգացողութեամբ՝ քան թէ աշխարհային օրէնքը։ Պարտաւոր են միշտ խորհուրդ հարցնել, նոցա հաճութիւնն ստանալ, չը վարուիլ նոցա կամաց հակառակ՝ միշտ պատճառելով։ Եսաւի ամուսնութիւնը վշտացուց Իսահակի և Ռեբեկայի սիրտը. “Եւ էր Եսաւայ ամաց քառասնից և էառ իւր կին Յուդիդ զդուստր Բէերայ Քետացւոյ և զՄասեմայ դուստր Ելովմայ Խեւացւոյ և դառնացուցին զԻսահակ և զՌեբեկայ „։ Ծննդ. ԻԶ. 34—25։

Որդիք պարտին հնազանդիլ ծնողաց. — Ա. Վասն զի՝ Աստուած ինքը պատուիրած է. “Որդիք հնազանդ լերուք ծնողաց ձերոց ’ի Տէր, զի այն է արժան „։ Եփես. Զ. 1։ Արդարութիւնը եւս այս կը պահանջէ, որովհետեւ հնազանդութիւնն է անհրաժեշտ հետեւանք յարգելոյ և սիրելոյ, ինչպէս և մեր Փրկիչն կ’ուսուցանէ մեզ երկու որդւոց առակաւ, յորում մեծ որդին կը կատարէ հօր կամքը, իսկ փոքր որդին անհնազանդ կը գտնուի, և առանց հնազանդութեան անհնարին է ճշմարտապէս պատուել հայրը։ — Բ. Վասն զի մանկական հասակի մէջ որդիք կարողութիւն չունին իմանալու թէ ի՞նչ պէտք է առնել, ի՞նչպէս պէտք է վարուիլ. իսկ ծնողք կ’աշխատին միշտ նոցա երջանկութեան համար և գիտեն թէ ի՞նչ է որդւոց համար վայելուչը և օգտաւէտը։ Որդին ապաբաղդ կը լինի, երբ ինքնագլուխ կը գործէ և ապաբաղդութիւնն կը կրկնապատկուի, երբ ծնողաց յանդիմանութիւնն եւս կը ստանայ։ — Գ. Որդիական պարտաւորութիւն է պահպանել ծնողքը ամեն հանգամանաց մէջ երբ կարօտութիւն ունին, կա՛մ մխիթարելով, կա՛մ հոգալով, կա՛մ խնամելով, կա՛մ թեթեւացնելով նոցա վիճակը, կա՛մ մեղմացնելով նոցա թշուառութիւնը և բարեզարդելով նոցա ծերութիւնը, որպէս զի նոցա կեանքը լինի երջանիկ։ Բնութիւնը, երախտագիտութիւնը և կրօնքը միաձայն կը հրաւիրեն որդիքը իրենց պարտքը կատարելու ջերմեռանդութեամբ և մեծ քաղցրութեամբ։ Որդւոց վարձը արդէն այն քաղցր զգացման մէջ է, զոր կը զգան, երբ կ’օգնեն ծնողաց, որոցմէ կեանք ըստացած են։ Յիսուս Քրիստոս պարզ կը հասկացնէ որդիական պարտաւորութեան սրբութիւնը, երբ կը յանդիմանէ Փարիսեցիները, որոնք թիւր կը մեկնէին՝ պատուեա զհայր քո և զմայր պատուիրանը։ Փարիսեցիք Աստուծոյ պատուէրը կը զոհէին իրենց աւանդութեանը, այսինքն բաւական կը համարէին հօրն ու մօրը տուրք տալ և ասել՝ ահա՛ գործ դի՛ր քեզ համար և ուրիշ պատիւ մի՛ պահանջեր. բայց Յիսուս յանդիմանեց ասելով. “Զի ասաց Աստուած. պատուեա՛ զհայր քո և զմայր, և որ բամբասէ զհայր կամ զմայր՝ մահու վախճանեսցի. և դուք ասէք. որ ասիցէ ցհայր իւր կամ ցմայր իւր, թէ պատարագ է զոր յինէն օգտիցիս և ոչ պատուիցէ զհայր իւր և զմայր իւր. և խոտէք զբանն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեան „։ Մատ. ԺԵ. 5—3։

Հինգերորդ պատուիրանի մէջ եղած խոստումը, որդւոց երկար ապրելու մասին, կը վերաբերի իսկապէս Եբրայեցւոց։ Աստուած կը խոստանայ տալ նոցա երկար և խաղաղ կեանք Քանանացւոց երկրի մէջ և այս յարմար էր իրենց կացութեանը և վիճակին։ Իսկ մեզ Քրիստոնէիցս հետ կապած աստուածային շնորհաց դաշնադրութիւնը կը բարձրացնէ մեր յոյսը նիւթական աշխարհէն ’ի վեր, ժամանակաւոր խոստմունքէն դէպի յաւիտենական խոստումը։ Այս պատուիրանը նախագահ է ամեն պատուիրանաց, որք կը վերաբերին առ ընկերն, և Պօղոս առաքեալն կ’ասէ որ այս առաջին պատուիրանն է, որոյ հետ Աստուած կապած է իւր խոստումն. “Պատուեա՛ զհայր քո և զմայր, որ է առաջին պատուիրան յաւիտեան. զի քեզ բարի եղիցի և երկայնակեաց լինիցիս ’ի վերայ երկրի „։ Եփես. Զ. 2—4։ Այս տեղէն կարող ենք հասկանալ, որ որդիական սէրը մեծ նշանակութիւն ունի Աստուծոյ առջեւ և ծնողքը պատուող որդիքը կարող են յուսալ առանձին օգնութեան երկնաւոր Հօրէն։ Պարտաւոր ենք հաւատալ, որ այս պատուիրանի կատարելն շատ կ’օգնէ մեզ կատարել միւս պարտաւորութիւնները։ Այս եղանակաւ կարող են որդիք գրաւել ամենուն սէրը և յարգանքը և պատճառ լինիլ, ինչպէս գերդաստանի, նոյնպէս և ընկերականութեան երջանկութեանը։ Վերջապէս, եթէ նիւթական կերպով այս աշ-

խարհիս մէջ Աստուծոյ հովանաւորութիւնը չ'երեւի ծնողասէր որդւոց վրայ, այս արդէն հաւաստի է, որ պարտաւորութեան կատարումն կը տայ նոցա ներքին հոգւոյ խաղաղութիւն և յոյս յաւիտենական կենաց, զոր Աստուած խոստացած է իւր կամքը կատարողներուն։

Ինչպէս որ որդիք պարտաւորութիւն ունին առ ծնողս, նոյնպէս և ծնողք պարտաւորութիւն ունին առ որդիս։ Ծնողք պարտին սիրել իրենց որդիքը, խնամք ունենալ նոցա վրայ, հսկել նոցա կրթութեան և վարուց վրայ, առաջնորդել դէպի լուսաւորութիւն, ոչ թէ միայն խրատով, այլեւ իրենց օրինակով։ Պարտին խրատել և զգուշացնել չարութենէ, ուղղել նոցա բարքը քաղցրութեամբ, աշխատիլ ամեն կերպով, որ լինին նախ արժանաւոր և օգտակար անդամ ազգի, լինին բարի մարդ և բարի քրիստոնեայ։ Պարտին օգնել որդւոց ամեն կերպով, մինչեւ որ կարողանան նոքա իրենց անձը կառավարել, պահել կարգ և միութիւն ընտանեաց մէջ և աղօթել առ Աստուած նոցա երջանկութեան համար։ Սուրբ Գիրքը կը խօսի սոյն պարտաւորութեան վրայ. "Եւ ուսուսջիք որդւոց ձերոց խօսիլ զսոսա 'ի նստիլ 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել և գրեսջիք զսոսա 'ի վերայ սիւնոց տանց ձերոց և 'ի դրունս ձեր, զի բազմօրեայք լինիջիք 'ի վերայ երկրի"։ Օր. ԺԱ. 19—21։ "Հա՛րք, մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր, այլ սնուցանիջիք զնոսա խրատու և ուսմամբ Տեառն"։ Եփես. Զ. 4։ "Խրատեա՛ զորդիս քո և հանգուսցէ զքեզ և տացէ զզարդ անձին քում"։ Առակ. ԽԹ. 17։ "Իսկ եթէ ոք իւրոց և մանաւանդ ընտանեաց խնամ ո՛չ տանիցի 'ի հաւատոցն ուրացեալ է և չար եւս քան զանհաւատսն է"։ Ա. Տիմ. Ե. 8։

Ծնողական պարտաւորութիւնն առ որդիս պարտական են կատարել նաեւ այն մարդիկը, որոնք հօր և մօր տեղ կը բռնեն, ինչպէս են հօրեղբայր, հօրաքոյր, մօրեղբայր, մօրաքոյր, գերդաստանի անդամներ, կնքահայր, հոգաբարձու և ուսուցիչ, իւրաքանչիւրն համեմատ իւրեանց ունեցած յարաբերութեան, նոյնպէս և երախայքն կամ որդիքն պարտաւոր են պատուել այս անձինքը իրենց հօր նման։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ

Մարդ իւր ծնողքը պատուելէն 'ի զատ՝ պարտաւոր է պատուել նաեւ իւր մեծը և ծերը, որպիսի են, քաղաքական ընկերականութեան մէջ՝ իշխանք, դատաւորք, ծերք, և կրօնական միաբանութեան մէջ՝ քահանայք, վարդապետք, առաջնորդք, իսկ ընտանեկան շրջանին մէջ՝ տանուտեարք, նախահաւք, որոնք պատկառելի պիտի լինին ծառայից և թոռանց համար։ Այսպէս պարտաւոր են պատուել և աշակերտք այն անձինքը, որոնք գիտութիւն կամ արհեստ կուսուցանեն։

Այս պարտաւորութիւնը պարտին կատարել հետեւեալ պայմաններով. — Ա. Յարգելով. — Բ. Հնազանդելով նոցա ամեն բանի մէջ, ինչ որ համաձայն է բարոյականութեան և կրօնի. իսկ եթէ համաձայն չէ նոցա պահանջողութիւնը, պարտաւոր են յայտնել նոցա՝ պատուով, ինչպէս որ Պետրոս և Յովհաննէս առաքեալները պատասխանեցին դատաւորներուն. "Իսկ պետրոս և Յովհաննէս պատասխանի ետուն և ասեն ցնոսա, եթէ արժա՞ն իցէ ձեզ լսել առաւել՝ քան Աստուծոյ, ընտրեցէ՛ք"։ Գործ. Դ. 19։ — Գ. Լինելով նոցա հաւատարիմ. — Դ. Համբերելով նոցա պակասութեանցը. — Ե. Աղօթելով նոցա համար, վասն զի ինչպէս որ իշխանները պարտաւոր են հայր լինիլ իրենց կառավարած ժողովրդին, նոյնպէս և ժողովուրդը պարտի լինիլ իբրեւ մի գերդաստան։ Այս պարտաւորութեան կատարումէն կախուած է հասարակաց բարութիւնը, ընդհանուր կարգապահութիւնը, մեր օգուտը և մեր ապահովութիւնը։ Բայց այս պարտաւորութիւնները կատարելու համար մարդ պարտական է շարժուած լինիլ իւր խղճմտանքէն Աստուծոյ կամքը կատարելու և նորան հաճոյանալու պայմանաւ։ "Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոց վասն Տեառն"։ "Ամենայն անձն, որ ընդ իշխանութեամբ է 'ի հնազանդութեան կայցէ. քանզի ո՛չ յուստեքէ է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ, և որք ենն՝ յԱս-

տուծոյ կարդեալ են. այսուհետեւ որ հակառակ կայ իշխանութեան, Աստուծոյ հրամանին հակառակ կայ, և որք հակառակ կան, անձանց դատաստանս ընդունին, վասն որոյ հարկ է հնազանդ լինիլ, ոչ միայն վասն բարկութեան, այլ վասն մտացն խղճի „: Ա. Պետ. Բ. 13: Հռով. ԺԳ. 1—5:

Կառավարիչները և դատաւորները պարտաւոր են պաշտպանել կրօնքը և հսկել ժողովրդի բարի վարուց ու բարուց վրայ, ջանալ, որչափ կարելի է, յառաջեցնել Աստուծոյ արքայութիւնը, կառավարել ժողովուրդը արդարութեամբ և քաղցրութեամբ, իրենց անձը օրինակ տալ և ընծայել այս մեծ պարտուց կատարմանը, միշտ յիշելով, որ իրենց պարտաւորութիւնն է մեծ յանձնառութիւն, այսինքն մեծ բեռն, զոր պարտին սիրով տանել և տրուած է իրենց այս բարձր կոչումը, ոչ թէ իրենց սեպհական, այլ ընդհանուրի օգտին համար. Նոքա են կառավարիչներ Աստուծոյ կողմէն ժողովրդի բարութեան համար և պատասխանատու են Աստուծոյ առջեւ այս մեծ պաշտօնի կատարման համար. “Զի Աստուծոյ պաշտօնեայ է քեզ ’ի բարիս „: Հռով. ԺԳ. 4:

Մարդ ունի պարտաւորութիւններ առ իւր հայրենիքը: Նա պարտական է՝ — Ա. Սիրել իւր հայրենիքը և ազգը, որուն անձամբ օրինակ տուած են Մովսէս, Դաւիթ և այլք. “Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռասցի զիս աջ իմ, կցեսցի լեզու իմ ’ի քիմս իմ, եթէ ո՛չ յիշեցից զքեզ, եթէ ո՛չ նուագեցից զքեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ „: Սաղ. ՃԼԶ. 5—6: Մեր Փրկիչը լացաւ Երուսաղէմի ապագայ դժբաղդութեան վրայ, թէպէտ և Երուսաղէմը յանցաւոր էր. “Եւ իբրեւ մերձեցաւ, տեսեալ զքաղաքն ելաց ’ի վերայ նորա „: Ղուկ. ԺԹ. 4: Մեր Փրկիչը կը ցանկար, որ Աւետարանը նախ տարածուի Իսրայէլի տան կորսուած ոչխարներուն մէջ: “Նա պատասխանի ետ և ասէ. ոչ ուրեք առաքեցայ, եթէ ո՛չ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի „: Մատ. ԺԵ. 24: — Բ. Հնազանդիլ հայրենեաց օրէնքին, եթէ հակառակ չ’են աստուածային օրինաց: Եթէ վնաս և ընդդէմ են իւր անձնական օգտին, դարձեալ պարտաւոր է սիրով ընդունիլ: — Գ. Տալ հարկ ճշտութեամբ, տէրութիւնը պահպանելու և

բարելաւելու համար. “Հատուցէք իւրաքանչիւր զպարտս, որում զհարկ՝ զհարկն, որում զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝ զերկիւղն, որում զպատիւ՝ զպատիւն „: Հռով. ԺԳ. 7: — Դ. Հեռանալ ամեն չարագրգիռ պատահմունքներէ և ամեն բանէ, ինչ որ կարող է երկրի խաղաղութիւնը վրդովել. իսկ ընդհակառակն՝ աշխատիլ, որ վերանորոգութիւնը ամեն բանի մէջ լինի խաղաղ և օրինաւոր ճանապարհաւ: Ե. Վերջապէս պարտինք աշխատիլ ընդհանուր ազգի համար, աշխատիլ մեզմէն կախեալ ամեն տեսակ զոհաբերութեամբ, եթէ անշուշտ կարեւոր է անձնազոհութիւն, ինչպէս օրինակ ունինք մեզ Ս. Վարդանանք, Ղեւոնդեանք, Ատովմեանք, և ուրիշ ազգաց մէջ՝ Կոդրոս (1), Դէցիուս (2) և այլք: թէպէտ և Աւետարանը այնքան չը յիշեր հայրենասիրութիւնը, բայց և ոչ երբէք կը մերժէ: Հին ազգերը աւելի կարօտութիւն ունէին, որ իրենց հայրենասիրութիւնը ուղղութիւն ստանար և չափաւորութիւն, քան թէ զօրանար. վասն զի, հայրենասիրական զգացմունքը արդէն շատ զօրեղ էր հին ազգաց մէջ ամեն զգացումներէ, որով շատ անգամ կը վնասուէր արդարութեան և մարդասիրութեան իրաւունքը: Նոքա կը սիրէին իրենց հայրենիքը՝ վնասելով այլոց: Ս. Գիրքը առ ազգն ունեցած ամեն պարտաւորութիւնները կը պատուիրէ և օրինակ կը տայ մեզ: Եւ Ս. Գրոց ամեն պատուէրները հիմնուած են ընդհանուր արդարութեան և մարդասիրութեան վրայ, որով և սրբագործուած է հայրենասիրութեան պարտաւորութիւնը:

---

(1) Կոդրոս էր վերջին թագաւոր Աթենացւոց եւ յայտնի է իր անձնազոհութեամբ: Երբ Աթենացիք կը պատերազմէին Դորէացւոց դէմ, պատգամախօսէն (Օրակուլ) պատգամ ելաւ, որ այն կողմը պիտի յաղթէ, որոյ թագաւորը զոհուի: Կոդրոս այս պատգամը լսելով ազատութեամբ մղեցաւ պատերազմի մէջ եւ զոհեց իւր անձը իւր ազգին համար: Աթենացիք յաղթող հանդիսացան, բայց վճռեցին միանգամայն վերջացնել իրենց թագաւորութիւնը՝ Կոդրոսին արժանաւոր ժառանգ եւ յաջորդ ոչ մէկը տեսնելով իրենց ազգին մէջ:

(2) Դէցիուս-Մուս էր հիւպատոս Հռովմէացւոց, որ ազատեց Կուռնելիոս Կասսը Սամնիացւոց պատերազմին մէջ: Պատերազմեցաւ Լատինաց դէմ եւ իւր անձը զոհեց, որով եւ Հռովմէացիք յաղթող հանդիսացան:

Եկեղեցականաց առ ժողովուրդն և ժողովրդոց առ եկեղեցականները ունեցած պարտուց վրայ այսպէս կը խօսի Ս. Գիրքը. “Աղաչեմ զձեզ, եղբարք, ճանաչել զվաստակաւորս և զվերակացուս ձեր 'ի տէր, և զխրատիչս ձեր և համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ վասն գործոյ նոցա„: “Ունկն դիր լերուք առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա, զի նոքա տքնին վասն հոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեզ. զի խաղաղութեամբ արասցեն զայն և մի՛ յոգւոց հանելով, զի այն ոչ օգուտ ձեր է„: “Հաղորդութիւն արասցէ աշակերտն վարդապետին„: Թես. Ե. 12—13: Եբր. ԺԳ. 17: Գաղ. Զ. 6:

Սուրբ Գիրքը կը պատուիրէ եկեղեցականաց ասելով. “Արածեցէ՛ք որ 'ի ձեզ հօտդ է յԱստուծոյ, վերակացու լինիլ մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ, մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ, մի՛ իբրեւ տիրելով վիճակաց, այլ լինիլ օրինակ հօտին, զի յերեւիլ հօտապետին՝ ընդունիջիք զանթառամ փառացն պսակ„: Ա. Պետ. Ե. Զ:

Սուրբ Գիրքը առն և կնոջ պարտաւորութեանց վրայ այսպէս կը խօսի. “Արք սիրեցէ՛ք զկանայս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի և զանձն իւր մատնեաց վասն նորա„: “Թողցէ այր զհայր և զմայր իւր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ և եղիցին երկոքեան 'ի մարմին մի„: “Ա՛րք, սիրեցէք զկանայս ձեր և մի՛ զայրացուցանէք զնոսա: Սոյնպէս և արք իմաստութեամբ բնակեսցին ընդ նոսա իբրեւ տկար անօթոյ առնիցեն պատիւ կանանց իբրեւ ժառանգակցացն շնորհացն կենաց, զի մի՛ խափան լինիցին աղօթիցն„: “Կանայք իւրեանց արանցն հնազանդ լինիցին իբրեւ Տեառն, զի այր է գլուխ կնոջ, որպէս և Քրիստոս գլուխ է Եկեղեցւոյ և ինքն է Փրկիչ մարմնոյ„: “Այլ և դուք մի ըստ միոջէ, զի իւրաքանչիւր ոք զիւր կին այնպէս սիրեսցէ իբրեւ զիւր անձն և կին երկընչիցէ յառնէ իւրմէ„: Եփես. Ե. 25—31: Կող. Գ. 19: Ա. Պետ. Գ. 7: Եփես. Ե. 21—22—32:

Տանտիրոջ և ծառայի պարտաւորութեանց վրայ այսպէս կը խօսի Ս. Գիրքը. “Տեա՛րք, զիրաւունս և զհաւատարմութիւն ծառայից ձերոց շնորհեցէք, գիտասջի՛ք զի և ձեր Տէր

գոյ յերկինս„: “Եւ դուք, տեա՛րք, զնոյն առնիջիք առ նոսա, ներելով առնուլ զպատուհասն, գիտասջիք զի և ձեր Տէր գոյ յերկինս և ակնառութիւն ոչ գոյ առաջի նորա„: “Ծառայից իւրեանց տեարց հնազանդ լինիլ և հաճոյս յամենայն, մի՛ հակառակողս, մի՛ հատուս, այլ զամենայն հաւատս ցուցանել բարութեամբ, զի զվարդապետութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ զարդարեսցեն յամենայնի„: “Ծառայք հնազանդ լերուք տեարց ձերոց յամենայնի, մի՛ առ ականէ ծառայութեամբ, իբրեւ մարդահաճոյք, այլ միամտութեամբ սրտի երկընչիլ 'ի Տեառնէ„: “Զոր ինչ առնիցէք, սրտի մտօք գործեսջիք, իբրեւ Տեառն և ոչ իբրեւ մարդկան„: Կող. Գ. 14: Եփես. Զ. 9—10: Տիտ. Բ. 9: Կող. Գ. 22:

Ծերոց և երիտասարդաց առ միմեանս ունեցած պարտաւորութեանց վրայ այսպէս կը խօսի Ս. Գիրքը. “Ծերոց ըզգաստս լինիլ, պարկեշտս, ցածունս, ողջամիտս, 'ի հաւատս, 'ի սէր, 'ի համբերութիւն, 'ի ժուժկալութիւն. պառաւանց նոյնպէս 'ի զգաստութեան, 'ի սուրբ վայելչութեան. մի՛ բանսարկուս, մի՛ գինեմոլս, այլ բարեխրատս, զի զգաստացուսցեն զմանկամարդսն այրասէրս լինիլ, որդեսէրս, ցածունս, սուրբս, տնարարս, բարեգործս, հնազանդս իւրեանց արանց, զի մի՛ բանն Աստուծոյ և վարդապետութիւն հայհոյեսցի„: Տիտ. Բ. 2—6: “Զի բազում ժամանակաւ իմաստութիւն և բազում կեանս՝ հանճար„: Յովբ. ԺԲ. 12: “Սոյնպէս և երիտասարդք հնազանդ լերուք ծերոց, ամենեքեան ընդ միմեանս զխաղաղութիւն ունիջիք„: Պետ. Ե. 5: “Զերիտասարդս նոյնպէս աղաչեսջիր ցածունս լինիլ ամենեցուն զանձն օրինակ կացուցանել գործոց բարութեան վարդապետութեամբ զանեղծութիւն ունել, զսրբութիւն, զպարկեշտութիւն, զբան ողջամբտութեան, անպարսաւ լինիլ, զի որ հակառակորդն իցէ, յամօթ լիցի և մի՛ ինչ ունիցի ասել զմեզ չարութիւն„: Տիտ. Բ. 6: “Այլ յերիտասարդական ցանկութեանց փախիր և ե՛րթ զհետ արդարութեան„: Բ. Տիմ. Բ. 22:

Իսկ ինչ որ կը վերաբերի եղբօր և քրոջ պարտաւորութեանց, սորա գլխաւոր պայմանն է հեռանալ ամենակերպ հակառակութիւններէ, բաժանմունքէ, չը խնդրել լոկ անձնական

օգուտ, այլ ճանաչել, որ նոցա ամենամեծ շահը բոլոր գեր-
դաստանի շահն է. ուստի և պարտաւոր են պատրաստ լինիլ
միմեանց համար զոհուելու, երբ հարկը պահանջէ, համբե-
րել իրարու թերութեանց, ուրախացնել միմեանց սիրտ, միշտ
հաստատուն մնալ սիրոյ կապակցութեան մէջ, որպէս զի հա-
ճոյ լինին երկնաւոր Հօրը, ուրախացնեն իրենց ծնողքը և այս-
պէս արժանանան աստուածային օրհնութեանը։ "Զի՛ բարի
կամ զի՛ վայելուչ, զի բնակին եղբարք 'ի միասին"։ Սաղ. ՃԼԸ։

Բարեկամաց պարտաւորութիւնն առ միմեանս օրինաւոր
և շահաւէտ լինելու համար, հարկ է որ բարեկամները ընտ-
րուած լինին խոհեմութեամբ և քրիստոնէական սիրով։ Նոքա
պարտաւոր են լիովին և կատարեալ վստահութիւն ունենալ
իրարու վրայ, օգնել միմեանց ամեն կերպով, յանդիմանել
միմեանց համարձակ ազատութեամբ, երբ սխալմունք կը նը-
կատեն, գործ դնել իրենց բարեկամութիւնը միմեանց ու-
սուցանելու և ազատելու համար, ամենայն ինչ ունենալ ընդ-
հանուր կերպով, հաղորդել միմեանց վիշտ և ուրախութիւն։
"Այսպէս Ս. Կոյսն Մարիամ գնաց իր բարեկամ ու ազգական
Եղիսաբէթը տեսնելու և նորա հետ խօսելու աստուածային
աւետեաց վրայ. "Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ
գնաց 'ի լեռնակողմն փութապէս 'ի քաղաքն Յուդայ և եմուտ
'ի տուն Զաքարիայ և ետ ողջոյն Եղիսաբեթի։ Եւ եղեւ իբ-
րեւ լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբէթ՝ խաղաց մանուկն
յորովայնի նորա և լցաւ Եղիսաբէթ հոգւով սրբով"։ Ղուկ. Ա.
39—41։ Մարթայի և Մարիամու բարեկամութիւնը Քրիստոսի
հետ առիթ եղաւ, որ Փրկչի կենսատու խօսքը լսեն. "Եւ էր
նորա քոյր մի, որում անունն էր Մարիամ, որ եկն և նստաւ
առ ոտս Տեառն, և լսէր զբան նորա"։ Ղուկ. Ժ. 39։

Մարդկանց միմեանց հետ ունեցած սոյնպիսի գեղեցիկ
կապակցութիւնն է հիմն երջանկութեան և խաղաղութեան
գերդաստանի, եկեղեցւոյ և քաղաքական միաբանութեան։
Այս էր պատճառն, որ Առաքեալք իրենց թղթերով միշտ կը
պատուիրէին սրբութեամբ և ջերմեռանդութեամբ պահել
բարեկամութիւնը, իբրեւ միջոց մեր Փրկչի վարդապետու-
թիւնը ամեն ժամանակ պատուելու. "Զի զվարդապետութիւն

Փրկչին մերոյ Աստուծոյ զարդարեսցեն յամենայնի։ Տիտ. Բ. 10։

Մենք պարտաւոր ենք ամեն ժամանակ և ամեն պատահ-
ման մէջ կատարել մեր պարտաւորութիւնը, չը նայելով բը-
նաւ այլոց զանցառութեանը. վասն զի, մեր պարտաւորու-
թիւնները հիմնուած են Աստուծոյ հրամանի վրայ, իրենց խ-
կական գեղեցկութեան և միաբանական բարութեան վրայ, և
ոչ թէ մարդկանց գործոց վրայ, որոնց հետ յարաբերութիւն
ունինք, ինչպէս կ'ասէ Սողոմոն. "Մի՛ ասիցես թէ զոր օրի-
նակ արար նա ինձ՝ արարից նմա և հատուցից նմա, որպէս
զրկեացն զիս"։ Առակ. ԻԴ. 29։ Պօղոս առաքեալն այսպէս կը
պատուիրէ ծառաներուն. "Ծառայք, հնազանդ լերուք յա-
մենայնի երկիւղիւ տերանց՝ ո՛չ միայն բարերարացն և հեզոց,
այլեւ կամակորացն"։ Ա. Պետ. Բ. 18։

Երբ մարդիկ իրենց օրինակաւ կը քաջալերեն մէկզմէկ,
այն ժամանակ պարտաւորութեանց կատարումը կը դիւրանայ։
Իսկ եթէ նոքա չը կատարեն, մեր պարտաւորութիւնը կա-
տարելը աւելի սուրբ է, որոյ վարձքը և պտուղը կը վայե-
լենք երկնքի մէջ։ Չը դադարինք ուրեմն բարի առնել, վասն
զի անշուշտ իր ժամանակին կը հնձենք արդիւնքը. "Այլ ըզ
բարիս գործել մի՛ ձանձրասցուք զի 'ի ժամանակի իւրում
հնձեսցուք առանց լքանելոյ"։ "Այսուհետեւ մինչդեռ ժա-
մանակս 'ի ձեռս է գործեսցուք զբարիս առ ամենեսեան,
մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ"։ Գաղ. Զ. 9—10։ Արդէն
այս կենաց մէջ կը զգանք մենք ուրախութիւն, երբ կը կատա-
րենք մեր պարտքը Աստուծոյ սիրոյ համար։

ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

«Մի սպանաներ»։

Այս պատուիրանը կ'արգելու սպանութիւնը կամ մարդասպանութիւնը, որ է կամ անձնական և կամ այլոց ձեռքով, ինքնակամ անիրաւութեամբ կեանքէ զրկել ընկերը, կամ խլել նորա ապրելու միջոցը, կամ տալ այնպիսի նեղութիւն, որոյ հետեւանքը մահ է։

Կան այնպիսի դէպքեր, որով մարդասպանութիւնը յանցանք չը համարուիր, այսինքն երբ անիրաւութեամբ կը յարձակին մեր վրայ և մեզ անհնարին կը լինի մեր կեանքը պաշտպանել, առանց այլոց կեանքը բառնալու։ Եւ կամ այնպիսի պատերազմ կայ մեր առջեւ, որոյ չարժառիթը մենք չենք, ուսաի և պարտաւորուած ենք ամենայն զօրութեամբ ընդդիմանալ մեր հայրենիքը պաշտպանելու համար։ Կան նմանապէս դէպքեր, երբ դատաւորը արդարութեամբ 'ի մահ կը դատապարտէ յանցաւորը, որուն համար և կ'ասէ Ս. Գիրը։ "Ապա եթէ գործիցէս, երկիր, զի ոչ վայրապար աճեալ է սուսեր ընդ մէջ, Աստուծոյ սպասաւոր է, վրէժխնդիր 'ի բարութիւն այնմ, որ զչարն գործիցէ"։ Հռով. ԺԳ. 4։ վերջապէս, երբ մենք պատահմամբ և ոչ ազատ կամքով մահ պատճառած ենք մէկուն, կը տեսնենք, որ սորա համար ամեն ազգայ մէջ ապահովութեան ապաստարաններ կային կամ տաճարներ, ուր փախչելով՝ կ'ապաւիներ ականջ սպանողն։ Սորա համար հիմնուած էր Եբրայեցւոց մէջ քանի մի տեղիք. "Այս տահման եղիցի ամենայն սպանողի, որ փախիցի անդ և ապրեսցի, որ ոք հարկանիցէ զընկեր իւր ակամայ, և նա ոչ ատեացեր զնա երէկն և եռանդն"։ Օբիւ. ԺԹ. 4։ Սորա վրայ հիմնուած է այն իրաւունքը, որ կը կոչուի Իւս ազիլի, այսինքն իրաւունք ապաստանի։ Ցդիտութեան և նախապաշարման դարերուն մէջ այս իրաւունքը կը տային խիստ յանցաւորներուն, որոնք այն տեղերը կը փախչէին, որ "ոչ պետք կ'անուանէին։ Աբրեցութենէ յառաջացած սպանութիւնը կարելի չէ ականջ սպանութեան չարժումն համարիլ, այլ մեծ յանցանք։

Մարդասպանութիւնն է մեծ յանցանք հետեւեալ պատճառներով. — Ա. Նա կը զրկէ ընկերը կեանքէ, որ ամեն բանէ թանկագին է։ Նա կը զրկէ ամեն տեսակ ուրախութենէ, ամեն պատուէ և ամեն վայելչութենէ։ — Բ. Այս յանցանքը անկատարելի է և անդառնալի։ — Գ. Սպանութեան հետեւանքը և հանգամանքը կարող են ուրիշ ծանրացնել այս յանցանքը։ Մարդասպանութիւնը կը զրկէ ընկերականութիւնը այնպիսի անգամ, որ կարող էր օգտաւէտ լինիլ. կը զրկէ զերդաստանը պահող և պաշտպանող ղլուխ, կամ այնպիսի անգամ, որ ճշմարտապէս սիրելի էր։ Մարդասպանութիւնը այնպիսի հետեւանք ևս կարող է ունենալ, որ հոգւոյ կորստեան պատճառ կը լինի։ — Դ. Մարդասպանութիւնը ոչ միայն յանցանք է ընկերին և բոլոր հասարակութեան դէմ, զոր 'ի հիմանց կը քայքայէ, ընկերական խաղաղութիւնը և ապահովութիւնը խանգարելով, այլեւ ամենամեծ յանցանք է ընդդէմ Աստուծոյ, որոյ արարածը կ'ոչնչացնէ առանց պատճառի, իրեն կը սեպհականէ իր ընկերի կենաց իրաւունքը, որ միայն Աստուծոյ կը պատկանի և կամ նոցա, որոյ յանձնած է Աստուած ընկերութեան կամ միաբանութեան բարութիւնը։ — Ե. Համարձակ կարող ենք ասել, որ մարդասպանութիւնն է նեղած ապրուստին դէպքեր, վասն զի, առ ոսն կը կոխէ մարդկութիւնը, քաղցրութիւնը, մարդասիրութիւնը, բարեպաշտութիւնը և արդարութիւնը և այս պատճառաւ Աստուած յայտնապէս կ'արգելու մարդասպանութիւնը և կը սպառնայ սաստիկ պատիժներ։ "Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա՝ հեղցի արիւն նորա, զի 'ի պատկեր Աստուծոյ՝ արարի ես մարդն"։ Ծննդ. Թ. 6։ Զը կայ այնպիսի մեծ յանցանք, որ այնքան սաստիկ խոցէ մարդոյ խիղճը, ինչպէս մարդասպանութիւնը։ Եղած են դէպքեր, որ մարդասպանները ինքեանք խղճի սաստիկ խայթէն ստիպուած՝ ելեր են դատաւ-

լու իրենց յանցանաց համար, յուսալով որ պատժուելով կա-
րող են ազատուիլ խղճի խայթոցէն։

Աստուած մարդասպանութիւնը արգիլելով՝ կ'արգելու
միանգամայն ամեն բան, ինչ որ կարող է տանիլ դէպի սպա-
նութիւն, ինչպէս են, բռնակալութիւն, ոխ և ատելութիւն,
եւայլն։ Աստուած կը քննէ արդարը և մեղաւորը և կ'ատէ այն
մարդը, որ բռնութիւն կը սիրէ։ Աստուած կ'արգելու նմա-
նապէս անարգական խօսքերը, կռիւը, վէճը, ատելութիւնը,
նախանձը, բարկութիւնը և վրէժխնդրութիւնը. վասն զի սոյն
օրինակ զգացումները կարելի է համարիլ ճանապարհ դէպի
մարդասպանութիւն։ Յիսուս Քրիստոս յայտնապէս կ'ուսու-
ցանէ և կը յանդիմանէ Եբրայեցի դպիրները, որոնք թիւրած
էին այս վեցերորդ պատուիրանի իմաստը, յաւելցնելով իրենց
մեկնութիւնը թէ՝ ով որ կը սպանանէ՝ արժանի է պատժոյ դա-
տաւորին. "Լուարուք զի ասացաւ առաջնոցն՝ մի՛ սպանաներ.
զի որ սպանանիցէ՝ պարտաւոր լիցի դատաստանի„. որպէս
թէ մարդասպանութեան գործը միայն արգիլուած է և ար-
ժանի է պատժոյ դատաւորին. իսկ Փրկիչը կը յաւելու ասե-
լով. "Այլ ես ասեմ ձեզ, թէ ամենայն որ բարկանայ եղբօր
իւրում տարապարտուց՝ պարտաւոր լիցի դատաստանի, և որ
ասիցէ ցեղբայր իւր՝ մորոս, պարտաւոր լիցի դեհեն հրոյն„։
Մատ. Ե. 22—23։ Յովհաննէս առաքեալն մարդասպան կ'ան-
ուանէ եղբայրատեացը. "Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝
մարդասպան է„։ Ա. Յովհ. Գ. 15։ Ատելութիւնը մարդասպա-
թիւն է Աստուծոյ առջեւ. վասն զի նա կը տոչորէ մեր սիր-
տը և ահա՛ սիրան է, որ աւելի սպանութիւն կը գործէ, քան
թէ ձեռքը։ Ով որ իւր եղբայրը կ'ատէ, նա խաւարի մէջ է,
կ'ասէ Յովհաննէս առաքեալը, վասն զի խաւարէն կուրացած
լինելով՝ չը գիտէ թէ ո՞ւր կ'ընթանայ։ "Իսկ որ ատեայ զեղ-
բայր իւր, 'ի խաւարի է և ընդ խաւար շրջի, և ո՛չ գիտէ յո՞
երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա„։ Ա. Յովհ. Բ. 11։

Բարկութեան մասին պէտք է ասել, որ նա է բնական
շարժումն սրտի, որ առանձին կապ ունի մեր բնութեան հետ,
և կը բորբոքէ զմեզ, երբ կը տեսնենք որ և իցէ անարժան
գործ, կամ չարութիւն, թէ՛ մեզ հասուցած և թէ՛ այլոց։

Աստուած ինքնին ընդունակ ստեղծած է զմեզ այս զգացո-
ղութեան մէջ, որպէս զի աւելի ազդու կերպով կարենանք
ցոյց տալ մեր տժգոհութիւնը ամեն չար գործքի դէմ և զին-
ուորինք մեր հոգւոյ բոլոր զօրութեամբ։ Բարկութիւնը գո-
վելի է, երբ մեր անձնական օգտին դպչելէն չ'է յառաջա-
ցած։ Նա, եթէ օրինաւոր է, կը պահէ զմեզ խաղաղութեան
մէջ և սաստիկ կը շարժէ զմեզ որ ընդդիմանանք ամեն բանի,
ինչ որ ներհակ է Աստուծոյ փառացը և ընկերի օգտին։ Այս-
պէս էր Մովսէս մարգարէի բարկութիւնը, որ Իսրայէլացւոց
կռապաշտութիւնը տեսնելով՝ խորտակեց օրինաց տախտակը։
Այսպէս էր և մեր Փրկչի զայրոյթը, որ լումայափոխներու սե-
ղանները ցրուեց և ամենքը տաճարէն դուրս հանեց, ասե-
լով. "Ցունն իմ տուն աղօթից կոչեսցի և դուք արարիք զդա
այրս աւազակաց„։

Բայց բարկութիւնը ապօրինի է, երբ շարժուած է առանց
արդար պատճառի և կամ թեթեւ բաներու համար։ Ապօրինի
է դարձեալ, երբ վերջին ծայրը զայրանալով՝ հակառակ կը
գործէ արդարութեան և մարդասիրութեան։ Ապօրինի է վեր-
ջապէս, երբ երկար ժամանակ կը տեւէ և ատելութեան կը
փոխուի։ Պօղոս առաքեալն բարկութիւնը զանազանելով՝ այս-
պէս կ'ասէ. "Բարկանա՛յք, և մի՛ մեղանչէք. արեգակն 'ի վե-
րայ բարկութեան ձերոյ մի՛ մտցէ„։ "Անողորմ է սրտմտու-
թիւն և սաստիկ է բարկութիւն, այլ նախանձ և ոչ իմիք ժու-
ժէ կեալ„։ Եփես. Դ. 26։ Առակ. ԻԷ. 4։

Բարկութիւնն է տեսակ մի կատաղութիւն, որ կարող է
մինչև անդամ մահ պատճառել բարկացողին և առողջութեանը
վնասել։ Նա սարսափելի նշաններ կը թողու բարկացողի վրայ,
կը շփոթէ մարդոյ միտքը, կը խլացնէ և չը թողուր խրատուց
անսալ։ Պօղոս առաքեալը բարկութենէ կը զգուշացնէ, որ-
պէս զի մարդ ժամանակ ունենայ սիրել ընկերը։ "Ամենայն
դառնութիւն և բարկութիւն և սրտմտութիւն և աղաղակ և
հայհոյութիւն բարձցի 'ի ձէնջ, ամենայն չարութեամբ հան-
դերձ„։ "Լերո՛ւք ընդ միմեանս քաղցունք, գթածք, շը-
նորհել միմեանց, որպէս և Աստուած Քրիստոսիւ շնորհեաց
մեզ„։ "Գիտասջի՛ք, եղբարք իմ սիրելիք, եղիցի ամենայն

մարդ երազ առ՝ի լսել և ծանր առ՝ի խօսել և ծանր առ՝ի բարկանալ, զի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ „։ Եփես. Գ. 31—32։ 3ա՛. Ա. 19—20։

Մարդ պարտական է զգուշանալ և պահել իւր անձը ամեն անիրաւ և չափազանց բարկութենէ, որուն համար պարտաւոր է հեռուեալ պայմանները կատարել. — Ա. Հեռանալ ամեն բանէ, ինչ որ կարող է բարկութեան ձգտակար կերպը բորբոքել, ինչպէս են՝ վէճ, գինի, ընկերութիւն վատ մարդկանց, եւայլն։ “Մի՛ լինիր ընկեր առն բարկացողի և ընդ բարեկամի զայրացողի մի՛ գնայիր, գուցէ ուսանիցիս ըզ ճանապարհս նորա, առնուցուս խեղդ անձին քումմ„։ Առակ. ԻԲ. 24։ — Բ. Օրէնք և կանոն դնել իր անձին՝ բարկութեան առաջին շարժումին բնաւ չը հեռուելու, և առաջին յուզման միջոցին ինքզինքը զսպելու և խորհելու յարմար առարկայ դառնել։ — Գ. Առաջուց վարժեցնել իր անձը բարեխոհութեան, սանձել անձնասիրութեան զգացմունքները և իշխող լինել իր անձին։ — Դ. Ուսանելով մեր փրկչէն՝ լինիլ հեզ և խոնարհ սրտիւ. “Ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ „։ Մաթ. ԺԱ. 29։ — Ե. Խնդրելով Աստուծմէ որ օրհնէ մեր աշխատանքը, պարգեւէ մեզ հնարք և հոգի հեզութեան և խոնարհութեան, որով կարողանանք պահպանել զմեզ ամեն ապօրինի և չափազանց բարկութենէ։

Վրէժխնդրութիւնը բացարձակապէս արգիլուած է Աստուծմէ։ Վրէժխնդրութիւնը պէտք չէ շփոթել անձի արդար պաշտպանութեան հետ։ Վրէժխնդրութիւնն է չարիք հատուցանել ընկերին, որ արդիլուած է աստուածային օրէնքով։ „Մի՛ զանձանց վրէժ խնդրէք, սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան։ Քանզի գրեալ է՝ իմ է վրէժխնդրութիւն և ես հատուցից, ասէ Տէր „։ Մի՛ չար փոխանակ չարի հատուցանէք, կամ բամբասանս ընդ բամբասանաց, այլ չարին հակառակն օրհնել, զի յայս իսկ կոչեցարուք, զի օրհնութիւն ժառանգիցէք „։ Սորա համար օրինակ ունինք մեզ Քրիստոս. “Որ բամբասեալ և ոչ բամբասէր, չարչարեալ և ոչ պահէր ապառնալիս, բայց իրաւամբ մնանէր դատաւորին „։ Հռոմ. ԺԲ. 19։ Ա. Պետ. Գ. 9. Բ. 23։

Երբայեցւոց վարդապետութենէն ուրանք կը թոյլատրէին վրէժխնդիր լինել ասելով։ “Անկն ընդ ական և ատամն ընդ ատամն „։ Բայց դպիրներըը թիւր կը մեկնէին այս խօսքերը, որովհետեւ այս օրէնքը միայն արուած էր դատաւորներուն, որ արդարութեամբ գործ դնեն իրենց պատիժ։ Եփես ԻԱ։ Ահատ մարդկանց երբէք իրաւունք արուած չէր ամեն ընդ ական և ատամն ընդ ատամն փոխարինելու, ինչպէս չարաճճութեամբ կը մեկնէին դպիրները, որուն համար և Յիսուս կը յանդիմանէր և կը պատուիրէր՝ համբերել և խաղաղութեան համար ամեն նեղութիւն կրել. “Ա՛լ ես ասեմ ձեզ, մի՛ կալ հակառակ չարին, այլ եթէ ոք ածիցէ ապտակ յայ ծնօտ քո, դարձո նմա և զմիւսն „։ Մաթ. Ե. 39։ Մէկ վրէժխնդրութիւն կայ միայն, որ թոյլատրուած է քրիստոնեին, այն է չարին՝ բարի հատուցանել, վատութեան փոխարէն՝ լաւութիւն տալ. “Ա՛լ եթէ քաղցեալ իցէ թշնամին քո՝ հաց տուր նմա և եթէ ծարաւի՝ ջուր տուր նմա, զայս արարեալ՝ կայծակունս հրոյ կուտեսցես ի գլուխ նորա „։ “Մի՛ յաղթիր ի չարէն, այլ յաղթեա բարեաւն չարին „։ Հռոմ. ԺԲ. 20—21։ Պարտինք հետեւիլ առաքելոց օրինակին, որոնք հանառարիմ ձեռնով իրենց վարդապետի հրամանին՝ կարողացան ասել. “Բանբասէին զմեզ՝ օրհնէաք, հալածէին՝ յանձն առնուաք, հայհոյէին՝ աղաչէաք, իբրեւ առակ նշաւակի եղաք ամենայն աշխարհի՝ ամենեցուն փարելի լինիլ մինչեւ ցայժմ„։ Ա. Կորնթ. Գ. 12։ Յիսուս կ՚աղօթէր իր հալածիչներուն համար. “Հա՛յր, թող սոցա զմեզս, զի ոչ գիտեն զինչ գործեն „։ Աստուած իւր ողորմութիւնը կը սփռէ ամենուն վրայ. “Զի զարեգակն իւր ծագէ՝ի վերայ չարաց և բարեաց և ածէ անձրեւ՝ի վերայ արդարոց և մեղաւորաց „։ Մաթ. Ե. 45։

Վրէժխնդրութիւնը արգիլուած է հետեւեալ պատճառներով. — Ա. վասն զի հակառակ է համբերութեան և մոռնալու, որով պարտական է դերազանցել քրիստոնեան։ — Բ. վասն զի վրէժխնդրութեան միջոցները կապուած են անարդարութեան հետ։ Մարդը կարող չէ դատաւոր լինել իր գործքերուն, որովհետեւ սովորաբար կը մեծցընէ և կը տատասկնէ իրեն հասած անարդանքները և չա-

րիքները։ Այս պատճառաւ է, որ հիմնուած են դատարան-
ները, որպէս զի անաչառ մարդկանց ձեռքով քննուին և վեր-
ջանան ամեն դատեր։ Նոքա են որ Աստուծոյ կողմէն կար-
գուած են անիրաւները պատժելու և արդարներուն իրենց
հատուցումը տալու։ — Վասն զի վրէժխնդրութիւնը կը շփո-
թէ ընկերական կեանքը և խռովայոյզ կրից տեսարան կը
դարձնէ։ — Դ. Վրէժխնդրութեամբ թշնամութիւնը, ատե-
լութիւնը և անարդարութիւնը կարմատանան հասարակու-
թեան մէջ, մինչդեռ, եթէ մենք չարին բարի հատուցանէինք,
պիտի յաջողէինք խաղաղութիւնը թագաւորեցնել և մեր թշ-
նամու սիրտն անգամ առ մեզ գրաւել։ Այս կամի հասկաց-
նել Պօղոս առաքեալն ասելով. “Եթէ քաղցեալ իցէ թշնամին
քո, հաց տո՛ւր նմա, և եթէ ծարաւի՝ ջուր տո՛ւր նմա, զայս
արարեալ կայծակունս հրոյ կուտեսցես ’ի գլուխ նորա „։ — Ե.
Վրէժխնդրութիւնը արգիլուած է, վասն զի, վրէժխնդրու-
թիւնը կը թշուառացնէ զվրէժխնդիրն, ծանր և տխուր զգաց-
մամբ լցուցանելով նորա հոգին, մինչդեռ սէրը և ներողու-
թիւնը ուրախութեամբ կը լցուցանեն։ — Զ. Վրէժ չ’առնուլն
ամենեւին փոքրոգութիւն չ’է. իսկ ընդ հակառակն, ով որ
վրէժ կը խնդրէ, յայտնապէս կը ցուցնէ, որ իր անձը մատնած
է թշնամութեան և յաղթուած է չարէն։ Թէպէտ ’ի սկզբան
դժուար կ’երեւի մեզ յաղթել մեր դէմ եղած անպատուու-
թեանը, բայց խիստ մեծ առաքինութիւն է ներել թշնամուն,
շարժեալ լինելով մեծահոգութենէ և կրօնական վսեմ զգաց-
մունքէ։

Երբ Աւետարանը կ’արգելու վրէժխնդրութիւնը, պար-
տինք իմանալ որ վրէժ առնուլն հակառակ է ամեն յարգելի
և մարդասէր կրօնական զգացման և աւելի կը վնասէ վրէժ-
խնդրողին, քան թէ վրիժուց ենթարկուածին։

Վեցերորդ պատուիրանը կ’արգելու նմանապէս մենա-
մարտութիւնը (Տուել), որ նոյնպէս սպանութիւն կը համար-
ուի, վասն զի այս գործողութեամբ ոչ թէ մարդ ինքզինքը
կը պաշտպանէ յարձակողին դէմ, այլ կ’որոնէ իւր թշնամին և
’ի մենամարտութիւն կը հրաւիրէ։ Մենամարտութեան մէջ
գտնուած անարդարութիւնը և ատելութիւնը լաւ հասկանա-

լու համար՝ հարկ է հետեւեալ քանի մի դիտողութիւնները
աչքի առաջ ունենալ։ — Ա. Մենամարտութիւնը (Տուել) հա-
մեմատութիւն չ’ունի պատժոյ հետ և շատ անգամ ամենաթե-
թեւ անարդանքը կամ անպատուութիւնը կը պատժուի մահ-
ուամբ։ — Բ. Ո՞րչափ անիրաւ հատուցումն է այն հատու-
ցումը, ուր ո՛չ թէ իրաւունքն է, որ դատը կը վճռէ, այլ ու-
ժը կամ զօրեղութիւնը, որով շատ անգամ անմեղը մահով կը
պատժուի։ — Գ. Ի՞նչ կարող է այնպէս հակառակ լինիլ ըն-
կերական կեանքին և շփոթել հասարակութեան անդորրու-
թիւնը, ինչպէս ինքնակամ զրաւելն իւր և կա՛մ իւր ընկերի
կեանքը։ — Դ. Հին աշխարհի լուսաւորեալ և խնաստուն ազ-
գաց մէջ ամենեւին մենամարտութիւն չը կար, այլ նոքա պա-
տիւ կը համարէին միայն օրինաց հնազանդիլ և հայրենեաց
համար արիւն թափել։ Մենամարտութեան սովորութիւնը յա-
ռաջացած է վայրենի և բարբարոս ազգերէ։ Նոցա դատա-
ւորը այնպէս կը կարծէր՝ թէ Աստուած կը միջամտէ մարդ-
կանց կռուին և կը զօրացնէ արդարը՝ մեղաւորին յաղթելու։
Իսկ մեր ժամանակին մէջ մենամարտութիւնը հակառակ է օ-
րինաց, հակառակ է կրօնքի և հակառակ է ընկերական կամ
միաբանական կենաց։ Մենամարտութեան առաջարկութիւնը
չընդունելով շատ անգամ ամենեւին չը կորուսաներ մարդ իւր
պատիւը. եթէ կանխապէս հաստատ և քաջ գործքերով ցու-
ցած է, որ իր վրայ ամենեւին ցածութեան և թուլամորթու-
թեան նշան չը կայ։ Երբ պարզապէս կը յայտնէ, որ ինքը կը
մերժէ մենամարտութիւնը իր խղճմտանքի համողմամբ և պատ-
րաստ է իւր անձը պաշտպանել յանիրաւի յարձակողին դէմ,
այն ժամանակ ամենեւին անպատուութիւն չը կայ։ Մանա-
ւանդ որ հասարակութեան կարծիքը այժմ խիստ պարզուած
է մենամարտութեան նկատմամբ։ Շատ խոհեմ և խնաստուն
օրէնքներ հրատարակուած են զանազան տէրութեանց և ժո-
ղովրդոց մէջ մենամարտութիւնը գադրեցնելու համար, ինչ-
պէս Հիւսիսային Ամերիկայի և Անգղիայի մէջ։ Երբ մարդ կը
վարուի քաղցր չափաւորութեամբ և խոհեմութեամբ, առանց
դիպչելու այլոց պատուոյն և առանց ունայն բանի համար ու-
րիշներէն նեղանալու, այն ժամանակ կարող է շատ ծանր պա-

րագաներէ հեռանալ, իր պարտաւորութեան սուրբ զգացումը և ունայն պատուասիրութիւնը իրար հետ չը շփոթել և այսպէս աւելի ազնիւ վարմունք ունենալ։ Եթէ մեզ հասած անպատուութիւնը շատ ծանր է, դարձեալ պարտինք համբերել Աստուծոյ սիրոյն և մեր պարտաւորութեան համար, քաջ իմանալով, որ աշխարհիս մէջ ինչպէս սուտ պատիւ կայ, նոյնպէս կայ և սուտ ամօթ։ Աշխարհը չար հոգիէ շարժեալ, իր իշխանութեամբ ինչպէս կամի այնպէս կը բաժանէ գովեստը և պարսաւը, պատիւը և անպատուութիւնը, բայց այս կերպով մեզ աւելի միջոց կը տայ նահատակ լինիլ առաքինութեան համար, ինչպէս և կրօնքի համար։ Այս նահատակութեամբ մենք մասնակից կը լինինք Քրիստոսի անարգանացը, խաչի նախատանացը և կը հալածուինք արդարութեան համար, մեզ վերաբերելով Փրկչի սոյն մխիթարիչ խօսքը. “Երանի որք հալածեալք իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից „։ Մատ. Ե. 10։

Այսպէս պարտինք մենք պահել և պաշտպանել մեր ընկերի կեանքը, բարի խորհրդով, օգնութեամբ և առ հասարակ ջերմեռանդութեամբ սիրելով. վասն զի Քրիստոնէի համար՝ [illegible]։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

«Մի՛ շնար»։

Աջս պատուիրանքով Աստուած կ՚արգելու շնանալն, որ է կորուսանել այն հաւատարմութիւնը, զոր այր և կին խոստացած էին սուրբ և անխախտ պահպանել, ուխտելով ամուսնութեան սուրբ կապով։

Շնութիւնը մեծ յանցանք է, վասն զի կը քակտէ Աստու-

ծոյ անուամբ կատարուած սուրբ խոստումը։ Շնութիւնն է ուխտազանցութիւն, վասն զի առ ոտն կը կոխէ ամուսնական հաւատարմութեան սուրբ ուխտը։ Այս անհաւատարմութիւնը ունի սոսկալի հետեւանքներ, որ է ամուսնական կռիւ, բաժանումն, վէճ, ատելութիւն, անհամաձայնութիւն, որով ընտանեկան խաղաղ կեանքը կը խառնակուի, կը շփոթուի, շատ անգամ գործքերը կը դադրին, զաւակները անխնամ կը մնան և անսնունդ։ Շնութիւնը աղբիւր կը դառնայ ստութեան, նախանձ և ատելութիւն կը գրգռէ, սրտերը կը խոտացնէ և շատ անգամ մահուան պատճառ կը լինի։ Եթէ այս սոսկալի յանցանքը սովորական դառնայ հասարակութեան մէջ, իսկոյն ընկերականութեան հիմունքը կը քայքայի և կորստեան կը մատնուի։ Աստուած հրամայած է Հին օրինաց մէջ, որ շնացողը մահուամբ պատժուի։ “Եւ այր եթէ շնասցի ընդ առնակնոջ, կամ շնայցէ ընդ կնոջ ընկերի իւրոյ՝ մահու մեռցի, և շնացողն և շնացեալն „։ Ղեւտաց. Ի. 10։ Պօղոս առաքեալն կը յայտնէ, որ շնացողները կարող չ՚են Աստուծոյ արքայութիւնը ժառանգել. “Ո՛չ պոռնիկք, ո՛չ շունք ... զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն „։ Ա. Կորնթ. Զ. 10։ “Պատուական է ամուսնութիւն ամենեւին և սուրբ անկողին, բայց զշունս և զպոռնիկս ատէ Աստուած „։ Եբր. ԺԳ. 4։ Յովսէփ գեղեցիկը լաւ կը զգար թէ ի՞նչ չար հետեւանքներ ունի շնութիւնը, ուստի երբ կը բռնաբարուէր, աղաղակեց. “Զիա՞րդ առնիցեմ զբանս զայս չար և զմեծ, և մեղանչիցեմ առաջի Աստուծոյ „։ Ծննդ. ԼԹ. 9։ Յովբ մեծ և սաստիկ պատժոյ արժանի յանցանք կ՚անուանէ շնութիւնը կամ պոռնկութիւնը. “Զի սրտմտութիւն և անժուժ բարկութիւն է պղծել զկին առն „։ Յովբ. ԼԱ. 11։

Մի՛ շնար պատուիրանով պարտինք հասկնալ նոյնպէս ամեն անսուրբ և ամօթալի կապակցութիւն, որ արտաքոյ է ամուսնական սրբութեան, ամեն տեսակ պղծութիւն, ամեն գարշութիւն, ամեն ցոփութիւն, ամեն զազրալի գործ, ամեն անարժան խօսք և վավաշ խորհուրդ, որոնք հակառակ են սրբութեան և պարտուց։

Յիսուս Քրիստոս յայտնապէս կ՚ուսուցանէ՝ թէ ո՞րչափ

պէտք է զգուշանալ յանցաւոր ցանկութենէ. “Լուարուք ա-
պաքէն, զի ասացաւ առաջնոցն՝ մի՛ շնար. բայց ես ասեմ
ձեզ՝ թէ ամենայն որ հայի ’ի կին մարդ առ ’ի ցանկանալոյ նմա,
անդէն շնացաւ ընդ նմա ’ի սրտի իւրում„: Մատ. Ե. 27—28:
Պօղոս առաքեալն կը դատապարտէ ամեն տեսակ անսրբու-
թիւն և անունը տալէն անգամ կը զգուշացնէ. “Այլ պոռնի-
կութիւն և ամենայն պղծութիւն, կամ ագահութիւն անուա-
նեսցի մի՛ ’ի միջի ձերում, որպէս և վայել է սրբոց, և զաղ-
րութիւն, կա՛մ խօսք յիմարութեան, կա՛մ խեղկատակութիւն,
որ ո՛չ վայել է, այլ մանաւանդ գոհութիւն„: “Իբրեւ ’ի
տուընջեան զդաստացեալք շրջեսցուք, մի՛ անառակութեամբք
և արբեցութեամբք, մի՛ խառն անկողնովք և պղծութեամբք,
և մի՛ նախանձու և հակառակութեամբք, այլ զգեցարուք ըզ
Տէր Յիսուս Քրիստոս, և մարմնոյ խնամ մի՛ տանիք ’ի ցանկու-
թիւնս„: Եփես. Ե. 3—4: Հռով. ԺԳ. 13—14: Անսրբութիւնն է
աղբիւր զանազան մեղաց և անկարգութեանց, որով մարդ
ստութեան կը վարժի և երդմնազանցութեան, կը թողու իր
զաւակները, կը խաբէ իր անձը, ամօթալի վիճակի կը մատնէ
և խղճի տառապանաց, և այսպէս կ’առաջնորդէ դէպի կո-
րուստ: Անսրբութիւնը դառնութիւն կը սերմանէ գերդաս-
տանի մէջ, կը շփոթէ հասարակութեան կարգը և խաղաղու-
թիւնը: Անսուրբ մարդը կը վնասէ իր անձին, կը ստրկանայ
իր կիրքերուն, կը նուաստացնէ իր հոգին, որոյ հետեւանքն
է հիւանդութիւն, թուլութիւն, ամօթ, անարգանք և շատ
անգամ մեծ թշուառութիւն: Անսրբութիւնը կը թմրեցնէ, կը
փոխէ, կը վատթարէ ու կ’ոչնչացնէ մարդոյ հոգւոյ ընդունա-
կութիւնները, կը ձգէ խաւարի մէջ և կը մատնէ չար հոգւոյ
իշխանութեան, զոր Քրիստոս կ’անուանէ պիղծ հոգի. “Քանզի
ասէր ցնա, ել այսդ պիղծ ’ի մարդոյ այտի„: Մարկ. Ե. 8: Ան-
սրբութեամբ մարդ կը դժուարացնէ իր հոգւոյ փրկութիւնը
և կը պատրաստէ իր անձին համար ամօթալի կորուստ, վասն
զի Ս. Գիրքը կը հեռացնէ Աստուծոյ արքայութենէն, ինչպէս
շնացողը, նոյնպէս և պիղծը. “Փախերուք ’ի պոռնկութենէ,
զամենայն մեղս, զոր և գործէ մարդ, արտաքոյ մարմնոյ իւ-
րոյ է, իսկ որ պոռնկի՝ յիւր մարմին մեղանչէ„: Ա. Կորն. Զ. 18:

Շնութեան և անսրբութեան հակառակ Ս. Գիրը կը պատ-
ուիրէ մեզ ողջախոհութիւն կամ սրբութիւն սրտի, որ հեռի
է ամեն աղտեղութենէ: Ողջախոհ մարդը խօսելու ժամանակ
պատկառելի է, գործոց մէջ՝ չափաւոր, հագուստի մէջ՝ պար-
զասէր, վարուց մէջ՝ սուրբ, և ընկերականութեան մէջ՝ ակ-
նածելի: Ս. Գիրը կը պահանջէ մեզմէն ողջախոհութիւն. “Զի
են կամքն Աստուծոյ՝ սրբութիւն ձեր, ’ի բաց լինիլ ձեզ ’ի
պոռնկութենէ, գիտել իւրաքանչիւր ումէք ’ի ձէնջ զիւր ա-
ման ստանալ սրբութեամբ և պատուով„: Ա. Թես. Ե. 3: “Արդ
լոյս էք ’ի Տէր, իբրեւ զորդիս լուսոյ գնացէք, զի պտուղ
լուսոյ ամենայն բարութեամբ է և արդարութեամբ և ճշմար-
տութեամբ„: Եփես. Ե. 8: “Ոչ գիտէք, եթէ մարմինք ձեր՝
անդամք են Քրիստոսի: Արդ՝ առեալ զանդամս Քրիստոսի
առնիցէ՞ք զանդամս պոռնկի, քաւ լիցի: Եթէ ո՛չ գիտէք, զի
մարմինք ձեր տաճար են հոգւոյն սրբոյ, զոր ունիմք յԱստու-
ծոյ: Արդ՝ գնոց գնեցայք, փառաւոր արարէք զԱստուած ’ի
մարմինս ձեր և յոգիս, որ է յԱստուծոյ„: Ա. Կորնթ. Զ. 15—20:

Հետեւելով այս սուրբ կանոններուն՝ պարտաւոր ենք մենք
հեռանալ ամեն չարութենէ, յորմէ առաջ կը գայ անսրբու-
թիւն, և այսպէս կարող ենք պահել առողջ հոգի առողջ
մարմնոյ մէջ. կարող ենք պահպանել մեր տունը, մեր գոյքը,
մեր հանգստութիւնը, նմանապէս և օգնել ընկերականու-
թեան, որ թագաւորէ կարգաւորութիւն և բարոյականու-
թիւն: Այս ճանապարհաւ կը հաճոյանանք ամենասուրբ Ա-
ստուծոյն և կը պատրաստենք մեզ համար երջանիկ յարութիւն:
Միով բանիւ, կը վարուինք ինչպէս իմաստուն մարդ և բարի
քրիստոնեայ, ինչպէս բարեկիրթ քաղաքացի և անմահ էակ:

Ողջախոհութեան մէջ կենալու համար պարտաւոր ենք.
— Ա. Հեռանալ ամեն բանէ, ինչ որ կարող է զարթուցանել
մեր մէջ վատ խորհուրդներ, չար մտքեր, և անսուրբ ցան-
կութիւններ, որպիսի են՝ լկտի խօսակցութիւնք, ընկերակ-
ցութիւն չար մարդկանց հետ, վատ առարկայից տեսութիւն,
որք ներհակ են ամօթխածութեան, վատ և անարդ տեղեր
յաճախել, անգործութիւն, անժուժկալութիւն, չափազանց
ուտել խմել և քնանալ, անպարկեշտ տեսարաններ, երեւա-

կայութիւնը պղտորող դրեանց ընթերցանութիւն, յաճախ և պարապորտ այցելութիւն կամ տեսակցութիւն երկու սեռին իրարու հետ։ Վասն զի, այս ամենը տեսակ մի ճանապարհներ են, որոնք թէ՛ զգալի և թէ՛ անզգալի կերպով մարդը կը մղեն դէպի մեղքը, յորմէ պէտք է փախչիլ։ Յանցանաց պատճառներէն հեռանալով՝ կը հեռանանք նոյն իսկ յանցանքէն։ Բայց այս ամենը բաւական չ՚է։ — Բ. Պարտաւոր ենք գործ դնել ամեն միջոցներ, որոնք կարող են հաստատ պահել մեզ սրբութեան մէջ, ինչպէս է արթուն և աշխատասէր կեանք ունենալ, իշխել ցանկական կրից վրայ, տեսակցիլ առաքինի մարդկանց հետ և ամենէն աւելի Աստուծոյ ներկայութիւնը միշտ մեր աչքի առաջն ունենալ։ Երբ թագաւորէ մեր սրտին և մտքին վրայ այն մեծ գաղափարը, որ Աստուած է մեր դատաւորը, նա կ՚ատէ անսրբութիւնը և չար գործքերը, նա կը վարձատրէ ողջախոհը և կը պատժէ ցանկասէրը. այնուհետեւ կը զգանք թէ ո՞րչափ քաղցր է ողջախոհութիւնը և սրբութիւնը։ “Պատուական է ամուսնութիւն ամենեւին և սուրբ անկողինք, բայց զշունս և զպոռնիկս դատի Աստուած „։ “Մի՛ ոք զձեզ խաբեսցէ բանիւք սնոտեօք, զի վասն այսորիկ իսկ գայ բարկութիւնն Աստուծոյ ՚ի վերայ որդւոցն անհաւանութեան „։ Եբր. ԺԳ. 4։ Եփես. Ե. 6։ Վերջապէս ողջախոհութեան մէջ հաստատ և յարատեւ մնալու միակ միջոցն է միշտ աղօթել և Աստուծոյ օգնութիւնը խնդրել։ Վասն զի նա է, որ կարող է զօրացնել զմեզ ամեն փորձութեան յաղթելու։ Նորա ձեռքն է մեր սիրտը, և նա է որ կը պահէ և կը պաշտպանէ զմեզ ամեն վատութենէ։

Ամուսնութեան և ցանկութեան վերաբերեալ բառերը Ս. Գրոց մէջ շատ անգամ գործ դրուած են հոգեւոր նկատմամբ, ինչպէս է Աստուծոյ միութիւնը իր ժողովրդեան հետ, Քրիստոսի միութիւնը հաւատացելոց հետ։ Յովհաննէս կ՚ասէ Յայտնութեան մէջ. “Ե՛կ ցուցից քեզ զհարսնն և զկին Գառինն „։ “Կացուսցէ փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ արատ կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ յայսպիսեաց. այլ զի իցէ սուրբ և անարատ „։ Յայտ. ԻԱ. 9։ Եփես. Ե. 27։ Այս պատճառաւ ահա՛, ամեն արտաքին գործ, ամեն խօսք, ամեն սրտի

շարժումն, որ հակառակ է ամուսնական խոստմանը և կը խղէ այն սուրբ կապն ու մարդոյ սիրտը կը խլէ օրինաւոր ամուսինէն՝ ուրիշին տալու համար, կ՚անուանի հոգեկան շնութիւն։ Ս. Գրոց մէջ Եբրայեցւոց կռապաշտութիւնը կ՚անուանի շնութիւն. “Զի պոռնկեցան զհետ աստուածոց օտարաց և երկիրպագին նոցա և բարկացուցին զՏէր „։ Դատ. Բ. 17։

ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

«Մի՛ գողանար»։

Աստուած կը պատուիրէ չը գողանալ, չը պահել կամ չը ծածկել այլոց պատկանած իրը, հակառակ նոցա կամաց, վնաս չը պատճառել ընկերին և չը զրկել իր գոյքէն։ Այս յանցանքը, որ գողութիւն կամ աւազակութիւն կ՚անուանի, պարտինք հասկանալ ընդհանուր առմամբ, առանց զանազանելոյ անձը, նիւթը և ձեւը։ Ամեն կերպով և ամեն մարդոյ համար արգիլուած է գողանալը, յումմէ որ լինի, ինչ որ լինի և ինչպէս որ լինի (1)։

Չին օրինաց մէջ, այս պատուիրանին նկատմամբ, ամենակարեւոր հարկի ստիպման ժամանակ, բացառութիւն կը տեսնուի։ Այս բացառութիւնը կը վերաբերէր Եբրայեցւոց առանձին հանգամանքներուն, ինչպէս որ գրուած է Օրինաց մէջ. “Եթէ մտանիցես ՚ի հունձս ընկերի քո, քաղիցես ձեռօք քովք զհասկն և մանգաղ մի՛ արկանիցես յոճ ընկերի քո։ Եւ եթէ մտանիցես յայգի ընկերի քո, կերիցես խաղող մինչեւ

(1) Գողութիւն բառը Եբրայեցերէն կ՚ասուի Գանափ, որ կը նշանակէ որոշ դնել, վայելել այլոց վաստակը, պահել կամ ծածկել այլոց սեպհականութիւնը։

յ.յաղել անձին քոմ, բայց ամեն մի ամենեացես „։ Օբդ. Ի՞. 24—25։ Բայց այս բացառութիւնը կը վերաբերէր միայն երբ բայեցւոց ազգին և ունէր իւր պատճառը՝ նոցա առանձին հանգամանաց մէջ։ Այս բացառութեան հոգին մենք եւս պիտի պահենք քանի մի պարագայից մէջ, երբ կը տեսնենք թէ սաստիկ հարկէ ստիպուած որ և իցէ մարդ կառնու մեր սեպհականութիւնը։ Քրիստոնէական կարեկցութիւնը կ'ուսուցանէ մեզ ներողութեամբ դատել այս բանը, որ գոյէ ամենասաստիկ խղճմտիմնէ յառաջ եկած է։ Այս խօսքերը միայն կարեկցութեան համար է, և ոչ թէ իբրեւ կանոն։ Վասն զի՝ ոչ խղճմտիմնը, ոչ աղքատութիւնը և ոչ կարօտութիւնը իրաւունք չեն տար գողանալու։ Նոյն իսկ աղքատները պարտաւոր են իրենց ձեռքով իրենց ապրուստը ճարել. "Որ գողանայրն, մի՛ եւս գողասցի, այլ մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռօք իւրովք զբարիս, զի բաւական իցէ տալ՝ ումն պիտոյ իցէ „։ Եփես. Դ. 28։ Խեղճերն և կարօտեալներն, եթէ իրենց աշխատանքով կարող չեն իրենց բոլոր պիտոյքը հոգալ, պարտական են օգնութիւն խնդրել կարողութեան տէր մարդիկներէն։

Գողութիւնը կը համարուի ֆէֆ կամ ֆութ, նայելով թէ ո՞վ է որ կը գողանայ և յումմէ՞ կը գողանայ։ Հետեւապէս, գողացող խեղճը կամ աղքատը կարող չէ անմեղ համարուիլ, բայց այնքան յանցաւոր չէ, որչափ գողացող հարուստը։ Ցանցանք է, ասացինք, աղքատի գողութիւնը, որովհետեւ կարող է ունենալ վճռական հետեւանքներ. վասն զի գողանալ հարստահարեցնել և դարձեալ նոցա բարերարութեան ոգին, զոր կարող է ունենալ պատուաւոր աղքատաց համար։ Բայց այս յանցանքը աւելի մեծ կը համարուի, եթէ աղքատէն գողացուի, որպ կորուստը խիստ զգալի է։

Ոչ մի կապակցութիւն, ոչ մի ընկերական յարաբերութիւն կարող չէ արդարացնել այն մարդը, որ առանց այլոց կամքին նոցա սեպհականութիւնը կ'իւրացնէ։ Որպիսին անգամ եթէ առնուն իրենց հօր սեպհականութիւնը, պատճառ բնաւ չեն արդարանալ, եթէ առանց հօր գիտութեան

և համաձայնութեան գործած են։ "Որ մերժէ զհայր իւր կամ զմայր և համարի չվեզանչել, կցորդ է նա արանց ամբարշտաց „։ Առակ. Ի՞. 24։ Այսպիսի որդին կը կորուսանէ ծնողաց վստահութիւնը և երախտեաց փոխարէն կը հատուցանէ ապերախտութիւն։ Այս կը վերաբերի նմանապէս ծառաներուն և մշակներուն, որոնք ծածուկ կ'իւրացնեն իրենց տէրոջ որ և է դոյքը։ Կը վերաբերի նմանապէս այն մարդկանց, որոնք կ'աշխատեցնեն ծառաները կամ գործաւորները և աշխատանաց վարձէն կը գրկեն։

Այն մարդիկը, որոնք անիրաւաբար կը վարուին հասարակութեան դէմ և յօժարութեամբ չեն վճարեր տէրութեան կամ կառավարութեան հարկը, որոնք կը վախչին պարտաւորութենէ և ընդհանուր օգտի համար եղած աշխատութենէ, շատ մեծ մեղաւորութեան մէջ են։ Այս վարմունքը եւս տեսակ մի գողութիւն և յանցանք է, որովհետեւ կընդդիմանայ ընկերականութեան և կը խառնէ ու կ'ոչնչացնէ հասարակութեան կարգաւորութիւնը։ Մեր Փրկիչը կը պատուիրէ որ մաքուր խղճմտանքով վճարենք մեր պարտքը. "Երթայք տա՛ւք զկայսերն՝ կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ „։ "Արդ՝ հատուցէ՛ք իւրաքանչիւր զպարտս, որում զհարկս՝ զհարկն „։ Մատ. ԻԲ. 7։ Հռոմ. ԺԳ. 7։

Ընդհանրապէս ամեն գողութիւն արդիւնաւոր է, բայց գողցուած նիւթին և առարկային համեմատութեամբ՝ յանցանքն եւս մեծ կամ փոքր կը համարուի. Օրինակի համար, առանց արտաք և պահ առած իրը գողանալն խիստ մեծ յանցանք է, որովհետեւ գողութեան հետ ուխտազանցութիւն և երդմնազանցութիւն եւս խառնուած է։ Նմանապէս մեծ յանցանք է հասարակութեան վերաբերեալ կամ հասարակութենէն յանձնուած իրեղէնը գողանալ, ինչպէս են, բարեպաշտութեան, հաւատոյ և մարդասիրութեան համար որոշուած իրեղէնները կամ գումարները։ Այսպիսի գողութիւնը համարուած է սրբապղծութիւն։ Սրբապղծութիւն է նմանապէս այն մարդկանց արարքը, որոնք կարօտութիւն չունին և ողբմութիւն կը խնդրեն, վասն զի այս եղանակաւ կը գրկեն ճշմարիտ կարօտեալները ողբմութիւն առնելէ։

Գողութիւնը զանազան կերպեր կամ տեսակներ ունի, ինչպէս է՝ ուժով կամ բռնութեամբ գողանալ, օրինաց կամ արդարութեան դիմակով գողանալ, ապրն ապրն: Բայց առ հասարակ ամեն կերպն ալ արդիլուած է: Բռնի գողութիւնը, որ աւազակութիւն կամ յափշտակութիւն կը կոչուի, ամեն ժամանակ պատժով դատուած և դատապարտուած է օրինաց առջեւ: Այս կարգի գողերուն կը պատկանին նաեւ այն մարդիկը, որոնք առ չարն գործ կը դնեն հասարակութենէն կամ կառավարութենէն իրենց յանձնուած կամ հաւատացած իշխանութիւնը և ծառայութիւնը, որոնք փոխանակ պաշտպանելու՝ կը նեղեն խեղճերը, աղքատները, ծանր գնողութիւնները կը բարդեն հասարակաց վրայ և կը գրկեն ծառաները և հնձողները իրենց արդար վաստակէն, որ խիստ մեծ մեղք է Ս. Գրոց խօսքով. "Ահա ապիկ վարձք հնձողացն, որք գործեն զանգս ձեր, առ ձեզ են, գրկեալն՝ ի ձէնջ ազաղակէ և բողոք հնձողացն եհաս յականջս Տեառն զօրութեանց": Յակ. ե. 4: Վայ կը կարդայ Երեմիա մարգարէն գրկողներուն վրայ. "Ո՛հ, որ շինէ զտուն իւր և ոչ արդարութեամբ և զվերնայարկս իւր և ոչ իրաւամբք, և՝ ի մերձաւորէ իւրմէ գործի նմա գործ ձրի, և զվարձս նորա ո՛չ հատուցանէ նմա": Երեմ. ԻԲ. 13: Մի հատուածներ զանազանէն, ուսկից գիր ալ աղքատ է և մի՛ անարգեր զոչ ապարն՝ ի տուրս": Առակ. ԻԲ. 22:

Գողութեան կերպը բազմատեսակ է: Ամեն տեսակ բռնութիւն ու խաբէութիւն առնելու և ծախելու մէջ, փոխառնելու և փոխատալու մէջ, ամեն գրկողութիւն, ամեն խարդախութիւն չափելու, կշռելու, ձեւելու մէջ, ամեն անհատատարմութիւն գաշնակցութեան մէջ, անխղճաբար կրկնապատկութիւն իր շահուն, միամիտ մարդիկ խաբել և մէկի տեղ երկու առնուլ, անիրաւութիւն իրաւանց և վէճի մէջ, վատ վաճառքը՝ լաւի տեղ անցնել, միսլ բանիս, ամեն տեսակ շահագործութիւն, զոր չ'ելլենք ուզեր, եթէ այլք մեր դէմ գործէին, այս ամենը կ'անուանի Դաւանիչ: "Ապա թէ վաճառեսցէ ոք վաճառ ընկերի իւրում և ատացի յընկերէ իւրմէ, մի՛ նեղեսցէ այր զընկեր իւր": Ղեւտ. ԻԵ. 14: "Մի՛ առնէք անիրաւութիւն՝ ի դատաստանի, ՝ի չափս և՝ ի կշիռս և՝ ի զոյգս

և զոյգ արդար և չափք արդար": Ղեւտ. ԺԹ. 35—36: "Մի զանց առնել և զրկել յիրեդ յայդմիկ զերբայր իւր՝ քանզի Աստուած վրէժինդիր է՝ի վերայ ամենայնի այդորիկ": Ա. Թես. Դ. 6: Յոհաստատութեան համար եւս կարող ենք ասել, որ արդարութեան սահմանէն դուրս չափազանց տոկոս պահանջելը՝ դարձեալ գողութիւն է: Ընչաքաղց նախանձոտութիւնը, ամբոխ և անգթութիւն է մեզ համար, երբ մեր ընկերը նեղութենէ և դժբաղդութենէ ստիպուած, և կամ վատ վարմունքէ և յիմարութենէ ճարահատութեան դուռը հասած, մեզ կը դիմէ փոխ առնելու, և մենք տոկոսը տոկոսի վրայ դիզելով, կը զապտելով, առնէ և կայքէ զրկելով՝ կը հարստանանք և անդիմաբար մեր ընկերը դէպի կորուստ կը տանինք: Այս տեսակ օդնութիւն կարծուած վարմունքը աւազակութենէ վատթարագոյն է: Երանելի է այն մարդը, որ Դաւիթ մարգարէին առածին պէս. "Զարծաթ իւր՝ի վարձս ո՛չ տայ և կաշառս՝ի վերայ իրաւանց ո՛չ առնու, որ զայս արասցէ, նա մի՛ սասանեսցի յաւիտեան": ԺԵ. 5: Այսպիսի գողութեան կարգը կը հանարուի նա և այն արարքը, երբ մարդ, առանց սիրոյ կամաց կամ դիտութեան, կը պահէ կամ կը ծածկէ նորա որ և իցէ առացուածը, կամ բան մի կը գտնէ և ծածկելով՝ կ'ուրանայ առանց նայելու՝ որ տէրը կը փնտռէ և կամ կը պահանջէ: Գողութիւն է նմանապէս, երբ մարդ ուրիշի գողացածը կը պահէ, թէեւ դիտէ որ գողցուած է, կամ անիրաւութեամբ ժողովուած: Վերջապէս, երբ մենք կ'ուրանանք տալու՝ ինչ որ պարտաւոր ենք, և կամ հնարքներ կը հնարենք որ չը տանք, այս մեր անմիտ հնարագիտութիւնը դարձեալ գողութիւն է: Այս պատուիրանը կ'արգելու նմանապէս ամեն ինչ, որ կը հապշտնենք մեր ընկերին առանց մեր անձնական օգտի. օրինակի համար, կամ նորա աւանդը չը պահպանելով, կամ մեր ձեռքէն եկած օգնութիւնը ղլանալով, և կամ վնասանգաւոր վիճակին անուշադիր լինելով: Ա. հասարակ ամեն գործողութիւն, որոյ հետ կապուած է անհատատարմութիւն և չար կամք, թէ աշխատութեան մէջ, թէ ուրիշներուն խոստացած և անկատար թողած ծառայութեան մէջ, թէ մըշակաց և ծառայից անհոգութեան և թուլութեան մէջ, այս

ամենը գողութիւն կը համարուին. Անիրաւութիւնը, գողութիւնը պաշտպանելը, գողունի իրաց բաժանարար կամ բաժանորդ գտնուիլը, Սողոմոն իմաստունի ասածին պէս, կը նշանակէ հոգին ատել. "Որ բաժանակից լիցի գողոյն՝ ատեայ զանձն իւր" = Առակ. ԻԹ. 24=

Գողը ո՛չ միայն անիրաւ է ընկերականութեան մէջ, որ զրկանք կը հասցնէ այլոց և շատ անգամ մեծ նեղութեան մէջ կը ձգէ, այլեւ ապստամբ է աստուածային Նախախնամութեան դէմ, որոյ հոգացողութիւնը և խնամքը կ'ուրանայ. ապստամբ է հասարակութեան դէմ, որ միայն փոխադարձ վստահութեան մէջ կը վայելէ աշխատանաց պտուղը խաղաղութեամբ: Գողութիւնը յայտնապէս կը քանդէ սիրոյ իրաւունքը և միացած է բազմաթիւ մեղքերու հետ: Գողութեամբ մեծ դժուարութեան կ'ենթարկուի նոյն իսկ գողը, հեռանալով պատուաւոր և բարի մարդկանց ընկերակցութենէն, որոնք համարձակ կարող են ասել. Մենք ոչ ոքի վնասած չ'ենք: Գողութիւնը անպատուութեան նշան կը դնէ գողին վրայ: Գողը սոյն այս կենաց մէջ անգամ կը կրէ ամենացած պատիժներ նաեւ այն ժամանակ, երբ այլոց առջեւ գող համարուած չ'է. վասնզի՝ շարունակ երկիւղի, շփոթութեան և անկարգութեան անդունդին մէջ կը տատանի. "Որ ժողովէ զմեծութիւն առանց իրաւանց՝ 'ի կէս աւուրց իւրոց թողցէ զնա և 'ի վախճանի իւրում եղիցի անզգամ" = Երեմ. ԺԷ. 11= Գողութիւնը մեծ դժուարութեան մէջ կը ձգէ զգողն, երբ կըստիպուի գողցածը յետ դարձնել, վասն զի կը տեսնէ իւր արարմանց մէջ անխոհեմութիւն, յիմարութիւն և վնաս իր ժամանակաւոր օգտին, որպէս և յաւիտենականին: "Եթէ ո՛չ գիտէք, զի անիրաւք զարքայութիւնն Աստուծոյ ո՛չ ժառանգեն... ո՛չ գողք, ո՛չ ագահք..." = Ա. Կորնթ. 9—10=

Աստուած գողութիւնը արգիլելով՝ կ'արգելու ամեն բան, ինչ որ դէպի գողութիւն կը մղէ զմարդ: Գողութեան առաջին և գլխաւոր աղբիւրն է անգործունէութիւնը, ուստի և Աստուած կը պատուիրէ աշխատասիրութիւն, որով կարող ենք հեռու մնալ ամեն տեսակ անիրաւութենէ: "Որ գողանայրն՝ մի՛ եւս գողասցի, այլ մանաւանդ վաստակեսցի գոր-

ծել ձեռօք իւրովք զբարիս, զի բաւական իցէ տալ, ում պիտոյ իցէ" = Եփես. Դ. 28= Գողութեան երկրորդ աղբիւրն է անբարոյականութիւնը և շռայլութիւնը: Աղքատը եթէ չը կանոնաւորէ իւր պիտոյքը իւր կարողութեան չափով և ծախքերը չը չափաւորէ, շուտով գողութեան ճանապարհի մէջ կը մտնէ: Գողութեան երրորդ աղբիւրն է ագահութիւնը կամ չափազանց շահասիրութիւնը, որով շուտով կ'ոչնչանան արդարութեան կանոնները: Գողութեան չորրորդ աղբիւրն է թեթեւ կարծուած յանցանքները. օրինակի համար՝ պտուղ, ծառ, փայտ և այլ այսպիսի բաներ գողանալն: Խաբեբայութիւնն եւս, զոր երբեմն կը թոյլատրեն մանկանց, սովորական դառնալով՝ կը տանէ դէպի մեծամեծ գողութիւններ: Այս իրողութիւնը շատ անգամ խոստովանած են նոյն իսկ դատապարտութեան մատնուած գողերը: Գողութեան հինգերորդ աղբիւրն է զԱստուած ուրանալն, որ ամենայն չարեաց արմատն է, որով կը ծնանին խղճի մէջ դժգոհութիւն և ամենակերպ փորձութիւններ:

Աստուած գողութիւնը արգիլելով՝ կը պատուիրէ երկու ընդհանուր պարտաւորութիւններ, որոց մէկը պարտաւոր են կատարել արդարութեան դէմ մեղանչող մարդիկը և միւսը առ հասարակ ամեն մարդիկ: Առաջին պարտաւորութիւնն է գողցած բանը իւր տիրոջը դարձնել և կամ վնասն ու զրկանքը տուժել. "Իսկ եթէ ոք տայցէ ընկերի իւրում արծաթ կամ այլ ինչ կարասի զիւր յաւանդ և գողանայցի 'ի տանէ առնն, եթէ գտցի որ գողացաւն, կրկին տուժեսցի" = "Եկն եկաց Զաքէ և ասէ ցՏէր, Տէ՛ր, ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց և եթէ զոք զրկեցի՝ հատուցից չորեքկին" = Ելից. ԻԲ. 7= Ղուկ. ԺԹ. 8= Գողցածը յետ դարձնելով մարդ կը յայտնէ իւր ճշմարիտ զղջումը, առանց որոյ անհնար է մեղաց թողութիւն գտնել: Իսկ ով որ անկարող է յետ դարձնելու, պէտք է որ դիմէ Աստուծոյ ողորմութեանը, խնդրելով թողութիւն Քրիստոսի անուամբ և խոստանալով՝ հատուցանել, երբ կարողութիւն կամ միջոց ունենայ: Յետ դարձնելու միակ պայմանն է լիովին և ամբողջապէս յետ դարձնել, նաեւ յաւելուլ այն շահը կամ վաստակը, զոր կարող էր ունենալ գողցուած ստաց-

ուածքը, եթէ իրեն տիրոջ մօտ մնար։ Որչափ կարելի է մարդ պարտաւոր է շուտով կատարել այս գործը, որովհետեւ որչափ ուշանայ, այնքան կը ծանրանայ և մանաւանդ որ գուցէ մահը վրայ հասնի և դատապարտութեան տակ մնայ։ Երբէք պէտք չ'է փախչիլ վճարմունքէ, այլ հատուցանել կամաւ, կատարեալ զղջմամբ և ճշմարիտ ցանկութեամբ, որով կարող է մարդ խոպառ ջնջել իւր անիրաւութեան հետքերը և հաշտուիլ Աստուծոյ հետ։ Եթէ գողը չը գիտէ թէ ո՞ւմ պէտք է դարձնել գողցածը, այսինքն չը ճանաչեր տէրը կամ նորա ժառանգները, այն ժամանակ պարտաւոր է փոխադարձը հատուցանել Աստուծոյ, այսինքն բարերարութեան համար գործ դնել. "Ապա եթէ չիցէ ոք առն մերձաւոր ինչ հատուցանել նմա զյանցանաց նորա, և ընդ յանցանացն որ ինչ ընծայի Տեառն, քահանային եղիցի"։ Թուոց. Ե. 8։ Նմանապէս պէտք չ'է վատ ճանապարհաւ ստացած բանը մեզ մօտ պահել։ Երկրորդ՝ ընդհանուր պարտաւորութիւն է պահել և պահպանել մեր ընկերի սեպհականութիւնը, հեռացնելով վնասներէ, իւր օգուտը իմացնելով և կամ անձամբ օգնելով։

ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

«Մի սուտ վկայեր»։

Աջս պատուիրանը կ'արգելու վնասել ընկերին կամ հասարակութեանը, կը զգուշացնէ ճշմարտութեան դէմ չը վկայել դատաւորի առաջ, յանցաւորը չը պաշտպանել և անմեղը դատապարտել։ Ս. Գրոց մէջ սուտ վկայութեան քանի մի օրինակներ կան, ինչպէս են Ս. Ստեփանոսի նահատակութեան և Քրիստոսի չարչարանաց ժամանակի սուտ վկայքը։ "Իսկ քահանայապետքն և ամենայն ատեանն խնդրէին սուտ

վկայութիւն զՅիսուսէ, զի սպանցեն զնա, և ո՛չ գտանէին 'ի բազմաց սուտ վկայիցն մատուցելոց"։ Մատ. ԻԶ. 60։ Ով որ սուտ վկայութեամբ կ'արդարացնէ յանցաւորը, նա պատասխանատու է ամեն չարեաց, զոր հասարակութիւնը կը կրէ յանցաւորի անպատիժ մնալէն, որով կը շփոթուի ընկերականութեան կարգը, երբ անմեղը կը դատապարտուի և մեղաւորը կը պարծի։ Սուտ վկայքը առ ոտն կը կոխեն այն մեծ նպատակը, որուն կը կամի հասնիլ մարդկային արդարութիւնը։ Այս յանցանքը միշտ ծանր է, վասն զի կապուած է երդմնազանցութեան հետ։ Ամեն ժամանակ և ամեն ազգաց մէջ սուտ վկայքը միշտ անարժան համարուած են և պատժով դատապարտուած։ "Եւ քննեսցեն դատաւորքն ճշմարտութեամբ և ահա վկայ անիրաւ վկայեաց զանիրաւութիւն և եկաց հակառակ եղբօր իւրում, արասջիք նմա, որպէս խորհեցաւ չար առնել ընկերի իւրում և բարձջիք զչարն 'ի միջոյ ձերմէ"։ Օրին. ԺԹ. 18—19։ Սուտ վկայութիւնը, սովորական խօսակցութեան մէջ, Բամբասանք կ'անուանի, որ կը նշանակէ վնասակար բաներ խօսիլ ընկերի վրայ, կամ, առանց հիմնովին տեղեկանալու՝ կրկնել այլոց խօսածները և այսպէս ճշմարտութեան դէմ մեղանչելով՝ աներկիւղ տարածել ստութիւնը։

Թէեւ բամբասանքը չը պարունակեր իր մէջ երդմնազանցութիւն, բայց աւելի չար և վնասակար է, քան թէ սուտ վկայութիւնը, և ահա՛ պատճառները։ — Ա. Բամբասանքը անիրաւ և վնասակար է, որովհետեւ բամբասողը առանց յայտ յանդիման խօսելու՝ միշտ կը թաքչի և ծածկաբար կը յարձակի իւր ընկերի վրայ, որով բամբասեալը միջոց չ'ունենար իւր անձը և պատիւը պաշտպանելու և արդարանալու։ — Բ. Բամբասողը այս դաղտնի ճանապարհաւ անուանարկելով իւր ընկերը կը զրկէ պատիւէ, որ ամեն բանէ թանկագին է մարդոյ համար և պատուականագոյն քան զականս պատուականս։ Բամբասանքէն և անուանարկութենէն կարող են մեծ վնասներ հասնիլ մարդուն, և սորա համար է, որ Դաւիթ մարգարէն չար լեզուն կը նմանեցնէ սուր ածելւոյ. "Որպէս զածելի սուր՝ սրեաց զնենգութիւն, սիրեաց զչարութիւն քան զբարութիւն, զանօրէնութիւն, քան զխօսս արդարութեան"։

Սաղ. ԾԱ. 4։ “Այնպէս և լեզու փոքր ինչ անդամ է և մեծամեծս բարբառի, ահա՛ սակաւ ինչ հուր որպիսի անտառս հրդեհէ „։ Յակ. Գ. 5։ — Գ. Բամբասանքը այնպիսի անարդարութիւն է, որոյ փոխադարձը հատուցանելը դժուարին է և համարեա թէ անկարելի, որովհետեւ, թէ՛ շատ շուտ կը տարածուի և թէ՛ մարդիկ բամբասանքին աւելի կը հաւատան քան թէ բամբասանքէն յետոյ արդարանալուն։ — Դ. Բամբասանքը ինչ աղբիւրէ որ լինի, թէ՛ նախանձէ, թէ՛ ատելութենէ, թէ՛ չարութենէ և թէ՛ թեթեւամտութենէ, միշտ ատելի է և սատանայական գործ, վասն զի, Ս. Գրոց մէջ չար հոգուն տրուած սատանայ անունը կը նշանակէ ստախօս, բամբասող. “Դուք ’ի հօրէ սատանայէ էք, և զցանկութիւն հօրն ձերոյ կամիք առնել, զի նա մարդասպան էր ’ի սկզբաննէ և ’ի ճշմարտութեան ո՛չ եկաց, յորժամ խօսեսցի սուտ, յիւրոց անտի խօսի, զի սուտ է և հայր նորա „։ Յովհ. Ը. 44։ — Ե. Բամբասողը միշտ հասարակութեան ախտ համարուած է և օրինաց պատժոյն արժանի, ուստի և Ս. Գիրքը այնպիսի մեղաւորաց կարգը կը դնէ զբամբասողն, որոնք կարող չ’են Աստուծոյ արքայութիւնը ժառանգել։

Բամբասողը եթէ կամի չը զրկուիլ Աստուծոյ տեսութենէն, պարտաւոր է ջերմեռանդն զղջմամբ Աստուծոյ ողորմածութեանը դիմել Յիսուսի անուամբ, ճշմարիտը խոստովանիլ այն մարդկանց առջեւ, որոնք խաբուելով հաւատ ընծայած են նորա ստախօսութեանը և բամբասանացը, մերժել անմիտ հպարտութիւնը և խոնարհիլ ստուգութիւնը վկայելու, որ ամենեւին անպատուութիւն չ’է մարդոյ համար, այլ մեծ ամօթը ստախօսութիւնն է և բամբասանքը, որ ուրիշ բանով անհնարին է որ բնաջինջ լինի, եթէ ոչ ստութեան փոխարէն՝ ճշմարտութիւնը հրապարակաւ խոստովանելով, ինչպէս Քրիստոնէութեան առաջին դարերուն մէջ ապաշխարողը կը կանգնէր Եկեղեցւոյ մէջ և ժողովրդի առջեւ բարձր ձայնով կը զղջար իւր մեղքը, ինչպէս և այս հնաւանդ սովորութիւնը կամ հրապարակական զղջումը պահպանուած է մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ, որ է Մեղայն։

Երբ կը բամբասեն զմեզ, պարտինք ջանալ արդարացնել

զմեզ, բայց խաղաղ հոգւով և առանց նեղանալու, առանց փոխադարձաբար զմեզ բամբասողն բամբասելու և դատապարտելու. վասն զի, եթէ բամբասենք, աւելի տեղի կը տանք մեր մեղաւորութիւնը հաստատելու։ Պարտինք արդարացնել զմեզ առանց մեղանչելու սիրոյ և արդարութեան դէմ. պարտինք չը նկատել զմեզ բամբասողը, այլ բարձրացնել մեր հոգին առ Աստուած, որ երբեմն մեզ խոնարհեցնելու և սրբելու համար կը թոյլատրէ, որ չարիքներ հանդիպին մեզ, ինչպէս և Դաւիթ կը բամբասուէր Սեմէէն։ “Ահաւասիկ որդի իմ, որ ելեալ է յորովայնէ իմմէ, խնդրէ զանձն իմ, որչափ եւս որդին Եմենեայ. թոյլ տո՛ւք նմա անիծիցէ, զի Տէր ասաց նմա „։ Բ. Սամ. ԺԶ. 11։

Մեր անձը արդարացնելու համար պարտաւոր ենք մեր անմեղութեան գաղափարով մխիթարել զմեզ և միայն Աստուծոյն հաճոյանալը մեզ համար մեծ սփոփանք համարիլ, յուսալով, որ վաղ թէ անագան անշուշտ ճշմարտութիւնը կը յայտնուի. “Այլ ինձ և այս անարգանք են, եթէ ’ի ձէնջ դատեցայց, կամ բնաւ իսկ ’ի մարդկանէ, նաեւ զանձն իմ ոչ քննեմ, զի ոչինչ գիտեմ զանձին իմոյ, այլ ոչ եթէ այսու արդարանամ, զի որ քննէն զիս, Տէր է „։ Ա. Կորնթ. Դ. 3—4։ “Եւ արդ ահա՛ յերկինս է վկայ իմ և իրաւագէտն իմ ’ի բարձունս „։ Յովբ. ԺԶ. 19։ Երբ կը սպասենք մեր արդարանալուն՝ պարտաւոր ենք աւելի խոհեմ և արթուն լինիլ մեր գործոց մէջ և քննել մեր անձը, մի՛ գուցէ անպատուութեան կամ բամբասանաց առիթ տուած լինինք։ Երբէք թոյլատրուած չ’է մեզ չար խօսիլ մեր ընկերի վրայ, եթէ ճշմարիտ անդամ լինի մեր խօսածն։ Բայց եթէ ստիպողական հարկ կայ և դատաւորը կը պահանջէ, այն ժամանակ պարտաւոր ենք ճշմարտութիւնը յայտնել, որով կարելի է զգուշացնել կամ արգելուլ ընկերը չարութենէ։ Պարտինք նմանապէս մեծաւորին յայտնել իւր ստորադրելոյն պակասութիւնը, որպէս զի զգուշացնէ անկարգութենէ. պարտինք անմեղ դատապարտեալը պաշտպանել և փարատել ամեն կասկած և տարակուսանք, յայտնելով մէկուն և միւսին ընդունակութիւնը։ Վերջապէս, եթէ մէկը հարցնէ մեզմէն որ և իցէ մարդոյ բնաւորութիւնը,

եթէ կը ճանաչենք, պարտինք ճշմարիտը յայտնել, որպէս զի առ բարին դործ դրուի մեր յայտարարութիւնը։ Եթէ մենք առանց սոփեղական պատճառի, առանց ընկերական օգտի պահանջմանը, ընդդէմ արդարութեան և սիրոյ, կը յայտնենք մեր ընկերի պակասութիւնը, առաւել չարամտութեամբ քան թէ բարեմտութեամբ, այն ժամանակը մենք չարախօս կը լինինք։ Ուստի այսպիսի պարագաներէն խուսափելու համար, պարտաւոր ենք լաւ քննել՝ թէ արդեօք դովելի խոհեմութիւնն ու սիրոյ հոգին է որ զմեզ կը խօսեցնէ, թէ չարութեան հոգին։ Երբ խոհեմութիւնն ու սէրն են մեր խօսելու չարժառիթն, այն ժամանակ մենք կը յայտնենք մեր ընկերի պակասութիւնը՝ խղճալով և ղուշութեամբ ասելով ինչ որ կարեւոր է։ Իսկ եթէ չարախօսութիւնն է չարժառիթն, այն ժամանակ մենք չափազանց կրիւ և ներքին ուրախութեամբ կը խօսինք մեր ընկերի թերութեանց վրայ։

Սուրբ Գիրքը կը դատապարտէ չարախօսութիւնը. — Ա. Որ հակառակ է մարդասիրութեան և ներողութեան ոգւոյն, որով պարտաւոր էնք ներել և ծածկել յանցաւորի թերեւ պակասութիւնները։ — Բ. Կը քանդէ արդարութեան Օրէնքը, որովհետեւ չարախօսութիւնը սովորաբար միացած է աւելորդաբանութեան և սուտութեան հետ։ — Գ. Չարախօսութիւնը պատճառ է առելութեան, չիմաստութեան և խառնակութեան, թէ դերդաստանի մէջ և թէ ընկերականութեան։ Չարախօսութիւնը կ'արատաւորէ պատիւը, առաւել քան բամբասանքը, և կը դժուարացնէ յանցաւորի ուղղութեան ճանապարհը։ Վասն զի, յանցանքը ծածկուած ժամանակ աւելի դիւրութեամբ կ'ուղղուի, քան թէ հրապարակուած։ — Դ. Չարախօսութիւնը ծնունդ է առելութեան և թշնամութեան, որով ցած մարդիկ չը կարենալով բարձր մարդկանց մեծութեանը և լաւութեանը հասնիլ, միակ գէնք կ'ընտրեն վատահամբաւութիւնը։ Չարախօսութիւնը ծնունդ է բծախնդրութեան, որով վատ մարդիկ կ'ընտրելանան ուրիշ մէջ միշտ պակասութիւն փնտռել, և կ'ուրախանան վիրաւորելով և կրծելով այլոց անձնասրտութիւնը։ Չարախօսութիւնը ծնունդ է երբեմն թերեւսամտութեան, որով սակարամիտները, առանց մտադրութիւն դարձնելու իրենց խօսածներուն վրայ, առանց ճշտապահ հետեւանքները դուշակելու, մերթ իրենց հանճարը և մերթ իրենց սրամտութիւնը ցոյց տալու համար, կը չարախօսեն, զանազան դոյներով չարը նկարագրելով։ — Ե. Ս. Գիրքը կը դատապարտէ չարախօսն. "Մի բամբասէք զմիմեանս, եղբա՛րք, որ բամբասէ զեղբայր կամ դատէ զեղբայր իւր, զօրէնս բամբասէ և զօրէնս դատի, իսկ եթէ զօրէնս դատիցես, ոչ առնելի օրինացն ես, այլ դատաւոր" Յակ. Դ. 11։ Դաւիթ մարգարէն բարի մարդոյ բնաւորութիւնը, գործքը և առաքինած ունեցած յոյսը նկարագրելով՝ այսպէս կը խօսի. "Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով և չար ընկերի իւրում ո՛չ արար" Սաղ. ԺԴ. 3։ Պօղոս առաքեալն չարախօսութիւնը այն մեղքերու կարգը կը դնէ, որոնք կը զրկեն զնորդ արքայութենէն Աստուծոյ։ Ա. Կորնթ. Զ. 10։ Պետրոս առաքեալն նոյն իսկ մեր ներկայ կենաց օգտի և հանգստութեան համար կը պատուիրէ հեռանալ չարախօսութենէ. "Զի որ կամիցի զեղ կեանս սիրել և տեսանել զաւուրս բարութեան, լուեցուսցէ զլեզու իւր 'ի չարութենէ և շրթունք իւր մի՛ խօսեսցին զեղ նենգութիւն" Ա. Պետ. Գ. 10։

Չարախօսութիւնը աւելի դատապարտելի է մանաւանդ այն ժամանակ երբ կ'արատաւորուի այնպիսի անձանց պատիւը, որք աւելի յարգանաց արժանի էին, իրենց իշխանութեան մէջ, ինչպէս են դատաւորներ, եկեղեցականներ, դերդաստանի հայրեր և տանուտէրներ. "Զգաստացարո մի բամբասեսցես և զիշխան ժողովրդեան մի՛ հայհոյեսցես" Եկես. ԻԳ. 28։ Դատապարտելի է նմանապէս չարախօսել այնպիսի մարդկանց առջեւ, որոց բարեբարութիւնը և պաշտպանութիւնը կարեւոր է չարախօսուած մարդոյ համար։ Դատապարտելի է չարախօսել՝ շատախօս և թեթեւամիտ մարդկանց առջեւ, որք ընդունակ են չարութիւնը ընդունելու և վաղվաղակի տարածելու։ Եթէ կը վախնանք չարախօսութենէ զգուշանալ, պարտինք հեռանալ պարապորդութենէ, վայրապար և անպէտ խօսակցութենէ, և խօսելէն առաջ միշտ լաւ մտածել, վախչիլ չարադրդիռ և ստախօս մարդկիներէ, որոցմէ կարող ենք վարակուիլ։ Պարտինք մտածել մեր սեպհական պակասութիւնները, և ոչ ուրիշներունը։ Ինչ որ մեզի կը թուի ուրիշներու մէջ, կրնայ ըլլալ մեր երեւակայութեան պատրանք։ Ինչ որ մեզի կը թուի ուրիշներու մէջ, կրնայ ըլլալ մեր երեւակայութեան պատրանք։

սութեանց վրայ և ներողամտութեան ու մեծահոգութեան վրայ, որուն կարօտ ենք, միշտ յիշելով Փրկչի խօսքը, որ ինչ չափով չափենք, նոյն չափով կրնանանք. "Ձի որով չափով չափէք, չափեսցի ձեզ" = Մտ. Ը. 2= Դատիմ մարդարէն կըզդուշանայ և կը խոստանայ լեզուով չը մեղանչել իւր կենաց մէջ. "Ասացի թէ պահեցից զճանապարհս քո, զի մի մեղայց լեզուաւ իմով" = Սպ. ԼԹ. 1= Պարտինք զգուշանալ անմիտ դատողութենէ, կասկածաւոր և չարամիտ զգայողութենէ և վերջապէս պարտաւորութիւն հանդիսանալ մեզ համար՝ ներողութիւն խնդրելու այն մարդիկներէն, որոց դէմ չարախօսած ենք=

Չարախօսութենէ զերծ մնալու համար պարտաւոր ենք ունենալ — Ա. Սուրբ կեանք, համաձայն առաւուածային օրինաց. — Բ. Լինիլ աղաւաւսիրտ ու պարզասիրտ և ոչ նենգաւոր, չարախոհ և երկմիտ, լինիլ հեզ և պատուաւոր և մեր պարտաւորութիւնը կատարած ժամանակ՝ միշտ հեռանալ հըպարտ և արհամարհոտ հոգիէ, ասոնք զի անձերնիս յանգանքներ են այն օրինակ պակասութիւններուն= Իսկ մեզ վրայ չարախօսողներուն հետ ամենեւին պէտք չէ որ խնդամիտանանք և պատասխան լինինք, այլ պարտինք այլոց չարախօսութենէն օգուտ քաղել, ուղղելով մեր անձը, հաստատ խնամքով որ միշտ կարելի է ուղղուիլ, եթէ չերամեռանդութեամբ, հեզութեամբ և հաստատամտութեամբ որոշենք մեր պարտաւորութիւնը կատարել, որով կը մնայ մեր անցեալ թերութիւնները և եթէ մարդիկ մեզ չը ներեն, անշուշտ Աստուած կը ներէ=

Ինչերորդ պատուիրանը կ'արդելու նոյնպէս հեռուեալ մեղքերը. — Ա. Չար առաջարկութիւններ, որոց վրայ հիմնուելով և մեր եռանդը առիթ բռնելով՝ կը յայտնենք այն պիսի վատ բաներ, որ լսողներու միտքը կը պղտորեն և առելութիւնը կը վառեն այն անձանց դէմ, որոց հետ մինչեւ ցայն վայր խաղաղութեամբ կը կենային= "Ի բազում վայրից զուարճանայ հոգի, և ուր ոչ գոյ այր երկմիտ՝ դադարի կամ" = "Բանք աւտակասպասից կակուղք են, բայց արկանեն՝ ի շտեմարանս մարտի" = Առակ. Ջ. 20—22= — Բ. Ամենաւութեամբ դատելն, երբ առանց խոր քննելու, մէկ հաստատակ պնդելով հանդերձ կը վատաբանենք զմարդ իբրեւ կատարեալ չարագործ, կամ ծուռ կը մեկնենք մարդոյ գործը, որ բարի պատճառներ կունենայ, ինչպէս Երրայեցիք կը մեկնէին մեր Փրկչին գործերը, որ մեղաւորներու և մաքսաւորներու հետ կուտէր ու կը խմէր յաղագս ժողովրդեան ածելու համար= Շատ անիրաւ է այն օրինակ դատաստանը= Եթէ դատաւորները այս եղանակաւ վարուէին, շատ կը մեղանչէին արդարութեան և մարդասիրութեան դէմ, որովհետեւ սերը չար գործիք չունի. "Ոչ խորհի պչար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ատուդութիւն, յամենայնի տեւէ, յամենայնի հաւատայ" = Ա. Կորնթ. ԺԳ. 5= Աչքալուսի ջնջասկար դատողութիւնները կը դժուարանան մարդոյ սրտի մէջ անհաւատարմութենէ և թշնամութենէ, որք ի'տաւչնորդեն 'ի չարախօսութիւն և 'ի բամբասանս. "Մի դատէք, զի մի դատիցիք, զի որով դատաստանաւ դատէք, դատիցիք և որով չափով չափէք, չափիցի ձեզ" = Մտ. Է. 1—2= "Ձի անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ոչ առնէ ողորմութիւն, քանզի բարձրագոչ ելանէ ողորմութիւն առ դատաստանաւ" = Յակ. Բ. 12= — Գ. Նախատական և չար խօսքերը, արհամարհելը և ծաղրելը, որ ընդդէմ են ընկերական և միաբանական նպատակին, ունին ամօթալի չարժատիճներ և ջնջասկար հետեւանքներ= — Դ. Սուտ թիւնը, որով ընկերին ջնասելու համար կը նենգեն, կը խաբեն և այնպէս կը ձեւացնեն, որ ստախօս չեն, ինչպէս և շատ անգամ ձեւով կամ նշանով խօսակցութեան մէջ կը փոխեն խօսքի պարզ նշանակութիւնը, և կամ դաղտնի նշանները կը ծաղրեն ընկերականութեան որ և իցէ անդամը, խիստ ամօթալի են այս արարքները=

Ստախօսութիւնը կը հանդուրժ մեծ յանցանք — Ա. վասն զի հակառակ է այն վեհ նպատակին, որուն համար Աստուած մեզ խօսելու ընդունակութիւն, մեր միտքը հաղորդելու կարողութիւն և մեր պիտոյքը այլոց գիտցնելու միջոց= — Բ. Հակառակ է արդարութեան և մարդասիրութեան, որով պարտինք վարուիլ մեր ընկերոջ հետ= Ստախօսութեան մեծ մասն խաբեբայութիւն է, որով կը վիրաւորենք մեր ընկերի սիրտը, պատիւը և բարի կարծիքը= Այս խաբեբայութիւնքը աւելի ծանր են մանաւանդ այն ժամանակ,

երբ կը գործուին բարեկամութեան, ջերմեռանդութեան և բարեսրտութեան դիմակաւ, որով կը յարձակին ընկերի վրայ և կը վնասեն։ Ամեն խաբեբայութիւն առ հասարակ վնաս կը պատճառէ հասարակութեան, սերմանելով երկիւղ և անհաւատարմութիւն։ Հասարակութիւնը կարող չ'է երկարատեւ և հաստատ մնալ, եթէ անդամոց մէջ թագաւորած չ'է ճշմարտութիւն և հաւատարմութիւն։ — Գ. Ստախօսութիւնը գուշակ և յայտարար է ստախօսի ներքին և հոգեկան վատութեանը, վասն զի սուտ խօսողներու նպատակն է ծածկել որ և իցէ չարութիւն, զոր կամ գործած են և կամ դիտաւորութիւն ունին գործելու, չը մտաբերելով բնաւ, որ յանցանքը աւելի աններելի կը դառնայ և կը բազմապատկի։ Ստախօսութիւնը անարգ միջոց դառնալով՝ աւելի համարձակութիւն կը տայ մարդուն մեղանչելու, յուսալով, որ կարող է ծածկել իւր յանցանքը։ Չարասիրտ և ստախօս մարդը ամեն չարութեան կը հասնի, որոյ զարհուրելի օրինակները կը տեսնենք Յովսէփ դեղեցկի պատմութեան մէջ, զոր եղբայրները հորի մէջ կը ձգեն և ստութեամբ ջանահնար կը լինին ծածկել իրենց յանցանքը. "Եկայք սպանցուք զնա և ընկեսցուք 'ի մի 'ի գբոց աստի և ասասցուք գազան չար եկեր զնա և տեսցուք զի՞նչ լինիցին երազքն նորա"։ Ծննդ. ԼԷ. 20։ — Դ. Սուտ խօսելու վնասն այս է, որ մարդիկ շուտով կ'ընտելանան և այս վատ սովորութիւնը ուղղելն խիստ դժուարին կը լինի։ — Ե. Ստախօսութիւնը վատ հետեւանք ունի նոյն իսկ ստախօսի համար, վասն զի միշտ անպատիւ է և երկիւղի տակ, որ մի՛ գուցէ մարդիկ իմանան իւր ստութիւնը և ճշմարտութիւնը վաղ թէ՛ անագան յայտնուի։ Ստախօսը կը կորուսանէ իւր յարգն ու հաւատարմութիւնը հասարակութեան մէջ և մարդիկ կը զգուշանան այնուհետեւ գործ բռնել նորա հետ՝ նաեւ ճշմարիտ խօսած ժամանակ։ Ստախօսը կը չարչարուի, որովհետեւ մարդ չը հաւատար իւր խօսքին և ապագային մէջ կը պատժուի։ Ստախօսը Ս. Գրոց խօսքով չարագործաց և աւազակաց կարգը դասուած է. "Ծուլացն և անհաւատից, սպանողաց և պոռնկաց և կախարդաց և կռապաշտից և դեղատուաց և ամենայն սիրոց և ամբարշտաց, որոց բաժինն իւրեանց

'ի լճէն այրեցելոյ հրով և ծծմբով որ 'ի մահն երկրորդ"։ Յայտ. ԻԱ. 8։ — Զ. Ս. Գիրքը յայտնապէս կ'արգելու ստախօսութիւնը և կը պատուիրէ հաւատարմութիւն, ուղղութիւն սրտի և պարզութիւն։ Ս. Գիրքը կը ներկայացնէ մեզ ստութիւնը, որպէս գործ սատանայի, որ հայր ստութեան կ'անուանի. "Դուք 'ի հօրէ սատանայէ էք և զցանկութիւն հօրն ձերոյ կամիք առնել"։ Յով. Ը. 44։ "Պիղծ են առաջի Տեառն շրթունք սուտք, իսկ որ առնէ զհաւատարիմ և ընդունելի է նմա"։ Առակ. ԺԲ. 22։ "Վասն որոյ 'ի բաց ընկեցէք զստութիւն, խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, զի միմեանց անդամք եմք"։ Եփես. Դ. 25։ Դաւիթ մարգարէն այսպէս կը նկարագրէ ճշմարիտ և աստուածահաճոյ մարդը. "Որ գնայ ամբիծ, գործէ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն 'ի սրտի իւրում"։ Սաղ. ԺԴ. 2։ Իսկ Քրիստոս, Նաթանայէլը գովելով՝ կ'ասէ. "Ահա՛ իսրայէլացի, յորում նենգութիւն ոչ գոյ"։ Յով. Ա. 47։ Եւ պետրոս, օրինակ տալով մեզ զյիսուս, կ'ասէ. "Եւ ոչ գտաւ նենգութիւն 'ի բերան նորա"։ Ա. Պետ. Բ. 22։ Չափազանցօրէն խօսիլն եւս վնասակար է և ստախօսութիւն կը համարուի հետեւեալ պայմաններով — Ա. Որ ճշմարտութեան սէրը պէտք է որ հեռացնէ զմեզ առաւելախօսութենէ։ — Բ. Անհնարին է հաւատալ, որ ստախօսութիւնը չը վնասէ ընկերին։ — Գ. Դըժուարին է չը հաւատալ ինչ որ կը լսէ մարդ, և չը մտածել, որ խօսողը պարտաւորուած է ճշմարտութիւն խօսիլ, ըստ որում ճշմարտութիւնը մեծ նշանակութիւն ունի մարդոյ համար։ — Դ. Թեթեւ կարծուած ստութիւնները շուտով առաջ կը բերեն մեծամեծ ստութիւններ և ունակացած ստախօսութիւնը կը զօրանայ և կը դառնայ գործի մարդկային շահասիրութեան և չարութեան։

Եթէ ստախօսութիւնը ընկերի օգտին համար է, որչափ որ ներելի կը կարծուի, դարձեալ պէտք է իմանալ, որ ո՛չ մի պատահման մէջ թոյլ տրուած չ'է ստութիւնը, և այս մասին Ս. Գրոց մէջ ամենեւին բացառութիւն չը կայ։ Որչափ որ ստիպողական կարեւորութեան, կամ մեծ չարեաց առաջն առնելու համար և կամ առանց մտածութեան ճշմարտութիւնը

ծածկելը ներողամտութեան քան թէ խիստ դատաստանի է արժանի, այնու ամենայնիւ ընդհանուր կանոնն այս է, որ մարդ կամ պէտք է որ լռէ և կամ ճշմարտութիւնը վկայէ, թէեւ ցած և նենդ լռութիւնն իսկ տեսակ մի դաւաճանութիւն է ճշմարտութեան դէմ։ Ստախօսութեան կերպարանք ունի երեսպաշտութիւնը կամ մարդելուզութիւնը։

Երեսպաշտութիւնն է գովել ինչ որ արժանի չ'է գովութեան, գովել արժանաւորութենէն աւելի, գովել պակասութիւնները և չարութիւնները ներելով և ծածկելով։ Երեսպաշտութիւնը նոյնպէս յանցանք է. — Ա. Որովհետեւ կապուած է խաբեբայութեան և ստութեան հետ. — Բ. Որովհետեւ երեսպաշտութիւնը սովորաբար անձնական օգտի և շահուց համար կը լինի. — Գ. Որովհետեւ երեսպաշտութեամբ հպարտութեան հոգի կը զարթուցանենք մեր ընկերի մէջ և կ'արդելունք իւր թերութիւնները ճանաչելու և ուղղելու. "Որ պատրաստէ յերեսս բարեկամի իւրոյ զորոգայթ, շուրջ արկանէ զայն զոտիւք իւրովք"։ "Սատակէ Տէր զամենայն շրթունս նենդաւորս և զլեզուս մեծաբանս"։ Առակ. ԻԹ. 5։ Սաղ. ԺԱ. 4։ Ջերմեռանդութիւնը և պարզամտութիւնը չեն պահանջեր, որ ասենք մենք ամեն բան, ինչ որ կը մտածենք և դիտենք, վասն զի այնպիսի դիպուածներ կան, ուր խոհեմութիւնը, պարկեշտութիւնը և մարդասիրութիւնը կը պահանջեն լռել, բայց մի եւ նոյն ժամանակ այս առաքինութիւններն եւս կը պահանջուին մեզմէն. — Ա. Հաղորդել մեր ընկերին այն բանը՝ ինչ որ միայն իրեն կը վերաբերի և կարեւոր է իմանալու. — Բ. Դիւրութեամբ յայտնել մեր սխալմունքը. — Գ. Սիրով յանդիմանել մեր ընկերը. — Դ. Ունենալ բաց և մաքուր սիրտ, որով կ'ապացուցանենք որ մենք կը սիրենք մեզ հետ կենակցողները և պարզութեամբ կ'երեւինք նոցա առջեւ։ Այս գեղեցիկ բնաւորութիւնը մեզ ճշմարիտ Աստուծոյն կը նմանեցնէ. վասն զի պարզութիւնը նշան է հոգւոյ վսեմութեան, որով մարդ կը ջանայ զինքն ուղղել և կատարելագործել, միայն բարութիւն թողլով իւր մէջ, որով և կը գտնէ հաւատարմութիւն, համբերութիւն, լինելով խաղաղ և վայելելով մեծ հանդըստութիւն և անդորրութիւն հոգւոյ։

Մարդ պարտաւոր է զգաստ լինիլ խօսակցութեան մէջ, վասն զի շատախօսութիւնը պատճառ և աղբիւր է բազմաթիւ չարեաց. "Շատախօս լինելով ո՛չ զերծցիս 'ի մեղաց, եթէ խընայես 'ի շրթունս քո, իմաստուն լինիս"։ Առակ. Ժ. 19։ Շատախօսութիւնը կը յոդնեցնէ և կը զզուեցնէ ունկնդիրը։ Շատախօսը ինքնին կը հաստատէ որ իւր միտքը ունայն է և թեթեւ և դժուարին է իրեն հետ կապակցութիւն ունենալ։ Շատախօսին անհնարին է հաւատալ և վստահիլ, մինչդեռ լռող անմիտը առաւել իմաստուն համարուած է։ "Զանմիտն հարցին՝ թէ իմաստութիւն իցէ՞ ինչ, և իմաստութիւն համարիցի՞. պապանձեցաւ եւ համարեցաւ թէ իմաստուն իցէ"։ Առակ. ԺԷ. 28։ Շատախօսութիւնը շատ կը տգեղացնէ մանաւանդ կանայքը, զրկելով պարկեշտութենէ, զգաստութենէ և խոհեմութենէ, որք վայելուչ զարդ են կանանց։ Վերջապէս, շատախօսութիւնը վնասակար է, ինչպէս հոգւոյ, նոյնպէս և մարմնոյ գեղեցկութեանը, կը զրկէ երիտասարդները իրենց անձը զարդացնելու և սննդելու ամենահաստատ միջոցէն, որ կը կայանայ սակաւ խօսելու, շատ լսելու և ամեն բան մտադրութեամբ նկատելու մէջ։ Ս. Գիրքը կը զգաստացնէ և կը պատուիրէ սակաւ խօսիլ, վասն զի մենք պատասխանատու ենք մեր ամեն խօսքերուն։ "Բայց ասեմ ձեզ, ընդ ամենայն դատարկ բանից, զոր խօսիցին մարդիկ, տացեն համարս յաւուրն դատաստանի"։ Մատ. ԺԲ. 36։ Յակոբոս առաքեալն կ'ասէ թէ՝ լեզուն կարող է շատ բարիք և շատ չարիք գործել և այս տեղէն կը հետեւցնէ, որ կատարեալ մարդն նա է, որ խօսքով չը մեղանչեր և կը սանձէ իւր մարմինը. "Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ, նա է մարդ կատարեալ, որ կարող է սանձահարել զամենայն մարմին իւր"։ Յակ. Գ. 26։

Սուրբ Գիրքը իններորդ պատուիրանով արգիլած յանցանքներուն դէմ կը պատուիրէ գեղեցիկ պարտաւորութիւններ, որ է պահել և պաշտպանել ընկերի բարի անունը, ընդդիմանալ բամբասողներուն և չարախօսներուն և ո՛չ յօժարութեամբ լսել և կրկնել նոցա ասածները. "Հողմ հիւսիսոյ զամպս յարուցանէ և երեսք լիրբք՝ զլեզու գրգռեն"։ Առակ. ԻԸ. 23։ Կը պատուիրէ լաւ խօսիլ ընկերի վրայ, եթէ արդարեւ գի-

տենք որ լաւ յատկութիւններ ունի։ Կը պատուիրէ խրատ տալ ընկերին զինքը արդարացնելու՝ երբ յանցաւոր կարծուած է այլոց առջեւ։ Կը պատուիրէ միշտ սիրել ճշմարտութիւն, խօսիլ և խոստովանիլ ճշմարտութիւնը ջերմեռանդութեամբ թէ դատաւորի առջեւ և թէ այլ դիպուածոց մէջ։ Կը պատուիրէ ներողամտութեամբ դատել մեր ընկերը և միշտ խօսիլ և առնել այն, ինչ որ կը ցանկայինք, որ այլք մեզ վրայ խօսէին և մեզ համար գործէին։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

«Մի՛ ցանկանար»։

Աստուած այս պատուիրանով ցանկութիւնը արգիլելով՝ կը յայտնէ թէ մինչեւ ո՞ր աստիճան պարտաւոր ենք մեր սիրտը հեռացնել մեր ընկերի ունեցածներէն։ Կը յայտնէ, որ բաւական չ'է միայն հեռանալ չարագործութենէ, չը վնասել ընկերին, չը չարախօսել ընկերի վրայ, զոր միւս պատուիրանները կ'արգելուն, այլ պարտաւոր ենք չը ցանկալ մեր ընկերի ունեցածին և մեր մտաց մէջ անգամ չար խորհուրդ չը յղանալ նորա վնասելու համար։ Աստուած այս պատուիրանով կը յայտնէ, թէ մինչեւ ո՞ր աստիճան կատարելութիւն ունի իւր օրէնքը, որ ո՛չ միայն մեր կենաց և արտաքին գործոց ուղղութեան կանոնն է, այլեւ մեր ներքին մարդոյն, մեր սրտի զգացման, մեր կամաց շարժման և մեր մտաց խորհրդեան, որով և կը տարբերի մարդկային օրէնքներէն, որոնք միայն մեր արտաքին գործքերուն կը վերաբերին և այն իրողութեանցը, զոր մարդիկ կարող են տեսնել և իմանալ, առանց սրտի զգացողութեանը ուղղութիւն տալու։ Աստուած՝ որ մեր հոգին կը ճանաչէ, նա ինքն միայն կարող է դատել մեր հո-

գին և ուղղել։ "Ամենայն պահպանութեամբ պահեա՛ զսիրտ քո, զի 'ի նոցանէ են ելք կենաց"։ Առակ. Դ. 23։ Ցասներորդ պատուիրանի վսեմութիւնը աւելի պարզ կ'երեւի Աւետարանի մէջ, որ կ'ոգեւորէ զմեզ սուրբ և հաստատ առաքինութեամբ, կը խոստանայ երկնից արքայութիւնը այն մարդկանցը, որք սուրբ են սրտիւ. "Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն"։ Մատ. Ե. 8։ Միայն ընկերի ունեցածներուն ցանկանալն չէ, որ արգիլուած է, այլ արգիլուած է ամեն ցանկութիւն և ամեն մտածութիւն, որոնք հակառակ են Աստուծոյ որ եւ իցէ պատուիրանին։ Վասն զի, Աստուած ճանաչելով մեր սիրտը և միտքը՝ կը պահանջէ մեզմէն հոգւոյ ներքին հնազանդութիւն, այսինքն մեր կամքը համաձայնեցնել իւր կամաց հետ, մեր սիրտը իւր սրբութեան հետ և մեր միտքը իւր իմաստութեան հետ։ Հետեւապէս, երբ մենք տեղի կը տանք, որ չար ցանկութիւններ տիրեն մեր սրտին վրայ և կը հաւանինք ու կ'ունականանք նոյն ցանկութեանց հետ, առ ոտն կը կոխենք Աստուծոյ օրէնքը և կը լինինք աղբիւր չարութեան։ Այս ընդհանուր ցանկութեանց վրայ խիստ բացայայտ կերպով կը խօսի Յակոբոս առաքեալն. "Ապա այնուհետեւ ցանկութիւն յղացեալ զմեզս ծնանին և մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին"։ Յակ. Ա. 15։ Մեր Փրկիչը կ'ասէ. "Զի 'ի սրտէ ելանեն խորհուրդք չարք"։ Մատ. ԺԵ. 19։ Ցասներորդ պատուիրանին մէջ արգիլուած ցանկութիւնն՝ ընկերի ունեցածներուն անիրաւօրէն ցանկանալն է։ Ընկերի ունեցածին ցանկանալն եթէ յանցանք համարուած է, պատճառն հետեւեալներն են. — Ա. Երբ մեր ընկերը լիովին իրաւունք չ'ունի տալ մեզ՝ ինչ որ ինքն ունի։ — Բ. Երբ մեր ընկերը կամք չունի, որ իւր ունեցածը ձեռքէն խլուի կամ յափշտակուի։ — Գ. Երբ կարող չենք օրինաւոր ճանապարհաւ ձեռք բերել։ Ահա՛ այս պատճառներով մեր ընկերի ունեցածին ցանկանալն անարդարութիւն է և յանցանք։

Ընկերի ունեցածին ցանկալն կարծածէն աւելի յանցանք է. — Ա. Հակառակ է բարեպաշտութեան և խոնարհութեան, զոր պարտինք ունենալ առ նախախնամութիւնն. Հակառակ է իրաւանց և տրտունջներ կը բարձրացնէ Աստուծոյ դէմ. Հա-

կառակ է երախտագիտութեան և կը թուլացնէ ու կ ոչընչացնէ շնորհակալութեան ոգին, զոր պարտինք ունենալ առ Աստուած մեր ընդունած բարութեանց համար։ — Բ. Հակառակ է մարդասիրութեան, որ կը պահանջէ ուրախութեամբ սրտի նայիլ մեր ընկերի բախտաւորութեան վրայ, մասնակցիլ նորա երջանկութեանը, ուրախանալ նորա ուրախութեամբ։ — Գ. Հակառակ է արդարութեան, որ կ'արգելու ցանկալ ամեն բանի, ինչ որ կարող չենք օրինաւոր ճանապարհաւ ըստանալ, կ'արգելու ամեն մտածութիւն, որով կը ձգտինք մեր ընկերի ունեցածը մեզ իւրացնել։ — Դ. Հակառակ է հասարակաց երջանկութեան, վասն զի պատճառ կը լինի մեծամեծ անկարգութեանց և կը ծնանի աղմուկ, կռիւ, շփոթութիւն և ամեն տեսակ անիրաւութիւն։ "Ուստի՞ պատերազմունք և ուստի՞ կռիւք 'ի ձեզ, ո՛չ յայսպիսի ցանկութեանց ձերոց, որ զօրացեալ են յանդամս ձեր, ցանկայք և ոչ ունիք, սպանանէք և նախանձիք և ո՛չ կարէք հասանիլ, պատերազմիք, կռուիք և ո՛չ ունիք, վասն զի ո՛չ խնդրէք„։ Յակ. Դ. 1—3։ Ընկերի ունեցածին ցանկալու զարհուրելի օրինակը կը տեսնենք Դաւիթ մարգարէի արարմանց մէջ, որ սպանել կը տայ Ուրիայ Քետացին, նորա կինը յափշտակելու համար և վերջը կըստիպուի դառն արտասուքներով և հեծեծանքներով իր յանցանքը ապաշխարել։

Զար ցանկութեան հետ կապուած է երկու կիրք — ոխ և նախանձ, որք կը նեղեն զմարդ, երբ կը տեսնէ այլոց արտօնութիւնը, որմէ ինքը զրկուած է։ Նա կ'ուրախանայ այլոց հանդիպած վնասու վրայ, և այս կիրքն է, որով խոպառ բընաջինջ կը լինի սէրը։ Այս կիրքն է, որ կ'ընտելացնէ զմեզ ամեն չարագործութեան։ Այս կրքով Կայէն կը սպանանէ իւր արդար և հարազատ եղբայրն Աբէլ։ Սոյն կրքով Յակոբի որդիքը կը վաճառեն իրենց անմեղ եղբայրն Յովսէփ և Սաւուղ կը զինի Դաւթին դէմ։ Այս կիրքն է որ անմեղ Դանիէլը առիւծներու գուբը կը ձգէ և մեր փրկիչը 'ի խաչ կը հանէ, և այլն։ Եթէ նախանձոտը ամեն ժամանակ այս տեսակ չարիք չը գործեր, պատճառն այն է, որ կա՛մ կարողութիւն չունի և կամ համարձակութիւն։ Սակայն նախանձը միշտ կը մաշէ նա-

խանձոտի սիրտը և կը կրծէ նորա հոգեկան կենդանութիւնը։ Նախանձոտը կ'ապստամբի նոյն իսկ մեր պարգեւատու Արարչին դէմ. "Եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմս առնել զինչ և կամիմ, կամ թէ ակն քո չար է, զի ես առատս եմ„։ Մատ. Ժ. 15։ Նա նեղութեամբ և դառնութեամբ կը լցուցանէ նախանձոտի սիրտը։ Նա է, Սողոմոնի ասածին պէս, ցեց ոսկերաց։ Առակ. ԺԴ. 30։ Նախանձն ամօթալի է ամեն կերպով, վասն զի չունի ոչ լաւութիւն իւր առջեւ և ո՛չ ձգտողութիւն առ ինքն։ Նա միայն չարութիւն կը խնդրէ և չարութիւն կը գտնէ և սատանայական է բոլորովին, և այս սատանայական նախանձով էր, որ մահն աշխարհ մտաւ։ Վերջապէս նախանձն է այնպիսի մեծ յանցանք, որ խիստ մեծ դժուարութեամբ կ'ուղղուի։ Վասն զի, շատ մարդիկ նախանձը կամ լոկ թուլութիւն կը համարին, իբր թէ հետեւանք չունի, կա՛մ չեն խոստովանիր իբրեւ պակասութիւն և կա՛մ չեն կարողանար սանձել. "Մի՛ լիցուք սնապարծք, միմեանց ձայն տալոյ և ընդ միմեանս նախանձելոյ„։ Գաղ. Ե. 26։ Նախանձոտը կը նեղի և կը տագնապի նաեւ այն ժամանակ, երբ կը տեսնէ որ այլք եւս ունին և կը վայելեն իր ունեցած արտօնութիւնը։ Այսպէս կը նախանձէին Եբրայեցիք, երբ կը տեսնէին որ Աստուած յայտնուած է հեթանոսներուն և Աւետարանը կը քարոզուի նոցա մէջ։ Նախանձը հակառակ է սիրոյ և հակառակ է արդարութեան. բայց մարդասէրը միշտ կը հետեւի Մովսէս մարդարէի օրինակին, որ կը փափաքէր որ բոլոր ազգերը և ժողովուրդները մարգարէ լինին. "Եւ ո՞ տայր զամենայն ժողովուրդս Տեառն մարգարէս„։ Թուոց. ԺԱ. 28—29։ Նախանձու աղբիւրն է հըպարտութիւնը և չափազանց անձնասիրութիւնը, որ կը թուլացնէ և երբեմն խոպառ կը խեղդէ բնական զգացողութիւնները և կ'առաջնորդէ դէպի մեծամեծ յանցանքներ։ Ո՞վ կարող է դիմադրել նախանձին, կ'ասէ Սողոմոն իմաստունը։ "Նախանձ և ոչ իւիք ժուժէ կեալ„։ Առակ. ԻԷ. 4։

Տասներորդ պատուիրանով արգիլուած նախանձու կիրքը մեզմէն հեռացնելու համար՝ պարտաւոր ենք. — Ա. Արթուն լինիլ որ չար ցանկութիւններ չը յղանան մեր սրտի մէջ, իսկ եթէ յղացած են, ջանալ հեռացնել և մեր սիրտը հաստատուն

և բարի բաղձանքներով լցնելով՝ մեր կամքը միացնել Աստուծոյ կամաց հետ։ — Բ. Հեռանալ ամեն բանէ, ինչ որ կարող է զարթուցանել կամ զօրացնել մեր մէջ չար ցանկութիւն։ Գ. Քրիստոնէական աչքով նայիլ աշխարհիս ամեն արտօնութեանց և վայելչութեանց վրայ և ջանալ բարձրացնել մեր հոգին դէպի լաւագոյն, հոգեւոր և անմահ բարութիւնը։ — Դ. Հանապազ աղօթել առ Աստուած, որ զերծ պահէ զմեզ ամեն չար և ապօրինի ցանկութիւններէ, կրկնելով Դաւիթ մարգարէին հետ. "Խոնարհեցս՛ զսիրտ իմ 'ի վկայութիւնս քո և մի՛ յագահութիւն"։ "Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս, Աստուած, և զհոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի 'իմում"։ Սաղ. ՃԺԸ. 36. Ծ. 12։

Տասներորդ պատուիրանը կը պարտաւորէ զմեզ, ո՛չ միայն չը ցանկալ և չը նախանձիլ մեր ընկերի ունեցածին վրայ, այլ ընդ հակառակն խնդակցիլ նորա հետ և փափաքիլ նորա երջանկութեանը։ Կը պարտաւորէ գոհ լինիլ Աստուծմէ մեզ պարգեւուած տուրքով, առանց չար աչքով նայելու այլոց ունեցածին, համոզուելով, որ Նախախնամութիւնը մեզմէն աւելի լաւ գիտէ թէ՛ ի՛նչ է մեզ պատշաճ և վայելուչ։ Վերջապէս կը պարտաւորէ մեր ցանկութիւնը ամփոփել աւելի գովելի, օգտակար և արդար բաներու մէջ և մեր վիճակը բարւոքել ազնիւ և օրինաւոր ճանապարհաւ։

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՕՐԻՆԱՑ

Այս երկու պատուիրանքը — Սէր առ Աստուած և Սէր առ ընկերն — կ'անուանին Համառօտութիւն Օրինաց։ Այս պատուիրանները տրուած էին Տասնաբանեայ պատգամներէն առաջ, որոնք կը յիշուին Օրինաց և Ղեւտացւոց Գրքերուն մէջ. "Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ և յամենայն զօրութենէ քումմէ և յամենայն

մտաց քոց"։ "Եւ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո"։ Օրին. Զ. 5։ Ղեւտ. ԺԹ. 18։ Այս երկու պատուիրանները բարոյական օրինաց գլխաւոր մասը կը կազմեն, զորս և մեր Փրկիչը անբաժան կերպով իրարու հետ միացուց. վասն զի ունին մի եւ նոյն նպատակ։ Երբ Եբրայեցի օրինականը հարցուց Յիսուսին։ "Վարդապե՛տ, ո՞ր պատուիրանն է մեծ յօրէնս" Յիսուս պատասխանեց. "Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ և յամենայն զօրութենէ քումմէ և յամենայն մտաց քոց. այս է մեծ և առաջին պատուիրան. երկրորդ նման սմին սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո, յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան"։ Մատ. ԻԲ. 36—38։ Պօղոս առաքեալն իւր քարոզութեանը նպատակ կ'անուանէ՝ սէրն առ Աստուած և սէր առ մարդ. "Քանզի գլուխ պատուիրանին սէր է"։ Ա. Տիմ. Ա. 5։ "Լրումն օրինաց սէր է"։ Հռով. ԺԳ. 10։ Նա է խաղաղութեան ամենագլխաւոր կապն. "Ի վերայ այսր ամենայնի զսէրն, որ է զօդ կատարման"։ Կող. ԺԳ. 14։ Մեր Փրկչի աւելցուցած այս խօսքերը — Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան — կը նշանակեն, որ այս պատուիրանաց պահպանութիւնը և կատարումն կը տան ճաշակ և քաղցրութիւն բարոյական Օրինաց։ Վասն զի, ով որ ոգեւորուած է սիրով, նա կը պարտաւորի լիովին տեղեկանալ բովանդակ բարոյականութեան, պատճառն որ, սէր ունենալով՝ նորա սիրտն արդէն լցուած է բարոյականութեամբ, ինչպէս և խիստ դեղեցիկ կ'ասէ Օգոստինոս. "Սիրեա՛ զԱստուած և արա՛ զինչ և կամիս"։ Վասն զի, սիրելն զԱստուած աղբիւր է ամեն առաքինութեան և ինչ որ Դաւիթ մարգարէն երկիւղածներուն վրայ կ'ասէ, նոյնը կարող ենք ասել աստուածասէրներու վրայ. "Զօրութիւն է Տէր երկիւղածաց իւրոց և զկտակարանս իւր ուսուցանէ նոցա"։ Սաղ. ԻԴ. 14։ Այս օրինաց համառօտութեան մէջ կը պարունակին նաեւ առ մեր անձն ունեցած պարտաւորութիւնները, թէպէտեւ այս պարտուց վրայ յայտնապէս խօսուած չ'է։ Որովհետեւ սիրելով զԱստուած յամենայն սրտէ և զընկերն յամենայն անձնէ՝ կը պարտաւորինք ընդ նմին չը ցանկալ աշխարհի ունայնութեանը

և վայելչասիրութեանը, չընծայել մեր սիրտը սնոտեաց, չ'որոնել նոցա մէջ երջանկութիւն և չը յուսալ կատարեալ մխիթարութեան, այլ պատրաստ լինիլ ամենայն ինչ զոհել 'ի սէր Աստուծոյ և համբերութեամբ տանիլ ամեն զրկանաց։

Փրկիչը պատուիրելով մեզ սիրել զԱստուած յամենայն սրտէ և զընկերն յամենայն անձնէ՝ կ'արգելու բաժանել մեր սիրտը Աստուծմէ և նուիրել ուրիշ առարկաներու, որոնք հակառակ են Աստուծոյ։ Մենք կարող ենք սիրել ամեն բան Աստուծով, Աստուծոյ մէջ և Աստուծոյ համար։ Այս մասին է, որ կ'ասէ Յովհաննէս առաքեալն. "Մի՛ սիրէք զաշխարհ և մի՛ որ ինչ յաշխարհի է„։ Ա. Յովհ. Բ. 15։ Յիսուս կը պատուիրէ սիրել զընկերն, ո՛չ թէ Աստուծոյ պէս, այլ մեր անձի պէս։ Կը պատուիրէ մեր սիրոյն արժանացած արարածները սիրել ծայրագոյն Էակի ամենամեծ սիրոյն համար։ Յիսուս կ'ուսուցանէ մեզ չ'որոնել որ եւ իցէ արարածի մէջ՝ հանգըստութիւն և երջանկութիւն, որ միայն Աստուծոյ մէջ կը գըտնուի։ Կ'ուսուցանէ սիրել մեր ընկերը, աշխատելով նորա երջանկութեան համար, ինչպէս որ կ'աշխատինք մեր անձնականին համար։

ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ ՄԱՐԴՈՅ

ԱՌ ԱՆՁՆ

Մարդոց առ իւր անձն ունեցած պարտաւորութիւնները այս են. — Ա. Պահպանել իւր անձը, կեանքը, զօրութիւնը և առողջութիւնը, խնամ տանելով ինչպէս մարմնոյն, նոյնպէս և հոգւոյն, չը մոռանալ, որ եթէ կոչուի մարդ, պարտաւոր է զոհել ինչպէս առողջութիւնը, նոյնպէս և կեանքը, չը թոյլատրել որ իւր մարմնոյ խնամքը մինչեւ փափկասիրութեան հասնի և ինքը անձնատուր լինի միայն մարմնոյ

յօժարութիւնը կատարել և մարմնական ցանկութեան մէջ խորասուզիլ։ Պէտք է տիրել մարմնոյ վրայ և խստիւ վարուիլ, որպէս զի մարմինը հնազանդի և հոգին իշխէ, նիւթը խոնարհի և բարոյականութիւնը թագաւորէ, որով և մարդ կարենայ մարմինը իբրեւ գործիք հոգւոյ բանեցնել։ "Այլ ես իսկ այնպէս ընթանամ, ո՛չ որպէս յաներեւոյթս, այնպէս մրցիմ, ո՛չ թէ զհողմս ինչ կոծելով, այլ ճնշեմ զմարմինս իմ և հնազանդեցուցանեմ, զի գուցէ որ այլոցն քարոզեցի՝ ես անպիտան գտանիցիմ„։ Ա. Կորնթ. Թ. 26—27։ — Բ. Մարդ պարտական է բանեցնել և կատարելագործել իւր հոգւոյ ընդունակութիւնները, որ, առաւել լինելով քան զմարմին, կը պահանջէ մեծ ուշադրութիւն և հոգացողութիւն։ Մարդ պարտական է կատարելագործել իւր միտքը, ունականալով բարի մտածութեան, բարի դատողութեան և իւր դատողութիւնը համաձայնեցնելով աւետարանական լուսոյն, որպէս զի կարենայ ճանաչել ամենէն կարեւոր ճշմարտութիւնները և չը ջանալ լուծել այն խորհուրդները, որոնք մարդկային մտքէն բարձր են։ Պարտական է հեռանալ այն մոլորութիւններէն, որոնք կը յառաջանան վատ և թիւր հասկացողութենէ։ Պարտական է կատարելագործել իւր կամքը, խնդրելով միշտ բարին, արդարն և կատարեալն, և այսպէս բարձրանալ և միանալ Աստուծոյ հետ։ Որովհետեւ, երբ ճշմարտութեան ճանաչումն և առաքինութեան սէրն իրարու հետ կը միանան, այս միութեան մէջ կը բովանդակի և հոգւոյ առողջութիւնն ու կատարելութիւնը։ — Գ. Մարդ պարտական է առ չարն գործ չը դնել աշխարհային այն բաներն, զորս Աստուած պարգեւած է մեր բարութեան համար։ Այսպէս վարուելով՝ մարդ կը կատարէ այն պարտքը, որ ուղղակի իւր անձին կը վերաբերի և իւր սեպհական բարութեանը։ Այս պատճառաւ մարդ կը քաղէ զգալի օգուտներ ներկայ կենաց մէջ և կը մըտնէ այն սկզբնական վիճակին մէջ, որուն մէջ կը գտնուէր՝ երբ Աստուծոյ հետ էր, երբ իւր հոգին հեզ էր, խոնարհ և կը հնազանդէր կամաց Աստուծոյ, ինչպէս որ մարմինը կը հնազանդէր հոգւոյ։ Առ անձն ունեցած մեր այս պարտաւորութիւնները Ս. Գրոց մէջ ընդհանուր անուամբ կը կոչուի Զգաստութիւն։

Քրիստոնէական զգաստութիւնն է իմաստուն և բարեպաշտ չափաւորութիւն, զոր պարտինք ունենալ ամեն ժամանակ, երբ կը ցանկանք, երբ կ'որոնենք, երբ կը վայելենք և երբ կը զրկուինք մեր երկրաւոր կենաց մէջ, որով և կարող ենք հաճոյանալ Աստուծոյ և մեր կամքը համաձայնեցնել նորա կամացը։ Քրիստոնէական զգաստութեան կանոններուն հետեւելու համար՝ պարտաւոր ենք Նախ՝ հեռանալ ամեն բանէ ինչ որ արգիլուած է և մեղանչական։ Երկրորդ՝ ներկայ կենաց բարութեանց մէջ կատարեալ երջանկութիւն չը փնտռել, այլ միայն բարի ճանապարհաւ վայելել անցաւոր՝ բայց անմեղ և քաղցր բարիքները։ Երրորդ՝ ամեն ժամանակ պատրաստ լինիլ խոնարհութեամբ թողնելու ամեն բան, երբ Աստուած կը հրամայէ և երբ մեր աստուածպաշտութեան պարտաւորութիւնը կը պահանջէ։ Քրիստոնէական զգաստութեան պարտաւորութիւնները խիստ մեծ են մարդոյ համար։ — Ա. Որ մարդ կարող չէ առ ոտն կոխել այս պարտաւորութիւնները, առանց շեղելու իւր կենաց նպատակէն, առանց դժբաղդանալու և առանց կատարելութենէ հեռանալու։ — Բ. Մարդ չը կատարելով իւր անձնական պարտաւորութիւնները՝ ո՛չ թէ միայն իւր անձին կը վնասէ, ինչպէս կ'ուզեն համոզել ոմանք, այլ հասարակաց. վասն զի անհնարին է անվայել կեանք վարել, առանց վնասելու իւր հետ յարաբերութիւն կամ կապակցութիւն ունեցող անձանց, որք իրաւունք ունէին օգնութեան սպասել՝ քան թէ վնասու։ Անհնարին է նմանապէս կատարել առ Աստուած ունեցած պարտքն, եթէ սանձուած չեն աշխարհային ցանկութիւնները մարդոյ սրտի մէջ։ — Գ. Աստուած ինքն, որ մեր կենսատուն է և հոգեւոր պարգեւատուն, կը պատուիրէ չափաւորել և ազնուացնել մեր ամեն ցանկութիւնները։ Վասն զի յատուկ և ընդհանուր պարտաւորութիւնները միացած են իրարու հետ։ Զգաստութիւնը միացած է արդարութեան և աստուածպաշտութեան հետ, այսինքն անձին վերաբերեալ պարտաւորութիւնը միացած է առ ընկերն և առ Աստուած ունեցած պարտաւորութեան հետ։ "Զգաստութեամբ և արդարութեամբ և աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի"։ Տիտ. Բ. 12. — Դ. Հեթանոսներն

անգամ կը ճանաչէին անբարոյական կեանքէ յառաջ եկած ամօթը և կը յորդորէին ունենալ խոհեմութիւն, ողջախոհութիւն, զգաստութիւն և համբերութիւն իբրեւ օգտակար առաքինութիւններ։ Քրիստոնեայք աւելի պարտաւոր են գործ դնել այս առաքինութիւնները, որովհետեւ նոքա աւելի լոյս և շնորհք ստանալով Աստուծմէ, կոչուած են աւելի հզօր կերպով դիմել 'ի սրբութիւն կենաց, 'ի սրբութիւն սրտի և 'ի սրբութիւն վարուց, որպէս զի կարենան հասնիլ Քրիստոսի քարոզած և խոստացած ծայրագոյն և յաւիտենական երջանկութեանը։ "Սիրելի՛ք, աղաչեմ իբրեւ զպանդուխտս և զնժդեհս, 'ի բաց մերժել 'ի մարմնաւոր ցանկութեանց, որ զինուորին ընդդէմ ոգւոց"։ Ա. Պետ. Բ. 11։ Յովհաննէս առաքելոյն այս խօսքերը — Մի՛ սիրէք զաշխարհ և մի՛ որ ինչ յաշխարհի է՝ եթէ ոք սիրէ զաշխարհ, ո՛չ է 'ի նմա սէր հօր, զի ամենայն որ ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն է մարմնոյ և ցանկութիւն աչաց և ամբարտաւանութիւն աստի կենացս" Բ. 15—17. — կարող ենք անուանել Համաւորութիւն պարտաւորութեանց առ անձն. վասն զի առաքեալն պարզապէս կ'որոշէ մեր անձնական պարտուց սահմանը։ Նախ՝ կը ցուցնէ երկու առարկայ, որոց մէջ մարդ կը բաժնէ իւր սէրը և կը փնտռէ երջանկութիւն, այսինքն կը բաժնէ Աստուծոյ մէջ և աշխարհի մէջ։ Սակայն Աստուած և աշխարհ ո՛չ միայն իրարմէ տարբեր են, այլեւ իրարու ներհակ և անհնարին է երկուսը միասին սիրել և երկուքին միասին ծառայել։ Եթէ կը սիրենք զԱստուած և կ'որոնենք նորա մէջ երջանկութիւն, պարտաւոր ենք աշխարհն 'ի կիր առնուլ բարի ճանապարհաւ, այսինքն հետեւիլ քրիստոնէական զգաստութեան կանոններուն, իշխել մեր յօժարութեանց և ամենը հնազանդեցնել Աստուծոյ կամքին։ Մեր օգուտն եւս կը պահանջէ անշուշտ հետեւիլ այս կանոններուն. վասն զի հանգրստութիւնը և երջանկութիւնը միայն Աստուծոյ մէջ է։ Սիրել զաշխարհ՝ կը նշանակէ սիրել ունայն և անցողական բաներ։ Սիրել զԱստուած՝ կը նշանակէ սիրել այն ամենաբարի Էակը, որոյ հովանաւորութիւնը, որուն մօտենալը և զոր ժառանգելն կը տայ մեզ յաւիտենական կեանք։ Եթէ կամինք հեռի պահել զմեզ ամենայն ցանկութենէ, որ անվայել է մեր

որդիութեանը, որուն արժանացած ենք Յիսուսի շնորհիւ, պարտաւոր ենք. — Ա. Սանձել մեր ցանկութիւնները, հնազանդիլ Աստուծոյ, հեռացնել մեզմէն ամեն սանձարձակ ունակութիւններ և մեզ կանոն ունենալ միշտ առաքելոյն օրինակը. "Այլ ճնշեմ զմարմինս իմ և հնազանդեցուցանեմ, զի գուցէ որ այլոց քարոզեցի, ես ինքնին անպիտան գտանիցիմ" ։ Ա. Կորնթ. Թ. 27։ Պարտաւոր ենք հեռանալ ամեն բանէ, ինչ որ վնասակար է մեզ, որպէս զի կարենանք մօտենալ այն բաներուն, ինչ որ օգտակար է։ "Սպանէք այսուհետեւ զանդամս ձեր զերկրաւորս, 'ի բաց ընկեցէք զպոռնկութիւն, զպղծութիւն, զբիծ, զցանկութիւն չարեաց" ։ Կող. Գ. 5։ "Պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զխօսուն պաշտօնդ ձեր" ։ Հռով. ԺԲ. 1։ — Բ. Պարտաւոր ենք զգուշանալ և զսպել մեր երեւակայութիւնը, վասն զի, ինչ որ աշխարհային է, ունի շլացուցիչ զօրութիւն և իւր ազդեցութեան ներքեւ կը գրաւէ այն մարդիկը, որոնք անձնատուր կը լինին երեւակայութեան։ Ուստի աշխարհային վայելչութեան վրայ մտածելու ժամանակ՝ պարտաւոր ենք 'ի միտ ածել որ ամենը անցաւոր է և անհաստատ, ինչպէս որ Սողոմոն իմաստունը կ'աղաղակէ. "Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է" ։ Ժող. Ա. 2։ Այսպէս քարոզած են և ամենայն Ս. Հարք՝ ունայնութիւն ամենայն վայելչութեանց, ունայնութիւն ամենայն մեծութեանց, ունայնութիւն հարստութեանց և ամենայն իրաց։ — Գ. Պարտաւոր ենք սրբել մեր ճաշակը, վասն զի երբ մեր անձը աշխարհային վայելչութեանց կը մատնենք, այնուհետեւ իսպառ կ'անզգայանանք հաւատոյ տուած մխիթարութեանց համար, և կը բթացնենք մեր հոգւոյ ճաշակը։ Բայց երբ հաւատոյ ներշնչած վայելչութիւնը և ճաշակը կը փնտռենք, երբ ամենէն մեծ վայելչութիւնը կը գտնենք Աստուծոյ վրայ մտածելով և աղօթելով, Աստուծոյ խօսքը լսելով կամ կարդալով և մեր հաւատոյ և յուսոյ մէջ ամրանալով, երբ կարող կը լինինք համարձակ ասել որ մեր միակ ուրախութիւնն և երջանկութիւնն է մօտենալ Աստուծոյ, այն ժամանակ կը սրբուի մեր ճաշակը և կ'ուսանինք սիրել, ինչ որ ճշմարտապէս սիրելի է։

Սորա համար օրինակ ունինք մեզ շատ սուրբ և երջանիկ մարդիկ, որք ուրախութիւն և կեանք համարած էին իրենց՝ Աստուծոյ կամքը կատարել և նորա պատուիրանքները ոսկիէն ցանկալի համարել և մեղրէն քաղցր. "Ցանկալի է նա քան զոսկի և քան զականս պատուականս և քաղցր է նա քան ըզ մեղու խորիսխ" ։ Սաղ. ԺԸ. 11։ — Դ. Պարտաւոր ենք աղօթել Աստուծոյ, որպէս զի լուսաւորէ մեր միտքը և հնազանդեցնէ մեր կամքը Աւետարանին, ուսուցանէ և զօրացնէ մեզ զգալ և ճանաչել, որ ինքն է մեր Տէրը և մեր ծայրագոյն բարութիւնը և ինքը միայն կարող է ունակացնել մեզ այսպիսի չըքնաղ կենաց։ "Աստուած իմ, կ'աղաղակէ սուրբն Օգոստինոս, տո՛ւր ինձ քո քաղցրութիւնը, դու, որ աղբիւր ես ճշմարիտ վայելչութեան, դու, որ միայն կարող ես զմեզ երջանկացնել, դու ես միայն միշտ յաւիտենական. կոչէ՛ դէպի քեզ և ամփոփէ՛ քո մէջ իմ բոլոր բաղձանքս, որոնք ցարդ սիրտս բաժաներ են քեզմէն. տո՛ւր ինձ ճաշակել քաղցրութիւնդ, որպէս զի գերազանցէ քան զամենայն գեղեցկութիւն, որ կարող է զիս ապրեցնել. օգնէ՛ ինձ, որ կարենամ սիրել զքեզ յամենայն զօրութենէ, կարենամ բռնել ձեռքդ և կապուիլ նորա հետ այնպիսի ամուր կապով, որ քո ձեռքդ հանէ զիս ամեն վտանգէ, և ազատէ ամեն չար ճանապարհէ, որ կառաջնորդէ զիս դէպի փորձութիւն" ։

Այս զգաստութեան կանոնները պէտք է պահպանել ուտելու և խմելու մէջ, վայելելու, պատուոյ և ճոխութեան մէջ։ Կերակուրի կամ ուտելեաց վերաբերեալ զգաստութեան կանոնը կ'անուանի Հսկողութիւն կամ Զգուշութիւն, որ կը նշանակէ բնութեան պիտոյքէն աւելի չ'ուտել և չ'ըմպել, չը փնտռել առանձին համադամ և փափկացուցիչ կերակուրներ և իւր ճաշակասիրութեանը գերի չը լինիլ։ Այս կանոնը կ'ուղղէ և կը չափաւորէ թէ՛ կերակուրի գործածութիւնը, թէ՛ քանակութիւնը և թէ՛ որպիսութիւնը։ Սոյն կանոնին ներհակ կրքերը կ'անուանին Որկրամոլութիւն և Զեղխութիւն։ Այս հսկողութիւնը կը համարուի իբրեւ մասն քրիստոնէական պարտաւորութեան, որ անհրաժեշտ հարկաւոր է Աստուծոյն հաճոյ լինելու համար. "Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք

ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ „։ Ղուկ ԻԱ. 34։ “Արթուն լերո՛ւք և հսկեցէ՛ք „։ Ա. Պետ. Ե. 8։ Պօղոս առաքեալն ամեն անբարոյական կեանք կը համարէ իբրեւ հետեւանք հեթանոսական խաւարի. “Ի բաց արասցուք այսուհետեւ ըզ գործս խաւարի և զգեցցուք զզէնն լուսոյ՝ իբրեւ 'ի տուընջեան զգաստացեալ շրջեսցուք, մի՛ անառակութեամբք և արբեցութեամբք և մի՛ խառն անկողնովք և պղծութեամբք „։ Հռով. ԺԳ. 12—14։ Որկրամոլները և արբեցողները այնպիսի մեղաւորաց կարգն են, որոնք կարող չ'են Աստուծոյ արքայութիւնը ժառանգել. “Ո՛չ որկրամոլք և ո՛չ արբեցողք զարքայութիւնն Աստուծոյ ո՛չ ժառանգեն „։ Գաղ. Ե. 21։ Հսկողութիւնը մեծ օգուտ ունի, ինչպէս հոգւոյն, նոյնպէս և մարմնոյն համար և հեռի կը պահէ զմեզ թուլութենէ և տկարութենէ, որք յառաջ կը գան անզգաստութենէ։ Արբեցութեան և որկրամոլութեան վնասները խիստ բազմաթիւ են և կարելի է ասել թէ՝ սուրէն աւելի մարդ սպանած են։ Հսկողութիւնը կ'ազատէ զմեզ թշուառութենէ, կ'օգնէ մեզ պահել մեր ունեցածը, մինչդեռ արբեցողը և որկրամոլը կը վատնեն ինչ որ ունին և դիւրութեամբ թշուառութեան կը մատնուին։ Հսկողութիւնը մեր հոգին խաղաղ կը պահէ, մեր միտքն ու դատողութիւնը առողջ, իսկ ընդհակառակն՝ որկրամոլութիւնը և արբեցութիւնը կը թմրեցնեն հոգին և մարմինը միասին, կը խաւարեցնեն միտքը և կը կատաղեցնեն մարդը իբրեւ գազան։ Հսկողութիւնը կարեւոր է մեզ՝ մեր անձը սուրբ պահելու համար. վասն զի կը հեռացնէ ամեն մեղքերէ, որոց մէջ կարող է ձգել անզգաստութիւնը, ինչպէս են՝ բռնութիւն, կռիւ, աղմուկ, ամենակերպ աղտեղութիւն և ամբարշտութիւն։ Որկրամոլութեան և դինեմոլութեան մատնուած մարդը յայտնի նիւթապաշտ է, որուն համար կրօնքը և հաւատքը ամենեւին գրաւիչ զօրութիւն չ'ունին։ Հսկողութիւնն է ամենահաստատ և ամենակարեւոր միջոց, որով կարող ենք իշխել մեր ցանկական կիրքերուն և զգացումներուն։ Նա կը տայ մեզ կամք և զօրութիւն, որով կարող ենք օգտակար լինիլ մեր եղբարցը։ Նա արթուն կը պահէ զմեզ մեր վիճակին մէջ և կը պարտաւորէ աղօթել ամեն ժամանակ։

Հսկողութեան դէմ եղած կիրքերէն մեր անձը պաշտպանելու համար, պարտաւոր ենք խոր մտածել և զգուշանալ այն ցածութենէն, որուն մէջ կարող են գլորել զմեզ նոյն կրքերէն յառաջ եկած չարութիւնները։ Պարտաւոր ենք մանկութենէ վարժեցնել զմեզ կանոնաւոր և վայելուչ կենաց և հետեւապէս միշտ փախչիլ անբարոյականութենէ, որ կարող է մեր ճշմարիտ վայելքները դառնացնել։ Պարտաւոր ենք արթուն լինիլ և հեռանալ անբարոյական մարդկանց ընկերակցութենէն և միշտ ընդդիմանալ նոցա վնասակար յորդորներուն։ Ամենէն աւելի պարտաւոր ենք զգուշանալ մեղքի առաջին անգամ սկսուելէն, վասն զի սկզբնաւորութիւնը կ'արատաւորէ արդէն մեր հոգւոյ ամբծութիւնը։ Այս մասին պէտք է որ հսկողութիւնը մեզ համար հանապազօրեայ և անքակտելի կանոն լինի, նմանապէս և ջերմեռանդ աղօթքն առ Աստուած, որ միայն կարող է օժանդակել մեզ հսկողութեան կանոնը գործադրելու, մեր սրտի շարժումը առ բարին բարձրացնելու և մեր ճաշակը սրբելու։

Կրօնքը խոպառ չ'արգելուր մեր զգացողութեան բոլոր վայելչութիւնները, վասն զի Աստուած կապած է մի քաղցր զգացողութիւն մեր զգացմանց կանոնաւոր և կարեւոր գործադրութեան հետ։ Կրօնքը չ'ուզեր արմատէն խլել և խոպառ ոչնչացնել մեր բնական զգացողութիւնը, այլ կը պատուիրէ որոնել և գործել այն, ինչ որ կը պահպանէ մեր առողջութիւնը, կը զօրացնէ մեր մարմինը և հոգին։ Կրօնքը միայն կ'ուղղէ և կը կանոնաւորէ մեր զգացողութեան գործադրութիւնը, կը հաստատէ սրբութեան և ճշմարիտ օգտակարութեան մէջ, կը հեռացնէ անհանգստութենէ և ապօրինի ընթացից զղջման տեղի չը թողուր։ Զգաստութեան կանոնները, որք կը վերաբերին վայելչութեան և զուարճութեան կը պահանջեն — Ա. Հեռանալ ամեն վայելչութենէ, զորս կ'արգելու աստուածային օրէնքը և որոնք վտանգաւոր և վնասակար են թէ՛ մեզ և թէ այլոց։ — Բ. Հեռանալ ամեն վայելչասիրութենէ, որ անպատշաճ է մեր կարգին, մեր հասակին և մեր վիճակին. վասն զի անվայել բարքը շուտով կը կուրացնէ և կը թմրեցնէ մեր առաքինասէր զգաստութեան ոգին։

— Գ. Զը վատնել վայելչութեանց համար մեր թանկագին ժամանակը, որ պարգեւուած է մեզ մեր մեծ և ծանր պարտաւորութիւնները կատարելու համար։ Վայելչութիւնը պէտք է որ լինի մարդոյ համար իբրեւ հանգստութիւն և նորոգութիւն հոգւոյ։ — Դ. Սաստիկ կիրքով և բաղձանքով չփնտռել այն վայելչութիւնները անգամ, որոնք արդիլուած չ'են և անմեղ են։ Որովհետեւ նոյն վայելչութիւնները կարող են միայն տալ ունայն և անցաւոր բաւականութիւն, հետեւապէս չափազանց հետամտելն կը ծնանի ապաշաւ և զղջումն։

Աշխարհասէր և բազմազբաղ կեանքը կը յափշտակէ մեզմէն մեր պարտաւորութիւնները կատարելու թանկագին ժամերը և իսպառ կը զրկէ մեր կոչման իրական աշխատանքէն։ Կը կորուսանէ մեր հոգեկան վայելչութիւնը և սրտի ճաշակը, որոնք աւելի աղնիւ են և միայն կարող են երջանկացնել զմեզ։ Կ'անզգայացնէ մեր բարեպաշտութեան քաղցր զգացողութիւնը, կը տգեղացնէ բարեգործութեան գեղեցկութիւնը և կը դառնացնէ ընտանեկան կենաց քաղցրութիւնը։ Միով բանիւ, աշխարհասէր կեանքը կը հալածէ մեր սրտէն Աստուծոյ սէրը. "Եթէ ոք սիրէ զաշխարհ, ո՛չ է 'ի նմա սէր հօր, զի ամենայն որ ինչ յաշխարհի է, ցանկութիւն է մարմնոյ"։ Ա. Յովհ. Բ. 17։ Աշխարհասէր և ցրուած կեանքը կը պատրաստէ մեզ ապաշաւ՝ ծերութեան ժամանակ, և տխրութիւն՝ մեր մահուան վայրկենին։ Աշխարհս կ'անցնի իւր ցանկութեամբ և միայն Աստուծոյ կամաց համաձայն եղած գործքերը կը մնան. "Եւ աշխարհս անցանէ և ցանկութիւն նորա, իսկ որ առնէ զկամս Աստուծոյ, նա մնայ յաւիտեան"։ Ա. Յովհ. Բ. 17։ Իսկ մարմնամարզական խաղուց գալով՝ հարկ է իմանալ, որ նոյն տեսակ խաղերը թոյլատրուած զուարճութեանց կարգը կը համարուին։ Չափաւոր խաղը հանգստութիւն է մարմնոյ համար։ Բայց հարկ է իմանալ, որ խաղալն եւս շատ անգամ յանցանք համարուած է, նայելով իւր պարագաներուն և հետեւանքներուն։ Օրինակի համար, երբ խաղալը կը խլէ մեր ձեռքէն Աստուծոյն ծառայելու և մեր գործքերը կատարելու թանկագին ժամերը. երբ խաղը կը մղէ զմեզ դէպի շահասիրութիւն և կը վատնէ մեր կամ այլոց գոյքը. երբ խաղը կապ-

ուած է խաբեբայութեան, բարկութեան, կռուոյ, աղմուկի և այլ մեղքերու հետ. երբ խաղը միացած է մանաւանդ չար սովորութեան և ապականեալ բարուց հետ. երբ խաղալու հետեւանքն է հոգին թմրեցնել, այն ժամանակ խաղը յանցանք է։

Կրօնքը կ'արգելու երջանկութիւն և հանգստութիւն որոնել փափկասիրութեան և զգայական հեշտութեան մէջ։ Կը պատուիրէ զգուշանալ չափազանց քնանալէ, հեռանալ ծուլութենէ և խնամք չը տանիլ մարմնական վայելչութեան։ "Եւ մարմնոյ խնամ մի՛ տանիք 'ի ցանկութիւնս"։ Հռովհ. ԺԳ. 14։ Մեղկ և մարմնասէր կեանքը կը թուլացնէ հոգին և մարմինը, կը տկարացնէ մեր զօրութիւնը՝ փորձանաց ընդդիմանալու և հարկ եղած ժամանակ, մեր հաւատոյ և առաքինութեան համար անձնազոհ լինելու։ Մեղկ կեանքը մեծ արգելք է նոյնպէս մեր սրբութեանը և փրկութեանը։ Հարստութեան մէջ պարտինք զգաստ լինիլ։ Ս. Գիրքը կ'արգելու մեզ՝ սիրել հարստութիւն և կամ բոլոր բաղձանքով հարստութիւն փնտռել։ Բայց Ս. Գիրքը կ'արգելու ո՛չ թէ օրինաւոր հարստութիւն ունենալն, այլ կը դատապարտէ անյագ սիրով հարստութեան սիրահարիլն։ Հարուստը կարող է սուրբ լինիլ, եթէ իր սիրտը մատնած չ'է հարստութեան. Նոյնպէս և աղքատը կարող է իւր հոգին կորուսանել, եթէ անձնատուր եղած է ագահութեան։

Զգաստութեան հակառակ կիրքերն են — Ժլատութիւն, այսինքն սէր աշխարհային իրաց և անբաժան կապակցութիւն։ Ժլատութեան գլխաւոր նշաններն են — Ա. Սաստիկ կրքով ցանկալ հարստութեան և ամբարել ճոխութիւն։ — Բ. Հարստանալու համար գործ դնել ամեն ապօրինի միջոցներ, անիրաւութիւն, երդմնազանցութիւն և այլն։ — Գ. Շարունակ երկիւղի, անհանգստութեան և տագնապի մէջ լինիլ՝ չը կորուսանելու համար, կարեւոր ծախքերէն երկնչիլ և իւր ունայնասիրութիւնը լցուցանելու համար մի կողմէն վատնել իւր հարստութիւնը։ Կարեւորի համար խնայել, և անկարեւորի համար շռայլել, ահա՛ ժլատութեան նկարագիրը։ Ժլատութիւնը մեծ յիմարութիւն է և մոլորութիւն, վասն զի աշխարհային իրերը կարող չ'են մեր երջանկութեան բաղձանքը լը-

ցուցանել։ Նոքա միայն կ'օգնեն մեզ երջանկութեան հասնելու, եթէ 'ի բարին գործ դնենք։ Նոքա ամեն բոպէ մեր ձեռքէն կարող են փախչիլ և կամ մենք կարող ենք մահուամբ զրկուիլ մեր ունեցածէն։ Բայց Աստուած պահած է մեզ համար երկնքի մէջ անսահման և յոյժ թանկագին բարութիւն, որ բոլոր աշխարհային բարիքներէն հաստատուն է և ճշմարիտ։ Այս Աստուծոյ պատրաստած բարութեան սէրն է, որ պէտք է գրաւէ մեր սիրտը. այս բարութիւնն է որ երբէք ոսկւոյ հետ չը փոխանակուիր. այս բարութիւնն է հոգւոյ խաղաղութիւն, Աստուծոյն հաճոյանալու ուրախական զգացմունք, առողջութիւն, գիտութիւն, և այլն. "Եւ ասէ ցնոսա, տեսէք և զգոյշ լերուք յամենայն ագահութենէ, զի ո՛չ եթէ 'ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա"։ "Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ուտիչ ապականեն և ուր գողք ական հատանեն և գողանան"։ Ղուկ. ԺԲ. 15։ Մատ. Զ. 19։ Ժլատութիւնն է ազբիւր զանազան մեղաց և դժբաղդութեանց, որովհետեւ բնաջինջ կ'առնէ մեր զգացմանց քնքշութիւնը և մեր պատիւը. կը սպառէ և կը տոչորէ մարդասիրութիւնը. կը խանգարէ պատուոյ կանոնը և կը գործէ ամենակերպ ցածութիւն և անիրաւութիւն։ Կ'ասուի թէ՝ այն մարդը, որ կը հաւատայ թէ ամեն բան կարելի է դրամով գործել, նա դրամ ճարելու համար կը գործէ ամեն բան։ Այս բանին ապացոյց է Յուդայի սոսկալի օրինակը։ Ժլատութիւնը երբէք չը միանար բարութեան ճաշակի հետ, բարեպաշտութեան և մարդասիրութեան զգացման հետ և ժլատութեամբ անհնարին է սիրել զԱստուած, հաստատ հաւատալ Աստուծոյ, և պատրաստ լինիլ ամեն ինչ զոհել 'ի սէր Աստուծոյ։ Երբ մեր սէրը հարբստութեան տուած ենք և մեզ համար զայն կուռք շինած ենք, կը նշանակէ որ Աստուծոյ ծառայութենէն դադրած ենք։ Այս մասին է, որ կ'ասէ Փրկիչն. "Ոչ ոք կարէ երկուց տէրանց ծառայել, կամ զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ, կամ զմին մեծարիցէ և զմիւսն արհամարհիցէ. ո՛չ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի"։ "Եթէ ոք սիրէ զաշխարհ, ո՛չ է 'ի նմա սէր հօր"։ Մատ. Զ. 24։ Ա. Յով. Բ. 15։ Երբ մարդ անձնատուր եղած է ժլատութեան և մամոնասիրութեան, նա կը պատ-

րաստէ իւր համար տանջանք։ Նա կը ցանկայ հարստութեան որպէս զի քաղցրութեամբ և հանդիստ ապրի աշխարհիս մէջ, և սակայն իւր բոլոր կեանքը և առողջութիւնը կը զոհէ նոյն հարստութիւնը դիզելու համար։ Գուցէ հարստութիւնը կը դիզուի, բայց իւր կեանքը կը նուազի և կը սպառի։ Երբ մարդ կը սկսի աւելի և աւելի ցանկալ հարստութեան, նա կը սկսի ընդ նմին ապրիլ երկիւղի և անհանգստութեան մէջ։ Բայց ո՞րչափ զարհուրելի տեսարան է, երբ յանկարծ ժլատը մահուամբ կը թողու իւր բոլոր ունեցածը և իւր չարաչար աշխատանաց ու սնոտի յոյսերուն մէջ յանկարծ կը լսէ այս ողբալի ձայնը. "Անմիտ, յայսմ գիշերի, զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն, և զոր պատրաստեցերն, ո՛ւմ լինիցի"։ Ղուկ. ԺԲ. 20։ Ս. Գիրքը կը յայտնէ որ ագահութիւնը կամ ժլատութիւնը կռապաշտութիւն է. "Զայս տեղեկացեալ գիտասջիք թէ ամենայն պոռնիկ, կա՛մ պիղծ, կա՛մ ագահ, որ է կռապարիշտ, ո՛չ ունի ժառանգութիւն արքայութեան Քրիստոսի Աստուծոյ"։ Եփես. Ե. 5։ Վասն զի, ագահը կամ ժլատը ապագայի համար չ'աշխատիր, այլ անյագ սիրով կապուած է ներկայ կենաց անցաւոր բարեաց գեղեցկութեան հետ և այն տեղ կը փնտռէ իւր երջանկութիւնը։ Այս ծուռ և մոլար բարութիւնն է կամ հարստութիւնը, որ արդէն այս կենաց մէջ կատարեալ դժոխք է ագահին համար։

Ս. Գիրքը ագահութեան ծանր հետեւանաց վրայ խօսելով՝ կը յայտնէ, որ հարստութեան սիրով վառուած մարդիկը փորձութեան մէջ կ'անկանին. "Իսկ որք կամին մեծանալ, անկանին 'ի փորձութիւն և յորոգայթ և 'ի բազում ցանկութիւնս անմիտս և վնասակարս, որք ընկղմեն զմարդիկ 'ի սատակումն և 'ի կորուստ, զի արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւնն է, որում ոմանց ցանկացեալ վրիպեցան 'ի հաւատոցն և զանձինս արկին ընդ բազում ցաւովք"։ Ա. Տիմ. Զ. 10—11։ "Վա՛յ որ ագահէ զագահութիւն չար՝ տան իւրոյ դընել 'ի բարձունս զբոյն իւր կորզել 'ի ձեռաց չարաց"։ Ամբակ. Բ. 9։ "Որդեա՛կ, ո՞րչափ դժուարին է յուսացելոց յինչս մտանել յարքայութիւնն Աստուծոյ"։ Մարկ. Ժ. 24։ Հարուստները պարտաւոր են զգուշանալ հարստութենէ յառաջ եկած վը-

տանդներէն և պահել այն առաքինութիւնները, որոնք անհրաժեշտ կարեւոր են նոյն վտանգներուն մէջ չըդլորելու համար։ Այս վտանգներու դէմ ասրբոտանան և Հպարտութիւն։ Հարուստները կը մեծամտին իրենց բախտաւորութեամբ և իրենց վիճակը կը համարեն իրրեւ վարձատրութիւն կամ արդիւնք իրենց հմտութեան և այս պատճառաւ միշտ իրենց անձը նախամեծար կը համարեն աղքատներէն, որոնք կը դեգերին նոցա դրանց առջեւ։ Այս մեծամտութեամբ հարուստները կը մոռանան մարդոյ ճշմարիտ և արժանաւոր փառքը։ Ս. Գիրքը այս վտանգներէն զգուշացընելու համար կը յուշածէ հետեւեալ խօսքերը։ "Մեծատունն և աղքատն միմեանց պատահեցին և երկոցունց այցելութիւն առնէ տէր"։ Առակ. ԻԲ. 24։ Հարստութեան վտանգ կը համարուի նոյնպէս Ինքնագոհութիւնը, զոր առակաւ կը յայտնէ Քրիստոս։ Ղուկ. ԺԲ. ԺԶ։ Հարստութեան վտանգ է դարձեալ Ջոջութիւնը, վասն զի հարստութիւնն ազդիւր է անապատ զուարճութեանց և վայելչութեանց, որոնք իրրեւ փուշ կը հեղձուցանեն և չ'են թողուր, որ զօրանայ հոգին. "Եւ այլն անկան ի մէջ փշոց, եւին փուշքն և հեղձուցին զնա և պտուղ մի՛ ետ"։ Ղուկ. Ը. 25։ Հարստութեան վտանգ են նաեւ հաճոյ ընծայել և յոյս դնել երկրորդական պատճառներու վրայ, և ուրանալ առաջինն պատճառն, որ է Աստուած։ Այսպէս կը մեծամտին երբեմն հարուստները, համոզելով իրենց անձը, որպէս թէ անսասան են իրենց մեծութեան մէջ. "Ես ասացի ի բարեկենդանութեան իմում թէ մի՛ սասանեցայց յաւիտեան"։ Սաղ. ԻԹ. 7։ Հարստութեան վտանգ է մանաւանդ Աչքերի տէրը։ Այսպիսի մարդկանց համար կ'ասէ Սողոմոն իմաստունը։ "Թուղթ թիւրը կը ապականէ յիմարները և բազդաւորութիւնը կը կորուսանէ անմիտները"։

Յատկապէս հարուստներուն վերաբերեալ առաքինութիւնները կարելի է երեք բաժանել. — Ա. Շնորհակալութիւն առ Աստուած և այս գոհունակութենէն կը ծնանի անշուշտ հեզութիւն, և հոգւոյ աղքատութիւն, որովհետեւ հարստութիւնն է տուրք Աստուծոյ կամ բարիք, զոր Աստուած կը պարգեւէ կառավարելու համար և իրենք չունին և ոչինչ, որով կարե-

նան հպարտանալ. — Բ. Մտքերնին առ ապահով։ Ոմն աշխի և ամենագաղտ յատկութեամբ կարող են մեծատունները գործ դնել իրենց հարստութիւնը, որով և կը կատարեն Աստուծոյ նպատակը և համարատու կը լինին Աստուծոյն՝ իր պարգեւած բարութեանց համար։ — Գ. Բաբէ օրինակ, վասն զի գործնական բարի օրինակը մեծ ազդեցութիւն ունի այլոց վրայ։ Այս բոլոր պատուէրները կը պարունակին Պօղոս առաքեալն հետեւեալ խօսքերուն մէջ. "Մեծատանց, որք են յայսմ աշխարհի, պատուէր տալիր մի՛ հպարտանալ, և մի՛ յուսալ՝ի մեծութիւն անոտի, այլ յԱստուած, որ տայ մեզ զամենայն առատապէս՝ի վայելել, զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան, առատս, սիրունս, հաղորդս լինել, դանձել անձանց հիմն բարի՝ի հանդերձեալն, զի բուռն հարցեն զճշմարիտ կենացդ"։ Ա. Տիմ. Զ. 17—20։ Ուրեմն մեծատունները եւս, ունենալով հարստութիւն, կարող են հաճոյանալ Աստուծոյ։

Աղքատներն եւս պարտաւորութիւններ ունին, որք են. — Ա. Առանց արհնջանաց, առանց նախանձու և ատհութեան, համբերել և ամենայն զօրութեամբ հոգւոյ կրել իրենց չքաւոր վիճակի լուծը, միխիթարել բարեպաշտութեամբ, յուսով և հաւատով, չը մոռանալ երբէք այս վեհ օրինակն, որ ինքն Տէրն մեր փրկիչն չքաւորութեամբ ապրեցաւ աշխարհիս մէջ։ — Բ. Աբիաթար չանալ իրենց պիտոյքը իրենց ձեռքով հոգալու, իրենց վիճակը բարւոքելու և ամենայն հակղութեամբ իրենց կենցաղավարութիւնը քաղցրացնելու։ — Գ. Չքաւորութենէ ելնելու համար երբէք անիրաւ միջոցներու չը դիմել և միշտ նախապատիւ համարել աղքատութիւնը անիրաւութենէն։ — Դ. Շնորհակալ և երախտագէտ լինիլ բարերարներէն և՝ի բարին գործ դնել իրենց ստացած բարիքները։

Մարդոյ ամենացանկալի, ամենավայելուչ և ամենահաստատ վիճակն է՝ միջակ վիճակն, վասն զի չափաւոր կարողութիւնը միշտ հեռի կը պահէ փորձանքներէ և աւելի յարմար է մարդոյ պահանջողութեանը։ "Այլ ունիմք զկերակուր և զհանդերձ, և այնու չատասցուք"։ Ա. Տիմ. Զ. 8։ Յուսո և մենք պարտին գոհ լինիլ և խնդրել Աստուծմէ այս պատուաւոր և

միջակ կարողութիւնը, ինչպէս կը խնդրէր և Սողոմոն իմաստունը. “Զմեծութիւն և զաղքատութիւն մի՛ տար ինձ, այլ կշռեա ինձ զարժանն բաւականութեամբ, զի մի՛ մեծացայց և ստեցից, և ասիցեմ՝ ո՞ տեսանէ զիս կամ աղքատացայց և գողացայց և երկեայց յանուանէ Տեառն Աստուծոյ իմոյ „ = Առ. Լ. 8 = Ս. Գիրքը պարտք կը դնէ մեր վրայ լինիլ բաւականասէր. “Բարք անարծաթասէրք լինիցին, բաւական համարիլ որչափ ինչ ’ի ձեռս իցէ „ = Եբր. ԺԳ. 5 = Պօղոս առաքեալն օրինակ է մեզ. “Իբր ո՛չ առ կարօտութեան ինչ ասեմ, զի ես ուսայ, որով կարեմ բաւական լինիլ, գիտեմ նուազիլ, գիտեմ առաւելուլ, յամենայնի ամենեւին խելամուտ եմ և յագիլ և քաղցենալ և առաւելուլ և նուազիլ „ = Փիլ. Դ. 11—12 = Սոյն հոգեկան բաւականութիւնը անհրաժեշտ կարեւոր է մեզ՝ մեր երջանկութեան համար և սա ինքնին մի երջանկութիւն է աշխարհիս վրայ = Վասն զի՝ շատերը կը չարչարուին, կը նեղուին, կը տագնապին երջանկութեան հասնելու համար և սակայն կը մոռանան որ երջանկութեան սկիզբը մեր մէջն է, մեր հոգւոյ խաղաղութեան և ճշմարիտ ուրախութեան մէջ. Կը մոռանան, որ աւելի դիւրին է աշխատիլ սրտի համար և ունեցածով գոհացնել, քան թէ խնդրել և որոնել ինչ որ չ’ունին, ինչ՝ որ գտնել դժուարին է և ինչ որ գտնելէն զկնի՝ կարող չ’են երջանկութիւն համարել, եթէ սիրտը ուղղութեան մէջ չ’է =

Հոգւոյ այս երջանիկ վիճակը կարող ենք գտնել. — Ա. Մանկութենէ վարժելով պարզ, զգաստ և աշխատասէր կենաց, և այն ժամանակ սակաւն եւս կը գոհացնէ մեր սիրտը և ամենեւին չենք երկնչիլ ձախորդութենէ = — Բ. Միշտ աշխատիլ բարի և արթուն խիղճ ունենալ = Այս անմահական գանձով կարող ենք միշտ գտնել խաղաղութիւն և երջանկութիւն = Իսկ ընդհակառակն՝ անխղճութիւնը կը թունաւորէ մեր բաղդաւորութիւնը և կը ծանրացնէ մեր թշուառութիւնը = — Գ. Լցնելով մեր սիրտը կրօնի ճշմարտութեամբ և յուսով. վասն զի այս միայն կարող է մեր սիրտը սրբել և խղճմտանքի խաղաղութիւն և մխիթարութիւն տալ = Հաստատուն համոզմամբ պարտինք հաւատալ, որ մեր Տէրը որբ չը թողուր զմեզ. “Ո՛չ թողից զձեզ որբս և ո՛չ ընդ վայր հարից, որպէս զի համար-

ձակ լիջիք ասել. Տէր է իմ օգնական և ես ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ „ = Եբր. ԺԳ. 5 = “Եթէ որոց սիրեն զԱստուած յամենայնի գործակից լինի ’ի բարիս, որք հրաւիրանաւն կոչեցան „ = Հռով. Ը. 28 = Պարտինք կենդանի հաւատ ունենալ մեր մեղաց թողութեան համար, հաւատալ Աստուծոյ խոստմանցը և նորա հաշտութեանը, որ կատարուեցաւ Միածին Որդւոյ անարատ պատարագաւը, հաստատ յուսալ երջանկութեան, որ խոստացած է երկնքի մէջ, և այս ամեն օգնութիւնները կարող ենք ստանալ աղօթքով = Ահա՛ սոքա են որ կարող են պահել, պաշտպանել և ուրախացնել մեր սիրտը, ինչ վիճակի մէջ որ լինինք = Քրիստոսի վարդապետութեամբն էր և ոչ թէ մարդկային իմաստութեամբ, որ Պօղոս առաքեալն ուսած էր գոհանալ իւր վիճակէն. “Յամենայնի կարող եմ այնու, որ զօրացոյցն զիս „ = Փիլ. Ե. 13 = “Այլ շահավաճառ մեծ՝ աստուածպաշտութիւնն է բաւականութեամբ հանդերձ „ = Ա. Տիմ. Զ. 6 =

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական զգաստութիւնը պէտք է որ կանոնաւորէ և ուղղէ մեր աշխատանքը, վասն զի՝ աշխատանքը եթէ առ չարն գործադրուի՝ կարող է դառնալ մարդուս համար դատապարտութեան և անկման պատճառ = Աշխատիլը սուրբ և վսեմ պարտաւորութիւն է մարդու համար = Այս ճշմարտութիւնը պարզապէս կ’երեւի — Նախ՝ մարդուն տրուած ընդունակութենէն, հոգւոյ ու մարմնոյ գործունէութենէն, մեր բնական ձգտողութիւններէն քանի մի աշխատանաց համար, մեր մտաց և յիշողութեան օրէնքներէն և այլն = Այս ընդունակութիւնները կը թմրին և կ’ոչնչանան՝ եթէ չը գործադրենք, և ընդհակառակն՝ կը բացուին և կը զօրանան երբոր գործադրենք = — Բ. Կ’երեւի մարդու կենաց պիտոյքներէն = Երկիրը մեզ չը կերակրեր՝ եթէ չը մշակենք = Մեր պիտոյք-

ները և ճաշակները բազմատեսակ են և աւելի բազմապատիկ քան ուրիշ կենդանեացը։ Մենք ենթարկուած ենք բազմաթիւ պատահմանց և չենք կարող ապահովել և պաշտպանել մեր կարողութիւնը. եթէ ո՛չ աշխատութեամբ և իմաստուն կառավարութեամբ, որ կը պահանջէ արթնութիւն և յարատեւութիւն։ — Գ. Կ'երեւի այս պայմանէն, որ աշխատանքը Աստուծմէ տրուած է մարդուն իբր պարտաւորութիւն, վասն զի՝ մարդը ծնանելով հասարակութեան մէջ՝ պարտաւորուած է զգալ և իմանալ, որ մարդկային ընկերականութիւնը միայն կարող է երջանիկ լինիլ բոլոր անդամոց աշխատասիրութեամբ, և այս ճանապարհով միայն կարեն լրանալ մեր բազմաթիւ պիտոյքները։ Մենք պարտական ենք օգնել հասարակութեանը մեր տաղանդով, մեր լուսաւորութեամբ, մեր հմտութեամբ և զօրութեամբ, ինչպէս ուրիշներն եւս կարեն օգնել նիւթական աշխատութեամբ։ Այս ճանապարհով հասարակութեան իւրաքանչիւր անդամը կը պահպանուի, կը սնանի, կը սնընդուի, կը պաշտպանուի և նախախնամութեան բարիքը կը վայելէ։ — Դ. Աստուած պարզ կը յայտնէ մեզ իւր կամքը այս խօսքով. "Եւ էառ Տէր Աստուած զմարդն զոր արար և եդ զնա 'ի դրախտին փափկութեան, գործել զնա և պահել"։ Ծննդ. Բ. 15։ Առաջին մարդը իւր անհնազանդութեամբ հեռացնելով իւր կամքը Աստուծոյ կամքէն՝ ինքն եւս հեռացաւ Աստուծմէ, և 'ի պատիժ իւր անհնազանդութեանը ենթարկուեցաւ ամենածանր աշխատանաց և ընկալաւ այս վճիռը թէ՝ "Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քոյ"։ Ծննդ. Գ. 19։ Տասնաբանեայ պատուիրանաց չորրորդը կը հրամայէ մեզ. "Զվեց օր գործեսցես և արասցես զամենայն գործս քո"։ Եւ Ի. 9։ Սողոմոն իմաստունը մրջիւններու մօտ կը ղրկէ ծոյլ մարդը, որ աշխատասիրութիւն ուսանի. "Երթ առ մրջիւնն, ո՛վ վատ, և նախանձեաց ընդ ճանապարհս նորա, լեր իմաստնագոյն եւս քան զնա"։ Առակ. Զ. 6։ Մեր Փրկիչը կը դատապարտէ այն անգործ ծառայն, որ առանց գործադրութեան կը թողու իւր տաղանդը։ Պօղոս առաքեալը կ'ասէ. "Որ ոչն կամիցի գործել, և կերիցէ մի՛։ Արդ լսեմք զոմանց 'ի ձէնջ՝ թէ ստահակութեամբ գնան, գործ ինչ ոչ գործեն, այլ յու-

լացեալ հետաքրքիր շրջին, այնպիսեացն պատուէր տամք և աղաչեմք 'ի Տէր Յիսուս Քրիստոս, զի հանդարտութեամբ գործեսցեն և զիւրեանց հաց կերիցեն"։ Բ. Թես. Գ. 10—12։ Դարձեալ կը պատուիրէ նոյն առաքեալն՝ աշխատել ոչ միայն իրենց պիտոյքը լցուցանելու, այլ և կարօտելոց տալու կարողութիւն ունենալու։ "Որ գողանայրն, մի՛ եւս գողասցի, այլ մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռօք իւրովք զբարիս, զի բաւական իցէ տալ՝ ում պիտոյ իցէ"։ Եփես. Դ. 25։ "Այլ զնոյն միմեանց հոգայցեն անդամքն"։ Ա. Կորնթ. ԺԲ. 25։ Վերջապէս, Սուրբ Գիրքը կը նմանեցնէ մարդը՝ երբեմն երկրագործի, որ կը ցանէ հնձելու համար. երբեմն զինուորի, որ պարտաւոր է միշտ շարժողութեան մէջ լինիլ, երբեմն ծառայի, որ պարտաւորուած է տիրոջը սպասելու համար արթուն լինիլ և իւր պաշտօնը կատարել։

Աշխատութիւնը և գործունէութիւնը մեր կեանքին շատ օգտաւէտ է։ Նախ՝ մարմնոյ աշխատանքը և հոգւոյ գործունէութիւնը շատ կ'օգնեն կամ լաւ եւս ասել՝ շատ կարեւոր են մարմնոյ և հոգւոյ առողջութեանը և կը նպաստեն մեզ կատարելագործուելու։ — Բ. Աշխատանքն է մի միայն հնարք մեր կենաց պիտոյքը լցուցանելու և ունեցածը պահպանելու, որմէ կախեալ է օրինաւոր հարստութիւնը. "Աղքատութիւն զայր խոնարհեցուցանէ, ձեռք ժրաց մեծացուցանեն"։ Առ. Ժ. 4։ — Գ. Աշխատանքն է մեր բաւականութեան աղբիւրը։ Նա գեղեցիկ կերպով կը պահպանէ զմեզ ձանձրութենէ։ Զուարճութիւնքը քաղցր են միայն այն ժամանակ, երբոր կապուած են աշխատասիրութեան հետ։ Գործունի, աշխատասէր և իւր պարտքը կատարող մարդը, որ օգտաւէտ է հասարակութեան, միշտ յարգուած և սիրուած է ամենէն։ Նա ուրախութեամբ և գոհութեամբ սրտի կը տեսնէ իւր գերդաստանի բաւականութիւնը։ Իսկ ընդ հակառակն՝ ծուլութիւնը և անգործութիւնը կը վնասէ գերդաստանին և կ'ապականէ։ Անգործ և պարապորդ մարդը անօգուտ է և անպիտան և ծանրութիւն է հասարակութեան։ — Դ. Աշխատանքը կը թեթեւցնէ մեզ համար առաքինութիւնը, վասն զի՝ մեր պարտաւորութեանց մեծ մասը գործունէութիւն կը պահանջէ և երբեմն ծանր հո-

գացողութիւնները։ Աշխատասիրութիւնը կ՚ամփոփէ մեր միտքը առ հասարակ օգտաւէտ բաներու վրայ, և կը հեռացնէ մեզ փորձութենէ և վատ ընկերութենէ։ Իսկ ընդհակառակն՝ անգործութիւնը կը մոլորեցնէ մեր երեւակայութիւնը, կը գարթուցանէ զանազան կրքեր, դժբաղդ վիճակէն կը ձգէ յանցանաց մէջ, և կը մեծացնէ ամեն տեսակ չարութեան, որոց համար իրաւամբ ասուած է թէ՝ "Անգործութիւնն է մայր ամենայն չարեաց"։ — Ե· երբոր մենք կ՚աշխատինք հնազանդիլ Աստուծոյ և մեր հոգին նորա կամացը խոնարհեցնել, տարակոյս չը կայ որ Աստուած կը տայ մեզ իր օրհնութիւնը և կը վարձատրուի մեր աշխատանքը։

Աշխատանքը պարտաւորութիւն է ամեն մարդոյ համար, ոչ միայն չքաւորները, այլ առ հասարակ ամեն մարդ, որուն Աստուած պարգեւած է զօրութիւն և հարստութիւն, կոչուած է աշխատելու։ Նոյն իսկ հարուստները իրաւունք չունին աշխատանքէ հեռանալու, վասն զի աշխատասիրութեան մասին բերած ապացոյցները կը վերաբերին նմանապէս և հարուստներուն։ Նոքա եւս պարտին վախճենալ ձանձրութենէ և անհանգստութենէ։ Այս հիւանդութիւնը, կարելի է ասել, բուն հարուստներու հիւանդութիւնն է։ Նոքա պարտաւոր են անգործութենէ փախչիլ, որ այս հիւանդութեան գլխաւոր պատճառն է։ Նոքա պարտական են պահպանել և կառավարել իրենց կայքը· և որչափ մեծ է կայքը, այնչափ կրեւոր է մեծ հոգատարութիւն, կարգ և մտադրութիւն։ Անգործութիւնը պատճառ կը դառնայ հարուստներուն վատնել իրենց ստացուածքը մոլութեամբ և աւելի վնասել հասարակութիւնը քան թէ չքաւորները։ Որովհետեւ հասարակութիւնը հարուստներէն աւելի օգուտ ապասելու է և ոչ վնաս, բնական չէ որ հարուստը օգնէ հասարակութեան միայն դրամով, նա պարտաւոր է օգնել նոյնպէս ծառայութեամբ և աշխատութեամբ։ Վերջապէս Ս· Գիրքը առանց բացառութեան ամեն մարդու վրայ պարտք կը դնէ աշխատելու։ Հարուստներու ազատութիւնը աշխատանքի մէջ այն է, որ նոքա կարող են իրենց ընդունակութեան և կամքի համեմատ գործ ընտրել, որ աւելի պատուաւոր լինի և վայելուչ։

Այն ծնողքը, որոնք մտադիր են և հետամուտ իրենց որդիքը այն աստիճանին հասցնելու, որ ամեն աշխատանքէ ազատ լինին, նոքա կը հակառակին խնամատութեան և հատոյց հոգւոյն, վասն զի՝ ամենամեծ ժառանգութիւնը, զոր կարող են ծնողք թողուլ իրենց որդւոցը, է նախ՝ Աստուծոյ սէրը և ապա աշխատասիրութիւնը։ Աշխատասիրութիւնը ազգատուն կը կանգնէ, հարուստը կը պահպանէ· իսկ ընդհակառակն՝ անգործութիւնը չինած տունը կը քանդէ, հարստութիւնը կը վատնէ, և այս պատճառաւ ահա մտատագ հասակէն հարկաւոր է մանուկները վարժեցնել աշխատասիրութեան, որ կարենան նեղութեանց հանդերձել, իրենց անձին և այլոց ծառայել։ Հարկաւոր է կրթել մանուկները որ և իցէ արուեստի կամ կոչման մէջ, որ համաձայն է նոցա բնութեանը և ընդունակութեանը։ Այս ամեն խնամքներուն հետ հարկաւոր է նախ՝ հեռանալ ամենակերպ չար և վատնդաւոր կեանքէ։ — Բ· Հարկաւոր է յարմարիլ դերդաստանի պիտոյիքը և կրեւոր պահանջողութեանը։ Չքաւորները եւս պարտաւոր են չուտով ճարել իրենց հացը իրենց աշխատանքով։ Երբէք անհոգութեան կամ ունայնասիրութեան պատճառաւ չը պէտք է յետ քաշուին ծանր աշխատանքէ, կամ այնպիսի աշխատանքէ, որ թէեւ աշխարհի առջեւ նշանակութիւն չունի, բայց իր դերդաստանի համար շատ օգտաւէտ է։ — Գ· Պէտք է արհեստը ընտրել որքան կարելի է ընդունակութեան համեմատ։ Այս զգուշութեամբ ընտրուած արհեստի մէջ մարդ կարող է աւելի օգտակար լինիլ, և այս ընտրողութիւնը համաձայն կը լինի նախախնամութեան կոչմանը։

Եթէ կը փափաքինք, որ մեր աշխատանքը ճշմարտապէս օգտակար և փրկարար լինի, պարտաւոր ենք հետեւիլ այն գլխաւոր կանոնին, որմէ կախուած են միւսները։ Նախ՝ պարտինք աշխատիլ ոչ թէ աշխարհի որդւոց նման ենթարկուիլ մեր հաճոյքին կամ ագահութեամբ հետեւիլ մեր փարթամութեան կամ յանկութեան պահանջողութիւնները բաւականացնելու, այլ պարտինք աշխատիլ որդիական հնազանդութեամբ և Աստուծոյ օրինաց համեմատ, ի բոլոր խղճէ չարժուած մեր պարտաւորութիւնը կատարելու և դառնալու օգ-

տակար մեր անձին և հասարակութեանը, և ոչ թէ որպէս ան-
պիտան անդամ ծանրանալու հասարակութեան վրայ։ Միով
բանիւ պարտաւոր ենք աշխատիլ Աստուծոյ համար և Աստու-
ծոյ առջեւ, բարձրացնելով միշտ մեր հոգին և մեր սիրտը
առ մեր երկնաւոր Հայրն, և նորա փառացը նուիրելով մեր
գործքը և աշխատանքը։ — Բ. Մեր աշխատանքը պէտք է
համաձայն լինի բարութեան կանոններուն։ — Գ. Պարտաւոր
ենք աշխատիլ սիրով և հաւատարմութեամբ առ Աստուած,
որ նա օրհնէ մեր աշխատանքը և միշտ ճանաչենք և խոստո-
վանինք այն ճշմարտութիւնը. "Եթէ ոչ Տէր շինէ զտուն՝ 'ի
նանիր վաստակին շինողք նորա"։ Սաղ. ՃԻԶ. 25։ Մեր երկնա-
ւոր Հայրն է, որ կը տայ մեզ մեր ամենօրեայ հացը, և նորա
օրհնութիւնն է՝ որ կը հարստացնէ զմեզ։ "Օրհնութիւն Տեառն
'ի գլուխս արդարոց և 'ի նոյն մեծացուցանէ, և ոչ եւս առա-
ւելու տրտմութիւն 'ի սիրտ նորա"։ Առակ Ժ. 22։ Այն տա-
ղանդները, այն հմտութիւնները և այն գործունէութիւնը,
որոց վրայ աշխարհի որդին կը դնէ իւր յոյսը և հաւատը, ոչ
այլ ինչ են՝ եթէ ոչ միջոց, զոր Աստուած 'ի գործ կը դնէ մեզ
պահելու և պաշտպանելու համար։ — Դ. Պարտաւոր ենք աշ-
խատիլ հանգիստ և խաղաղ հոգւով, առանց նեղանալու, և
եթէ մեր հոգացողութեանը համեմատ չը յաջողի մեր աշխա-
տանքը, պիտի իմանանք որ այս յաջողութիւնը մեզմէն կախ-
ուած չէ, և մեր երկնաւոր Հայրը ունի հազարաւոր միջոցներ
մեզ օգնելու։ Աստուծոյ երկիւղած որդին կարող է ամենա-
գործունեայ կենաց և հոգացողութեան մէջ հասկանալ և գործ
դնել Փրկչի այս պատուէրը։ "Մի՛ այսուհետեւ հոգայցէք և
ասիցէք. զի՞նչ կերիցուք. կամ զի՞նչ արբցուք, կամ զի՞նչ
զգեցցուք, զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի
գիտէ Հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն"։
Մատ. Զ. 31—32։ — Ե. Պարտինք աշխատիլ շարունակ և հա-
ւատարմութեամբ, բայց միշտ իմաստութեամբ և չափով։ Ջեր-
մեռանդ բարեպաշտութիւնը երբէք ներհակ չէ մեր գործու-
նէութեանը և բնաւ չուրանար մեր աշխատասիրութիւնը, այլ
ընդհակառակն կը զօրացնէ մեր կարողութիւնը և զգաստու-
թիւնը։

Աշխարհի որդին աշխատելով միայն իր անձի համար՝ կը
սահմանափակէ իր աշխատանքը իր պիտոյից և ցանկութեան
համեմատ և աշխատութենէ կը դադրի, երբոր ծանրութիւնն
աւելի է քան թէ քաղած օգուտը։ Իսկ ընդհակառակն՝ Աս-
տուծոյ որդին կ'աշխատի աւելի աստուածային փառաց հա-
մար, իր ընկերի օգտի համար և երբէք իրաւունք չը համա-
րեր աշխատութենէ դադրելու, քանի որ մտադիր է բարե-
գործութիւն առնել։ Ինչպէս աշխարհի բազմաշահասէր որ-
դին կը ջանայ ըստ աշխարհի ճոխանալ, նոյնպէս Աստուծոյ եր-
կիւղած որդին կը փափաքի աստուածահաճոյ գործքերով
հարստանալ և միւս կողմէն կ'աշխատի չափաւորել և կանոնա-
ւորել իւր աշխատանքը այն տեղ, ուր Աստուած սահման դը-
րած է։ Նա ուշադրութիւն կը դարձնէ իւր հոգւոյ և մարմ-
նոյ զօրութեան վրայ և չը կամիր նոցա առողջութիւնը մաշել
հարստութեան ճանապարհի վրայ։ Նա կը սրբէ և կը պատուէ
այն հանգստեան օրը, որ նշանակուած է Աստուծոյն պաշտօն
տալու համար և մեր հոգին հոգալու համար։ Նա ժամանա-
կէն բաժին կը պահէ իր պարտաւորութիւնները կատարելու
համար և հոգեւոր բարութիւններ շտեմարանելու համար։
Ահա սոքա են նորա գլխաւոր պարապմունքը, նորա մեծ օ-
գուտը և ամենակարեւոր պիտոյքը։ — Զ. Պէտք է աշխատիլ
հեզութեամբ և զղջման հոգւով, միտ բերելով որ մեր ծանր
աշխատանքները և մեր կենաց դժուարութիւնները մասն են
այն պատժոյն, որ տրուած էր մեղաւոր մարդուն և պէտք է
շարժեն մեզ դէպի այն երջանիկ կեանքը, ուր մենք պիտի
հանգստանանք մեր աշխատանքէն, ինչպէս կ'ասէ Յովհաննէս
առաքեալը. "Երանի մեռելոցն՝ որք 'ի տէր ննջեցին, այժմիկ
վաղվաղակի զայս ասէ հոգին, քանզի հանգեան յաշխատու-
թենէ իւրեանց, բայց միայն գործք իւրեանց չոքան զհետ
նոցա"։ Յայտ. ԺԴ. 13։

Քրիստոնեայն հետեւելով այս կանոններուն կը պահէ ա-
զատ սիրտ աշխատանաց մէջ և կ'իմանայ խնդրել նախ քան
զամենայն Աստուծոյ արքայութիւնը և արդարութիւնը.
"Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն
նորա"։ Մատ. Զ. 13։ Այսպէս կարող է քրիստոնեայն աշխա-

տիլ և պարտաւորութիւնը համաձայնեցնել Մատթէոս և Ղուկաս Աւետարանչաց խօսքերու հետ։ Մատ. ԻԴ. 28։ Ղուկ. ԺԴ. 16. որոնք իսկապէս կ'արգելուն միայն անօգուտ, չափազանց և կամ անտեղի հոգացողութիւնքը։ Այսպէս ահա մեր հոգեւոր աշխատանքը պարտաւոր ենք գործ դնել մեր փրկութեանը հասնելու համար և ո՛չ թէ միայն մարմնաւոր կերակուրի և պիտոյից համար։ "Երթայք գործեցէք մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ 'ի կեանս յաւիտենականս"։ Յով. Զ. 27։

ԶԳԱՍՏՈՒԹԻՒՆ ՊԱՏՈՒՈՅ ՄԷՋ

Քրիստոնէական զգաստութիւնը չ'արգելուր պատուաւոր ճանապարհաւ փնտռել այն արտօնութիւնը կամ պաշտօնը, որուն պարտաւոր ենք։ Քրիստոնէական զգաստութիւնը կ'արգելու միայն մեծ նշանակութիւն տալ աշխարհային պատուոյն և փառաւորութեան, և զայն որոնել բուռն կրքով և անվայել միջոցներով։ Այսպիսի չափազանց ցանկութիւնը կ'անուանի Փառասիրութիւն, որ է վտանգաւոր կիրք, որոյ աղբիւրը մարդկային մեծամտութեան մէջ է, կամ այն թիւր դատողութեան մէջ, որով կը պարծին ոմանք թէ մարդոյ արժանաւորութիւնը պաշտօնի և մեծութեան մէջ է։ Փառասիրութիւնը կը խաբէ զմեզ և մենք կը կարծենք թէ՝ պատուոյ հասնելով՝ կը գտնենք երջանկութիւն, մինչդեռ ընդհակառակն աւելի կը նեղինք, կը զզուինք, կը պատրուինք և կ'անկանինք։ Փառասիրութիւնը կը լցուցանէ մեր սիրտը խռովութեամբ և տագնապաւ, առանց անդորրացնելու։ Նա կը շիջուցանէ մեր մարդասիրութեան զգացումն և կը տանի դէպի անիրաւութիւն, որով կը յառաջանան հասարակութեան մէջ կռիւներ, պատերազմներ, յեղափոխութիւններ և ամենակերպ թշուառութիւններ։ Միով բանիւ, փառասիրութիւնը

կ'անդամալուծէ կրօնքի ամենապարզ օրէնքները, որոնք կը պատուիրեն. "Խնդալ ընդ խնդացողս, լալ ընդ լացողս, զնոյն միմեանց խորհեսջիք, մի՛ ամբարտաւանիք, այլ ընդ խոնարհս զիջանիցիք, մի՛ լինիք իմաստուն յանձինս ձեր, մի՛ ումէք չարին՝ չար հատուցանէք, խորհեցարո՛ւք զբարիս առաջի ամենայն մարդկան"։ Հռով. ԺԲ. 17։ "Մի՛ լիցուք սնապարծ միմեանց ձայն տալոյ և ընդ միմեանս նախանձելոյ"։ Գաղ. Ե. 26։

Մարդկային պատուոյ ամենացանկալի նշանն այն է, երբ յառաջ եկած է բարի գործքէ և բարի անունէ, երբ իւրաքանչիւր ոք կը վկայէ որ այս ինչ անձը պատուաւոր մարդ է, բարի քրիստոնեայ և ընկերականութեան օգտակար անդամ։ Այս պատուանշանը կամ բարի համբաւը չը ստացուիր առաքինութեան լոկ արտաքին երեւոյթներով, այլ սրտի ճշմարիտ ազնուութեամբ և բարի ճանապարհաւ գործ դնելով և շահեցընելով մեր տաղանդը, զոր Աստուած աւանդած է մեզ։ Այս մասին է, որ կը պատուիրէ առաքեալն. "Այսուհետեւ, եղբա՛րք, որ ինչ ճշմարտութեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ արդարութեամբ, որ ինչ սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ քաջութեամբ, որ ինչ գովութեամբ, զայն խորհեսջիք"։ Փիլ. Դ. 8։ Երբ այսպէս կը վարուինք, առանց կոյր, կրքոտ և անիրաւ մարդկանց հաւանութիւնը գըրաւելու, այն ժամանակ կը մխիթարուինք աւելի բարձր և աւելի թանկագին հաւանութեամբ, զոր պարտինք որոնել մեր խղճի և Աստուծոյ վկայութեան մէջ, կրկնելով Պօղոս առաքելոյն հետ. "Այլ ինձ և այս անարգանք են, եթէ 'ի ձէնջ դատեցայց, կամ բնաւ իսկ 'ի մարդկանէ, նաեւ զանձն իմ ո՛չ քննեմ, զի ոչինչ գիտեմ զանձին իմոյ, այլ ո՛չ եթէ այսու արդարանամ, զի որ քննէն զիս, Տէր է"։ Ա. Կորնթ. Դ. 3—4։ Ճշմարիտ և ամենահաստատ փառաց հասնելու միակ միջոցն է՝ ճշդութեամբ կատարել մեր բոլոր պարտաւորութիւնները, հնազանդելով և փափաքելով հաճոյանալ Աստուծոյ, առ ոչինչ համարելով մեր անձը, և խոստովանելով, որ ամենայն տուրք բարիք և ամենայն պարգեւք կատարեալք 'ի վերուստ են իջեալք, և ընդ սմին մեզ վերաբերելով այն ամեն յոյսերը և պըսակները, զորս Աւետարանը կը խոստանայ մեզ։ Այս է ահա՛

փառաց ամենամեծ աստիճանը, որուն կարող ենք հասնիլ աշխարհիս մէջ և 'ի հանդերձեալն. "Բայց մեր ամենեցուն բացաւ երեսօք զփառսն Աստուծոյ իբրեւ ընդ հայելի տեսեալ՝ 'ի նոյն պատկեր նորոգիմք փառաց 'ի փառս, որպէս և Տեառն հոգւոյ" ։ Բ. Կորնթ. Գ. 18։

Հպարտութիւնն է մեծամիտ դատողութիւն կամ համարումն, զոր ունին հպարտները իրենց վրայ, ծածկելով իրենց պակասութիւնները և մեծացնելով իրենց տաղանդները և առաքինութիւնները, հռչակելով այնպիսի յատկութիւնք, զոր չ'ունին, և մոռանալով փառաւորել զԱստուած, որ պարգեւիչ է ամեն կատարելութեանց։ Հպարտութիւնը կը ճանաչուի շատ նշաններով, բայց այս նշանները ամեն ժամանակ ճիշդ ու պարզ չ'են, այլ փոփոխական ըստ բնաւորութեան իւրաքանչիւր մարդոյ։ Այս նշանները արժանի են դիտողութեան, որպիսի են՝ իւր անձին վրայ խօսիլը սիրել, դովեստի ցանկալ և դովեստ խնդրել, այս դովեստներով խնդալ և ուրախանալ, թուլանալ և ցածանալ պատուանշան և աստիճան ստանալու համար, չը կամիլ իւր պակասութիւնքը տեսնել, չը համբերել կրած յանդիմանութեան կամ նախատանաց, յաճախ այլոց թերութիւնքը քննել և խնդամտիլ, իւր անձը ամեն մարդկանցմէ նախապատիւ համարիլ և փափաքիլ արտաքուստ շքեղ և փարթամ երեւիլ։ Հպարտութիւնը կը ծագի և կը զօրանայ թիւր դատողութենէ և կոպիտ մոլորութենէ։ Հպարտութիւնը կը պատրէ մեզ ճանաչել մեր անձը։ Հպարտութեամբ կը մոռանանք մեր պակսութիւնքը, մեր յանցանքները և մեր ամեն ցածութիւնքը, որպէս զի կարենանք քաղել քանի մի ունայն սնապարծութիւնք, ինչպէս են՝ գեղեցկութիւն, հարստութիւն, ազգաբանութիւն, որոնք ունայն են և անցողական և կարող չ'են երբէք ճշմարիտ արժանաւորութիւն համարուիլ մարդոյ համար. վասն զի իրենց մէջ չ'ունին հաստատուն և վայելուչ պարծանաց հիմնական տարրեր։ Հպարտութիւնը մարդոյ համար չ'է, կ'ասէ Սողոմոն իմաստունը։

Հպարտութիւնը ունի խիստ կորստական հետեւանքներ։ Հպարտութիւնը յանցաւոր և ապերախտ կը կացուցանէ զմեզ Աստուծոյ առջեւ, որմէ ստացած ենք ամեն բարիք և զոր

պարտաւոր ենք փառաւորել 'ի բոլոր սրտէ։ Հպարտութիւնը մեծ արգելք է կրօնական զգացման, վասն զի, քրիստոնէական բարեպաշտութիւնը կը պահանջէ չը մեծամտիլ երբէք, այլ մեր սիրտը, մեր միտքը և կամքը հնազանդեցնել աստուածային կամաց, ճանաչել մեր մեղքերը և այն դատապարտութիւնը, որուն արժանացած էինք, դիմել Աստուծոյ ողորմութեանը և շնորհացը Յիսուսի Քրիստոսի անուամբ։ Հպարտ և ամբարտաւան սիրտը կ'ընդդիմանայ այս կանոններուն և նոյն իսկ ամբարիշտն ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ անսանձ և կատաղի հպարտ, որ չ'ուզեր կրել և ոչ մի լուծ, չ'ուզեր ճանաչել ոչ մի իշխանութիւն և կամի հետեւիլ միայն իւր ցանկութեանը և կրից։ Հպարտութիւնը անիրաւ կ'առնէ զմարդ առ իւր ընկերն։ Հպարտը սառնութեամբ կը նայի ինչ որ բարձր է իրմէն, և կ'ատէ չարաչար. նա անխնայ կ'աշխատի նուաստացնել ինչ որ բարձր է, և այս մասին գործ կը դնէ ամեն անարգ միջոց, չարախօսութիւն, բամբասանք, կռիւ, վէճ և խռովութիւն։ Նա միայն կը ձգտի բարձրանալ, ինչ ճանապարհաւ որ լինի։ Հպարտը ամենեւին իրաւունք չը տար տաղանդին և արժանաւորութեանը, այլ անդադար կը վառէ և կը բորբոքէ անվերջ վէճեր և գանգատներ։ Նա կը խլէ քաղցրութիւնը և պատիւը գերդաստանի միութենէն և ինքն դիւրագրգիռ է ամեն թեթեւ անպատուութեան համար։ Հպարտը խստութեամբ կ'իշխէ և զզուանօք կը հնազանդի, և ուրեմն պատիժ է նա հասարակութեան։ Հպարտը վնասակար է նոյն իսկ իւր անձին, անմիտ ձեռնարկութիւններ հնարելով կ'ենթարկէ՝ թէ՛ իւր անձը և թէ՛ այլոցը մեծ դժբաղդութեան։ Մանաւանդ արգելք կը լինի ուղղութեան և զղջման, որով կարող են մարդիկ գտնել Աստուծոյ ողորմութիւնը 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի։ Ս. Գիրքը այսպէս կը խօսի հպարտութեան վրայ. "Զի խնդայ ընդ ամենայն զոր ատէ Տէր, և խոտորի վասն պղծութեան անձին իւրոյ"։ "Վա՛յ այնոցիկ որք զանձինս առ իմաստունս ունիցին և յաչս անձանց իւրեանց խորհրդականք"։ "Այսպէս ասէ Տէր, մի՛ պարծեսցի իմաստունն յիմաստութիւն իւր, և մի՛ պարծեսցի հզօրն 'ի զօրութիւն իւր, և մի՛ պարծեսցի մեծն 'ի մեծութիւն իւր, այլ յայն

պարծեսցի որ պարծիցին խմանալ և ճանաչել զիս՝ թէ ես եմ Տէր որ առնեմ զիրաւունս և զողորմութիւն „։ “Զի՞նչ ունիս զոր ո՛չ իցէ առեալ և եթէ առեր զի պարծիս իբրեւ զչ՚առեալ՝ Տէր ամբարտաւանից հակառակ կայ տայ շնորհս խոնարհաց „։ Ա. Պետ. Ե. 5։ Առակ. Զ. 16։ Եսայի Ե. 21։ Երեմ. Թ. 33—24։ Ա. Կորնթ. Գ. 7։ Ս. Գիրքը պարզապէս կը հաստատէ՝ թէ ինչպէս Աստուած սաստիկ կը պատժէ հպարտ փարաւօնը Նաբուգոդոնոսորը։ Հպարտը շատ անգամ արտաքուստ կ՚երեւի շռայլ, հագուստի մէջ՝ պճնասէր, տան մէջ՝ շքեղասէր, ձի և կառք պահելու մէջ՝ զարդասէր, հիւրասիրութեան և մեծարանաց մէջ՝ չափազանց մսխող։ Շռայլութիւնը մեր կարողութենէն վեր ծախուց կ՚ենթարկէ զմեզ, կը վատնէ մեր հարստութիւնը և չքաւորութեան դուռը կը հասցնէ։ Շռայլութենէ հեռանալու համար պարտինք հետեւիլ այս կանոններուն։ — Ա. Մեր ծախքը պէտք չ՚է որ մեր եկամուտքէն աւելի լինի և կամ հաւասար, որովհետեւ մեր եկամտի մէկ մասը պարտաւոր ենք գործ դնել մարդասիրութեան համար, իսկ միւս մասը մեր ձախորդ օրուան և կամ անակնկալ պատահարաց համար պահպանել։ — Բ. Պէտք է մտադրութիւն դարձնել մեր ընդունակութեան և վիճակին վրայ, մեր կացութեան և աստիճանի վրայ, որպէս զի չը կարենան նախատել զմեզ, որպէս թէ մեր անձը չենք ճանաչեր, և մեր կարողութենէն վեր գործ կը բռնենք։ Այս կարող է հասարակութեանը վնասել, նախանձ ու ատելութիւն զարթուցանել մեզ հաւասար մարդկանց մէջ և խանգարելով ընկերականութեան կարգը՝ զզուանք պատճառել մեզմէն մեծերուն։ — Գ. Պարտինք յարգել մեր բնակած երկրի սովորութիւնը և ընդհանրապէս սիրել և պատուել ինչ որ օգտաւէտ է և վայելուչ, որպէս զի վնասակար օրինակ չի տանք մեր հայրենակիցներուն. որովհետեւ մարդասիրութիւնը կը պահանջէ հեռացնել մեզմէն ամեն բան, ինչ որ կարող է գայթակղութիւն պատճառել մեր ընկերին։

Շռայլութիւնը կը զօրացնէ փափկասիրութիւնը, մարմնապաշտութիւնը և հպարտութիւնը։ Նա առիթ կը տայ մեզ չափազանց հոգալ մեր մարմնոյն համար և փափկասիրութեան մէջ ընկղմիլ, որմէ ազատիլը խիստ դժուարին կը լինի, երբ

կամենանք ուղղուիլ։ Շռայլութիւնը հասարակութեան մէջ կը սերմանէ անգործութիւն, ունայնասիրութիւն, սնոտի և վաղանցուկ զուարճութիւններ։ Նա կը թուլացնէ և կ՚ապականէ ժողովրդի վարքը, մեծ նշանակութիւն կը տայ հարստութեանը և սակայն ամենեւին չ՚օգներ չքաւորներուն և չ՚սփոփեր նոցա տառապանքը։ Վերջապէս շռայլութիւնը կը զբաղեցնէ ներկայ կենաց խաբուսիկ ունայնութեամբ և կը շիջուցանէ մեր առ Աստուած և առ հոգեւորս ունեցած սէրը։ Ս. Գիրքը կը դատապարտէ շռայլութիւնը այս խօսքերով. “Մի՛ հպարտանար առաջի թագաւորի և ՚ի տեղիս մեծամեծաց մի՛ մատչիր „։ Առակ. ԻԵ. 6։ Պօղոս առաքեալը կը յորդորէ կանայքը՝ պարզ հագուստներ հագնիլ. “Նոյնպէս և կանայք ՚ի զարդ խոնարհութեան, ակնածութեամբ և զգաստութեամբ զարդարել զանձինս. մի ՚ի հիւսս ոսկեմանս ընտելուզեալս մարգարտով, կամ ՚ի հանդերձս պաճուճեալս. այլ որպէս վայելէ կանանց՝ զաստուածպաշտութիւն յանձն առելոց գործովք բարութեան „։ Ա. Տիմ. Բ. 9—10։ “Որոց լինիցի ո՛չ արտաքուստ հիւսիւք և ոսկեհուռ ծամակալօք՝ կամ պաճուճեալ զգեստուք զարդ. այլ ծածուկ սրտին զմարդն. անկեղծութեամբ հնազանդութեան և հանդարտութեան հոգւոյն, որ է առաջի Աստուծոյ բազմապատիկ. քանզի այսպէս երբեմն և կանայք որ յուսացեալ էին յԱստուած, զարդարէին զանձինս հնազանդիլ իւրեանց արանց „։ Ա. Պետ. Գ. 3—6։ — Շռայլութիւնը բոլորովին հակառակ է Աւետարանի հոգւոյն. վասն զի Աւետարանը կ՚առաջարկէ մեզ մեր Փրկչի սէրը, որ իւր կեանքը անցուց աշխատանաց մէջ, հեռացաւ զգացողութիւնները փաղաքշող իրերէ, հեզութեամբ և խոնարհութեամբ յանձն առաւ տառապանք և չարչարանք։ Աւետարանը կը յորդորէ մեզ որ մեր միակ փառքը Աստուծոյն հաւատարիմ լինելն է, նորա ողորմութեանը յուսալն և միայն նորա խաչով պարծիլն. “Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն ՚ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ՚ի խաչ ելեալ է և ես աշխարհի „։ Գաղ. Զ. 14։ Անհնարին է որ Աստուծոյ սէրը կապուի այս կենաց ունայնութեան հետ. և միթէ կը վայելէ՞ Յիսուսի հետեւողներուն զԱստուած թողուլ և զաշխարհ սի-

րել։ “Մի՛ սիրէք զաշխարհ և մի՛ որ ինչ յաշխարհի է, եթէ ոք սիրէ զաշխարհ՝ ո՛չ է ’ի նմա սէր Հօր „։ Ա. Յովհ. Բ. 15։ Մեր Փրկիչը մեծատան առակով կը պատկերացնէ մեր առջեւ շրռայլութեան վտանգը։ Կը պատկերացնէ թէ ի՛նչպէս ծիրանի հագուստներ կը հագնէր և զեղխութեան մէջ կը տապալէր, մոռանալով աղքատները և ամենեւին չը մտածելով իւր հոգւոյ փրկութեան համար։ Ղուկ. ԺԶ. 19։ Ս. Գիրքը շռայլութեան և հպարտութեան հակառակ կը պատուիրէ մեզ. — Ա. Հեղութիւն, որ է մեր ունեցած տաղանդները և բարութիւնները չափէն դուրս չը մեծացնել, այլ ճանաչել և խոստովանիլ մեր պակասութիւնները։ “Ցառապեցարուք, սգացարո՛ւք և լացէ՛ք, ծաղր ձեր ’ի սուգ դարձցի և ուրախութիւն ձեր ’ի տրտմութիւն. խոնարհեցարո՛ւք առաջի Ցեառն և բարձրացուսցէ զձեզ „։ Յակ. Դ. 9—10։ “Խոստովան եղերուք միմեանց զմեղս և աղօթս արարէք ’ի վերայ միմեանց, որպէս զի բժշկեսջիք, քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց յօգնականութիւն „։ Յակ. Ե. 16։ — Բ. Չը հպարտացնել մեր սիրտը մեր ունեցած արտօնութեամբ. այլ ընդ հակառակը նոյն արտօնութիւնը մեզ համար գեղեցիկ միջոց համարելով՝ գոհանալ Աստուծմէ։ — Գ. Միշտ պատրաստական ըլլալ այլոց առջեւ խոնարհիլ և սնապարծութեան ամենեւին տեղի չը տալ։ “Մի՛ ինչ ըստ գրգռութեան և մի՛ ինչ ըստ սնապարծութեան, այլ խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարիլ, առաւել քան զանձինս, մի՛ զանձանց և եթ դիտել այլ իւրաքանչիւր ոք ընկերին „։ Փիլ. Բ. 3։

Խոնարհութիւնը արտաքուստ կ’երեւի հեզ վարմունքով և վայելուչ խօսակցութեամբ, այսինքն երբ մեզմէ մեծերը կը պատուենք, հաւասարներու հետ համաձայն կ’ընթանանք, մեզմէ ստորիններու հետ քաղցրութեամբ և հեզութեամբ կը վարուինք, այլոց խրատները կը լսենք և առ հասարակ այնպէս կը գրաւենք ուրիշներուն սիրտը, որ եղբայրսիրութեան կապը կ’ամրանայ. այս է որ կ’անուանի ճշմարիտ քաղաքավարութիւն։ Իսկ եթէ խոնարհութիւնը կեղծ ու պատիր է, խօսակցութեան ձեւերը խաբեբայ, հեզութիւնը լոկ դիմակ է, որոյ տակ կը սքօղի հպարտութիւնը. այս կ’անուանի մար-

դախաբութիւն՝ քան թէ քաղաքավարութիւն։ Ս. Գիրքը կը պատուիրէ խոնարհութիւն ունենալ առ միմեանս. “Ամենեքեան ընդ միմեանս զխոնարհութիւն ունիջիք, զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ զշնորհս խոնարհաց „։ Ա. Պետ. Ե. 5։ Աւետարանը օրինակ կը տայ մեզ մաքսաւորը, որ խոնարհութեամբ և զղջմամբ արդարացաւ և գնաց իւր տունը. “Էջ սա արդարացեալ ’ի տուն իւր քան զնա. զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի „։ Ղուկ. ԺԸ. 14։ Խոնարհութիւնը աւելի յարմար և վայելուչ է երիտասարդներուն, պատճառն որ նոքա փորձուած չեն, շատ արգելքներ ունին և մեծամտութիւնը կարող է խափանել նոցա առաքինութիւնը և առաջնորդել ’ի տգիտութիւն։ Բայց եթէ երիտասարդները շատ չը վստահին իրենց անձին վրայ, այլ հեզութեամբ և պարկեշտութեամբ ընդունին իրենց ծնողաց, իրենց ուսուցչաց և ամեն բարեմտաց բարի խրատները, շուտով կատարելութեան կը հասնին և շատ առաջ կ’երթան. “Սոյնպէս և, երիտասա՛րդք, հնազանդ լերուք ծերոց, ամենեքին ընդ միմեանս զխոնարհութիւն ունիջի՛ք „։ Պետ. Ե. 5։ Խոնարհութեան ամենայարմար միջոցն է քրիստոնէական կրօնքը, որ կարելի է ասել թէ մի գեղեցիկ դպրոց է խոնարհութեան։ Քրիստոնէական կրօնքը հզօր կերպով կը պատուիրէ խոնարհութիւն և մեծամեծ խոստմունքներ կը խոստանայ և քրիստոնէական հաւատոյ բոլոր մասունքը խոնարհութեան գործքեր են։ Երբ կը խոստովանինք որ մեր փրկութիւնը Աստուծոյ ձեռքն է. երբ կը հաւատանք որ Աստուծմէ կախեալ ենք. երբ կը խոստովանինք որ մեր տկարութեան զօրացուցիչը, մեր մեղքերուն քաւիչը և մեր դժբաղդ վիճակի բարւոքիչը՝ Աստուած է. երբ կ’ընդունինք որ մենք միշտ կարօտ ենք Աստուծոյ ողորմութեանը և օգնութեանը. երբ կը ճանաչենք որ մենք ամենքս հաւասար ենք Աստուծոյ առջեւ, և երբ մեր ժամանակաւոր արտօնութիւնները առ ոչինչ կը համարենք և միայն յաւիտենականը կը փնտռենք, ահա այս ճանաչողութեամբ կը յայտնենք մեր խոնարհութիւնը։ Քրիստոնէական կրօնքը կ’ուսուցանէ մեզ, որ մենք գործակից ենք Նախախնամութեան, և ամեն

վիճակի, ամեն պաշտօնի մէջ պարտաւոր ենք կատարել մեր պարտաւորութիւնները, հնազանդելով Աստուծոյ կամքին և իմանալով որ ճշմարիտ առաքինութիւնը և իսկական փառքը հնազանդութեան մէջ կը բովանդակի։ Աւետարանը կ'ուսուցանէ մեզ ատել աշխարհային ունայնութիւնները, որով զբաղուած են շատ մարդիկ, և ճանաչել մեր անձը իբրեւ պանդուխտ և ճանապարհորդ աշխարհիս մէջ. կ'ուսուցանէ մեզ աշխատիլ երկնային հայրենեաց դուռը բանալ, ուր միայն պահուած է առաքինեաց համար հաստատուն փառք և յաւիտենական երջանկութիւն։ Մեր խոնարհութեան ամենամեծ օրինակն է մեր Փրկիչը, որ մեր սիրոյ համար չարչարանք յանձն առաւ, որպէս զի մենք եւս նոյն խոնարհութեան քաղցր զգացումները կրելով և աշխարհի ունայնութիւնը առ ոչինչ համարելով, կարենանք նորա աշակերտ համարուիլ։ "Զայն խորհեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ, որ և 'ի Քրիստոս Յիսուս. որ 'ի կերպարանս Աստուծոյ է. ո՛չ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինիլն հաւասար Աստուծոյ. այլ զանձն ունայնացոյց զկերպարանս ծառայի առեալ՝ 'ի նմանութիւն մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրեւ զմարդ։ Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ. և մահու խաչի"։ Փիլ. Բ. 5—9։ Այսպէս ուրեմն որչափ որ աւետարանական հոգին կը զօրացնենք մեր մէջ, այնչափ դիւրին կը լինի մեզ համար խոնարհութիւնը։

Հպարտութեան գլխաւոր դեղն է քրիստոնէական կրօնքը։ Պարտինք մեր կողմէն անդադար աշխատիլ հպարտութեանը յաղթելու համար՝ ամեն օր յառաջադիմել խոնարհութեան մէջ։ Մեր դէմ եղած հակառակութիւնները պէտք է օգտաւէտ համարինք մեզ համար, որով կարող ենք մեր պակասութիւններն զգալ, գոռոզութեան հոգւոյն զօրութիւնը նուաճել, ուրիշներէն խրատ խնդրել, մեր գործքը ճշմարիտ խրատներուն համաձայնեցնել և շատ չը վստահիլ մեր անձին վրայ, որ երբեմն ինքնասիրութեան ախտով կը ճարակի։ Պարտինք փախչիլ այն մարդկանց ընկերակցութենէն, որոնք ցած են և երեսպաշտ և ամեն բարեկամութիւն միայն իրենց օգտի համար գործ կը դնեն։ Մեզմէ բարձր մարդկանց հետ

ունեցած կապակցութիւնը խիստ օգտաւէտ է այս նկատմամբ, որ նոքա աւելի լուսաւորուած և փորձառու են։ Պարտինք մանկութենէ վարժուիլ սակաւ խօսելու մեր անձին վրայ և ուրախութեամբ հնազանդելու ամեն բարի խորհուրդներու։ Պարտինք չը յամառիլ երբէք մեր կարծիքներուն վրայ, այլ միշտ հեռանալ ունայնասիրութենէ և այսպէս հպարտութեան արմատները խլել։ Երբ 'ի ներքուստ պարզ սիրտ կ'ունենանք և արտաքուստ համեստ կեանք կը վարենք, այնուհետեւ կարող ենք ամբարտաւանութեան և գոռոզութեան հոգին խպառ նուաճել, գործունի և օգտաւէտ կեանք ունենալ և մեր անձին համար շատ չը հոգալ։ Այս ամեն միջոցները և ընդունակութիւնները պարգեւողը Աստուած է, ուստի և պարտաւոր ենք ամեն ժամանակ նորա օգնութիւնը խնդրել, որ կարող է մեր սիրտը փոխել, մեզ կամք և գործադրութիւն տալ և իր հոգւով յաջողել՝ ինչ որ բարի է և օգտաւէտ. "Զի Աստուած է, որ յաջողէ 'ի մեզ զկամելն և զառնելն վասն հաճութեան"։ Փիլ. Բ. 13։

ԶԳԱՍՏՈՒԹԻՒՆ ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Իւզգիս որ աշխարհային բաները փնտռելու, գործածելու և վայելելու համար կարեւոր է զգաստութիւն, նոյնպէս կարեւոր է և նեղութեան մէջ։ Թէ՛ բաղդաւորութեան և թէ՛ դժբաղդութեան մէջ մարդ պարտական է հաւասար հոգի կրել և երբէք բանականութեան և արդարութեան սահմանը չ'անցնիլ։ Քրիստոնէական զգաստութեան այս մասը, որոյ կանոններուն պարտինք հետեւիլ դժբաղդութեան ժամանակ, կ'անուանի հեզութիւն, հաստատութիւն և համբերութիւն։ Հեզութիւնը հակառակ է յամառութեան, նեղսրտութեան և բարկութեան. հաստատութիւնը հակառակ է երկչոտութեան. իսկ համբերութիւնը հակառակ է թուլութեան, յուսահատու-

թեան և տրտնջման։ Հեզութեան հոգին կ'երեւի գլխաւորապէս անպատուութեան և հակառակութեան մէջ. հաստատութեան հոգին կ'երեւի վտանգի մէջ. իսկ համբերութեան հոգին՝ նեղութեան և ձախորդութեան մէջ։

Քրիստոնեական հեզութիւնն է հանգիստ և խաղաղ հոգի պահպանել ամեն անհաճոյ և սիրտ վիրաւորող պատահարաց մէջ, երբէք կրից տեղի չը տալ և վշտացած ժամանակ բանիւ կամ գործով բանականութեան դէմ չը մեղանչել, և այս ամենը կատարել Աստուծոյ կամաց և օրինաց հնազանդելու համար։ Ճշմարիտ Քրիստոնեայն միշտ այս հեզութեան հոգին կը կրէ. նա չը նեղանար և չը բարկանար, երբ վիշտ կամ կորուստ կը պատահի իրեն. նա ոչ միայն չ'անարգեր և չը բարկացներ ուրիշները, այլեւ ուրիշներէն անարգանք կրած ժամանակ՝ փոխարէնը չը հատուցաներ։ Նա իւր հեզութեամբ կը մեղմացնէ թշնամեաց բարկութիւնը, կը խաղաղէ նոցա սիրտը և կը ներէ իւր անձին դէմ եղած անարգանացը։ Նա կը հնազանդի խրատներու և յանդիմանութեան, կը յարգէ իրմէ մեծերը և քաղցրութեամբ կը վարուի իրմէն ստորիններու հետ։ Հեզութիւնը ամենագեղեցիկ առաքինութիւններէն մէկն է։ — Ա. Նա սերտ կապով կապուած է միւս առաքինութեանց հետ, ինչպէս են, բարեպաշտութիւն, խոնարհութիւն, մարդասիրութիւն եւայլն. որովհետեւ ինչպէս բարեպաշտութեամբ, նոյնպէս և հեզութեամբ կը պարտաւորինք Նախախնամութեան տնօրինութեանը և հրամանին անսալ։ Բարեպաշտութեամբ կը բարձրացնենք մեր սիրտը առ Աստուած մեզ պատահած ձախորդութեանց մէջ և այսպէս կ'ասենք. "Տէր իմ և Աստուած իմ, քեզ կը նուիրեմ նեղութիւնս և վիշտս. ուսո՛ ինձ կամիլ, ինչ որ դու կամիս„. Խոնարհութիւնը կը պահանջէ բծախնդրութեամբ չը նայիլ մեր ընկերի արարմանց վրայ, այլ մտաբերել մեր պակասութիւնները։ Մարդասիրութիւնը կը պատուիրէ ներել մեր ընկերին և խաղաղութեամբ վարուիլ նորա հետ։ Իսկ մեր հոգւոյ նորոգութեան ամենահաստատ նշանն է հեզութիւնը։ Երբ մեր հոգին խաղաղ է և կը վայելենք բարի խղճմտանքի ճշմարիտ բարութիւնը, երբ գոհ է մեր սիրտը և ամենեւին դառնութիւն չը կայ, այն ժամանակ միայն կ'իմացուի

որ հեզութիւն ունինք ընկերի համար և գոհութիւն Նախախնամութեան բարեաց համար։ — Բ. Հեզութիւնը անհրաժեշտ կարեւոր է մեր հանգստութեան համար, որովհետեւ առանց հեզութեան մենք միշտ տրտունջի մէջ ենք, և այս տրտունջն է, որ ընդդէմ է Աստուծոյ կամացը և կը զրկէ զմեզ նորա օգնութենէն և մխիթարութենէն։ Առանց հեզութեան բռնութիւնը և անխոհեմութիւնը կը թագաւորեն մեր վրայ և կորստեան ճանապարհ կը բանան, շփոթելով մեր մերձաւորներու հետ ունեցած բարեկամութիւնը և հաւատարմութիւնը։ — Գ. Հեզութիւնը կարեւոր է հասարակաց բարութեանը համար. վասն զի եթէ հասարակութեան անդամները վառուած չեն հեզութեան հոգւով, ամեն խռովութիւն, կռիւ, աղմուկ և սպանութիւն կը տիրեն ընկերականութեան մէջ։ Ինչ տեղ հեզութիւնը և խոնարհութիւնը աջակից են, ինչ տեղ սէրը արդարութիւնը և խոհեմութիւնը կը տիրեն, և ինչ տեղ բանականութեան ձայնը կը լսուի, այն տեղ ամեն խռովութիւն, աղմուկ և կռիւ կը դադարին։ — Դ. Հեզութեամբ Աւետարանի հոգին մեր մէջ կը բնակի, որ կը պատուիրէ ոչ միայն հեզ լինիլ, այլեւ ամեն տեղ և ամեն ժամանակ հեզութեան ճշմարիտ պատկերը՝ Յիսուս Քրիստոս մեր աչքի առաջն ունենալ. "Ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ„։ "Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։ Երանի ողորմածաց, զի նոքա զողորմութիւն գտցեն„։ Մատ. Ե. 5—7։ Սողոմոն իմաստունը կ'ասէ որ, հակառակութիւնը կը տիրէ այն սրտերու մէջ, որոնք հեզ չ'են. "Մի՛ փութար յոգիս քո բարկանալ. վասն զի բարկութիւն 'ի ծոց անզգամաց դադարի„։ Ժող. Է. 9։

Հեզութեան հոգին կը ծնուի և կը զարգանայ մեր մէջ. — Ա. Երբ մանկութենէ կ'ուսանիմք զսպել հպարտութիւնը և անձնասիրութիւնը և աւելի մտադրութիւն կը դարձնենք, ոչ թէ ինչ որ այլք մեզ պարտին, այլ ինչ որ մենք այլոց պարտական ենք. ոչ թէ ինչ որ մեզմէն առնուած է, այլ ինչ որ Աստուած մեզ պարգեւած է։ — Բ. Պարտինք ոգեւորիլ հեզութեամբ և լաւ զննել այն նեղութիւնները, որոցմէ Աստուած պահպանած է զմեզ, լաւ նկատել այն ունայնութիւնները, ո-

քոց կորուսաը ամենեւին արժանի չէ ապաշաւանաց։ — Գ. Աստուծոյ հոգին միայն կարող է զօրացնել մեր մէջ ճշմարիտ հեզութիւնը. նա միայն կարող է հեզութիւնը թագաւորեցընել մեր սրտի վրայ։ Մեր Փրկչի օրինակը, յորդորները, մեզմէն պահանջած ընդհակառակութեան առհասարակ, մեր փոքր եղբայրներուն հասուցած բարիքը, ահա այս է որ կարող է զգալի առնել մեզ հասիր հեզութիւնը և քրիստոնէական մարդասիրութիւնը. “Որովհետեւ արարիք միւսի ’ի փոքրիկանցս յայսցանէ, ինձ արարիք ”։ Պօղոս առաքեալը կը յորդորէ ասելով. “Զգեցարուք այսուհետեւ իբրեւ ընտրեալք յԱստուծոյ՝ սուրբք և սիրելեալք, զգութ, զողորմութիւն, զքաղցրութիւն, զխոնարհութիւն, զհեզութիւն, զերկայնմտութիւն, ներել միմեանց, ընդհակառակ իրերաց, եթէ ուրուք զմեքէ տրտունջ ինչ իցէ, որպէս Աստուած ֆրիստոսիս ընդհակառակ ձեզ, նոյնպէս և դուք ”։ “Ամենայն դառնութիւն և բարկութիւն և սրտմտութիւն և աղաղակ և հայհոյութիւն բարձցի ’ի ձէնջ ամենայն չարութեամբ հանդերձ, լերուք ընդ միմեանս քաղցունք, գթած, ընդհակառակ միմեանց՝ որպէս և Աստուած ֆրիստոսիս ընդհակառակ մեզ ”։ Կող. Գ. 12։ Եփես. Դ. 31—32։ Մեր Փրկիչը կը յորդորէ. “Ուրէք զլուծ իմ ’ի ձեզ և ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց, զի լուծն իմ քաղցր է՝ և բեռն իմ փոքրագի ”։ Մատ. ԺԱ. 29—30։

Բաւական չէ միայն հպարտութենէ հեռանալ, այլ հարկ է նոյնպէս չարահոգութենէ փախչիլ։ Չարահոգութիւնը առիթ կը տայ մեզ ամեն բան չար մտքով մեկնել, ամեն անցք չար կողմէն նկատել, նեղանալ և դանդաղիլ։ Նա կը ցամքեցընէ մեր սիրտը և կը դառնացնէ մեր դատողութիւնը և այլոց հետ ունեցած խօսակցութիւնը և վարմունքը։ Չարահոգութիւնը թէպէտ այնքան զօրեղ չ’երեւիր, բայց իր գործքը և հետեւանքը բարկութեան պէս կորստական են։ Նա կ’ատէ և կը խանգարէ երջանկութիւնը, թէպէտ սակաւ կը դիզէ և սակաւ կը վատնէ, բայց շարունակ գործելով՝ կը զգուեցընէ և կը չարաչանչէ։ Չարահոգութիւնը ծնունդ է կարճամտութեան, անձնասիրութեան և դատարկաբանութեան,

որ ամենեւին համբերել չի գիտէ հակառակութեան և զրկողութեան։ Չարահոգութիւնը ըստ մեծի մասին ծերունեաց տան հատուած է, բայց կը գտնուի նոյնպէս երիտասարդաց մէջ, որոնք առողջութեամբ և կենաց արտաքին վայելչութեամբ զարդարուած են և ասկից գործառնութեան մէջ փոքրիկ դժարութիւն տեսնելով կը վշտանան կը բարկանան և այսպիսի նեղսրտութեամբ կը դառնացնեն իրենց երիտասարդութիւնը։ Չարահոգութիւնը բոլորովին հակառակ է Աւետարանին, որովհետեւ Քրիստոնէի պարտաւորութիւն է վառած լինիլ բարեհոգութեամբ առ ընկերն և հեռացնել նախանձ, նեղսրտութիւն և տրտունջ։ Բարեհոգութենէն կը ծնանին համբերութիւն, հաստատմտութիւն և քաղցրութիւն։ Քրիստոնեային պարտական է խոպան հեռանալ չարահոգութենէ, որովհետեւ կը ճանաչէ աշխարհը և գիտէ իր ցանկութեան չափը և սահմանը։ Քրիստոնեային պէտք է ունենայ ուրախ և խաղաղ հոգի. վասն զի լցուած է Աստուծոյ ողորմութեամբ և Աւետարանի խոստումնքերով. “Եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախութիւնն կատարեալ լիցի ”։ “Ցուսով լինջ ացէք, նեղութեան համբերեցէք ”։ Ա. Յովհ. Ա. 4։ Հռոմ. ԺԲ. 12։ Այս ուրախութիւնը պէտք չ’է բաժանել այն խօսքերէն, զորս աւետարանչի իբրեւ ուրախութեան միջոց կը ներկայացնէ — ԱջՌՒՅ ԿԱՑԻ։ Ա. Գիրքը կը ներկայացնէ մեզ նոյն խոկ նեղութիւնները իբրեւ առարկայ ուրախութեան. “Ամենայն ուրախութեան արժանի համարիջիք, եղբարք. յորժամ ’ի պէս պէս փորձութեան ’ի մէջ անկանիջիք ”։ Յակ. Ա. 2։

Չարահոգութենէ հեռանալու համար առաջին միջոցն է հեռանալ երկու ընդհանուր մոլորութիւններէ. — Ա. Չը կարծել երբէք՝ թէ այն պակասութիւնները թեթեւ են, որոնք յաւուրս կը գան մեր անձի վրայ իշխանութիւն չ’ունենալնէն, և ճանչնալ որ նոյն պակասութեանց համար ոչ միայն մարդկանց պատասխանատու ենք, այլ և առաջի արդար դատաւորին։ — Բ. Չը կարծել երբէք՝ թէ չարահոգութիւնը մտքի բնական չարժուամ է և մենք իշխանութիւն չ’ունինք ուղղելու։ Այս կարծիքը յանցանքէն առելի յանցանք է։ Այս կարծիքը միայն թուլամորթ մարդկանց կարծիքն է, որոնք կամք չու-

նին իրենց անձը ուղղելու։ Իրաւ է որ կան բնութենէ ստացած գրգռիչ բնաւորութիւնք, հիւանդութիւնք, աշխարհային հոգացողութիւնք, որոնք կը փոխեն մեր գեղեցիկ յատկութիւնները. բայց կան մեզ համար նմանապէս բիւրաւոր միջոցներ չարահոգութեանը յաղթելու, ինչպէս են բանականութեան և կրօնի օգնութիւնը և առ Աստուած ապաւինութիւնը, վասն զի, ինչ որ անհնար է մարդկանց համար, հնարաւոր է Աստուծոյ համար։

Չարահոգութենէ հեռանալու երկրորդ միջոցն է յաղթել մեր անկանոն անձնասիրութեանը, որ գլխաւոր աղբիւր է չարահոգութեան։ Այս գեղեցիկ յաղթանակը տանելու համար՝ պարտաւոր ենք համբերել պատահած նեղութեանց, հակառակութեանց և զրկողութեանց և ամենեւին ուշադրութիւն չը դարձնել չնչին գործքերու վրայ, որոնք շատ անգամ չարահոգութիւն գրգռելու առիթ կը լինին։ Մեծ և վսեմ պարապմունքով զբաղուած մարդիկը ամենեւին չ՚են գրգռիր և բորբոքիր պատահած չնչին վնասներէն և հակառակութիւններէն։ Երբ քրիստոնէական վսեմ կոչմամբ մեզ գլխաւոր պարտք կը համարինք ճշմարիտ և յաւիտենական բարին որոնել, յուսով և հաւատով յերկրաւորէն յերկնաւորն բարձրանալ, աղօթելով՝ Աստուծոյ հետ միանալ, հանապազ Հոգւոյն Սրբոյ ամենակարող օգնութիւնը խնդրել, անարժան բաներուն արժանաւորութիւն չը տալ, մեր կենաց մեծ նպատակը հասկնալ և ժամանակաւոր նեղութիւնները առ ոչինչ համարել, այնուհետեւ չարահոգութիւնը երբէք չը մօտենար մեզ։ Պարտինք իմանալ, որ չարահոգութիւնը մուտք կը գտնէ նաեւ այն ժամանակ, երբ կրքերը կը դադարին, երբ աշխարհային վայելքները կը կորուսանեն մեզ համար իրենց գեղեցկութիւնը և գրաւիչ յատկութիւնը, այն ժամանակ եւս հարկ է զգուշանալ չարահոգութենէ, որովհետեւ որչափ մօտենանք գերեզմանին, այնչափ պարտաւոր են հաստատուն կալ յաւիտենական փառաց և երջանկութեան ըղձին մէջ։ Այս է որ կարող է մեր ծերութիւնը մխիթարական և գեղեցիկ յոյսերով պսակել։ Եթէ մենք պարտաւորուած ենք չարահոգի մարդկանց հետ ապրիլ, և եթէ այս մարդիկը մեր մե-

ծաւորներն են, հարկ է որ նոցա չարութիւնը իբրեւ մրրիկ համարելով՝ համբերենք առանց գրգռելու՝ թէ բանիւ և թէ գործով. հարկ է որ մեր լռութեամբ և հնազանդութեամբ հանդարտեցնենք նոցա խռովայոյզ բնաւորութիւնները, ինչպէս կը պատուիրէ Պօղոս առաքեալն. “Ծառայք հնազանդ լինիլ յամենայնի երկիւղիւ՝ տերանց, ո՛չ միայն բարերարացն և հեզոց, այլ և կամակորացն։ Զի և այս ճշմարիտ շնորհք յԱստուծոյ են, եթէ բարւոք ինչ մտօք տանիցէ ոք վշտաց յանիրաւի։ Քանզի, զի՞նչ երախտիք իցեն, եթէ յորժամ մեղանչիցէք՝ տանջիցիք և համբերիցէք. այլ եթէ զբարիս գործիցէք՝ չարչարիցիք՝ և համբերիցէք, այն շնորհք յԱստուծոյ են„։ Ա. Պետ. Բ. 18—20։ Եթէ չարահոգի մարդիկը մեզ հաւասար են աստիճանաւ, հարկ է խոհեմութեամբ համբերել մինչեւ անցնի չարութիւնը և ապա հեզութեամբ մեղմացնել, որով կը փափկանան ամենակատաղի բնութիւններն անգամ. “Պատասխանի ողոք ցածուցանէ զբարկութիւն, բան խիստ յարուցանէ զբարկութիւն„։ Առակ. ԺԵ. 1։ Իսկ եթէ մեզմէ ստոր մարդիկ են և մեզմէ կախումն ունին, հարկ է յանդիմանել նոցա չարահոգութիւնը, ո՛չ թէ բարկութեան դէմ բարկանալով, այլ քաղցրութեամբ խօսելով և նոցա գոռողութիւնը ամօթահար առնելով։ Անդորր և խաղաղ հոգին միշտ կարող է սանձել կրքոտ անձերը։

Հաստատութիւնն է հոգւոյ զօրութիւն, որով կարող ենք մեզ սպառնացած վտանգներու և նեղութեանց մէջ աներկիւղ լինիլ և համարձակ դիմել դէպի վտանգը, երբ մեր պարտաւորութիւնը կը պահանջէ։ Հոգւոյ այս զօրութիւնը ըստ մեծի մասին կախումն ունի մարդոյ բնաւորութենէն, բայց մեր բարոյական և կրօնական զարգացմամբ եւս կարող ենք ձեռք բերել այս զօրութիւնը և կատարելագործել։ Այս հաստատութիւնը կարող է մինչեւ այն աստիճան կատարելագործուիլ, որ մարդ մինչեւ անգամ կեանքէն չ՚երկնչի։ Մահուան վրայ մտածելը սարսափելի է շատերուն համար, բայց հաղարաւոր հանդամանքներ կան, որ միայն մահէն չ՚երկնչելով կարող ենք ճշմարտութիւնը վկայել և արդարութիւն գործել, երբոր մեր մասնաւոր առաքինութիւնները բաւական չեն մեզ։ Պէտք է

ունենալ հոգւոյ հաստատութիւն որ աշխարհէն ՚ի վեր կը նայի և մեր հաւատոյ հետ մեր կեանքը վեր կը բարձրացնէ։ Աւետարանը կը պատուիրէ մեզ մահուանէ չերկնչելու չափ հոգւոյ հաստատութիւն ունենալ, և այս տեղ է ահա նորա բարոյական զօրութիւնը։ Երբ քրիստոնեայն համզուած է արդարութեան համար, այնուհետեւ մահը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կեանք և մեծարանալ առ Աստուած։ Կան պարագաներ, որ մեր փրկչի ասածին պէս, պարտաւոր ենք պատրաստ լինել մեր ձեռքը կորելու և մեր աչքը խլելու. “եթէ ակն քո աջ դայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա՝ և ընկեա ՚ի քէն, զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի ամենայն մարմինդ քո անկանիցի ՚ի գեհենն։ Եւ եթէ աջ ձեռն քո դայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա՝ և ընկեա ՚ի քէն, զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ և մի ամենայն մարմինդ քո արկանիցի ՚ի գեհենն„։ Մտ. ե. 29—30։

Մեծ դիպուածոց և պատահարաց մէջ ինչ կարելի է ըսպասել այն մարդէն, որ չունի հոգւոյ հաստատութիւն։ Միայն լոկ սպառնալիքէն կը յուզուի այնպիսի մարդը և հաստատութիւն չունենալով՝ խաղալիկ կը դառնայ ամեն դէպքերու և հանգամանքներու։ Ի զուր կը յուսան Հաւատը և Հայրենիքը այնպիսի մարդոյ վրայ, ՚ի զուր կը նային նորա վրայ ճշմարտութիւնը և արդարութիւնը երկնից բարձրութենէն՝ իրենց յաւիտենական բնակութենէն. ՚ի զուր միջոց կը տայ և Նախախնամութիւնը այնպիսի մարդուն՝ իւր կեանքը անմահացնելու։ Անհաստատ մարդիկը աչք չունին, որ տեսնեն և զննեն այնպիսի հանգամանաց նշանակութիւնը. Մահ, ուսան երկիւղը ամեն բան կը ծածկէ նոցա աչքէն՝ մեծութիւն, կոչումն և յաւիտենական նպատակ։ Այս է պատճառն, որ Քրիստոս կը քաջալերէ իւր հետեւողները՝ չերկնչիլ այն մարդիկներէն, որոնք միայն մարմինը կարող են սպանանել, իսկ հոգին ոչ երբէք։ Մահէն չերկնչելով միայն՝ մարդ կը լինի աւրի զինուոր, բարի քաղաքացի, արդար դատաւոր և արդար թագաւոր։ Ճշմարիտ քրիստոնեային, կամ Պօղոս առաքեալն, սպառազինեալ զինուոր է, որ վարժած է դժուարութեան և նեղութեան, և երբէք մահէն երկիւղ չունի. “վշտակից լեր,

իբրեւ զբարւոք զինուոր Քրիստոսի„։ Բ. Տիմ. Բ. 3։ “Ամէն թէ չարչարիցիք եւս յաղագս արդարութեան, երանելի էք, բայց յերկիւղ նոցա մի երկնչիցիք և մի խռովիջիք„։ Ա. Պետ. Գ. 14։ Հոգւոյ քրիստոնէական հաստատութիւնը օգտակար է, ինչպէս մարմնաւոր, նոյնպէս և հոգեւոր բարութեանը։ Նա օգտակար է մարմնաւոր բարութեանը, որովհետեւ ՚ի բաց կը փարատէ երկիւղը, որ երբեմն վտքը ջնասը կը մեծացնէ և սրտի վրդովմունք կը պատճառէ։ Երկչոտութեամբ կը նուազղի մարդոյ մտաց բնական զօրութիւնը, որ խիստ կարեւոր է մեզ՝ մեր անձը վտանգէ պաշտպանելու համար։ Նա չատ անգամ վտանգը կը զօրացնէ և անվտանգելի կը դարձնէ. իսկ արիութիւնը վտանգը այնպէս կը տեսնէ, ինչպէս որ է իսկապէս։ Արիութիւնը չատ անգամ վտանգը կը նախատեսէ և ջնասուց առաջը կ՚առնու իւր հաստատ և համարձակ վճռահաստութեամբ։ Արիութիւնը օգտակար է մեր հոգեւոր բարութեանը, որովհետեւ մեր պակասութիւնները, մեծ մասամբ, ծնունդ են մեր թուլութեան և վատասրտութեան, երբ արիութիւն չունինք, որ ընդդիմանանք մեր կրքերուն, զօրութիւն չունինք, որ մեր վաղանցուկ հաճոյքներէն մեր անձը զրկենք և մեր վատ սովորութիւնները թողունք, երբ քաջասրտութիւն չ՚ունինք, որ մեր մարմնասէր ընկերներուն դիմադրենք, և երբ վեհ հոգի չունինք, որ մարդահաճութիւնը մերժենք և ընդդիմանանք մեր մեծաւորներու այն ապօրինի առաջարկութեանցը, որոնք կը հրամայեն անիրաւութիւն դործել։ Բիւրաւոր պարագաներ կան մեր կեանց մէջ, ուր մեր պարտաւորութիւնը կը պահանջէ մահը առ ոչինչ համարել։ Միսլ բանիւ, կարող ենք ասել, որ հոգւոյ հաստատութիւնն է պահող և պաշտպանող մեզ՝ մեր ամեն առաքինութեանց մէջ։

Հոգւոյ արիութեանը և հաստատութեանը կարող ենք հասնիլ. — Ա. Մեր բանականութեամբ, որ կ՚օգնէ մեզ լինել քաջ և արի։ Նա կ՚ուսուցանէ մեզ, որ երեւակայութիւնը չատ անգամ կը մեծացնէ երբ և կը զօրացնէ ջնասները, երբ չատ երկիւղ կը կրենք։ Բանականութեան ուժով մեծ և անսանելի կարծուած նեղութիւնները կը մեղմանան։ Հոգւոյ հաստատու-

թեամբ ամեն ընդդիմութիւններ կը յաղթուին. իսկ հոգւոյ թուլութեամբ և ցածութեամբ ամեն յառաջադիմութիւն կը խափանի։ Անարժան է բանական մարդուն չ'ընտելացնել և չը վարժեցնել իւր անձը այն նեղութեանցը, որոնք գալու են։ Պէտք չէ որ մարդ՝ մինչեւ այն աստիճան թուլութեան հասնի, որ չը կարենայ կատարել իւր պարտաւորութիւնը։ Այս ամենը շարունակ խորհելով, կարող է մարդ հոգւոյ հաստատութիւն գտնել։ — Բ. Կրթութեամբ, որ շատ կ'օգնէ մարդուն, երբ մանկութենէ կը հեռանայ երեւակայական և չափազանց երկիւղներէ և հաստատութեան մէջ կ'ամրանայ։ Երբէք պէտք չ'է մանկանց առջեւ մեր երկիւղը յայտնել, այլ հարկ է վարժեցնել պարզ կենցաղավարութեան. որովհետեւ եթէ այս զգուշութիւնը չ'ունենանք, նոքա իրենց թոյլ և փափուկ կեանքէն կ'ընտելանան փափկասիրութեան, նեղութեանց չեն տոկար, երկչոտ կը մեծնան և թուլամորթ կը լինին։ — Գ. Քրիստոնէական կրօնի ուսմունքը շատ կ'արիացնէ մեզ, եթէ մանկութենէ ուսանինք. կը տայ մեզ վստահութիւն, արդարապէս դատել և որոշել բարութիւնը և չարութիւնը։ Նա կը հեռացնէ շատ աղմուկներէ և մտատանջութիւններէ, որոց մէջ շատ մարդիկ կը շփոթին և կը տագնապին։ Նա կ'ուսուցանէ մեզ, որ Աստուծոյ երկիւղը մեծ է ամեն բանէ և կը ցրուէ ամեն երկիւղներ։ Այն մարդը, որ կը ճանաչէ ճշմարիտ Աստուածը և հանապազ յօգնութիւն կը կոչէ, նա զօրաւոր է իւր Աստուծով, ինչպէս կ'ասէ Պօղոս առաքեալը. "Այսուհետեւ զօրացարուք տերամբ, և կարողութեամբ զօրութեան նորա"։ "Եւ 'ի նոյն տքնեսջիք ամենայն ժուժկալութեամբ՝ և խնդրուածովք"։ Եփես. Զ. 10—18։ Աստուծով զօրացած մարդը բնաւ չ'երկնչիր նախապաշարմունքներէ, ցնորքներէ, թշուառութեան վշտերէ և մարդկանց չարութիւններէն։ Նա կ'աղաղակէ Պօղոս առաքելոյն հետ. "Եթէ Աստուած 'ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեզ հակառակ"։ "Այլ Տէր օգնեաց ինձ և զօրացոյց զիս, զի ինեւ քարոզութիւնն հաստատեսցի և լուիցեն ամենայն հեթանոսք, թէ ապրեցայ ես 'ի բերանոյ առիւծոյ"։ Հռով. Բ. 31։ Բ. Տիմ. Գ. 17։ Ով որ հաշտուած է Աստուծոյ հետ Յիսուսի Խաչիւ և արժանաւոր

պսակի կը սպասէ, նա բնաւ չ'երկնչիր աշխարհի ձախորդութիւններէն. չը խռովիր մահէն, այլ համարձակ կը գոչէ. "Ո՞ւր է մա՛հ, յաղթութիւն քո. ո՞ւր են, դժոխք, խայթոց քո"։ Ա. Կորնթ. ԺԵ. 55։

Աւետարանը եւս կ'առաջարկէ շատ գեղեցիկ օրինակներ, որոնք կարող են հաստատութեան հոգի ներշնչել մեզ, ինչպէս է մանաւանդ մեր Փրկչի օրինակը։ "Որ յաղթէ, տաց նմա նստիլ յաթոռ իմ, որպէս և ես յաղթեցի և նստայ յաթոռ հօր իմոյ"։ "Յաշխարհի ատ զնեղութիւն ունիցիք, այլ քաջալերացարուք, զի ես յաղթեցի աշխարհի"։ "Հայեցարուք 'ի զօրագլուխն հաւատոյ և 'ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեան, որ նմա առաջի կայր, յանձն էառ զխաչ, արհամարհեաց զամօթ"։ Յայտ. Գ. 21։ Յով. ԺԶ. 33։ Եբր. ԺԲ. 2։ Ս. Գիրքը կ'առաջարկէ մեզ նոյնպէս քաջ մարդկանց օրինակներ, որք յաւիտենական փառաց հասնելու համար, մինչեւ 'ի մահ պատերազմեցան։ Եբր. ԺԱ։ Այսպէս ուրեմն, կարող ենք քրիստոնէական բարեպաշտութեան մէջ գլտնել ամենակերպ անքակտելի և հաստատ օգնութիւններ։ Այս օգնութիւններն են, զորս Պօղոս զէնքերու կը նմանեցնէ և կ'անուանէ Աստուծոյ զէնքեր. "Զգեցարուք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի"։ Եփես. Զ. 11։

Քրիստոնէական համբերութիւնն է ուսումն նեղութիւն կրելոյ։ Համբերութիւնը չը նշանակեր անզգայութիւն. վասն զի անզգայութեամբ համբերելն առաքինութիւն չէ։ Համբերութիւնը չ'արհամարհեր պատուաւոր և օրինաւոր միջոցներ, որով կարող ենք թեթեւացնել մեր նեղութիւնները և ազատիլ։ Համբերութիւնը չ'ունի չարահոգութիւն, երբ կը համբերէ՝ չը դանդատիր իր վիճակէն, չը տրտնջար Աստուծոյ դէմ, չը դրդռուիր մարդկանց դէմ, չը մեծացներ իւր տառապանքը չափազանց փափկասիրութեամբ, չը մոռանար երբէք այն բարութիւնը, զոր ունի, կամ այն բարութիւնները, զոր Աստուած կը պարգեւէ նեղութեան փոխարէն, որով փաթթուած է մեր կեանքը. չ'երեւակայեր և չը կարծեր, որ մեր նեղութիւնները անվախճան են, չ'որոներ չար միջոցներ նե-

զութիւններէ ազատելու համար, այլ միշտ կ'իշխէ իւր անձին վրայ, և միշտ պատրաստ է Աստուծոյ կամքը կատարել. վասն զի լցուած է Աստուծոյ խոստմանց յուսով, հանապազ օգնութիւն կը խնդրէ, քաղցր է դէպ 'ի մարդիկ, երախտագէտ է դէպ 'ի բարերարներն, կը ջանայ կատարել իր պարտաւորութիւնը, որչափ կը ներէ իր կարողութիւնը։ Այսպիսի համբերողաց համար կը խօսի մեր Փրկիչը. "Եւ եղիջիք ատեցեալք վասն անուանն իմոյ և մազ մի 'ի գլխոյ ձերմէ ո՛չ կորիցէ և համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր"։ Ղուկ. ԻԱ. 17–19։

Համբերութիւնը մեծ առաքինութիւն է. — Ա. Նա է գործի նախախնամութեան, որ կը փորձէ զմեզ ինչպէս դժբաղդութեան, նոյնպէս և բաղդաւորութեան մէջ։ Նեղութիւնը կը ծնանի համբերութիւն, կ'ասէ Պօղոս առաքեալն. "Քանզի գիտեմք եթէ նեղութիւնք զհամբերութիւն գործեն"։ Հռով. Ե. 3։ — Բ. Աւետարանը կը պատուիրէ համբերութիւն, անբաժան այն առաքինութիւններէն, որոնք քրիստոնէի զարդն են։ "Յուսով խնդացէք, նեղութեան համբերեցէք"։ Հռով. ԺԲ. 12։ "Գիտասջիք զի հանդէս ձերոց հաւատոց յօրինեալ գործէ զհամբերութիւն"։ Յակ. Ա. 4։ Այսինքն մի՛ դադարիք երբէք պահել ձեզ կենաց ամեն դիպուածոց մէջ և միշտ հիմնել հաւատոյ հիման վրայ։ — Գ. Համբերութիւնն է այնպիսի գեղեցիկ առաքինութիւն, որով կարող ենք յայտնել մեր հոգւոյ զգաստութիւնը և հաստատութիւնը, մինչդեռ անհամբերութիւնը կ'ապականէ մեր հոգին։ — Դ. Համբերութիւնը այնչափ օգտաւէտ է, որ կը բժշկէ և կը մեղմացնէ մեր նեղութիւնները։ Ի՞նչ կը շահինք, եթէ նեղսրտինք մրրկի դէմ. մենք աւելի կը զօրացնենք մեր տառապանքը, կը սաստկացընենք մեր ցաւը և կը զրկենք մեզ հանգստութենէ, զոր կարող էինք համբերութեամբ ունենալ։ Մենք կը կռուինք մեր մերձակայից հետ և կը կորուսանենք խաղաղութեան և անդորրութեան ճանապարհը։ Կարող ենք ասել, որ համբերութիւնն է արուեստ սակաւ նեղութիւն կրելոյ։ Նա մեզ օգտաւէտ է, վասն զի մեր հոգին այնպիսի վիճակի մէջ կը դընէ, որով կարող ենք Աստուծոյ օգնութիւնը և ողորմութիւնը ստանալ, և նեղութեանց վարժելով՝ արդարութեան անմահ

պտուղները քաղել։ Յակովբոս առաքեալը կ'ասէ. "Համբերութիւն՝ գործ կատարեալ ունիցի, զի իցէք ողջանդամք և կատարեալք և ոչ իւիք նուազեալք"։ Յակ. Ա. 4։ Եթէ կամինք վարժեցնել մեզ համբերութեան և կամ համբերութիւնը սիրելի կացուցանել՝ պարտաւոր ենք ուրեմն գործ դնել խոհեմութեան կամ հմտութեան տուած միջոցները, նեղութիւնները տանելու կամ մեղմացնելու համար, կրթել մեր անձը համբերութեան մէջ, փափկասիրութենէ զգուշանալ, մեր սիրտը աշխարհի չը տալ, մեր կեանքը իբրեւ փորձութեան ասպարէզ համարել, նեղութեան սպասել և հասած ժամանակ չը զարմանալ, ունենալ կանոնաւոր և բարի վարք, որով տառապանքները չ'են ծանրանար մեր վրայ, մանաւանդ երբ կը յիշենք, որ մեր տառապանքները հետեւանք են մեր պատուիրանազանցութեան։ Մարդկային իմաստութիւնը կարող է նոյնպէս յառաջ բերել այնպիսի դատողութիւններ, որոնք կարող են մեղմացնել մեր վիշտերը։ Նա կարող է երեւակայական և իսկական վիշտերը և նեղութիւնները իրարմէ որոշել։ Կարող է հրաւիրել զմեզ չը լինիլ վստահ մեր անձնասիրութեան վրայ, որով երբեմն մեր արժանաւորութիւնը մեծացընելով և մեր բարի վիճակը ստոր համարելով՝ դժգոհութեան առիթ կը տանք։ Կարող է նկարագրել համբերութեան օգուտը, գեղեցկութիւնը և այն քաղցրութիւնը, զոր կը զգանք նեղութեան մրրիկը անցնելէն յետոյ։ Բայց յայտնի է՝ որ ամեն մարդիկ չ'են կարող մասնակցիլ այսպիսի դատողութեանց և մանաւանդ որ՝ շատ անգամ թոյլ և անզօր են նեղութեանց նկատմամբ նոյն իսկ դատողութիւնները։ Շատ ողորմելի կը լինէինք, եթէ մեր օգնութիւնը և մխիթարութիւնը միայն սպասէինք մեր՝ և կամ մեր շրջակայ մարդկանց դատողութենէն։ Մենք պարտական ենք համբերութիւն ուսանելու միջոցները գլխաւորապէս որոնել Աւետարանի մէջ և քրիստոնէական հաւատոյ և բարեպաշտութեան մէջ։ Աւետարանը կը տայ մեզ ամեն ուղղութիւն և օգնութիւն. — Ա. Նա կը յիշեցնէ մեզ այն ամենակարող Էակը, որմէ կախուած է մեր բարութիւնը և վշտաց մխիթարութիւնը։ Նա կը պատուիրէ, որ միայն առ Աստուած նայինք և նորա կամացը հնազանդինք

մեր խոնարհութեամբ և հաւատարմութեամբ, ինչպէս և համ-
բերութեան հայրն Յովբ կ'ասէր. "Տէր ետ և Տէր էառ, ե-
ղիցին կամք Տեառն օրհնեալ"։ Յովբ. Ա. 20։ Մեր Փրկիչը իր
սքանչելի խոնարհութեան մէջ կ'ասէր. "Զբաժակն, զոր ետ
ինձ Հայր, ո՞չ ըմպիցեմ զնա"։ Յով. ԺԸ. 11։ — Բ. Ս. Գիրքը կը
հրաւիրէ միշտ խորհիլ այն բարութեանց վրայ, զորս ստացած
ենք։ Յովբ կ'ասէր՝ ամեն բարութիւն Աստուծոյ ձեռքէն կը
ստանանք՝ և միթէ՞ պարտական չենք իւր տուածը իրեն դար-
ձընել ուրախութեամբ։ Կը հրաւիրէ զմեզ խորհիլ այն պատ-
ժոյ վրայ, որուն արժանի ենք։ Այսպիսի խորհրդածութեամբ
լցուած էր մարգարէից սիրտը և միտքը, որոնք տեսնելով ի-
րենց ազգը տառապանաց և նեղութեանց մատնուած, դարձ-
եալ կը յանդիմանէին և կ'ասէին. "Զի՞նչ տրտնջիցէ մարդ
կենդանի, կամ այր 'ի վերայ մեղաց իւրոց. քննեցան ճանա-
պարհք մեր և կշտամբեցան, դարձցուք մեք 'ի Տէր, համ-
բարձուք մեք զձեռս մեր սրտիւք հանդերձ 'ի բարձունս
երկնից. մեք ամբարշտեցաք և ոչ հաճեցաւ ընդ մեզ"։ Երեմ.
Գ. 39—41։ — Գ. Ս. Գիրքը կը յայտնէ, որ նեղութիւնները կա-
րեւոր են մեղաւոր մարդուն՝ Աստուծոյն մօտենալու համար։
Կարելի է ասել, որ այս նեղութիւնները առհաւատչեայ են
աստուածային սիրոյն և խնամոց, զոր ունի մեր հոգւոյ հա-
մար, և կամ պատիժ է, որով կամի ուղղել զմեզ, կամ փորձու-
թիւններ են, որով կամի կրթել, սրբել և կատարելագործել
մեր սիրտը, մեր միտքը, մեր հաւատքը և մեր գործը։ "Զի
զոր սիրէ Տէր խրատէ, տանջէ զամենայն որդի, զոր ընդու-
նի"։ "Զի սոքա առ սակաւ ժամանակս ըստ կամաց իւրեանց
խրատին. իսկ նա՝ վասն օգտի, առ 'ի ընդունելոյ զսրբութիւն
նորա։ Ամենայն խրատ առ ժամանակն ոչ ուրախութեան թուի՝
այլ տրտմութեան. բայց յետոյ պտուղ խաղաղութեան՝ նո-
վաւ կրթելոցն հատուցանէ յարդարութիւն"։ Եբր. ԺԲ. 6–10–12։
Շատ աստուածապաշտ մարդիկ փորձած են այս քաղցրու-
թիւնը, ինչպէս կ'ասէ Դաւիթ մարգարէն. "Մինչչեւ խոնարհ-
եալ էի ես՝ մեղայ. վասն այսորիկ զբանս քո պահեցի յոյժ։
Բարի է ինձ զի խոնարհ արարեր զիս, որպէս ուսայց զար-
դարութիւնս քո"։ Սաղ. ՃԺԸ. 67—71։ Շատ առաքինութիւն-

ներ առաջ կը գան այս նեղութիւններէն, եթէ մենք համբե-
րենք և առ բարին գործ դնենք։ Աւետարանը յիշեցնելով
մեզ մեր տկարութիւնը, մեր կախումն Աստուծմէ, կը հրաւիրէ
խնդրել նորա հովանաւորութիւնը և օգնութիւնը, որպէս զի
ընկճէ մեր հպարտութիւնը և զգայուն ու կարեկից կացուցա-
նէ մեր ընկերի նեղութեանց համար։ Նա կ'ուսուցանէ մեզ
չափաւորել մեր կապակցութիւնները, և մեր զգացողութիւն-
ները ենթարկել բանականութեան իշխանութեանը։ Նա մեզ
կը հեռացնէ ամեն չարութենէ, որ վիշտ կը պատճառէ, կը
խլէ մեր սիրտը աշխարհէն և երկնաւոր բարութեամբ լցուցա-
նելով կը տայ քաղցր զգացողութիւն աստուածային սիրոյն՝ և
հաւատ ու յոյս մեր փրկութեան համար։ "Եւ ոչ այսչափ միայն,
այլեւ պարծիմք 'ի նեղութիւնս մեր"։ Հռով. Ե. 3։ — Դ. Սուրբ
Գիրքը համբերութեան գեղեցիկ օրինակ կը տայ այն սուրբ
մարդիկը, որոնք պատերազմեցան աշխարհի հետ և յաղթող
դտան, և մանաւանդ հանապազ մեր աչքի առաջն է ամենա-
սուրբն և ամենարդարն Յիսուս, որ համբերեց չարչարա-
նաց և խաչի. "Քանզի 'ի դոյն իսկ կոչեցարուք, զի և Քրիս-
տոս վասն ձեր մեռաւ և ձեզ եթող օրինակ, զի զհետ եր-
թայցէք հոգւոյ նորա"։ Ա. Պետ. Բ. 21։ — Ե. Նա կը թեթե-
ւացնէ մեր նեղութիւնները, յիշեցնելով երկնային երջանկու-
թիւնը, ուր մեր սուգը՝ յուրախութիւն պիտի փոխուի, մեր
պատերազմը՝ յաղթութիւն և մեր տառապանքը՝ 'ի վարձ.
"Եթէ չարչարանացն կցորդ լինիմք, և փառացն հաղորդ լի-
նելոց եմք"։ "Ինձ այնպէս թուի, թէ ոչ են արժանի չարչա-
րանք ժամանակիս հանդերձելոց փառացն, որ յայտնելոց են
մեզ"։ Հռով. Ը. 17—18։ "Պիտոյ է ձեզ համբերութիւն, զի ըզ
կամս Աստուծոյ արարեալ՝ հասջիք աւետեացն. զի փոքր միւս
եւս քան որչափ գալոցն իցէ՝ եկեսցէ և ոչ յամեսցէ"։ Եբր.
Ժ. 36—37։ Զ. Ս. Գիրքը կը թոյլատրէ մեզ դիմել առ Աստ-
ուած, որ մեղմացնէ մեր նեղութիւնները, տայ զօրութիւն և
շնորհք՝ համբերել և օգուտ քաղել. "Կարդասցես առ իս յա-
ւուր նեղութեան քո, ես փրկեցից զքեզ և դու փառաւոր ա-
րասցես զիս"։ "Վշտանայցէ ոք 'ի ձէնջ՝ յաղօթս կացցէ, բերկ-
րեսցի ոք 'ի ձէնջ, սաղմոս ասասցէ"։ "Այլ հաւատարիմ է

Աստուած, որ ոչ արկղէ զձեզ ՚ի փորձութիւն առաւել քան զկար ձեր, այլ արասցէ ընդ փորձութեանն և զելս՝ զի համբերել կարասջիք „: Սաղ խթ. 15: Ցել. ե. 13: Ա. Կորնթ. ժ. 13: Պօղոս առաքեալը կը յայտնէ, որ ինքը անձամբ փորձած է այս բանը. “ Եւ ահա այնուհիկ երիցս անգամ ազաչեցի զՏէրը, զի ՚ի բաց արասցէ յինէն, և ասէ ցիս. Շատ են չնորհք իմ, զի զօրութիւն իմ ՚ի տկարութեան կատարի, և արդ լաւ եւս լիցի պարծիլ ՚ի տկարութիւնս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի. վասն որոյ հաճեմիմ ընդ տկարութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս, ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի, զի յորժամ տկարանամ՝ յայնժամ զօրաւոր եմ „: Բ. Կորնթ. ժԲ. 8—10: Պօղոս առաքեալը երկու կանոն կը դնէ, Հոմբերտ-Ֆրէ և Ա.ջըֆ՝ “ Նեղութեան համբերեցէք, ազօթից առեալ կացէք „: Հռոմ. ԺԲ. 12:

Յիսուսի ճշմարիտ աշակերտները այսպիսի վսեմ դասուդութեամբ և քաղցր զղացմամբ լցուած՝ Աստուծոյ օգնութիւնը իրենց օժանդակ առած, իրենց գօտիները ամրապնդած և իրենց ճրագները վառած, ամեն նեղութիւն դործ կը դնեն իրենց հոգւոյ սրբութեան և փրկութեան համար, և ոչ միայն կը համբերեն, այլ մանաւանդ կը յաղթեն: “ Ա՛լ յայսմ ամենայնի առաւել յաղթեմք նովաւ, որ սիրեացն զմեզ „: Հռոմ. Ը. 37: Ե՞րբ նեղութիւնները կը համարեն իրենց մէջոյ ուրախութեան. “ Ամենայն ուրախութեան արժանի համարիցիք եղբարք, յորժամ ՚ի պէս պէս փորձութեանց ՚ի մէջ անկանիցիք „: Ցել. Ա. 2: Մեծ յանցանք է՝ նեղութենէ աղատուելու համար՝ անձնասպանութեան դիմել: Յանցանք է Աստուծոյ դէմ, որ տուած է կեանք և ունի իրաւունք մեր կենաց վրայ: Անձնասպանութիւնը ընդդէմ է բնութեան, վասն զի կայ մեր մէջ բնական անձնապահութեան զգացմունք, որ բաւական է ըզդուշացնել մեզ այս յանցանքէն: Աւետարանը յայտնապէս կը խօսի, որ մեր կեանքը, մեր ընդունակութիւնները և մեր բարութիւնները արուած են մեզ իբրեւ տալանդ, որոյ տէրը մենք չենք, այլ գործակից և պատասխանատու ենք մեր պարգեւատու Աբարչին առջեւ: Կեանքը պարգեւած է մեզ իբրեւ ժամանակ՝ պատրաստուելու զղջմամբ, հաւատով և

սրբութեամբ երջանիկ յաւիտենականութեան համար: Ուստի կեանքը խլել և տապալել սեպհական իշխանութեամբ՝ կը նշանակէ չը կամիլ պարտք կատարել, կը նշանակէ պարտաւորութիւնը մերժել, կը նշանակէ տապուկ մեղանչել Աստուծոյ առջեւ, այն գինուորի նման, որ կը թողու իւր պաշտօնը և կը փախչի: Մենք պարտաւոր ենք թէ հանգստութեան և թէ նեղութեան մէջ մեր հոգին հաւատարմութեամբ աւանդել Աստուծոյ. “ Որպէս զի, որ չարչարիցին, հաւատարիմ հատանիցին աւանդեացեն զիւրեանց ոգիս բարութեամբ „: Ա. Պետ. Դ. 19: Վերջապէս, Աւետարանը կ՚ուսուցանէ մեզ, որ մեր բովանդակ կենաց մէջ չը կայ այնպիսի մէկ դրութիւն, կամ ժամանակ, կամ պարագայ, որ չը կարենանք կատարել մեր պարտաւորութեան դոնէ մի մասն: Կ՚ուսուցանէ, որ երբէք անհաւատարիմ պէտք չէ որ դտնուինք այն զօրութեանը և օգնութեանը, որ ՚ի ձեռին Աստուծոյ է. վասն զի կարող է նա միշտ ազատել մեզ և վախճան դնել մեր նեղութեանցը և կամ զօրութիւն տալ, որ ՚ի սէր մեր եղբարց սիրով տանինք և համբերութեան բարի օրինակ լինինք:

Անձնասպանութիւնը յանցանք է նմանապէս հատարակութեան դէմ, որովհետեւ ամեն քաղաքացի իւր կեանքով պարտաւոր է իւր գերդաստանին և հայրենեացը, պարտաւոր է համբերութեան բարի օրինակ լինել և քաջալերիչ իւր աչխատանքով: Եթէ կարծէնինք, որ անձնասպանութիւնը թոյլատրուած է մարդուն, մենք բոլորովին անգութ կը լինէինք դէպի տառապեալները և անկարեկցաբար կը նայէինք, եթէ նոքա անձնասպան լինէին: Սուրբ Գրոց մէջ չը կայ ամենեւին օրինակ մի, որով յուսահատութենէ յառաջ եկած անձնասպանութիւնը քաջալերուած լինի, և ոչ մի բարեպաշտ անձն ինքնասպան եղած չէ: Սամսոնի մահը անձնասպանութիւն չէ, այլ աւելի կարելի է համարել զոհ հայրենասիրութեան և կրօնասիրութեան.

Անձնասպանութիւնը կարող է յառաջ գալ երեք պատճառէ, կամ հոգւոյ հիւանդութենէ (մելամաղձէ) որ կը մթագնէ մեր բանականութիւնը և մեքենայաբար ինքնասպան կ՚առնէ զմարդ, կամ կրօնական անհաւատութենէ, որով մարդ ինք-

զինքը իւր կենաց աերը և իշխանը կարծելով՝ կ՚ոչնչացնէ, երբ իրեն անհաճոյ կը դանէ, և կամ, վերջապէս, թիւր դաւազրմամբ և մուտ տկար հակացողութիւններէ, որով չը կարենալով խմանալ կրօնի ուսուցած պարտաւորութիւնը, կը խաբէ իւր անձը, յուսալով՝ թէ Աստուած կը ներէ իւր անձնասպանութիւնը, իբրեւ գործ յուսահատութեան, որ խափարդիլուած է կրօնքով։

Մեր հիւանդութեան ժամանակ մենք ունինք առանձին պարտաւորութիւն. — Ա. Պարտաւոր ենք որչափ կարելի է չուտով կանոնաւորել մեր գործքը, եթէ անկարգութեան մէջ է։ Այնպէս որ, եթէ մահացու է մեր հիւանդութիւնը, չը լինի որ մեր մտէն յետոյ Թողունք բաժանման և խառնուրդեան առիթներ։ Մեր մահամերձ հիւանդութեան ժամանակ պէտք է որ հանգիստ և անդրադ լինի մեր հոգին։ — Բ. Պարտաւոր ենք քննել, եթէ մենք ենք մեր հիւանդութեան պատճառն մեր չար ցանկութեամբ և զեղխութեամբ, պարտինք խոնարհիլ, մեղայ գոչել առ Աստուած, խոստովանելով նորա արդարութիւնը և ողորմութիւնը։ — Գ. Պարտաւոր ենք չնորհակալութեամբ և քաղցրութեամբ ընդունիլ այն հոգածողութիւնները, զորս մեր հիւանդութեան ժամանակ կը ցուցնեն մեզ։ — Դ. Պարտաւոր ենք հաստատ մնալ, որպէս զի եթէ Աստուած առողջութիւն պարգեւէ, կատարենք մեր ուխտը և պատրաստենք բարի մահ, եթէ կամի Աստուած, որ մենք փոխուինք աշխարհէս։ Բարի մահ ունենալու համար մեկ հաստատ պատրաստութիւն կայ, այսինքն բարի կեանք վարել և յիշել զՔրիստոս յաւուր մանկութեան. "Այլ որ այժմ կամ մարթիով, հաւատովք որդւոյն Աստուծոյ կամ, որ սիրեացն զիս, և մատնեաց զանձն վասն իմ"։ Գաղ. Բ. 20։ Բայց եթէ յիմարութիւնը կը յաղթէ և կը յաղագինք մեռանել Աստուծոյ, պարտինք զգուշանալ նորա ողորմածութեանը սահման դնելու, պարտինք խնդրել նորա օգնութիւնը մեր մահուան ժամանակ, մեր մահուան մահճին մէջ, երբ Աստուած կ՚ողորմի մեզ՝ չարժելով մեր սիրտը և առ ինքն դարձը նելով։ Գոնէ նոյն ժամանակը պարտաւոր ենք հեռացնել ամեն ցնորք և դառնալ առ Ցէր բոլոր սրտով և կատարել մեռ-

նող մարդոյ ամեն պարտաւորութիւնները, չը ծածկել մեր հիւանդութեան վտանգը, պահանջել մերձակայ մարդիկներէն, որ յայտնեն մեզ մեր հիւանդութիւնը, ինչպէս ջերմառանդն բարեկամ և քրիստոնեայ, յայտնեն մեզ, եթէ մօտեցած ենք մահուան ժամին, և ապա պարտինք քննել մեր անցեալը ջերմեռանդութեամբ, խոնարհութեամբ և կենդանի զղջմամբ, ոգեւորիլ հաւատով և որչափ կարելի է չուտով ուղղել ամեն բան և խնդրել Յիսուսի անուամբ Թողութիւն մեղաց։ Պարտինք օգուտ քաղել մեր մտածութենէն, զոր ունինք մեր պղտոյց և բարեկամաց վրայ, մեր ծառայից և գործաւորաց վրայ, որպէս զի նոքա եւս համզուին և Աստուծոյ ծառայեն։ Վերջապէս, անդադար պէտք է յայտնել մեր խոնարհութիւնը և հնազանդութիւնը աստուածային կամայ, մեր հաւատը, սէրը, վստահքը և յոյսը այն երջանկութեան համար, զոր պատրաստած է մեզ համար Յիսուսի փրկարար խաչն։ Այսպէս կարելի է խաղաղութեամբ ննջել՝ի Ցէր և սանձալ ցուպ և գաւազան միխիթարութեան. "Թէ պեսեւ գնացից ես՝ի մէջ ստուերայ մահու, ոչ երկեայց՝ի չարէ, զի դու, Ցէր, ընդ իս ես"։ Սաղ. ԻԳ. 4—5։

Երբ կը կոչեն զմեզ հիւանդը տեսնելու և խնամք տանելու՝ մեր պարտաւորութիւնն է. — Ա. Հեզութեամբ և համբերութեամբ խնամել, երբէք չը զայրանալ հիւանդէն կրած նեղութենէն։ — Բ. Զարթուցանել հիւանդի թմրած հոգին և չը ծածկել իւր հիւանդութեան վտանգը. վասն զի կարեւոր է որ հիւանդը խմանայ և ճանաչէ իւր վիճակը, յաւելուլ մեր քաղցրութիւնը և տալ ամեն միխիթարութիւն, ինչ որ մարդկութիւնը, սէրը և քրիստոնէական հաւատը կը պահանջեն, սփոփել աստուածային բանիւ և աղօթիւ նորա հետ միասին։ — Գ. Յորդորել հիւանդը, որ մտածէ և խորհէ իւր վերկութեան համար, յիշեցնել Աւետարանի խրատները։ Այդպէս՝ ծանր է մեզ համար հիւանդին յայտնել իւր վիճակի վտանգը, բայց այնպիսի զհոգութիւն է այս, որ շատ հաճոյ է Աստուծոյ, որ և պիտի առէ մեզ վերջին աւուր մէջ. "Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն՝ի սկզբանէ աշխարհի"։ Մատ. ԻԵ. 34։

Հիւանդին խնամք տանելն այնչափ բարի և օգտաւէտ գործ է, որ կատարողներն արդէն այս կենաց մէջ անգամ կը ստանան սրտի բաւականութիւն և ուրախութիւն. ո՞վ չը գիտէ, որ ամեն ժամանակ՝ առանձին մխիթարութիւն զգացած են այն մարդիկը, որ կա՛մ հիւանդին ծառայած են, կամ ցաւը սփոփած են և կա՛մ Աստուծոյ ճանապարհը ցուցած են։ Հիւանդները պաշտպանողները յատուկ արիասրտութիւն կըստանան պատերազմել և յաղթել ծուլութեան և հպարտութեան։ Հիւանդի խնամատարութիւնն է դեղեցիկ դաս խոնարհութեան, վշտակրութեան, զոհողութեան և համբերութեան։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՅ*

---

* Ծանօթ. — Հատոր բառի կիրառութեան միակ նպատակն է Հեղինակի քրիստոնէական եւ բարոյական երկասիրութեանց դասական շարքը ցուցնել եւ ո՛չ թէ հատորներու կապակցութիւնը. վասն զի, իւրաքանչիւր հատորն անթերի եւ ամբողջ է՝ իր պարունակութեան նկատմամբ. ուստի ցանկացողը կարող է իւրաքանչիւր հատորն առանձինն դնել եւ կարդալ։ Այս կարգաւ պիտի տպագրուին եւ միւս երկասիրութիւնքը։

				Սխալ	Ուղիղ
Երես	72	Տող	17	բարութիւն	բարկութիւն
»	72	»	6	ահատ	անհատ

ՀՀ Ազգային գրադարան
NL0341049